Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շեքսպիրը դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է:

Հովհաննես Թումանյան

BAKHTIAR HOVAKIMYAN

SHAKESPEARE IN THE ARMENIAN THEATRE

YEREVAN
YEREVAN UNIVERSITY PRESS
2012

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼԳԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ԲԱԽՏԻԱՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՇԵՔՍՊԻՐԸ ՀԱՅ ԹԱՏՐՈՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀԴՏ 792(479.25)
ԳՄԴ 85.33(2Հ)
Հ 843

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Հովակիմյան Բ. Մ.
Հ 843 Շեքսպիրը հայ թատրոնում / Բ. Մ. Հովակիմյան: — Եր.: ԵՊՀ Հրատ., 2012.— 540 էջ + 32 էջ ներդիր:

Հանրագիտակ-տարեգրության մեջ ամփոփված են Շեքսպիրի երկերի հրատարակությունների, թարգմանիչների և նրանց թարգմանությունների, շեքսպիրյան թեմաներով գրականության, Օթելլոյի և Համլետի դերակատարների առաջին ելույթների, շեքսպիրյան թեմաներով միջոցառումների ու փառատոների մասին մատենագիտական ցանկեր և 25 պիեսի բեմադրությունների տարեգրությունը:

Գիրքը կարող է օգտակար լինել հայ թատրոնի պատմությամբ, թատերական կապերով, Շեքսպիրը հայ թատրոնում թեմայով զբաղվողներին ու հետաքրքրվողներին:

ՀԴՏ 792(479.25)
ԳՄԴ 85.33(2Հ)

ISBN 978-5-8084-1644-4

© Հովակիմյան Բ. Մ., 2012
© ԵՊՀ Հրատ., 2012

ՇԵՔՍՊԻՐԸ ՀԱՅ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Մեր թվարկության հինգերորդ դարի սկզբից հայ գրական կյանքի վերելքի հետ, զուգահեռաբար, սկզբնավորվել ու ստեղծագործական մեծ ճանապարհ է անցել նաև թարգմանական գրականությունը: Այդ երկու բնագավառներն էլ մտել են մեր ազգային տոների մեջ և նշվում են որպես թարգմանչաց տոն: Ազգային և թարգմանական գրական այս շարժումը ծնունդ ու սնունդ է տվել նաև միջազգային գրական ու թատերական կապերին, որոնք նույնպես դարերի պատմություն ունեն:

Տարբեր ազգերի գործիչների հետ շփման միջոցով են հայերն անդրադարձել նաև անգլիական գրականությանը, թատրոնին, որոնք միավորվել են մեկ անվան մեջ՝ Վիլյամ Շեքսպիր (1564–1616): Ոչ միայն անգլիական, այլև համաշխարհային մեծության ճանաչված Շեքսպիրի գրական ժառանգությանը հայերը ծանոթ են եղել դեռևս 17-րդ դարից: Թեև այս տվյալը փաստացի կերպով դեռ վերջնական լուծում չի ստացել, բայց հարցը հավաստի է:

1916-ի ապրիլին, երբ աշխարհի առաջավոր մտավորականությունը, այդ թվում և հայերը, նշում էին դրամատուրգների արքա Շեքսպիրի մահվան 300-ամյակը, Լոնդոնում, տեղի հայ գրողների ընկերության քարտուղար Արամ Բաֆֆին, իր զեկուցման մեջ նշել է, որ 17-րդ դարում տպագրված «Մաղիկ գիտության» գրքում հիշատակվել է Շեքսպիրի անունը: Այդպիսի հայտարարության համար նա, անշուշտ, հիմք է ունեցել: Բաֆֆին այդ գիրքը տեսել է կամ բրիտանական որևէ թանգարանում կամ էլ մեկնումեկի անձնական գրադարանում:

Շեքսպիրին, նրա թողած գրական-դրամատիկական ժառանգությանը հաստատ ծանոթ առաջին մտավորականը 18–19-րդ դարերի հայ ազգային-քաղաքական գործիչ Հովսեփ Էմինն է (1726–1809): 1750-ական թթ. ապրելով Լոնդոնում, ծանոթացել է թե՛ անցյալի և թե՛ ժամանակակից գրական-թատերական գործիչների հետ: 1792-ին, Լոնդոնում, նա հրատարակել է «Իմ կյանքը և արկածները» անգլերեն հուշագրությունը[1], որտեղ հիշատակելով «Օթելլո» և «Վենետիկի վաճառականը» պիեսները, համեմատություններ է կատարել իր և Շեքսպիրի հերոսների միևնույն վիճակում գտնվելու մասին: Նա անձնական ծանոթություն է ունեցել իր ժամանակի շեքսպիրյան մեծ դերասան Գարրիկի հետ, ինչը վկայում է Էմինի և Լոնդոնի թատերական գործիչների միջև եղած փոխադարձ կապերի մասին: Այդ կապերն անցողիկ բնույթ չեն կրել: Գրքի էջերից կյանք են մտել: Նրա մասին գրախոսական է գրվել Մադրասում լույս տեսնող հայերեն առաջին պարբերական՝ «Ազդարարում» (1794): Ավելին՝ բացվել է գրքի բաժանորդագրություն, որով այն ձեռք են բերել տեղի անգլիացիները և հնդկահայերը:

Էմինի գրքից բացի, Հնդկաստան են հասել նաև Շեքսպիրի և ուրիշ հեղինակների (այդ թվում և ֆրանսիացիների) բազմաթիվ գործեր, որոնք իրենց արձագանքն են գտել հնդկահայ մամուլում: Շեքսպիրյան գրականության մասսայականացման գործում կարևոր դեր է խաղացել Կալկաթայում լույս տեսնող «Շտեմարան» հանդեսը, որի, ինչպես նրա խմբագիր Մարտիրոս Մկրտչյանը, այնպես էլ աշխատակիցները 1822–1823 թթ. իրենց հոդվածներում, այս կամ այն ճշմարտությունը հաստատելու համար քաղվածաբար մեջբերումներ են կատարել Շեքսպիրի «Երկու վերոնացիք», «Ամառնային գիշերվա երազ», «Ջափի դեմ չափ», «Մեծ աղմուկ ոչնչից», «12-րդ գիշեր», «Օթելլո», «Համլետ» պիեսներից: Դրանք եղել են «Անմահացյալ Շեքսպիրից» կատարած հայերեն թարգմանության առաջին նմուշները:

[1] Life and Adventures of Joseph Emin an Armenian, London, 1792.

Հովսեփ Էմինի գիրքը ուղղակի ազդեցություն է ունեցել նաև նրա մահից հետո ծնված թոռան՝ աղջկա որդի Մկրտիչ Էմինի վրա, որը հետագայում դարձել է նշանավոր հայագետ ու մանկավարժ (1815–1890): 1823-ին Նոր Ջուղայից Կալկաթա ուսման գնացած պատանի Մկրտիչն ապրել է Թանգում տատի մոտ, սովորել մարդասիրական ընկերության ճեմարանում, տիրապետել անգլերենին: Հոգատար տատի նախաձեռնությամբ, 14-ը դեռ չլրացած Մկրտիչը, 1829-ին չուրջ կեստարյա ճամփորդությունից հետո հասել է Մոսկվա, ընդունվել Լազարյան ճեմարան, հետո ավարտել Համալսարանը, զբաղվել գրականությամբ ու մանկավարժությամբ:

Եվ ի՞նչն է հետաքրքրական: Էմին կրտսերի ճամփորդական պայուսակում եղել է երկու գիրք՝ Միլտոնի «Դրախտ կորուսյալի» հայերեն թարգմանությունը և 1823-ին Լոնդոնում հրատարակված՝ Շեքսպիրի պիեսների ժողովածուն[1], որից նա թարգմանություններ է կատարել դասընկերների և ուսանողների համար[2]:

1830-ական թվականներից գրական ուսումնասիրություններում և մամուլում սկսել են երևան գալ Շեքսպիրի և նրա գրական ժառանգության մասին առանձին գնահատականներ: Առաջինն արտահայտվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի շրջանավարտ և Համալսարանի բանասիրական բաժնի ուսանող, 20-ամյա Սարգիս Տիգրանյանը (1812–1875): 1832-ին գրած և 1834-ին ճեմարանի հրատարակությամբ լույս ընծայած՝ ֆրանսիացի դրամատուրգ Ռասինի «Գոթոդիա» ողբերգության գրաբար թարգմանությանը նա կցել է «Ինչ ինչ զեղեցերգութենե» վերնագրով առաջաբան, ուր ներկայացրել է համաշխարհային դրամատուրգիայի պատմությունը՝ անտիկ աշխարհից մինչև 1820-ական թթ.: Տիգրանյանն այդտեղ անդրադարձել է նաև Շեքսպիրին, նրան անվանելով՝ «չնորհաչուքն», նրա «Համլեթ», «Հուլիոս Կեսար», «Անտոնիոս և Կղեոպատրե», «Օթելլո», «Հռիքարդոս Երրորդ» ողբերգությունները համարել խոր բանաստեղծական թատրոնական և ավելացրել՝

[1] The dramatic Works. With glossary Chiswick.

[2] Հայ գրականության միջազգային կապերը, հ. 2, Եր., 1987, էջ 287–300:

«բազումք ի քերթվածոց նորա խաղարկեցան առաջի թագուհ-ույն Եղիսաբեթի»[1]:

Իր գնահատությունների մեջ Տիգրանյանն օգտվել է անգլիացի հեղինակների գործերից և արել իր հետևությունները, առանց ազատվելու կլասիցիստական դրամատուրգիայի ազդեցությունից:

Արևմտահայ գրական մտքի պատմության մեջ առաջինը, որն անդրադարձել է Շեքսպիրին, եղել է Վենետիկի Մխիթարյան միաբանության ներկայացուցիչ Մատթեոս վարդապետ Մաղաք-Թեոփիլյանցը: 1839-ին նա Վենետիկում հրատարակել է «Կենսագրություն երևելի արանց» հանրագիտարանաբնույթ աշխատությունը, որի երկրորդ հատորում, խոսելով Շեքսպիրի մասին, նրան համարել է «մեծահամբավ քերթող անգլիացի»:

Ինչպես Մաղաք-Թեոփիլյանցը, այնպես էլ Վիեննայի «Եվրոպա» հանդեսի անստորագիր հոդվածագիրը, որպես կլասիցիզմի ուղղության պաշտպաններ, թեև չեն բարձրացրել Շեքսպիրին, բայց և այնպես, չեն ժխտել նրա մեծությունը:

Շեքսպիրի մասին ինքնուրույն և թարգմանական տեսական հոդվածներից հետո, սկսվել են նրա պիեսների թարգմանական փորձերը: Այս հարցում նախապատվությունը տրվում է Զմյուռնիայի թատերական գործիչներին: Թարգմանիչ և «Արփի Արարատյան» թերթի թատերախոս Արամ Տետեյանը 1851-ին լինելով Լոնդոնում, տարբեր թատրոններում մի շարք ներկայացումներ տեսնելուց հետո, հիացել է Շեքսպիրի պիեսներով:

Տետեյանի թարգմանությամբ, Զմյուռնիայի թերթերում, մասնակի կամ ամբողջովին, նրա թարգմանությամբ տպագրվել են «Կատակերգություն սխալանաց» (1853), «Վենետիկի վաճառականը» (1862, ամբողջությամբ), «Համլետ» (1862) պիեսները: Առանձին գրքով՝ 1866-ին լույս է տեսել «Հռոմեոս և Ճյուլեէդդա» ողբերգությունը՝ անգլիական աղբյուրներից քաղած հոդվածների և այլ նյութերի թարգմանությամբ հանդերձ: Շեքսպիրի նկատմամբ իր սերը Տետեյանն այսպես է բացատրել՝ «Երբ առաջին անգամ Շեքսպիր կարդացի սքանչանալով հափշտակվեցա»:

[1] Գոթողիա եղերերգություն, թարգմանյաց ի գաղղիականե Սարգիս Տիգրանյան Նախիջևանցի, ի Մոսկով, 1834, էջ 57:

Եթե Տետեյանը և նրա գործը չարունակող մյուս գործիչները Շեքսպիրին թարգմանել են բնագրից, ապա Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերն այդ աշխատանքն սկսել են Ֆրանսիացի Ժան Ֆրանսուա Դյուսիսի փոխադրությունների թարգմանությունից: Թեև մեր թատրոնի պատմության մեջ այդ հարցն առնչվում է «Մակբեթի» փոխադրության թարգմանությանը, որը կատարել է հայր Սամուել Կայսերյանը (1838–1908), որով էլ այն առաջին անգամ ներկայացվել է 1864-ի հունվարի 29-ին, Սուրբ Ղազարում, Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի ճաշասրահում, կրճատված, առանց կին դերակատարի (Լեդի Մակբեթը փոխարինվել է Մակբեթի տղայով), բայց, մեզ թվում է, որ Մխիթարյաններն առաջին անգամ այդ քայլին են դիմել դեռևս 1853-ին՝ բեմադրելով «Հուլիոս Կեսարը», թերևս նույն Դյուսիսի փոխադրության թարգմանությամբ: (Հռոմում կատարվող տեսարաններում հանդես են եկել Հուլիոս Կեսարը, Անտոնիոսը, Բրուտոսը, Տուղղիոսը, Կասսիոսը, Մերակույտի անդամներ և ուրիշներ):

Ճիշտ է, այս բեմադրություններում Շեքսպիրի հերոսները խոսել են ոչ թե հեղինակի տեքստով, այլ Դյուսիսի փոխադրության լեզվով, բայց և այնպես հիմքը հանդիսացել է Շեքսպիրի ստեղծագործությունը:

Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի դպրոցական թատրոնում Շեքսպիր բեմադրելն իր դրական ազդեցությունն է ունեցել նրա աշակերտների ոչ միայն մտավոր զարգացման, այլև հետագա գործունեության վրա: Վարժարանի մի շարք սաներ դարձել են գրող-դրամատուրգներ, իսկ Սրապիոն Հեքիմյանը (1832–1892), իր գրած առաջին պիեսով՝ «Արտաչես և Սաթենիկ» (1848–16 տարեկանում), որոշ գործողություններ ժառանգել է «Ռոմեո և Ջուլիետից»:

Շեքսպիրի դրամատուրգիայի ազդեցությունն ակնհայտ է նաև քսան տարին դեռ չլրացած Պետրոս Դուրյանի (1851–1872) «Թատրոն և թշվառներ» պիեսում (1871), ուր, ի տարբերություն հեղինակի գրած պատմական ողբերգությունների, նյութը վերցրել է ժամանակակից առօրյա կյանքից և ուրիշներին էլ խորհուրդ է տվել զբաղվել արդիական կյանքի պատկերմամբ: «Թատրոն և թշվառներ» պիեսում Դուրյանի գաղա-

փարախոսությունն արտահայտվել է հատկապես ներկայացման Դ. արարվածի Գ. պատկերի Ա. տեսիլում (բեմի ներկայացման ընդմիջման ժամանակ) Ա. և Բ. Հանդիսատեսների մտքերի փոխանակության մեջ:

Թատրոնի կարևորության, հեղինակության, նշանակության և այլ հարցերի մասին խոսելիս, Բ. Հանդիսատեսն ասում է Ա. Հանդիսատեսին՝

— Անհնար է, որ մարդ Շեքսպիրի, Շիլլերի, Հյուկոյի և Տյումայի թատերգությունքը կարդացած ժամանակը չաքանչանա, կը պաչտեմ ես այդ հանճարները[1]: Սրանք, իհարկե, Դուրյանի խոսքերն են, որ իրենց արտահայտությունն են ստացել նրա հերոսի բերանով:

Ժամանակի առումով, Շեքսպիրից ներշնչված երրորդ դրամատուրգը, երևանցի Աբգար Գուլամիրյանն է (1840—1916): Իր գրած «Սենեքերիմ Թագավոր Հայոց Վասպուրականի» (տպվ. 1878) ողբերգության առաջաբանում Գուլամիրյանը գրել է. «Կարևոր ենք համարում հայտնել, որ ողբերգությանս Հինգերորդ արարվածի Զ, Է, Ը, Թ և ԺԳ տեսարանների մենախոսությունները մենք հարմարեցրել ենք Շեքսպիրի Ռիչարդոս Երրորդի վերջին արարվածին»[2]:

Ազդեցությունն ազդեցություն, բայց Գուլամիրյանի պիեսի համար հիմք ծառայած Մանուել Արտամետյանի «Գաղթականություն ի Վասպուրականե Սենեքերիմա Արքային Արծրունվո» (տպվ. Վան, 1860) ողբերգության վերափոխումն ու հավելումներ մտցնելը, Շեքսպիրի պիեսից վերցրած մտքերն իր հերոսին վերագրելը միայն պատմական մոտեցման արժեք ունեն: Այդ պիեսը բեմադրվել է Ախալցխայում և Թեհրանում:

Շեքսպիրի գործերի գաղափարական ազդեցությունն ակներև է Գ. Սունդուկյանի «Պեպո» և «Քանդած օջախ» պիեսներում: 1898-ին պատասխանելով Յուրի Վեսելովսկու այն հարցին՝ թե ո՞ր հեղինակներից է ազդվել Սունդուկյանը, եվրոպական և ռուս մի քանի հեղինակների թվում հայ դրամատուրգը հիշատակել է Շեքսպիրին, որի գործերը նա կարդացել է

[1] Գեորգ Դուրյան, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1972, էջ 444:

[2] Աբգար Գուլամիրյանց, Սենեքերիմ Թագավոր Հայոց Վասպուրականի, Եր., 1878, էջ ԺԵ:

ֆրանսերեն: Այդ ազդեցությունը նկատելի է Համլետ—Պեպո և Թիմոն Աթենացի—Օսեփ կերպարների հոգեբանության ու գործունեության մեջ՝ բողոք անարդարության դեմ և անանկանալուց հետո մերձավորների կողմից լքվելու ցավի զգացում:

Շեքսպիրից թարգմանություններ կատարելու, նրա մասին ինքնուրույն կամ թարգմանական հոդվածներ տպագրելուց հետո նրան մերձենալու հաջորդ քայլը եղել է առկա թարգմանություններից որոշ գործեր բեմ հանելը, որով, փաստորեն սկսվել է մեծ դրամատուրգի ստեղծագործությունների բեմական պատմությունը հայ թատրոնում:

Նախքան առաջադրված հարցին անցնելը, հիշեցնենք, որ 1863 թվականի հունվարից, Գևորգ Զմշկյանը երկրաչափ ճարտարագետի մասնագիտությունը մի կողմ դնելով, իր ամբողջ կյանքը նվիրել է թատրոնին՝ եղել է դերասան, բեմադրիչ, դրամատուրգ, թարգմանիչ, թատրոնի պատմաբան: Նրա շնորհիվ են հայ թատրոն մուտք գործել Շեքսպիրը, Օստրովսկին և այլ հեղինակներ:

Զմշկյանը թատրոն է մտել տեսականորեն պատրաստված: Նա լավ ծանոթ է եղել ռուս մեծ քննադատ Վ. Գ. Բելինսկու թատերագիտական ժառանգությանը: Իսկ որտեղ Բելինսկի՝ այնտեղ Շեքսպիր: Ահա, այսպիսի զինվածությամբ, նույն 1863-ի գարնանը Զմշկյանը ձեռնարկել է «Թիմոն Աթենացի»՝ Բելինսկու բնորոշմամբ՝ «անարյուն ողբերգության» թարգմանությունը: Աշխատանքի մասին կարծիք իմանալու համար, նա իր մոտ է հրավիրել բեմընկեր-դերասաններ Միհրդատ Ամրիկյանին և Արտաշես Սուքիասյանին: Նա իր թարգմանությունը կարդացել է այն եղանակով, ինչպես որ պետք է խոսեին դերասանները (հակառակ ընդունված երգեցիկ խոսակցական եղանակին): Ընկերները չեն հավանել նրա թարգմանությունը, որի պատճառով Զմշկյանը պատռել է ձեռագիրը:

Այսուամենայնիվ, Զմշկյանը ձեռք չի քաշել Շեքսպիրից: Հայ թատրոնի խաղացանկը նոր և արժանի դրամատուրգիայով հարստացնելու նպատակով, 1864-ին, նա ֆրանսերենից թարգմանել է «Վենետիկի վաճառականը», որի առաջին գործողության երրորդ տեսիլը, որտեղ հանդես են գալիս Շայլոկը, Անտոնիոն և Բասանիոն, բեմադրել է 1865-ի մայիսի 7-ին, Թիֆլիսի Քաղաքային (Թամամշյանի) թատրոնում:

Զմշկյանի թարգմանած ու բեմադրած այս հատվածով Շեքսպիրն առաջին անգամ մուտք է գործել արևելահայ թատրոն: Առաջին անգամ Շեքսպիրի հերոսների խոսքերը հնչել են հայերեն: Այդպես, հատվածաբար, իսկ այնուհետև ամբողջությամբ, չուրջ քսան տարի Զմշկյանը բեմադրել է «Վենետիկի վաճառականը», որին հաջորդել է «Օթելլոյի» նրա թարգմանության բեմադրությունը 1867-ի փետրվարի 10-ին, զարձյալ առանձին տեսարաններով, մինչև որ 1884-ին խաղացվել է ամբողջությամբ: Այսպիսով, Գևորգ Զմշկյանը «Վենետիկի վաճառականի» և «Օթելլոյի» առաջին թարգմանիչն է, բեմադրողը, Եայլոկի ու Օթելլոյի առաջին դերակատարը:

«Վենետիկի վաճառականի» չմշկյանական առաջին բեմադրությունից երկու տարի անց, 1867-ի մարտի 25-ին Կ. Պոլսի Նաումի թատրոնում, Ասիական ընկերության դերասանական խումբը Հակոբ Վարդովյանի բեմադրությամբ առաջին անգամ բեմ է հանել «Մակբեթը», ինքն էլ կատարել գլխավոր հերոսի դերը: Հետաքրքրականն այստեղ այն է, որ «Մակբեթը» խաղացվել է 16-ամյա Խաչատուր Ուղուրեկյանի թարգմանությամբ:

Պոլսահայ թատրոնում «Ռոմեո և Ջուլիետ» (1869) և «Օթելլո» (1871) ողբերգությունները բեմադրացանկ մտցնելու հայտարարություններ են տպագրվել մամուլում, բայց արձագանք չեն ստացել: Մինչև 1888–1889 թթ. Պետրոս Աղամյանի ելույթները Պոլսում («Օթելլո») և Զմյուռնիայում («Համլետ») և դրանից հետո՝ մինչև 1908-ը Պոլսում այլևս Շեքսպիր չի խաղացվել: Ինչպես Աղամյանն է գրել Վարդգես Սուրենյանցին, «Համլետն» ու «Արքա Լիրն» արգելված են եղել գրաքննության կողմից[1]: Այս երևույթը ձգվել է չուրջ երկու տասնամյակ: Թեոդիկի «Ամենուն տարեցույցը» (1907 թ.) գրքում Համլետի դերը պատրաստելու մասին Սիրանույշի տպագրած («Ձեռնարկս Շեյքսբիրի մի գործին») հոդվածում նույնպես բացակայում է Համլետ անունը:

Վերադառնալով անցյալին վերհիշենք, որ 1870-ին Գամառ Քաթիպայի (Ռափայել Պատկանյան) «Հիմի՞ էլ լռենք» բանաստեղծությունը բեմից արտասանելու համար մամուլում

[1] Պետրոս Աղամյան, Նամակներ, եր., 1959, էջ 212:

գրվել է՝ «Խոսք ռուս բանաստեղծի մը»[1]: Այսպիսի վիճակում ի՞նչ կարելի էր անել:

Հայ թատրոնում Շեքսպիրն իսկական զարթոնք է ապրել 1880 թվականից և մինչև օրս մնում է նրա խաղացանկի հիմնական ու մնայուն հեղինակներից մեկը: Հիրավի, 1880-ական թվականները հայ թատերական գործիչների և, ընդհանրապես, թատերական կյանքի աշխույժ գործունեություն ծավալելու տարիներն էին, երբ մեկը մյուսի ետևից ասպարեզ իջան նոր թարգմանություններ՝ ո՛րը բնագրից, ո՛րը գերմաներենից, ո՛րը ֆրանսերենից, ո՛րը ռուսերենից թարգմանված:

Շեքսպիրի նկատմամբ ցուցաբերված այդ հետաքրքրությունը հայ մտավոր կյանքի հասունացման ու վերելքի չրջան էր, ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ հատվածների համար, թարգմանվում ու տպագրվում էին նորանոր գործեր, իրարից անկախ, հաճախ թարգմանվում էին նույն գործերը, բեմական կյանք մտնում տարբեր քաղաքներում: Տարեցտարի ընդարձակվում էին Շեքսպիր խաղացող թատերախմբերի գործունեության սահմանները, հարստացվում խաղացանկը, ի հայտ գալիս նոր դերակատարումներ, լայն ծավալ ստանում հյուրախաղային ճամփորդությունները, թատերական մթնոլորտը հեղեղվում էր Շեքսպիրի ողբերգությունների ու կատակերգությունների նորանոր բեմադրություններով:

Այդ առաջընթացն սկսվել էր Թիֆլիսի Հայոց դրամատիկական նորաստեղծ կոմիտեի (ընկերության) ակտիվ գործունեությամբ, որը գլխավորում էր իշխան Նապոլեոն Ամատունին, իսկ քարտուղարն էր Գևորգ Զմշկյանը: Թատերախմբի կազմն ուժեղացնելու, ավելի լուրջ պիեսներ բեմ հանելու նրանց մտահոգությունը թելադրել է առաջնակարգ դերասաններ հրավիրել Կ. Պոլսից: Այդ նպատակով, 1879-ին Զմշկյանը մեկնել է Կ. Պոլիս, պայմանագրեր կնքել Պետրոս Աղամյանի, Աստղիկ և Սիրանույշ քույրերի հետ և միասին ուղևորվել դեպի Թիֆլիս:

Թատերական կոմիտեն ունեցել է խաղացանկը թարգմանական պիեսներով ապահովելու իր հանձնախումբը՝ ի դեմս դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի, թարգմանիչներ Սենե-

[1] Մանդումեի էֆքյար, № 1490:

քերիմ Արծրունու և Արգար Հովհաննիսյանի: Ընկերության բոլոր օղակներն աշխատել են սիրով ու նվիրվածությամբ, որի արդյունքում թատերախմբի խաղացանկ են մտել Գոգոլի «Ռևիզորը», Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը», Օստրովսկու «Եկամտավոր պաշտոնը», Լերմոնտովի «Դիմակահանդեսը», Մուրացանի «Ռուզանը», կրկնվել են «Պեպոն» և այլ պիեսներ:

Շեքսպիրյան պիեսների բեմադրություններն սկսվել են 1880-ից: Սեպտեմբերի 25-ին բեմադրվել է «Կամակոր կնոջ սանձահարումը» (թարգմ. Ամիրան Մանդինյան), նոյեմբերի 20-ին՝ «Համլետը» (թարգմ. Ս. Արծրունի), 1881-ի դեկտեմբերի 31-ին՝ «Վենետիկի վաճառականը» (թարգմ. Գևորգ Բարխուդարյան), 1886-ի փետրվարի 17-ին՝ «Օթելլոն» (թարգմ. Ստեփանոս Սուլխանյան), նույն տարվա նոյեմբերի 6-ին՝ «Արքա Լիրը» (թարգմ. Ս. Արծրունի, վերջինս թարգմանել էր նաև «Մակբեթը», բայց ոչ բեմադրվել է, ոչ էլ թարգմանությունն է պահպանվել):

Այս պիեսների զգալի մասի հաջողությունը կապված է Համլետի, Օթելլոյի և Արքա Լիրի դերակատար Պետրոս Ադամյանի անվան հետ: Դերի ուսումնասիրությունից զատ, նա աշխատել է իր դերատեքստը դարձնել ավելի բեմական, առավել արտահայտիչ, խոսքերը՝ սահուն արտասանվող:

Ադամյանը շեքսպիրյան այս դերերին ավելացրել է նաև Կ. Գուցկովի Ուրիել Ակոստայի և Պ. Ջիակոմետտիի Կորրադոյի դերերը և 1882–1888 թթ. շրջել Անդրկովկասի մի շարք և Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում: Մոսկվայում և Պետերբուրգում խաղացել է հայ թատերասերների հետ, իսկ մնացած վայրերում՝ ռուսական խմբերում, իր դերերը կատարել հայերեն և ֆրանսերեն:

Ադամյանի շեքսպիրյան դերակատարումները շատ բարձր են գնահատվել հատկապես Ռուսաստանի մայրաքաղաք Պետերբուրգի թատերական քննադատության կողմից: 1884-ի հունվարի 28-ին, Կոնոնովի դահլիճում, հայ ուսանողների և մտավորականների մասնակցությամբ, Ադամյանն առաջին անգամ հանդես է եկել իր գլխավոր՝ Համլետի դերում: Հանդիսատես քիչ է եղել, բայց ներկա են եղել Ալեքսանդրինյան

թատրոնի առաջնակարգ դեմքերը՝ Մ. Գ. Սավինան (որը մինչև հայ դերասանի մահը եղել է նրա բարեկամը), Վ. Վ. Սամոյլովը, Ա. Պ. Լենսկին (վերջին երկուսը եղել են Համլետի դերակատարներ), թատերական քննադատ Վ. Վ. Զույկոն, դրամատուրգ Ա. Ս. Սուվորինը, թատերական գործիչ Պալմը, մամուլի թղթակիցներ:

Ադամյանի ելույթը խանդավառությամբ է ընդունվել: Ներկայացումն ավարտվելուց հետո, Սամոյլովը մտնելով Ադամյանի սենյակը, նրան ասել է՝ «Անկեղծորեն ասում եմ ձեզ, որ նույնիսկ Սալվինիի խաղը ինձ այնքան հաճույք չի պատճառել, որքան ձեր խաղը»: «Նովոյե վրեմյա» թերթում գրվել է՝ «Տեսնելով պ. Ադամյանին, մենք պետք է խոստովանենք նրա՝ անկասկած ընդունակ, մտածող, զարգացած դերասան լինելը... Համլետի դերը նա տարավ այնքան բավարար, որ կարող է հաճույք պատճառել Շեքսպիրի ստեղծագործությանը ծանոթ ամեն մի ինտելիգենտ հանդիսատեսի» (№ 2846):

Ադամյանի լեզուն չհասկանալու պատճառով զանազան դիտողություններ են եղել Համլետի մասին, բայց «Լինե՞լ, թե՞ չլինել» մենախոսության ժամանակ, բոլորը միակարծիք, բարձրը գնահատական են տվել: Բանն այն է, որ Ադամյանը մշտապես կատարելագործելով իր խաղը, կերպարից բխող նոր արտահայտչամիջոցներ է որոնել ու հարստացրել Համլետի վարվելակերպի ու գործողության միասնությունը: Նրա նորամուծություններից մեկը եղել է «Լինե՞լ, թե՞ չլինել» մենախոսության ժամանակ Համլետի ձեռքին դաշույն ունենալը: Զույկոն այսպիսի բացատրություն է տվել այդ երևույթին. «դա շատ նոր է և հաջող. ընդգծում է Համլետի ինքնասպանության միտքը: Ամբողջ մենախոսությունը կատարում է գրեթե հանգիստ, շատ պարզ, երբեմն նստած, դաշույնի հետ խաղալով: Հոյակապ տպավորություն է թողնում»[1]:

1880-ական թթ. թատերական զարթոնքը նպաստեց ոչ միայն շեքսպիրյան պիեսների նոր թարգմանությունների երևան գալուն (թեև նրանց զգալի մասը բեմի երես չի տեսել), այլև թատերական առողջ քննադատությանը: Իրենց բանիմաց

[1] Новости, № 30.

և անաչառ ոգով գրած թատերախոսականներով աչքի են ընկել Գրիգոր Արծրունին («Մեղու Հայաստանի» և «Մշակ»), Սպանդար Սպանդարյանը («Մեղու Հայաստանի» և «Նոր-Դար»), Ավետիք Արասխանյանը («Մուրճ»), Սիմոն Հախումյանը (Թիֆլիսի և Բաքվի ռուսական ու հայկական մամուլում) և ուրիշներ, որոնց հետևեցին նորանոր ուժեր:

Այդ տարիներին է վերաբերում նաև հայ շեքսպիրագիտության գիտական գրականության սկզբնավորումը ի դեմս Պետրոս Ադամյանի, որն ապացուցելու համար, որ եթե ինքը թատերագիտությամբ զբաղվի, ավելի լավ կգրի, քան հրապարակի վրա եղած թատերախոսները: Ի հաստատումն այդ մտքի, նա կարճ ժամկետում գրել և 1887-ի գարնանը Թիֆլիսում լույս է ընծայել իր «Շեքսպիր և յուր Համլեթ ողբերգության աղբյուրն ու քննադատությունները» ուշագրավ աշխատությունը, որը, դեռևս ձեռագիր վիճակում, բարձր է գնահատվել «Մշակի» կողմից: Թերթում գրվել է. «Ադամյանի այս աշխատությունը մի թարմ նորություն է հայոց գրականության մեջ և իրավ, չունենք մենք մի քննադատ, որը այս աստիճան լուրջ կերպով ուսումնասիրեր մի որևէ հեղինակություն, հավաքեր բազմաթիվ մատենախոսների կարծիքները և հետազոտեր ու կշռեր նրանց և հետո իր սեփական դատողությունների հետ միացնելով ընծայեր հասարակությանը»[1]:

Ադամյանի գիրքը լույս տեսնելուց հետո, նրա դեմ հոդված է գրվել «Արձագանքում» և արժանի հակահարված ստացել Շիրվանզադեի կողմից: Ադամյանի ուսումնասիրությունը բարձր են գնահատել նաև Ղազարոս Աղայանը, Ղևոնդ Ալիշանը, Գարեգին Ենգիբարյանը և ուրիշներ: Ադամյանի սկսած գործը հետագայում շարունակեցին Սիրանույշը (Համլետի իր կատարման մասին) և Վահրամ Փափազյանը, որի «Իմ Օթելլոն», «Համլետը ինչպես տեսա» և «Արքա Լիրը» գիտական փայլուն ուսումնասիրություններ են:

1890-ական թթ. հայ շեքսպիրյան թարգմանությունները և նրանցով կատարված բեմադրությունները նոր թռիչք ապրեցին: 1894–1898 թթ. Թիֆլիսում, մեկը մյուսի ետևից լույս տեսան մեծավաստակ, դասական թարգմանիչ Հովհաննես Մասեհյանի (1864–1931) «Համլետ իշխան Դանեմարքի», «Ինչպես կուզեք», «Ռոմեո և Ջուլիետ», «Արքա Լիր» բնագրից կատարված թարգմանությունները, որոնք խկուլն գրավեցին թատերական գործիչների ուշադրությունը:

Մասեհյանի թարգմանություններով բեմադրություն տալու նախաձեռնողը եղել է դերասան Հովհաննես Աբելյանը, որը հայ շեքսպիրյան թատրոնի վաստակաշատ գործիչներից մեկն է: Շեքսպիրյան խաղացանկում նա կատարել է տասը դեր, որից՝ Օթելլոն – 40 տարի, Արքա Լիրը՝ 25: 1894–1899 թթ. նա երկու անգամ փորձել է «Համլետ» բեմադրել ու Համլետ խաղալ, չի հաջողվել: Բաքվում և Թիֆլիսում դերաբաշխումներ է արել, Մասեհյանի տեքստի վրա աշխատել – անօգուտ: Պիեսի բեմադրության թույլտվություն ստանալու համար նրան մերժել են, որովհետև թույլատրված պիեսների շարքում Մասեհյանի թարգմանությունը նշված չի եղել և խորհուրդ են տվել Պ. Վեյնբերգի թարգմանությամբ խաղալ:

Ի դեպ է ասել, որ Աբելյանն առաջին հայ դերասանն է, որ 1899-ին Եվրոպա կատարած ճամփորդության ժամանակ ուխտի է գնացել Շեքսպիրի ծննդավայրը՝ Ստրեթֆորդ:

Համանման մի դեպք էլ պատահել է Սիրանույշի հետ: 1903-ին իր խմբով Թիֆլիսից Երևան եկած դերասանուհին ցանկացել է այստեղ ևս Համլետ խաղալ: Ոստիկանատանը Սիրանույշի ներկայացուցիչը նույն պատասխանն է ստացել, ինչ որ Աբելյանը: «Բարի» ոստիկանապետը խորհուրդ է տվել «Համլետը» խաղալ թույլատրված՝ Դ. Ավերկիևի թարգմանությամբ: Հնարամիտ դերասանները (Անդրանիկը թե՞ Իսահակ Ալիխանյանը) համաձայնել են, ազդագրի վրա թարգմանչի դիմաց գրել են Ավերկիևի ազգանունը, բայց խաղացել Մասեհյանի թարգմանությամբ:

Շեքսպիրի հետ մի պատահար էլ տեղի է ունեցել 1944-ին, Թեհրանում: Դերասան Միքայել Կոստանյանը մտադիր լինելով «Օթելլո» բեմադրել, գնացել է համապատասխան հաստատություն թույլտվություն ստանալու, մերժել են: Օրերից մի օր էլ կոմպոզիտոր Աչոտ Պատմագրյանն իր գործով գնացել է նույն

[1] Մշակ, 1887, № 44:

պաչտոնյայի մոտ և հանդիպել Մ. Կոստանյանին: Մտքերի փոխանակությունից հետո, Պատմագրյանը խոստացել է օգնել: Պաչտոնյան արդարանալով ասել է, որ ես չեմ կարողանում այդ մարդուն համոզել, որ Ցագոն թող ասի թաչկինակը ես եմ գտել ու վերադարձնի Օթելլոյին, հաչտվեն: Պատմագրյանն ասել է՝ ախր Շեքսպիրն այդպես չի գրել: Պաչտոնյան ինքնավստահությամբ ասել է՝ դուք բերեք այդ Շեքսպիրին, ես նրան կհամոզեմ:

Ահա այսպիսի պայմաններում է զարգացել հայ թատերական կյանքը: Եվ եթե այսօր Շեքսպիր ենք մեծարում, նախ և առաջ մենք պարտական ենք հայ թատրոնի դերը բարձրացնող այն դերասաններին, ռեժիսորներին, թարգմանիչներին, որոնք ամբողջովին նվիրված են եղել իրենց կոչումին ու ծառայությանը:

Այսուամենայնիվ, Մասեհյանը հաղթանակել է: 1900-ից նա հաղթականորեն մտել է հայ թատրոն, այնտեղից երբեք դուրս չգալու հաստատ համոզվածությամբ: Այդ թվականի փետրվարի 5-ին Բաքվում, առաջին անգամ հայ թատրոնում, Գևորգ Պետրոսյանը բեմադրել է «Արքա Լիրը» ինքն էլ մարմնավորել գլխավոր հերոսի դերը: Միջանկյալ ասենք, որ Պետրոսյանն առաջին անգամ Արքա Լիր է խաղացել 1896-ին, Աստրախանում, ռուսական խմբի հետ, ռուսերեն: Նրա շեքսպիրյան խաղացանկն սկսվել է 1884-ից, երբ Ադամյանի պետերբուրգյան հյուրախաղերին եղել է նրա Լաերտը «Համլետում»: Այնուհետև խաղացել է Օթելլո, Կլավդիոս և այլ դերեր:

Ցնծությունը մեկ տարի հետո պետք է լիներ: Մեկ տարում երե՛ք Համլետ, բոլորն էլ Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում: Ապրիլի 6-ին՝ Համլետ — Կարապետ Գալֆայան, 22-ին՝ Համլետ — Նիկողայոս Հովհաննիսյան, նոյեմբերի 19-ին՝ Համլետ — Սիրանույշ:

Գալֆայանը շատ է խաղացել թե Համլետ և թե Օթելլո — Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում, Բուլղարիայում, Եգիպտոսում և այլուր, ունեցել է գնահատողներ և քննադատողներ, նույնիսկ հալածվել, բայց համարվել է շեքսպիրյան թատրոնի դերասան:

Հովհաննիսյանն իր թե՛ թատերախմբերի ղեկավարների բնավորությունը չհամընկնելու պատճառով գրեթե միշտ սիրողների հետ է խաղացել — Համլետ, Օթելլո: Նրա գործունեության վառ շրջանը եղել է 1906-ին, Ալեքսանդրապոլում աշխատելիս, ղեկավարել է Հայ դրամատիկ նոր խումբը:

Սրանցից շեքսպիրյան բախտը ժպտացել է Սիրանույշին՝ Արևելքի ժողովուրդների պատմության մեջ Համլետի առաջին կին դերակատարին, որը 1901—1922 թթ. չուրջ քսան քաղաքում, ավելի քան 40 անգամ հանդես է եկել Համլետի դերում: 1907-ին Բաքվի Ա. Ն. Կրուչինինի հրավերով Սիրանույշը հայերեն Համլետ է խաղացել ռուսական խմբի հետ, ինչպես իրենից առաջ Պ. Ադամյանը, իրենից հետո՝ Վ. Փափազյանը:

Սիրանույշը առաջին կին Համլետը լինելուց բացի, նաև Օֆելյայի առաջին դերակատարն է: Համլետի դերում կին դերակատարներից նրան հաջորդել են Արաքսի Օհանյանը (Կահիրե), Ժասմեն Գևորգյանը (Երևան):

1900—1910-ական թթ. անդրկովկասյան թատրոնի շեքսպիրյան պիեսների բեմադրություններում իրենց վառ անհատականությունն են դրսևորել Ամո Խարազյանը (Օթելլո, Համլետ, Արքա Լիր), Արմեն Արմենյանը և Միքայել Մանվելյանը (Ցագո, Շայլոկ), Օլգա Մայսուրյանը, Օլգա Գուլազյանը, Եկատերինա Դուրյան-Արմենյանը, Ժասմենը, Լյուսի Սևումյանը, Արուս Ոսկանյանը (Դեզդեմոնա, Օֆելյա, Կորդելիա, Կատարինե և այլ դերեր), Սաթենիկ Ադամյանը, որը Արշավիր Շահխաթունու հետ սկզբնավորել են «Ռոմեո և Ջուլիետի» բեմական պատմությունը և շատ ուրիշներ:

1908 թվականի օսմանյան սահմանադրությունից հետո որոշ աշխուժացում է սկսվել Թուրքիայում, նոր խմբեր են կազմակերպվել Կ. Պոլսում, Իզմիրում և այլ քաղաքներում: Թատերական այս եռուզեռի մեջ գլուխ է բարձրացրել Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի սան Վահրամ Փափազյանը, մի դերասան, որն աշխարհում միակ մարդն է, որ հինգ լեզվով Շեքսպիր է խաղացել — հայերեն, իտալերեն, թուրքերեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերենով հանդես է եկել նաև

Բաքվի և Թիֆլիսի ադրբեջանական թատրոններում, որոնք այն ժամանակներում (1920–1930-ական թթ.) կոչվում էին թուրքաց թատրոն: Փափազյանը նաև միակ դերասանն է, որ թիվ ու հաշիվ չկա նրա այցելած-խաղացած քաղաքներին՝ Թուրքիա, Եգիպտոս, եվրոպական երկրներ, Փարիզից ամբողջ Ռուսաստանով մինչև Հեռավոր Արևելք և իր մշտական օրբան՝ Անդրկովկաս:

Փափազյանին է պատկանում նաև այն առաջնությունը, որ 4.000-ից ավելի անգամ Օթելլո է խաղացել՝ սևացնելով գլուխը, թևերը, պարանոցը, կուրծքը: Գիտական առումով էլ նա բացառիկներից բացառիկն է, որն ընտիր հայերենով չարադրել է Օթելլոյի, Համլետի, Արքա Լիրի – իր դերակատարումների պատմությունը անթիվ համեմատություններով, մեկնաբանություններով, խաղընկերների աշխատանքը ընութագրելով, իր մոտեցումները վերլուծելով: Հիրավի, նա մի հսկայական ուսումնական հաստատություն է, որի արժեքն ու գնահատականը, ցավոք, մենք դեռ չենք տվել:

Թեև երիտասարդության տարիներին Փափազյանը վարպետության շատ դասեր է ստացել իտալական և ֆրանսիական թատերախմբերի հետ երկրե-երկիր շրջելով ու դերեր խաղալով, բայց նրա գերագույն դպրոցը եղել է ազգային թատրոնը, փայլել է հոգեբանական բարդ ու դժվարին դերերի կատարմամբ, բայց նրան խորթ չեն եղել ազգային դասական ու ժամանակակից դրամատուրգների գործերում հանդես գալը, կինոյում նկարահանվելը, հեռուստատեսությամբ ելույթ ունենալը: Այո, Վահրամ Փափազյանը բացառիկ եզակի երևույթ է մեր մոլորակի ժողովուրդների պատմության մեջ:

1910-ական թվականներից մինչև իր կյանքի վերջը (1937) շեքսպիրյան դերերով մեր թատրոնի պատմության մեջ կարևոր տեղ է գրավել Հովհաննես Զարիֆյանը: Նա և դերասան Մանվել Մարությանը (1901–1986) կարող են մրցել միմյանց հետ, թե ով է ավելի շատ հանդես եկել հայկական շրջանակներում՝ Անդրկովկաս, Իրան, Թուրքիա, եվրոպական երկրներ, Եգիպտոս, Հարավային և Հյուսիսային Ամերիկաներ – ուր հայ կա, ում պետք է հոգով ու գիտակցությամբ հայ պահել:

Շեքսպիրյան թատրոնում Զարիֆյանը մարմնավորել է քըսան դեր, բայց մշտական կատարումները եղել են Համլետն ու Օթելլոն: Մարությանի հիմնականը – եղել է Օթելլոն: Սրանց երրորդությունը լրացրել է Տրդատ Նշանյանը, որը պակաս դեր չի խաղացել եվրոպական երկրներից բացի, միջին արևելյան երկրներում ևս թատրոնի լուսատու կայծը վառ պահելու գործում: Շեքսպիրյան կերպարներից նա մարմնավորել է Համլետին, Օթելլոյին, Արքա Լիրին:

Իրանում, Սիրիա – Լիբանանում, Հնդկաստանում և այլուր, երկար տարիներ Օթելլո է մարմնավորել Միքայել Կոստանյանը: Ահա մի բացառիկ շեքսպիրյան ընտանիք, որտեղ հայր և մայր (Մարգո) Կոստանյանները խաղացել են Օթելլոյի և Դեզդեմոնայի, իսկ զավակները՝ Վոլոդյան և Սեղան – Յագոյի և Էմիլյայի դերերը:

Հրաչքների երկիր է Շեքսպիրյան թատրոնի Հայաստանը:

Եղած թարգմանություններին ավելացել են նորերը: Հսկայական թռիչք է կատարել բանաստեղծ և թարգմանիչ Խաչիկ Դաչտենցը: Շարունակելով մասեհյանական թարգմանչական ավանդները, Դաչտենցը թարգմանել է չուրջ 20 պիես, որոնցից 10-ից ավելին բեմադրվել են Անդրկովկասի և Սփյուռքի թատրոններում:

Գրեթե բոլոր առաջատար թատրոններն ունեցել են իրենց շեքսպիրյան բեմադրությունները, անգամ ուսանողական թատրոնում: Քանի՞ թատրոն կգտնվի, որ մի բեմադրության մեջ երեք Համլետ խաղան նույն թատերաշրջանում – Վաղարշ Վաղարշյան, Գուրգեն Ջանիբեկյան, Վահրամ Փափազյան: Սունդուկյանի անվան թատրոնի այս մեծահամբավ դերասանները խաղացել են նաև Օթելլո – Գ. Ջանիբեկյան, Հրաչյա Ներսիսյան, Վ. Փափազյան: Արքա Լիր են խաղացել Վ. Փափազյանը և Հ. Ներսիսյանը, իրենց հմայքի տակ պահելով թե բեմի խաղընկերներին և թե դահլիճի հանդիսատեսներին:

Թատրոնի անվանի վարպետների հետ հանդիսատեսի ուշադրությանն են արժանացել Ավետ Ավետիսյանը (Յագո), Դավիթ Մալյանը (Յագո, Կլավդիոս), Ռուզաննա Վարդանյանը, Սյուզան Գարագաշը, Ամալյա Արազյանը, Մայրանուշ Պարո-

նիկյանը, Լյուսյա Հովհաննիսյանը, Մետաքսյա Սիմոնյանը, Մարգո Մուրադյանը և ուրիշները, որը՝ Դեզդեմոնա, որը՝ Օֆելյա, որը՝ Կորդելիա և ուրիշ դերեր: Հիշարժան են Սոս Սարգսյանի Ցագոն, Մհեր Մկրտչյանի Մերկուտիոն և այլ դերակատարներ:

Սունդուկյանի անվան թատրոնը հետագա ճանաչում գտավ Խորեն Աբրահամյանի Օթելլոյով և Կորիոլանով: Վերջինիս բեմադրությունը 1981-ին արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի: Ամենից շատ, բնականաբար, որպես հին և մայր թատրոն, Սունդուկյանի անվան թատրոնն է չեքսպիրյան բեմադրություններ ունեցել: Պակաս չեն նաև Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական, Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի, Պատանի հանդիսատեսի թատրոնների բեմադրությունները: Մայրաքաղաքից դուրս՝ Գյումրիի և Վանաձորի, Ստեփանակերտի և հանրապետությունից դուրս՝ Թբիլիսիի, Բաքվի (1949-ից դադարած) թատրոնների բեմադրությունների արժանիքները մեր մշակութային կյանքի պատմության համար:

Սփյուռքահայ թատերական կյանքն էլ իր չեքսպիրյան տարեգրությունն ունի՝ Եգիպտոս (Մնիկ Վոլթեր, Արաքսի Օհանյան), Ֆրանսիա (Գառնիկ Բարիլուսյան, Խորեն Փափազյան), Կ. Պոլիս (Գևորգ Գապարաճյան), Լիբանան (Պերճ Ֆազլյան, Վարուժան Խոբչյան, Գրիգոր Սաթամյան): Իսկ եթե նկատի ունենանք հայերի մասնակցությունը համաշխարհային թատրոնի չեքսպիրյան բեմադրություններին, ապա ո՞ւր ասեք, որ հայ թատերական գործիչ չի աշխատել, չեքսպիրյան պիեսների բեմադրությունների մասնակից չի եղել: Շեքսպիրը միշտ և ամենուրեք հայերին մերձեցրել է օտար ժողովուրդների հետ, բարեկամացրել, ստեղծել թատերական գործիչների միասնական մի հզոր ընտանիք:

Հայ չեքսպիրյան թատրոնի բեղմնավոր գործունեության ծնունդ է նաև չեքսպիրագիտության զարգացումը Հայաստանում: Շեքսպիրագիտական միտքը հարստանալու շնորհիվ, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանի նախաձեռնությամբ, ինստիտուտին կից ստեղծվել է Հայկական չեքսպիրագիտության կենտրոն և չեքսպիրյան գրադարան: Կենտրոնի գիտաշխատողների և տարբեր վայրերի գիտնականների չեքսպիրյան թեմաներով գրած աշխատությունների առկայության պայմաններում 1966-ից սկսել են լույս տեսնել «Շեքսպիրական» (7 գիրք) տարեգրքեր, որոնցում լուսաբանվել են չեքսպիրյան թեմաներին առնչվող բազմապիսի հարցեր — թատրոն, երաժշտություն, կինո, կերպարվեստ, թարգմանչական արվեստ, հրապարակումներ, թարգմանություններ, նամակներ, տարեգրություն — մի խոսքով հայկական չեքսպիրագիտության հանրագիտարան: Իսկ գրադարանում 3 տասնյակից ավելի լեզուներով Շեքսպիրի գործերի հրատարակություններ, չեքսպիրագիտական գրականություն, ձեռագիր թարգմանություններ, գրական-թատերական գործիչների անձնական իրեր — փոքրիկ թանգարան:

Շեքսպիրագիտության լայն պրոպագանդումը նպաստեց այն բանին, որ Հայաստանի թատերական գործիչների միությունը շարունակելով 1944, 1981 և 1984 թթ. չեքսպիրյան ներկայացումների փառատոնը, այն դարձրեց ամենամյա փառատոն, որը 2008-ից կրում է Վահրամ Փափազյանի անունը: Այդ փառատոների ընթացքում հայ հանդիսատեսը հնարավորություն է ունենում հաղորդակից դառնալ այլ երկրների ու ժողովուրդների չեքսպիրյան ըմբռնումներին, ձգտումներին, մշակույթին: Այդ ճանապարհով հայ բեմի գործիչներն էլ իրենց հերթին մասնակցում են արտասահմանյան երկրների չեքսպիրյան փառատոներին, ցուցադրում հայկական արվեստը և գոհ ու գնահատված սրտով տուն վերադառնում:

Մոտենում է Շեքսպիրի ծննդյան 450-ամյակը (2014) և մահվան 400-ամյակը (2016): Հայ թատերական գործիչներն այդ տոները դիմավորելու են ակնառու նվաճումներով: Այնպիսի մի փոքրաթիվ ժողովուրդ, ինչպիսին հայերն են, անցած 150 տարվա ընթացքում 85 թարգմանչի կողմից ամբողջովին կամ մասնակի թարգմանվել է 36 պիես, որոնցից 25-ը ունեն իրենց բեմական պատմությունը: Շեքսպիրից հրատարակվել է 10 ժողովածու, առանձին գրքերով՝ 53-ը, որոնցից «Օթելլոն» ու

«Ռոմեո և Ջուլիետը» տպագրվել են 6 անգամ, «Արքա Լիրը» — 7, «Համլետը» — 9։ Շեքսպիրյան թեմաներով լույս են տեսել 67 գիրք և յոթ հատոր «Շեքսպիրական» տարեգիրք։ Հայերը շեքսպիրյան թատրոնին տվել են ավելի քան 92 Օթելլո, 78 Համլետ։ Շեքսպիրի հերոսների խոսքերը հայերեն հնչել են աշխարհի 200-ից ավելի վայրերում։ Պաշտպանվել են 3 դոկտորական, 14 թեկնածուական դիսերտացիաներ։ Սրանք պերճախոս թվեր են, որոնց թիկունքում մեկ ու կես դարյա հարուստ պատմություն կա, որոնք պատիվ են բերում հայ շեքսպիրագիտության պատմությանը, հայ թատրոնին, նրա նվիրյալ մշակներին։

Բախտավար Հովսեփյան

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

անգլ. — անգլերեն
արաբ. — արաբերեն
արքեպ. — արքեպիսկոպոս
բնագր. — բնագրից
ԳԱԹ — Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան
գերմ. — գերմաներեն
պյ.. — պյուղ
գործ. — գործողություն
Ե., Եր. — Երևան
եպ., եպիսկ. — եպիսկոպոս
թարգմ. — թարգմանություն
թուրք. — թուրքերեն
ժող. — ժողովրդական
իտալ. — իտալերեն
խմբ. — խմբագրում
Հ. — հատոր
պարսկ. — պարսկերեն
պրոֆ. — պրոֆեսոր
ռուս. — ռուսերեն
ստեղծ. խմբ. — ստեղծագործական խմբագրում
վարդ. — վարդապետ
տես., տեսաբ. — տեսաբան
ուսումնական. — ուսումնական
քահ. — քահանա
ֆրանս. — ֆրանսերեն
Եր. — Երևան
Մ. — Մոսկվա
Մ.-Լ. — Մոսկվա—Լենինգրադ
Տ. — հատոր

ՇԵՔՍՊԻՐԸ ՀԱՅԵՐԵՆ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Ընտիր երկեր, *երեք հատորով, Հովհաննես Մամիկոնյանի խմբագրությամբ ու առաջաբանով, Եր.։*

Հ. 1, 1951, 596 էջ, Հովհաննես Մասեհյանի թարգմանությամբ։

Համլետ, Օթելլո, Մակբեթ, Արքա Լիր, Ռոմեո և Ջուլիետ (թարգմ. Ն. Դաշտենց), Վենետիկի վաճառականը։

Հ. 2, 1953, 576 էջ, Նաչիկ Դաշտենցի թարգմանությամբ։

Սխալների կոմեդիա, Անսանձ կնոջ սանձահարումը, Վերոնայի երկու ազնվականները, Սիրո ապարդյուն ճիգերը, Տասներկուերորդ գիշեր կամ ինչ որ կամենաք, Վինձորի զվարճասեր կանայք, Միջամառնային գիշերվա երազ (թարգմ. Վ. Սուրենյանց), Խզուր տեղը մեծ աղմուկ։

Հ. 3, 1955, 472 էջ, Նաչիկ Դաշտենցի թարգմանությամբ։

Ռիչարդ Երրորդ, Հուլիոս Կեսար, Անտոնիոս և Կլեոպատրա, Տիմոն Աթենացի, Ձմեռային հեքիաթ (թարգմ. Ս. Ալաջաջյան)։

Ընտիր երկեր, *երկու հատորով, Եր.։*

Հ. 1, 1964, 908 էջ։

Համլետ, Օթելլո, Մակբեթ (թարգմ. Հ. Մասեհյան), Լիր Արքա, Ռոմեո և Ջուլիետ (թարգմ. Ն. Դաշտենց), Վենետիկի վաճառականը (թարգմ. Հ. Մասեհյան)։

Հ. 2, 1964, 960 էջ։

Ռիչարդ Երրորդ, Հուլիոս Կեսար, Տիմոն Աթենացի (թարգմ. Ն. Դաշտենց), Ձմեռային հեքիաթ (թարգմ. Ս. Ալաջաջյան), Կորիոլան (թարգմ. Ն. Դաշտենց)։

Կոմեդիաներ, Եր., 1946, 389 էջ:

Տասներկուերորդ գիշեր, Սխալների կոմեդիա, Վերոնայի երկու ազնվականները (թարգմ. Խ. Դաշտենց), Ոչնչից մեծ աղմուկ (թարգմ. Վ. Թերզիբաշյան):

<Երկեր>, Բեյրութ, 1967 (թարգմ. Հ. Մասեհյան):

Անտոնիոս և Կլեոպատրա (էջ 3–144), Բազում աղմուկ վասն ոչնչի (էջ 1–104), Փոթորիկը (էջ 1–86):

Երկեր, Ուսանողի գրադարան մատենաշար, Եր., 1991, 768 էջ:

Համլետ, Օթելլո, Մակբեթ, Արքա Լիր (թարգմ. Հ. Մասեհյան), Տասներկուերորդ գիշեր, Սխալների կոմեդիա (թարգմ. Խ. Դաշտենց), Սոնետներ, պոեմներ, բանաստեղծություններ (թարգմ. Ս. Մկրտչյան):

Քրոնիկներ, երկու հատորով, Խաչիկ Դաշտենցի և Հենրիկ Սեվանի թարգմանությամբ, Եր.:

Հ. 1, 1972, 536 էջ: Խ. Դաշտենցի թարգմանությամբ:

Ռիչարդ Երկրորդ, Հենրի Չորրորդ, մասն առաջին, Հենրի Չորրորդ, մասն երկրորդ, Հենրի Հինգերորդ:

Հ. 2, 1973, 683 էջ: Հ. Սևանի թարգմանությամբ:

Հենրի Վեցերորդ, մասն առաջին, Հենրի Վեցերորդ, մասն երկրորդ, Հենրի Վեցերորդ, մասն երրորդ, Ռիչարդ Երրորդ (թարգմ. Խ. Դաշտենց):

ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հռոմեոս և Ջյուլիետա (Սթիվընսի, Մալոնի և Ջոնսընի օրինակներից թարգմ. Արամ Կ. Հ. Տետեյան), Զմյուռնիա, 1866, ԻԹ+112 էջ:

Օթելլո Վենետիկի մավր (ռուսերենից թարգմ. Ստեփանոս Սուլխանյան), Տփխիս (Թիֆլիս), 1880, 168 էջ:

Աստղիկ և Ադոնիս (Վեներա և Ադոնիս, թարգմ. Արթաքի Համբարզաբեան), Կ. Պոլիս, 1886, 61 էջ:

Լիր թագավոր (գերմ. թարգմ. Ստեփանոս Մալխասյանց), Ս. Պետերբուրգ, 1888, ԺԳ+186 էջ:

Ջուր տեղը մեծ աղմուկ (գերմ. թարգմ. Հովհաննես Լալայան), Թիֆլիս, 1888, 111 էջ:

Համլետ (ֆրանսերեն և ռուսերեն մի քանի թարգմանության համեմատությամբ, թարգմ. Սենեքերիմ Արծրունի), Թիֆլիս, 1889, VII+125 էջ:

Մակբեթ (գերմ. թարգմ. Ստ. Մալխասյանց), Թիֆլիս, 1892, ԺԸ+108 էջ:

Համլետ Իշխան Դանեմարքի (բնագր. թարգմ. Հովհաննես Մասեհյան), Թիֆլիս, 1894, 222 էջ:

Խչպես կուզեք (բնագր. թարգմ. Հ. Մասեհյան), Թիֆլիս, 1895, 159 էջ:

Ռոմեո և Ջուլիետա (բնագր. թարգմ. Հ. Մասեհյան), Թիֆլիս, 1896, 189 էջ:

Վենետիկի վաճառականը (բնագր. թարգմ. Հ. Մասեհյան), Թիֆլիս, 1897, 133 էջ:

Արքա Լիր (բնագր. թարգմ. Հ. Մասեհյան), Թիֆլիս, 1898, 180 էջ:

Համլետ (բնագր. թարգմ. Գարեգին Բաբազյան), Վիեննա, 1899, ԺԶ–ԻԳ+183 էջ:

Օթելլո (բնագր. թարգմ. Գ. Բաբազյան), Կահիրե, 1904, Է–Թ+186 էջ:

Հուլիոս Կեսար (բնագր. թարգմ. Մաթիկ Պաղտասարյան), Կ. Պոլիս, 1910, 153 էջ:

Անտոնիոս և Կլեոպատրա (բնագր. թարգմ. Գառնիկ Ֆնտըլյան-Փառնակ), Փարիզ, 1911, 108 էջ:

Միջամառնային գիշերվա երազ, «Հուշարարի» մատենադարան, № 14 (բնագր. թարգմ. Վարդգես Սուրենյանց), Թիֆլիս, 1912, 63 էջ:

Ռոմեո և Ջուլիետա (բնագր. թարգմ. Մեսրոպ Նուպարյան), Իզմիր, 1912, ԺԳ+176 էջ:

Համլետ Իշխան Դանեմարքայի (առանց թարգմանչի անվան և հրատարակության տարեթվի, <1920–1921 թթ.>), Կ. Պոլիս, տպարան Տեր-Սահակյանի, 135 էջ:

Համլետ Իշխան Դանեմարքայի (թարգմ. Հ. Մասեհյան, երկրորդ վերամշակված հրատարակություն), Վիեննա, 1921, XXXIII+161 էջ:

Վենետիկի վաճառականը (թարգմ. Հ. Մասեհյան, երկրորդ վերամշակված հրատարակություն), Վիեննա, 1922, V–XXXIX+111 էջ:

Օթելլո Վենետիկի մավրը (թարգմ. Հ. Մասեհյան), Վիեննա, 1922, V–XXII+151 էջ:

Օթելլո (թարգմանիչը չի նշված), Կ. Պոլիս (Օ. Փելթյանի տպագրություն), 1922, 154 էջ:

Մակբեթ (թարգմ. Հ. Մասեհյան), Վիեննա, 1923, V–XLVII+111 էջ:

Վենետիկի վաճառականը (թարգմ. Հ. Մասեհյան), Պետհրատի էժանագին գրադարան մատենաշար, ՊԷԳ), Եր., 1933, 171 էջ:

Մակբեթ (թարգմ. Հ. Մասեհյան), ՊԷԳ, Եր., 1934, 162 էջ:

Համլետ Իշխան Դանեմարքայի (թարգմ. Հ. Մասեհյան), ՊԷԳ, Եր., 1936, 228 էջ:

Օթելլո Վենետիկի մավրը (թարգմ. Հ. Մասեհյան, բնագրի հետ համեմատությամբ խմբ. Վ. Թոթովենց), ՊԷԳ, Եր., 1936, 216 էջ:

Արքա Լիր (թարգմ. Հ. Մասեհյան), Եր., 1938, 220 էջ:

Հուլիոս Կեսար (բնագր. թարգմ. Խ. Դաշտենց, առաջաբանը՝ Վ. Թերզիբաշյանի), Եր., 1944, 108 էջ:

Տիմոն Աթենացի (բնագր. թարգմ. Խ. Դաշտենց), Եր., 1950, 152 էջ:

Լիր Արքա (թարգմ. Խ. Դաշտենց), Եր., 1961, 130 էջ:

Համլետ (թարգմ. Հ. Մասեհյան), Եր., 1961, 139 էջ:

Հուլիոս Կեսար (թարգմ. Հ. Մասեհյան), Վենետիկ, Ս. Ղազար, 1962, 123 էջ:

Ռոմեո և Ջուլիետա (թարգմ. Հ. Մասեհյան, երկրորդ վերամշակված հրատարակություն), Թեհրան, 1962, 160 էջ:

Կորիոլան (թարգմ. Հ. Մասեհյան), Վենետիկ, Ս. Ղազար, 1962, 165 էջ:

Համլետ (թարգմ. Հ. Մասեհյան), Եր., 1966, 264 էջ:

Ռիչարդ Երրորդ (բնագր. թարգմ. Գևորգ Դարֆի [Հովհաննիսյան]), Թեհրան, 1966, 217 էջ (թարգմանությունը նվիրել է «Շեքսպիրի հայ հանճարեղ թարգմանիչ Հովհաննես Մասեհյանի անմահ հիշատակին»):

Լիր Արքա (թարգմ. Խ. Դաշտենց), Եր., 1970, 239 էջ:

Մակբեթ (թարգմ. Հ. Մասեհյան), Եր., 1971, 174 էջ:

Ռոմեո և Ջուլիետա (թարգմ. Խ. Դաշտենց), Եր., 1974, 240 էջ:

Օթելլո (թարգմ. Հ. Մասեհյան), Եր., 1980, 235 էջ:

Տիտոս Անդրոնիկոս (բնագր. թարգմ. Հենրիկ Սևան), Եր., 1983, 160 էջ:

Երկերի լիակատար ժողովածու 39 գրքում:

Գիրք 1. **Պերիկլես** (բնագր. թարգմ. Հ. Սևան), Եր., 1997, 140 էջ:

Գիրք 2, **Տիտոս Անդրոնիկոս** (թարգմ. Հ. Սևան), Եր., 1997, 150 էջ:

Գիրք 3. **Սիմբելին** (թարգմ. Հ. Սևան), Եր., 1997, 195 էջ:

Գիրք 4. **Փոթորիկը** (թարգմ. Հ. Մասեհյան), Եր., <1998>, 125 էջ:

Գիրք 5. **Ամեն ինչ լավ է, թե լավ վերջանա** (թարգմ. Հ. Սևան), Եր., 2006, 200 էջ:

Լուկրեցիայի պատվազրկումը (բնագր. թարգմ. Ս. Մկրտչյան), Եր., 2003, 71 էջ:

Արքա Լիր (թարգմ. Հ. Մասեհյան, ստեղծագ. խմբ. Ե. Զարենց), Եր., 2006, 220 էջ:

Արքա Լիր (թարգմ. Հ. Մասեհյան, ստեղծագ. խմբ. Ե. Զարենց), Եր., 2007, 137 էջ:

Համլետ (թարգմ. Հ. Մասեհյան), Եր., 2008, 143 էջ:

Ռոմեո և Ջուլիետա (թարգմ. Խ. Դաշտենց), Եր., 2008, 115 էջ:

ՄԱՄՈՒԼՈՒՄ ԵՎ ԳՐՔԵՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՄԱՄՆԱԿԻ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1822. — Կալկաթայի «Շտեմարան» հանդեսում, խմբագիր Մարտիրոս Մկրտչյանի և ուրիշների թարգմանությամբ փոքրիկ մեջբերումներ են կատարվել «Ամառնային գի-

չերվա երազ», «Համլետ», «Վերոնայի երկու ազնվականները» պիեսներից:

1848. – *Կալկաթայի «Ազգասեր» հանդեսի (№ 130, էջ 46) խմբագիր Մեսրոպ Թաղիադյանը տպագրել է մի հատված «Հուլիոս Կեսարից» (3-րդ գործ., 2-րդ տես.), «Հրապարակախոսություն Բրուտոսի ի վերա մահվան Կեսարու» վերնագրով:*

1853, հունիս-հուլիս. – *Զմյուռնիայի «Արփի Արարատյան» թերթում, Արամ Տեոդյանի թարգմանությամբ, որպես հավելված, տպագրվել է մի հատված «Կատակերգություն սխալանաց» պիեսից:*

1853, հունիս. – *Վենետիկի «Բազմավեպ» հանդեսում, Խ. Գ.-ի (Խորեն Գալֆայան) թարգմանությամբ, տպագրվել են Անտոնիոսի և Բրուտոսի ճառերը «Հուլիոս Կեսարից» (№ 11, էջ 163–166, 3-րդ գործ., 2-րդ տես.):*

1862. – *Զմյուռնիայի «Հավերժահարս» հանդեսում, Արամ Տեոդյանի թարգմանությամբ, ամբողջը՝ մաս-մաս (№ 1–12) տպագրվել է «Վենետիկի վանքաականը»:*

1862. – *Զմյուռնիայի «Դիմակ» հանդեսում, Արամ Տեոդյանի թարգմանությամբ, տպագրվել են «Համլետի» Ա. արարվածի Ա, Բ, Գ, Դ, Ե տեսարանները և Բ. արարվածի Ա տեսարանը (շարունակությունը մնացել է անտիպ հանդեսի փակման պատճառով):*

1862, մարտ. – *Զմյուռնիայի «Մաղիկ» հանդեսում (№ 25–26), Նուպար Գաղտայյանի թարգմանությամբ ու առաջաբանով տպագրվել է Ռոմեոյի և Ջուլիետի («Ռոմեո և Ջուլիետ») հանդիպման տեսարանը (2-րդ գործ., 2-րդ տես.):*

1877. – *Վենետիկի «Բազմավեպում» Մխիթարյան ուխտի միաբան Արիստակես Ղասդանտիլի (Քասդանտիլյան) թարգմանությամբ, մաս-մաս (ամբողջությամբ) տպագրվել է «Մակբեթը»:*

1877. – *«Բազմավեպի» Լե հատորում (էջ 124–131), Ա. Ղասդանտիլի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Հենրիկոս Ը արքա» ողբերգությունից (4-րդ գործ., 2-րդ տես.):*

1879. – *Թիֆլիսի «Փորձ» հանդեսի առաջին և երկրորդ համարներում, Գևորգ Բարխուդարյանի թարգմանությամբ (ամբողջովին, գերմաներենից) տպագրվել է «Վենետիկի վանքաականը»:*

1886. – *Կ. Պոլսի «Մասիսում» (№ 3819, էջ 875–880), Արթաքի Համբարձաբթանի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Ռոմեո և Ջուլիետից»:*

1889, հունիս. – *Թիֆլիսի «Մուրճ» ամսագրում (№ 6), Ս. Արծրունու՝ «Համլետի» թարգմանության մասին գրախոսականում, համեմատության կարգով, հատվածներ են տպագրվել Ավետիք Եզեկյանի թարգմանած «Համլետից»:*

1891–1892. – *Կ. Պոլսի «Մաղիկ» հանդեսի մի շարք համարներում, Արթաքի Համբարձաբթանի թարգմանությամբ տպագրվել է «Վենետիկի վանքաականը»:*

1894. – *«Բազմավեպում» (№ 9, էջ 427–429), Արիստակես Քասդանտիլյանի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Համլետից»:*

1898, Մոսկվա. – *Մկրտիչ Էմինի երկասիրությունները Հայոց լեզվի, գրականության և պատմության մասին (1840–1850) գրքի ճարտասանությանը նվիրված մասում տպագրվել են մեջբերումներ բնագրով և Էմինի թարգմանություններով՝ «Ռոմեո և Ջուլիետ» (3-րդ գործ., 2-րդ տես.), «Հենրի Չորրորդ թագավոր» (2-րդ մաս, 1-ին գործ., 1-ին տես.), «Հուլիոս Կեսար» (4-րդ գործ., 3-րդ տես.), «Անտոնիոս և Կլեոպատրա» (5-րդ գործ., 2-րդ տես.) պիեսներից:*

1899, հունիս-դեկտեմբեր. – *Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» հանդեսում (№ 12–23), Լ. Պալեոգյանի թարգմանությամբ տպագրվել է «Վենետիկի վանքաականը»:*

1900, մայիս. – *Կ. Պոլսի «Արևելք» թերթում (№ 4312–4316), Ենովքի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Վենետիկի վանքաականից»:*

1900, հունիս. – *Կ. Պոլսի «Արևելք» թերթում (№ 4353–4358), Ենովքի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Ամառնային գիշերվան երազ մը» պիեսից:*

1903. – Ալեքսանդրիայի «Պարտեզ» հանդեսում (№ 7, էջ 100–103), Հովհաննես Սեթյանի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Կորիոլանուսից»:

1903. – Ալեքսանդրիայի «Պարտեզ» հանդեսում (№ 9, էջ 130–138), Հովհաննես Սեթյանի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Հենրիկոս Զ» քրոնիկից:

1913. – Կահիրեի «Գալուստյան միություն» հանդեսում տպագրվել է մի հատված (№ 1 , էջ 7–8), «Հուլիոս Կեսարից»: Թարգմանիչ՝ աշակերտ Է. Հ. Սեթյան:

1916. – Թիֆլիսի «Տարազ» հանդեսում, տպագրվել են առանձին հատվածներ Ավետիք Եղեկյանի թարգմանած «Համլետից»:

1926. – Կահիրեի «Փունջ հայ և օտար գրականության» հանդեսում (պրակ 37, էջ 184–187), խմբագրի՝ Լևոն Ամեմյանի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Արքա Լիրից»:

1936. – Երևանի «Խորհրդային արվեստ» երկշաբաթաթերթում, Վահան Թոթովենցի թարգմանությամբ տպագրվել է «Ռիչարդ Երրորդի» առաջին գործողությունը:

1951. – Նյու Յորքի «Նոր գիր» հանդեսում (ամառ, № 2, էջ 97), խմբագրի՝ Բենիամին Նուրիկյանի թարգմանությամբ տպագրվել է մի հատված «Ռիչարդ Բ» պիեսից:

1966, Երևան. – «Շեքսպիրական» տարեգրքի առաջին գրքում (էջ 251–267), Գաբրիել քահ. Պատկանյանի թարգմանությամբ տպագրվել են հատվածներ «Համլետ Արքայորդի Դանիմարքայի» պիեսից:

1967, Երևան. – «Շեքսպիրական» տարեգրքի երկրորդ գրքում (էջ 337–500), Վահան Թոթովենցի թարգմանությամբ (ամբողջովին) տպագրվել է «Անտոնիոս և Կլեոպատրա» պիեսը:

1972–1973, Բեյրութ. – «Շիրակ» ամսագրի տարբեր համարներում, Վարուժան Պետիկյանի՝ ընագրից կատարած թարգմանությամբ տպագրվել է «Քաղում աղմուկ վասն ոչնչի» կատակերգությունը:

1975, Երևան. – «Շեքսպիրական» տարեգրքի հինգերորդ գրքում (էջ 521–524), Գրիգոր Խալաթյանի թարգմանությամբ տպագրվել են պատառիկներ «Համլետ» և «Ռիչարդ Երկրորդ» պիեսներից:

– «Շեքսպիրականի» նույն տարեգրքում, Մելքոն Կյուրճյանի թարգմանությամբ տպագրվել են հատվածներ «Մակբեթից», էջ 557–565:

2004, Երևան. – «Նոր Դար» հանդեսում, Հովհաննես Մասեհյանի թարգմանությամբ, պակաս էջերով, տպագրվել է «Ամառնամեջ գիշերվա երազը»:

1840, Москва. – В журнале "Пантеон русского и всех европейских театров" (№ 3) была напечатана пьеса "Буря", в переводе Матвея Гамазова (Матевос Гамазян).

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՍՈՒՑԹՆԵՐ

Հանուն Հայրենիքի (Համադրությունը՝ Սուրեն Քոչարյանի, թարգմ. ռուսերենից՝ Սաքո Սուքիասյանի: Հատվածներ Հուլիոս Կեսար, Ռիչարդ Երրորդ, Տրոիլ և Կրեսիդա, Համլետ, Ջոն Արքա, Հենրի Զորրորդ (առաջին մաս), Սիմբելին, Պերիկլես, Հենրի Հինգերորդ, Հենրի Վեցերորդ (առաջին և երրորդ մասեր), Երկու Վերոնացի, Էդվարդ Երրորդ, Տիտոս Անդրոնիկոս, Երկու նշանավոր տոհմակիցներ, Կորիոլան, Վեներա և Ադոնիս, Լուկրեցիա – գործերից: Եր., 1942, 31 էջ:

Վիլյամ Շեքսպիր, Աֆորիզմներ (քաղեց Նշան Մուրադյանը), Եր., 1964, 84 էջ:

Шекспир в искусстве (կազմող և առաջաբանի հեղինակ Յակով Խաչիկյան), Եր., 1977, 200 էջ:

Շեքսպիրը արվեստի մասին (Հատվածներ և ասույթներ, կազմող՝ Յակով Խաչիկյան), Եր., 1985, 199 էջ:

Իմաստախոս Շեքսպիրը (աֆորիզմներ, հայերեն և անգլերեն, կազմող՝ Սոնա Սեֆերյան), Եր., 1986, 339 էջ:

Վիլյամ Շեքսպիր. Աֆորիզմներ, ասույթներ, իմաստուն մտքեր (կազմող՝ Վ. Սահակյան), Եր., 2004, 91 էջ:

Իմաստախոս Շեքսպիրը (կազմող՝ Ս. Սեֆերյան), Եր., 2010, 375 էջ:

ՍՈՆԵՏՆԵՐ

Սոնետներ (բնագր. թարգմ. Դավիթ Դավթյան, Հովհաննես Քելեչյան, «Շեքսպիրն իբրև բանաստեղծ» — առաջաբանը՝ Հովհաննես Մամիկոնյանի), Եր., 1961, 170 էջ:

Սոնետներ (թարգմ. Գևորգ Էմին), Եր., 1995, 79 էջ:

Սոնետներ (բնագրով և հայերեն թարգմանությամբ Շեն-Մահի <Թորգոմ արքեպ. Մանուկյան>), Երուսաղեմ, 1996, V–XX + 315 էջ:

Սոնետներ (թարգմ. Սամվել Մկրտչյան), Եր., 1994, 311 էջ:

Սոնետներ (թարգմ. Սամվել Մկրտչյան), Եր., 2009, 110 էջ:

Սոնետների թարգմանիչներ՝

Ադամյան Պետրոս	*Մասեհյան Հովհաննես*
Անդրեասյան Բյուրակն	*Մելեքյան Ե.*
Անտոնյան Հակոբ	*Ջանան Մկրտիչ*
Գրաչի Աշոտ	*Սուրենյանց Վարդգես*
Թեքեյան Վահան	*Սևակ Պարույր*
Թումանյան Հովհաննես	*Տարոնցի Սողոմոն*
Համբարձումյան Արթաքի	*Տեր-Անդրեասյան Երվանդ*
Հովհաննիսյան Հովհաննես	*Ֆնտքյան Գառնիկ*
Հուրյան Թաթուլ	

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առանձին հրատարակություններ

Համլետ Դանիացի իշխան *— «Համլետի» բովանդակության համառոտ, արձակ շարադրանքի թարգմանությունը ռուսերենից, (թարգմ. Սեյադ Ամիրյան), Բաքու, 1986, 2+48 էջ: Գիրքը նվիրվել է Պետրոս Ադամյանին:*

Լիր թագավոր *— (ժողովրդական ընթերցանության համար փոխադրել է օր. Շուշանիկ Տեր-Նիկողոսյանը), Թիֆլիս, 1891, 38 էջ (երկու պատկեր):*

Լիր Արքա *— Վիկտոր Օստրոգորսկու ժողովածուից թարգմ. Տիրուհի Կոստանյան, Թիֆլիս, 1894, 42 էջ:*

Վեպք ի դերից Շեկսպիրա — Զարլզ և Մերի Լեմների (Լամբա) արձակ շարադրանքը Թ. Տեր-Ստեփաննոսյանի (Կալկաթա) թարգմանությամբ, Վենետիկ, Ս. Ղազար, 1903, 271 էջ:

Բովանդակությունը՝ Ռոմեո և Ջուլիետ, Վենետկացի վաճառականն, Օթելլո, Զգոնացուցնել կին ժանտաբնույթ, Համլետ, Դեր սխալանաց և չփոթի, Մակբեթ, Սիմբելին, Տիմոն Աթենացի, Որպես և հաճո է քեզ, Արքայն Լիր, Փոթորիկն:

Զմեռային հեքիաթ *— Զարլզ և Մերի Լեմների համառոտ շարադրությունը Հար(ություն) Նահապետյանի թարգմանությամբ, Թիֆլիս, 1904, 29 էջ:*

Զմեռային հեքիաթ *— Ըստ Շեքսպիրի, վերակազմեց Ղազարոս Աղայանը, Թիֆլիս, 1910, 48 էջ:*

Շեյքսպիրյան պատմվածքներ, Վենետիկի վաճառականը *— Զարլզ և Մերի Լեմների արձակ շարադրանքը, թարգմանությունը Հովսեփ Տեր-Ստեփանյանի, Կ. Պոլիս, 1910, 31 էջ:*

Շեյքսպիրյան ավանդավեպեր *— Զարլզ և Մերի Լեմների արձակ շարադրանքը, թարգմանությունը՝ Մ. Վերածինի (Մինաս Գասպարյան), Բոստոն, 1922, 212 էջ:*

Բովանդակությունը՝ Ռոմեո և Ջուլիետ, Փոթորիկը, Օթելլո, Կռվասեր կնոջ ընտելացումը, Լիր Արքա, Ամառ գիշերվան երազ մը, Համլետ, Զմեռվա պատմությունը, Վենետիկի վաճառականը, Աստվածահայտնությունը <Տասներկուերորդ գիշեր>:

Շեյքսպիրյան ավանդավեպեր *— **Արքա Լիր**, կազմեց՝ Գասպար Իփեկյանը, Բեյրութ, 1951, 56 էջ :*

Շեքսպիրը մանուկների համար *— Ջեննի Լանգի ազատ շարադրանքը, անգլերենից թարգմանությունը՝ Սուսաննա Մկրտչյանի, Երևան, 1970, 92 էջ:*

Բովանդակությունը՝ Անսանձ կնոջ սանձահարումը, Փոթորիկ, Վենետիկի վաճառականը, Ինչպես կուզեք, Զմեռային հեքիաթ, Սխալների կոմեդիան:

Մասնակի տպագրություններ մամուլում

1965, դեկտեմբերի 16, Երևան. — *Արվեստի աշխատողների տանը, գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի և Հայկական թատերական ընկերության գիտական նստաշրջանը նվիրված շեքսպիրյան դերասան (խաղացել է 10 դեր) Հովհաննես Աբելյանի ծննդյան 100-ամյակին: Բացման խոսք՝ Ռ. Զարյան, զեկուցողներ՝ Լ. Հախվերդյան, Ս. Մելիքսեթյան, Բ. Հարությունյան, Բ. Հովակիմյան:*

1965, դեկտեմբերի 20, Կիրովական (այժմ՝ Վանաձոր). — *Աբելյանի անվան թատրոնում նշվել է Հովհաննես Աբելյանի ծննդյան 100-ամյակը: Զեկուցող՝ ռեժիսոր Սոկրատ Աքմաքչյան:*

1969, Երևան. — *Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի Հայկական ընկերության ցուցասրահում կազմակերպվել է նկարիչ Ալեքսանդր*

Գրիգորյանի՝ Շեքսպիրի պիեսների հերոսների և տեսարանների (Համլետ, Օթելլո, Մակբեթ, Արքա Լիր, Ռոմեո և Ջուլիետ, Վենետիկի վաճառականը) գրքային նկարազարդումների ցուցահանդես:

Նման ցուցահանդես է բացվել նաև Երևանի նկարչի տանը, Մոսկվայում, Հունգարիայում:

1980, Լոնդոն. — Անգլիայում, հայկական չաբաթի շրջանակներում, «Ալպինե» թանգարանում բացվել է Ալեքսանդր Գրիգորյանի՝ Հով.՝ Մասեհյանի թարգմանությունների համար կատարած 20 գործի ցուցադրություն, որը կրկնվել է նաև «Հայ մշակույթի տանը»:

1982, նոյեմբերի 9, Երևան. — Սունդուկյանի անվան թատրոնում, նշվել է հայ մեծ դերասանուհի՝ Օֆելյայի, Կատարինեի առաջին դերակատար, Արևելքի ժողովուրդների թատերական կյանքում Համլետի Առաջին կին դերակատար (21 տարի) Սիրանույշի ծննդյան 125-ամյակը, որ կազմակերպել են Հայաստանի Մշակույթի նախարարությունը և Արվեստի ինստիտուտը: Բացման խոսք՝ ՀԹԸ նախագահ Հրաչյա Ղափլանյան, զեկուցող՝ Ռուբեն Զարյան, ցուցահանդես:

1985, դեկտեմբերի 20, Երևան. — Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, նշվել է Հովհաննես Աբելյանի ծննդյան 120-ամյակը: Բացման խոսք՝ Ռ. Զարյան, զեկուցող՝ Բախտիար Հովակիմյան, ելույթներ՝ Գեվորգ Աչուղյան, Գևորգ Ասլանյան, Լյուսյա Միրզոյան:

1987, մարտի 27, Երևան. — Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Թատրոնի միջազգային օրվա առթիվ, նշվել է թատերական մեծ գործիչ, արևելահայ թատրոնում Շեքսպիրի առաջին թարգմանիչ, դերակատար և բեմադրիչ (Շայլոկ, Օթելլո) Գևորգ Զմշկյանի ծննդյան 150-ամյակը: Բացման խոսք՝ Ռ. Զարյան, զեկուցողներ՝ Բ. Հովակիմյան, Լարիսա Գյուլիջանյան: Ցուցահանդես:

1987, ապրիլի 14, Երևան. — Դերասանի տանը, Հայաստանի թատերական գործիչների միության և Հայ բեմի վետերանների խորհրդի նախաձեռնությամբ նշվել է Գևորգ Զմշկյանի ծննդյան 150-ամյակը: Բացման խոսք՝ Հրաչյա Ղափլանյան, զեկուցող՝ Ռ. Զարյան, ելույթներ՝ Սիլվա Փոթեյան, Բախտիար Հովակիմյան: Շնորհակալության խոսք՝ Զմշկյանի թոռնուհի, պետոպերայի մեներգչուհի Մարիա Զմշկյան:

1987, սեպտեմբերի 15, Երևան. — Դերասանի տանը, ՀԹԳՄ և Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է հուշ-երեկո՝ նվիրված Սիրանույշի ծննդյան 130-ամյակին: Բացման խոսք՝ Սիլվա Փոթեյան, զեկուցող՝ Ռ. Զարյան, ելույթներ՝ Բ. Հովակիմյան, Արշալույս Դովլաթյան, Վաղինակ Չեյթաղյան: Ցուցահանդես:

1988, ապրիլի 11, Ալավերդի. — Լեռնամետալուրգիական կոմբինատի մշակույթի պալատում, Ալավերդու քաղխորհրդի կուլտուրայի բաժնի և ՀԹԳ միության Կիրովականի բաժանմունքի նախաձեռնությամբ (բաժանմունքի քարտուղար Վոլոդյա Գրիգորյան) կազմակերպվել է «Այս երեկո Փափազյանի հետ» միջոցառումը՝ նվիրված չեքսպիրյան չգերազանցված դերասան (5—6 լեզվով) Վահրամ Փափազյանի ծննդյան 100-ամյակին: Զեկուցող՝ Մելս Սանթոյան, ելույթ՝ Բ. Հովակիմյան: Աբելյանի անվան թատրոնի դերասաններ Հակոբ Ազիզյանի, Նաիրա Քալաչյանի («Դիմակահանդես»), Ռազմիկ Խոսրովի, Հասմիկ Ալեքսանյանի («Ռիչարդ Երկրորդ»), Գրետա Մեջլումյանի (ընթերցանություն «Հետադարձ հայացք»-ից) մասնակցությամբ:

Նույնը կրկնվել է ապրիլի 14-ին, Նոյեմբերյանի Կուլտուրայի պալատում:

1991, Երևան. — Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում կազմակերպվել է միջոցառում և ցուցահանդես՝ նվիրված Պետրոս Ադամյանի մահվան 100-ամյակին: Կազմակերպիչ՝ թատերական բաժնի վարիչ Բ. Հովակիմյան:

1999, նոյեմբերի 30, Երևան. — *Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում բացվել է Պետրոս Ադամյանի ծննդյան 150-ամյակին նվիրված ցուցահանդես: Բացման խոսք՝ Հենրիկ Բախչինյան, ելույթներ՝ ՀԹԳՄ նախագահ Երվանդ Ղազանչյան, Բ. Հովակիմյան, Հենրիկ Հովհաննիսյան:*

2004, հունիսի 14, Երևան. — *Դերասանի տանը, ՀԹԳՄ նախաձեռնությամբ նշվել է անվանի դերասան, չեքսպիրյան ամենաչատ դերերի (20) դերակատար Հովհաննես Զարիֆյանի ծննդյան 125-ամյակը: Բացման խոսք՝ Երվանդ Ղազանչյան, զեկուցող՝ Հայկազ Երանոսյան, ելույթ՝ Բ. Հովակիմյան:*

* * *

1887, ապրիլ, Թիֆլիս. — *Պետրոս Ադամյանն իր «Շեքսպիր և յուր Համլեթ ողբերգության աղբյուրն ու քննադատությունները» ուսումնասիրությունն ավարտելուց հետո, մտադիր է եղել այդ թեմայով դասախոսություն կարդալ, բայց ռուսահպատակ չլինելով, արգելվել է:*

1915, ապրիլի 19, Բաքու. — *Մայիսյանների թատրոնում (այժմ՝ Ախունդովի անվ. օպերայի և բալետի թատրոն), չեքսպիրյան դերասան Կարապետ Գալֆայանը դասախոսություն է կարդացել Շեքսպիրի մասին և մենախոսություններ կատարել «Համլետից» և «Օթելլոյից»:*

1916, ապրիլի 28, Թիֆլիս. — *Ժողովարանում, Կովկասի Հայ գրողների ընկերության նախաձեռնությամբ նշվել է Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակը: Բացման խոսքով հանդես է եկել ընկերության նախագահ Հովհաննես Թումանյանը: Ելույթներ են ունեցել Ավետիս Ահարոնյանը, Շիրվանզադեն, Նիկոլ Աղբալյանը, Գասպար Իփեկյանը, Վահան Թոթովենցը:*

1916, մայիսի 22, Երևան. — *Քաղաքային ակումբում, Շեքսպիրի մահվան 300-ամյակի առթիվ միջոցառմանը, Շեքսպիրի մասին դասախոսություն է կարդացել մանկավարժ Մարտիրոս Հովհաննիսյանը:*

1917, դեկտեմբեր, Փարիզ. — *Շեքսպիրի թարգմանիչ Հովհաննես Մասեհյանը դասախոսություն է կարդացել մեծ դրամատուրգի մասին:*

1921, դեկտեմբերի 4, Նյու Յորք. — *Համլետի գրական-հոգեբանական վերլուծության թեմայով զեկուցում է կարդացել Մնար Մնարյանը (Նարինյան):*

1925, հոկտեմբեր, Երևան. — *Ամերիկայից նոր վերադարձած դերասան Հովհաննես Աբելյանը Առաջին (այժմ՝ Սունդուկյանի անվ.) պետթատրոնի կոլեկտիվի համար զեկուցում է կարդացել «Համլետի» մասին:*

1935, մարտի 4, Թեհրան. — *Հայ ակումբում, Վահե Արծրունին դասախոսություն է կարդացել «Շեքսպիրի միտքը և արվեստը» թեմայով:*

1943, ապրիլի 28, Մոսկվա. — *Համառուսաստանյան թատերական ընկերության Համամիութենական Շեքսպիրագիտական կոնֆերանսում, Արշալույս Արշարունին զեկուցում է կարդացել «Վաղարշ Վաղարշյանը Համլետի դերում» թեմայով:*

1946, փետրվարի 7, Կահիրե. — *Հայ Գեղարվեստասիրաց միության սրահում, դերասան-երգիչ Նորեն Տեոդյանը դասախոսություն է կարդացել «Դերասան Պետրոս Ադամյան» թեմայով:*

1946, հունիսի 26, Երևան. — *Հայաստանի գիտությունների ակադեմիայի դահլիճում, Ռուբեն Զարյանը դասախոսություն է կարդացել «Վահրամ Փափազյանի Օթելլոն» թեմայով:*

1947, մարտի 12, Թբիլիսի. — *Վրաստանի գրողների միության Հայկական բաժանմունքում, Ռուբեն Զարյանը կարդացել է «Վահրամ Փափազյանի Օթելլոն» թեմայով զեկուցում:*

1948, հունիսի 25, Կահիրե. — *Հայ Գեղարվեստասիրաց միության սրահում, Լևոն Գամյանը զեկուցում է կարդացել «Շեքսպիրի կյանքն ու գործը» թեմայով:*

1956, փետրվարի 11, Երևան. — *Գեղարվեստա-թատերական ինստիտուտում, Ռուբեն Զարյանը հանդես է եկել «Համլետը» Անգլիական Տիններտ թատրոնի կատարմամբ» թեմայով զեկուցումով:*

1956, ապրիլի 23, Երևան. — *Արվեստի աշխատողների տանը, Հայկական թատերական ընկերությունը կազմակերպել է երեկո՝ նվիրված Շեքսպիրի մահվան 340-ամյակին: Բացման խոսք է ասել ընկերության նախագահ Վաղարշ Վաղարշյանը: «Շեքսպիրը հայերեն և հայ բեմում» թեմայով զեկուցում է կարդացել Վահրամ Թերզիբաշյանը: Վերջում ներկայացվել են տեսարաններ Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Աբեյանի անվան թատրոնի «Զմեռային հեքիաթ» պիեսի բեմադրությունից:*

1958, հուլիսի 5, Նոր Բայազետ (այժմ՝ Գավառ). — *Թատրոնի կոլեկտիվի համար, Լուիզա Սամվելյանը դասախոսություն է կարդացել «Շեքսպիրը հայ թատրոնում» թեմայով:*

1959, ապրիլի 23, Երևան. — *Հայաստանի Գրողների միության տանը նշվել է Շեքսպիրի ծննդյան 395-ամյակը: Շեքսպիրի մասին զեկուցում է կարդացել գրականագետ Հովհաննես Մամիկոնյանը: Գեղարվեստական մասում կատարվել են տեսարաններ Սունդուկյանի անվան թատրոնի «Օթելլոյի» բեմադրությունից:*

1960, ապրիլի 4, Արտաշատ. — *Կուլտուրայի համալսարանի ունկնդիրների համար գրականագետ-թատերագետ Գառնիկ Ստեփանյանը դասախոսություն է կարդացել «Պետրոս Ադամյան» թեմայով:*

1961, հունիսի 2, Երևան. — *Արվեստի աշխատողների տանը, Կուլտուրայի համալսարանի ունկնդիրների համար Լևոն Խալաթյանը դասախոսություն է կարդացել «Վահրամ Փափազյան» (Համլետ, Արքենին) թեմայով:*

1963, դեկտեմբերի 27, Թեհրան. — *«Արարատի» սրահում տեղի է ունեցել հուշ-երեկո նվիրված Շեքսպիրի անմահ թարգմանիչ Հովհաննես Մասեհյանի մահվան 30-ամյակին: Բացման խոսք՝ Հարութիկ Թամրազյան, զեկուցողներ՝ Աբրահամ Ասատրյան, Գևորգ Դարֆի: Փակման խոսք՝ Արտակ արքեպ. Մանուկյան:*

Վերջում ներկայացվել է «Օթելլոյի» 3-րդ գործողությունը Մ. և Ռ. Մարությունների, Էդիկ Ապանյանի, Հարություն Մինասյանի, Լորիկ Հովսեփյանի մասնակցությամբ:

1964, ապրիլի 10, Երևան. — *Պետական համալսարանում տեղի է ունեցել Շեքսպիրի ծննդյան 400-ամյակին նվիրված ընդլայնված նիստ: Բացման խոսք՝ Մկրտիչ Մկրյան, զեկուցող՝ Հովհաննես Մամիկոնյան: «Համլետից», «Մակբեթից», «Օթելլոյից» մենախոսություններ է կարդացել Վ. Փափազյանը:*

1964, ապրիլի 15, Երևան. — *Արվեստի աշխատողների տանը, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, տեղի է ունեցել գիտական նստաշրջան, որ կազմակերպել են Հայկական թատերական ընկերությունը և Մշակույթի նախարարության Արվեստի ինստիտուտը: Բացման խոսք՝ Սարգիս Մելիքսեթյան, զեկուցողներ՝ Գառնիկ Ստեփանյան, Լևոն Խալաթյան, Լևոն Հախվերդյան, Ռուբեն Զարյան: «Համլետից» և «Օթելլոյից» մենախոսություններ է կարդացել Վ. Փափազյանը:*

1964, ապրիլի 21, Երևան. — *Գիտությունների ակադեմիայի փոքր դահլիճում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, տեղի է ունեցել Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ընդլայնված նիստ: Բացման խոսք՝ Գուրգեն Հովնան, զեկուցող՝ Սողոմոն Սողոմոնյան:*

1964, ապրիլի 22, Երևան. — *Գեղարվեստա-թատերական ինստիտուտում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, տեղի է ունեցել գիտական նստաշրջան: Բացման խոսք՝ Վավիկ Վարդանյան, զեկուցողներ՝ Սուրեն Հարությունյան, Մեսրոպ Սահակյան: Ուսանողների կատարմամբ ներկայացվել են տեսարաններ «Հուլիոս Կեսարից»:*

1964, ապրիլի 23, Երևան. — *Կիլիկիայի Մշակույթի պալատում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, Սուրեն Հարությունյանը դասախոսություն է կարդացել «Շեքսպիրը և հայ կուլտուրան» թեմայով:*

1964, ապրիլի 23, Երևան. — *Պետական համալսարանում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, անց է կացվել երեկո՝ անգլերեն: Բացման խոսք՝ Հայկ Ոսկերչյան, զեկուցողներ՝ Ա. Ավագյան, Լ. Հովհաննիսյան:*

1964, ապրիլի 25, Երևան. — *Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, տեղի է ունեցել Կառավարական հոբելյանական հանձնաժողովի հանդիսավոր նիստ: Բացման խոսք՝ Հրաչյա Հովհաննիսյան, զեկուցող՝ Հովհաննես Մամիկոնյան: Ելույթներ՝ Նաիրի Զարյան, Գուրգեն Ջանիբեկյան, Ռուբեն Զարյան: Սունդուկյանցիները ներկայացրել են «Օթելլոյի» 3-րդ գործողությունը:*

1964, ապրիլի 27, Երևան. — *Արվեստի աշխատողների տանը, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, Արտասահմանյան երկրների հետ բարեկամական և կուլտուրական կապի Հայկական ընկերության հոբելյանական երեկոն: Բացման խոսք՝ Վ. Վարդանյան, ելույթներ՝ Վ. Փափազյան, Ռ. Զարյան, Ս. Հարությունյան:*

1964, ապրիլի 29, Երևան. — *Բժշկական ինստիտուտում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, զեկուցումով հանդես է եկել Ռ. Զարյանը: Վ. Փափազյանի և Դ. Մալյանի (Ցագո) կատարմամբ ներկայացվել են տեսարաններ «Օթելլոյից»:*

1965, հունվարի 11, Երևան. — *Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, թատերագետ Գրիգոր Բոյաջիևը (Մոսկվա) դասախոսություն է կարդացել «Շեքսպիրը օպերայում» թեմայով:*

1965, հունվարի 16, Երևան. — *Սունդուկյանի անվան թատրոնում, Հայկական թատերական ընկերությունը կազմակերպել է Գ. Բոյաջիևի դասախոսությունը «Շեքսպիրյան հոբելյանական օրերը» թեմայով: Ներկայացվել է «Ռոմեո և Ջուլիետը»:*

1965, մայիսի 30, Լոնդոն. — *Կազմակերպվել են Հայաստանցի գիտնականների զեկուցումները՝ Ռ. Զարյան «Շեքսպիրը Հայ իրականության մեջ», Գևորգ Բրուտյան — «Շեքսպիրի հումանիզմը» թեմաներով:*

1966, մայիսի 4. — *Երևանի գիտությունների ակադեմիայի փոքր դահլիճում, Շեքսպիրի մահվան 350-ամյակի կապակցությամբ, ԳԱ Արվեստի ինստիտուտի Շեքսպիրագիտության խումբը կազմակերպել է իր անդրանիկ գիտական նստաշրջանը:*

1. Շեքսպիրագիտության խումբը և նրա նպատակները — բացման խոսք՝ ինստիտուտի տնօրեն, Ռուբեն Զարյան:

2. Մասեհյանի շեքսպիրյան թարգմանությունների լեզվական արվեստը — զեկուցող Վարագ Առաքելյան:

3. Զարբհանալյանը Շեքսպիրի մասին — զեկուցող Մուշեղ Նարյան:

4. Իմ աշխատանքը շեքսպիրյան թարգմանությունների վրա — զեկուցող Խաչիկ Դաշտենց:

Մրագրից դուրս՝ Շեքսպիրյան գրադարանի ստեղծումը — զեկուցող Ռ. Զարյան:

Նստաշրջանի ծրագիրը:

1967, ապրիլի 27, Երևան. — *Գիտությունների ակադեմիայում տեղի է ունեցել երեկո՝ նվիրված Շեքսպիրին: Բացման խոսք՝ Արտաշես Կարինյան, զեկուցող՝ Ռ. Զարյան: Սունդուկյանցիները ներկայացրել են «Օթելլոյի» 3-րդ գործողությունը:*

1967, մայիսի 11, Մոսկվա. — *Շեքսպիրյան Համամիութենական կոնֆերանսում Ռ. Զարյանը կարդացել է «Շեքսպիրը Հայ բեմում» թեմայով զեկուցում:*

1967, մայիս, Լենինական. — *Պետթատրոնում կայացել է Արվեստի ինստիտուտի Շեքսպիրագիտության Հայկական կենտրոնի 3-րդ գիտական նստաշրջանը՝ նվիրված «Տասներկուերորդ գիշեր» կատակերգությունը, որ կազմակերպել են Հայկական թատերական ընկերությունը և Արվեստի ինստիտուտը: Բացման խոսք՝ Ռ. Զարյան, զեկուցող՝ Նշան Մուրադյան, ելույթներ՝ Արմեն Հովսեփյան, Լևոն Խալաթյան, Լևոն Զոհրաբյան, Արծրունի Հարությունյան, Վարդան Թերզիբաշյան, Շմավոն Թորոսյան: Վերջում՝ Սունդուկյանցիները ներկայացրել են մի տեսարան «Օթելլոյից»:*

1969, Հոկտեմբերի 11, Կահիրե. — *Հայ Գեղարվեստասիրաց միության «Թեքեյան» սրահում Ռ. Զարյանը կարդացել է «Ադամյանի Շեքսպիրը» թեմայով զեկուցում:*

Հայկական ընթերցարանում նրա թեման է եղել «Փափազյանը և Շեքսպիրը»:

1970, ապրիլի 11, Լենինական. — *Պետթատրոնում Ռ. Զարյանը կարդացել է «Շեքսպիր և Ադամյան» թեմայով դասախոսություն:*

1972, դեկտեմբերի 5, Երևան. — *Արվեստի ինստիտուտում, Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտին կից Շեքսպիրագիտության Հայկական կենտրոնը կազմակերպել է գիտական նստաշրջան՝ նվիրված Շեքսպիրի համբավավոր թարգմանիչ Հովհաննես Մասեհյանին:*

1973, Հունիսի 18. — *Երևանի Արվեստի աշխատողների տանը, ՀԳԱ Արվեստի ինստիտուտի Շեքսպիրագիտության Հայկական կենտրոնի գիտական նստաշրջանը:*

Բացման խոսք — Ռ. Զարյան:

1. Շեքսպիրի երկերի առաջին ժողովածուն (Հրատարակության 350-ամյակի առթիվ) — զեկուցող Նշան Մուրադյան:

2. Լիրը և «Խեղճ մերկ աղքատների» պատկերը — զեկուցող Ռ. Վայման (Գերմանիա):

3. Շեքսպիրի «Անտոնիոս և Կլեոպատրայի» հերոսների լեզվական ընութագրման և հայերեն թարգմանությունների որոշ հարցերի մասին — զեկուցող Ռուզան Մարգունի:

4. Դրամատուրգիական գործողության մեկնաբանությունը Փափազյան — Համլետի բեմական տարբերակում — զեկուցող Անելկա Գրիգորյան:

Գիտական նստաշրջանի ծրագիրը:

1981, ապրիլի 9, Երևան. — *Մշակույթի նախարարության թատերական ինքնագործ խմբերի որակավորման շրջանավարտների մեկամսյա դասընթացներում Նշան Մուրադյանը դասախոսություն է կարդացել «Շեքսպիրյան ֆեստիվալները Հայաստանում» թեմայով:*

1982, մայիսի 16, Երևան. — *Մշակույթի նախարարության թատերական ինքնագործ խմբերի որակավորման շրջանավարտների մեկամսյա դասընթացներում Լուիզա Սամվելյանը դասախոսություն է կարդացել «Շեքսպիրը հայ թատրոնում» թեմայով:*

1983, նոյեմբերի 22, Երևան. — *Արվեստի ինստիտուտում, Շեքսպիրագիտության Հայկական կենտրոնը կազմակերպել է Շեքսպիրյան նստաշրջան: Բացման խոսք՝ Ռ. Զարյան, զեկուցողներ՝ Բյուրակն Անդրեասյան, Հակոբ Մուլիկյան, Արմեն Հովսեփյան, Աիդա Ֆրունջյան:*

1984, ապրիլի 25, Երևան. — *Դերասանի տանը, Արվեստի ինստիտուտին կից Շեքսպիրագիտության Հայկական կենտրոնը կազմակերպել է չեքսպիրյան գիտական նստաշրջան: Բացման խոսք՝ Ռ. Զարյան, զեկուցողներ՝ Ռ. Մարգունի, Ա. Ֆրունջյան, Մագդա Արզաքանյան, Էլեոնորա Վարդանյան, Անելկա Գրիգորյան:*

1990, մայիսի 18, Երևան. — *Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Թանգարանների միջազգային օրվա առթիվ, տեղի է ունեցել գիտական նստաշրջան՝ նվիրված Շեքսպիրի «Վենետիկի վաճառականի» առաջին բեմադրության 125-ամյակին, որով նա մուտք է գործել արևելահայ թատրոն: Բացման խոսք՝ թանգարանի տնօրեն Աչոտ Օհանյան, զեկուցող՝ թատերական բաժնի վարիչ՝ Բախտիար Հովակիմյան: Ելույթներ՝ Հայկազ Երանոսյան, Գևորգ Ղարիբջանյան, Պիոն Հակոբյան: Ծուցահանդես:*

— Նոյեմբերի 29, Երևան. — Նույն թեմայով զեկուցումը կրկնվել է ՀԹԸ Դերասանի տանը:

1991, մարտի 27, Երևան. — *Մշակույթի նախարարության Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Թատրոնի միջազգային օրվա միջոցառումը նվիրված է եղել Պետրոս Ադամյանի մահվան 100-ամյակին: Բացման խոսք՝ Աչոտ Օհանյան, զեկուցող՝ Բ. Հովակիմյան: Դերասանուհի Ժաննեն Գևորգյանը կատա-*

րել է տեսարաններ «Համլետ» մոնոներկայացումից: Ցուցահանդես:

1997, Հուլիսի 4, Մոսկվա. — *Արվեստագիտության գիտահետազոտական ինստիտուտում, թատերագետ Լևոն Մուրաֆյանը զեկուցում է կարդացել «Մարդու կոնցեպցիան Շեքսպիրի ստեղծագործություններում ըստ Վահրամ Փափազյանի և Հրաչյա Ներսիսյանի ընկալումների» (ռուսերեն) թեմայով:*

— *Հոկտեմբերի 17. — Լոնդոն, Բրիտանական գրադարանում, Լևոն Մուրաֆյանը հանդես է եկել նույն թեմայով (անգլերեն) զեկուցումով:*

1999, Նոյեմբերի 23, Հալեպ. — *«Պետրոս Ադամյան» թատերախմբի համար թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանը կարդացել է «Պետրոս Ադամյան» թեմայով դասախոսություն:*

1999, դեկտեմբերի 10, Երևան. — *Հայաստանի թատերական գործիչների միության դահլիճում տեղի է ունեցել գիտաժողով՝ նվիրված Պետրոս Ադամյանի ծննդյան 150-ամյակին, որ կազմակերպել են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, ՀԹԳՄ-ն, Երևանի թատերական և կինոարվեստի պետական ինստիտուտը: Բացման խոսք՝ Սոս Սարգսյան, զեկուցողներ՝ Վիգեն Ղազարյան, Բախտիար Հովակիմյան, Անելկա Գրիգորյան, Ռուզան Մարգունի, Լաուրա Մուրադյան, Հենրիկ Հովհաննիսյան:*

* * *

1944, ապրիլի 22–30, Երևան. — *Անց է կացվել Շեքսպիրի ծննդյան 380-ամյակին նվիրված վեցերորդ Համամիութենական հերթական գիտահետազոտական կոնֆերանս և փառատոն, որը կազմակերպել են Համառուսաստանյան թատերական ընկերությունը. Հայաստանի Ժողկոմխորհին կից Արվեստի գործերի վարչությունը, Հայաստանի թատերական ընկերությունը և Համառուսաստանյան մշակութային կապերի ընկերությունը:*

Սունդուկյանի անվան թատրոնի ճեմասրահում բացվել է թատերական թանգարանի պատրաստած (ղեկ. Սարգիս Մելիքսեթյան, ձևավորող-նկարիչ՝ Կարո Մինասյան) «Շեքսպիրը հայ բեմի վրա» թեմայով ցուցահանդեսը:

Կոնֆերանսի նիստերը տեղի են ունեցել Սունդուկյանի անվան թատրոնում, ցերեկը՝ ժամը 12-ին, իսկ ներկայացումները՝ երեկոյան ժամը 8-ին:

Միջոցառմանը հրավիրվել են Մոսկվայի, Թբիլիսիի, Բաքվի մի շարք թատերական գործիչներ:

Ապրիլի 22, *երեկոյան տեղի է ունեցել հանդիսավոր նիստ: Բացման խոսք՝ Արվեստի գործերի վարչության պետ Զավեն Վարդանյան: Ողջույններ՝*

1. Արևմտյան դրամատուրգիայի և Շեքսպիրի թատրոնի կաբինետի կողմից՝ պրոֆ. Մ. Մ. Մորոզով:

2. ԽՍՀՄ ժողովուրդների Ազգային թատրոնների կաբինետի կողմից՝ արվեստագիտության թեկնածու Գևորգ Գոյան:

3. ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Համաշխարհային գրականության ինստիտուտի կողմից՝ արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր Ալեքսեյ Ջիվելեգով:

4. Հայաստանի թատերական ընկերության կողմից՝ ընկերության նախագահ, ժողովրդական արտիստ Գուրգեն Ջանիբեկյան:

5. Հայաստանի գիտությունների ակադեմիայի կողմից՝ ակադեմիկոս, գրականագետ Արսեն Տերտերյան:

Վերջում՝ Համերգ:

Ապրիլի 23, *ցերեկը, զեկուցումներ՝*

1. Շեքսպիրը Խորհրդային Միության մեջ — Մ. Մորոզով:

2. Վերածնության դարաշրջանի մարդու կերպարը — Ա. Ջիվելեգով:

Ապրիլի 23, *երեկոյան՝ ներկայացում.*

Սունդուկյանի անվան թատրոնում՝ «Համլետ», Համլետ — Վաղարշ Վաղարշյան:

Ապրիլի 24, *ցերեկը, զեկուցումներ՝ «Շեքսպիրը հայ բեմի վրա»:*

1. Նախախորհրդային շրջան — արվեստի վաստակավոր գործիչ Լևոն Քալանթար:

2. Խորհրդային շրջան — բանասիրական գիտությունների թեկնածու Սուրեն Հարությունյան:

Ապրիլի 24, *երեկոյան՝ ներկայացում.*

Գատանի Հանդիսատեսի թատրոնում՝ «Ամառնային գիշերվա երազ»:

Ապրիլի 25, *ցերեկը, զեկուցումներ՝*

1. Շեքսպիրյան կերպարները Պետրոս Ադամյանի կատարմամբ — թատերագետ Սարգիս Մելիքսեթյան:

2. Շեքսպիրը հայ թատերական և գրական քննադատների գնահատությամբ — պրոֆ. Հայկ Գյուլիքևիչյան:

Ապրիլի 25, *երեկոյան՝ ներկայացում.*

Սունդուկյանի անվան թատրոնում՝ «Համլետ», Համլետ — Գուրգեն Ջանիբեկյան:

Ապրիլի 26, *ցերեկը, զեկուցումներ՝*

1. Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանությունները — գրականագետ Վահրամ Թերզիբաշյան:

2. Շեքսպիրյան պոետիկայի սկզբունքները երաժշտության մեջ — պրոֆ. Արշակ Ադամյան:

Ապրիլի 26, *երեկոյան, ներկայացում՝*

Սունդուկյանի անվան թատրոնում՝ «Օթելլո», Օթելլո — Գուրգեն Ջանիբեկյան:

Ապրիլի 27, *ցերեկը, ներկայացում՝*

Ջ. Ջաբարլու անվան ադրբեջանական կոլխոզ-սովխոզային պետական շրջիկ թատրոնում՝ «Օթելլո», Օթելլո — Ալի Զեյնալով:

Ապրիլի 27, *երեկոյան, ներկայացում՝*

Սունդուկյանի անվան թատրոնում՝ «Օթելլո», Օթելլո — Հրաչյա Ներսիսյան:

Ապրիլի 28, *ցերեկը, զեկուցումներ Լենինականում (Գյումրի):*

1. Շեքսպիրը Խորհրդային Միության մեջ — պրոֆ. Մ. Մորոզով:

2. Վերածնության դարաշրջանի մարդու կերպարը — պրոֆ. Ա. Ջիվելեգով:

Ապրիլի 28, *երեկոյան, ներկայացում՝*

Լենինականի Մռավյանի (այժմ՝ Վ. Աճեմյանի) անվան թատրոնում՝ «Տասներկուերորդ գիշեր»:

Ապրիլի 29, *երեկոյան, ներկայացում՝*

Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում՝ «Օթելլո», Օթելլո — Վ. Սավելև-Դամուրին:

Ապրիլի 30, *երեկոյան, եզրափակիչ նիստ:*

Կոնֆերանսի արդյունքները և փառատոնում ցուցադրված ներկայացումների քննարկումներին մասնակցել են՝

1. Վաղարշ Վաղարշյանը — ժող. արտիստ:

2. Գուրգեն Ջանիբեկյանը — ժող. արտիստ:

3. Արմեն Գուլակյանը — ժող. արտիստ, ռեժիսոր:

4. Հայկանուշ Դանիելյանը — ԽՍՀՄ ժող. արտիստուհի, երգչուհի:

5. Յուզեֆ Յուզովսկին (Մոսկվա) — թատերագետ:

6. Ալեքսեյ Ջիվելեգովը (Մոսկվա) — թատերագետ:

7. Միխայիլ Մորոզովը (Մոսկվա) — թատերագետ:

Հայ և ռուս թատերական գործիչներից բացի, մամուլում հանդես են եկել Ա. Փաղավան (Թբիլիսի, «Շեքսպիրը վրաց բեմի վրա»), Միքայել Ռաֆիլին (Բաքու, «Շեքսպիրը և ադրբեջանական թատրոնը» և ուրիշներ:

Կոնֆերանսի և փառատոնի օրացուցային պլան, 1944:

1964, *Հոկտեմբերի 25. — Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, Լոնդոնում կազմակերպված Հայկական Հանձնախումբը կատարել է այցելություն մեծ գրողի ծննդավայր՝ Ստրատֆորդ օն Էվրն: 42 հոգուց բաղկացած խումբը մեկնել է մեծ ավտոբուսով, որի ճակատին անգլերեն գրված է եղել՝ «Հայկական հարգանք Շեքսպիրին»:*

Այցելու խումբը եղել է Շեքսպիրի բնակարան-թանգարանում, Շեքսպիրյան Արքայական թատրոնում, Սուրբ Երրորդություն եկեղեցում, ուր մկրտվել և թաղվել է գրողը. էվրն գետի մոտ՝ Շեքսպիրին նվիրված հուշարձանների հրապարակում:

Հանձնախմբի կողմից Շեքսպիրի բնակարանի այցելուների մատյանում գրանցում է կատարել օր. Լ. Վարդուկյանը:

Հոկտեմբերի 31. — Լոնդոնի «Հայ տանը» կազմակերպված ցուցահանդեսի պաշտոնական բացումը կատարել է Փարիզից հրավիրված բժիշկ-գրող Շավարշ Նարդունին: Ցուցադրությունների մեջ եղել են Հայաստանից և Սփյուռքից ստացված լուսանկարներ շեքսպիրյան բեմադրություններից, թարգմանություններ, գրականություն, մամուլ, ինչպես նաև ուսանող Վարանդ Ալեքսանդրյանի նկարած Շեքսպիրի դիմանկարը:

Շեքսպիրի մեծարանքի երեկոն տեղի է ունեցել Քոմընվելթ ինստիտուտի մեծ սրահում: Բացման խոսք է ասել Հ. Այվազյանը: Շեքսպիրը և հայ գրականությունը թեմայով դասախոսություն է կարդացել (հայերեն) Շ. Նարդունին, ապա ներկայացվել է «Համլետի» երրորդ արարի չորրորդ տեսարանը՝ Համլետ — Աստուր Օհանյան, Գերտրուդ — Սեդա Զիլինկիրյան: Նրանցից հետո բանախոսել է Վահրամ Մավյանը անգլերեն: Ներկայացվել է «Օթելլոյի» հինգերորդ արարի երկրորդ տեսարանը՝ Օթելլո — Աստուր Օհանյան, Դեզդեմոնա — Սառա Քուչյան: Բեմադրական աշխատանքը կատարել է «Հայ տան» թատերական խմբի ղեկավար Աստուր Օհանյանը: Ցուցահանդեսը տևել է երկու շաբաթ: Փակման խոսք են ասել Օ՚Ռեգան և Պսակ սրբազանը:

Արեգակ, № 9: Զարթոնք, դեկտեմբերի 23:

1981, նոյեմբերի 11–28. — Շեքսպիրյան ներկայացումների փառատոն, որ կազմակերպել են Հայաստանի Մշակույթի նախարարությունը և Հայաստանի թատերական ընկերությունը:

Նոյեմբերի 12–16. — Արվեստի աշխատողների տանը, Շեքսպիրյան ներկայացումների փառատոնի շրջանակներում տեղի է ունեցել շեքսպիրագիտության խնդիրներին նվիրված կոնֆերանս (ցերեկը), որ կազմակերպել են Հայաստանի Մշակույթի նախարարությունը, Թատերական ընկերությունը, ԳԱ Արվեստի ինստիտուտի Շեքսպիրագիտության հայկական կենտրոնը:

Նոյեմբերի 11. — Փառատոնի բացումը Սունդուկյանի անվան թատրոնում, «Ջոն Արքա»:

Նոյեմբերի 12. — Կոնֆերանսի բացումը. բացման խոսք — Ռ. Զարյան:

Զեկուցումներ՝

1. Շեքսպիրը և լուսավորությունը — Ցու. Կագարլինսկի:

2. Շեքսպիրը և XX դ. անգլիական գրականությունը — Ն. Դյակոնովա:

3. Նորից Համլետի առեղծվածի մասին — Ն. Մուրադյան:

4. Հետպատերազմյան հայ շեքսպիրիանայի մի քանի հարցեր — Լ. Սամվելյան:

5. Դոստոևսկին և Շեքսպիրը — Կ. Սուրենյան:

6. Կերպարներ ստեղծելու Շեքսպիրի սկզբունքները — Հ. Մուլիկյան:

7. Շեքսպիրի հերոսները Հ. Էմինի հուշագրության մեջ — Է. Վարդանյան:

Նոյեմբերի 12–13. — Ռիգայի Ա. Ուպիտի անվան ակադեմիական թատրոնի «Հուլիոս Կեսար» ներկայացումը:

Նոյեմբերի 13. — Կոնֆերանսի նիստի նախագահ — Ն. Կիասաչվիլի:

1. Շեքսպիրը որպես թարգմանական պրոբլեմ — Յուրի Լևին:

2. Շեքսպիրի սոնետների թարգմանության սկզբունքները — Գ. Էմին:

3. Կելտական անդրադարձումները Շեքսպիրի դրամատուրգիայում – Ալեքսանդր Վաշչենկո:

4. Մաղո և Շեքսպիր: Սպիտակ ոտանավորի խնդիրը – Ա. Հովսեփյան:

5. Շեքսպիրի բառի բնույթը – Ռ. Մարգունի:

6. Մետաֆորներն ու այլաբանությունները Շեքսպիրի դրամաներում – Վալենտինա Կոմարովա:

7. Բառախաղը որպես ոճաստեղծ տարր «Բազում աղմուկ վասն ոչնչի» կատակերգությունում – Ա. Ֆրունջյան:

Նոյեմբերի 14. – *Նիստի նախագահ – Յու. Լևին:*

1. Հորացիոսի «Հուշարձանի» թեման Շեքսպիրի պոեզիայում – Մ. Սաբանցևա:

2. Դրամատիկական հեգնանքը Շեքսպիրի ստեղծագործության մեջ – Է. Կուռսայտե:

3. Շեքսպիրի սոնետները հայ մտքի գնահատությամբ – Բ. Անդրեասյան:

4. Շեքսպիրյան կերպարները ափյուռքահայ նկարիչների ստեղծագործություններում – Մ. Ղազարյան:

5. Շեքսպիրը անգլիական ռոմանտիկական քննադատության մեջ – Գ. Յակովլև:

6. Բելոռուսական շեքսպիրականից – Տ. Կորոբչենկո:

Նոյեմբերի 14–15. – *Պյառնուի Լ. Կոյդուլայի անվան էստոնական դրամատիկական թատրոնի «Չափի դեմ չափ» ներկայացումը:*

Նոյեմբերի 16. – *Նիստի նախագահ – Դավիդաս Յուդելյավիչյուս:*

1. Շեքսպիրի նոր մեկնաբանությունը Ռուսթավելու անվան թատրոնում (Ռիչարդ Երրորդ) – Ն. Կիասաչվիլի:

2. Շեքսպիրյան թատրոնի պոետիկան – Ա. Գրիգորյան:

3. «Օթելլո» կինոֆիլմի երաժշտությունը – Ն. Միկոյան:

4. Մ. Զեխովը բեմադրում է «Տասներկուերորդ գիշերը» (Կաունաս, 1933) – Դ. Յուդելյավիչյուս:

5. «Ռիչարդ Երրորդ»-ը 70-ական թվականների սովետական բեմում – Ս. Մելնիկովա:

Նոյեմբերի 16–17. – *Լատվիական Հանրապետության Կլայպեդայի դրամատիկական թատրոնի **«Երկու վերոնացիներ»** ներկայացումը:*

Նոյեմբերի 18–19. – *Լենինգրադի Լենսովետի անվան ակադեմիական թատրոնի **«Կամակոր կնոջ սանձահարումը»** ներկայացումը:*

Նոյեմբերի 20. – *Սունդուկյանի անվան թատրոնի **«Կոլխոզան»** ներկայացումը:*

Նոյեմբերի 21–22. – *Թբիլիսիի Ռուսթավելու անվան վրացական ակադեմիական թատրոնի **«Ռիչարդ Երրորդ»** ներկայացումը:*

Նոյեմբերի 23–24. – *Բաքվի Մ. Ազիզբեկովի անվան ադրբեջանական պետական ակադեմիական թատրոնի **«Մակբեթ»** ներկայացումը:*

Նոյեմբերի 25–26. – *Մոսկվայի Ե. Վախթանգովի անվան ակադեմիական թատրոնի **«Անտոնիոս և Կլեոպատրա»** ներկայացումը:*

Հանրապետության մյուս թատրոններում

Նոյեմբերի 15. – *Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն, **«Ռոմեո և Ջուլիետա»**:*

Նոյեմբերի 17. – *Երևանի դրամատիկական թատրոն, **«Համլետ»**:*

Նոյեմբերի 19. – *Լենինականի Ա. Մռավյանի անվան դրամատիկական թատրոն, **«Տիտոս Անդրոնիկոս»**:*

Նոյեմբերի 22. – *Երևանի Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոն, **«Մակբեթ»**:*

Նոյեմբերի 24. – *Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն, **«Բազում աղմուկ վասն ոչնչի»**:*

Նոյեմբերի 26. – *Երևանի դրամատիկական թատրոն, **«Ռիչարդ Երրորդ»**:*

Նոյեմբերի 27. – *Երևանի դրամատիկական թատրոն, **«Սպիտակ և կարմիր վարդերի պատերազմը»** (տեսարաններ «Հենրիխ VI» քրոնիկից):*

Նոյեմբերի 28. — *Փառատոնի փակումը Սունդուկյանի անվան թատրոնում:*

Փառատոնի և կոնֆերանսի ծրագրերը:

1984, նոյեմբերի 10—23. — *Շեքսպիրյան ներկայացումների փառատոն, որ կազմակերպել են Հայաստանի Մշակույթի նախարարությունը և Հայաստանի Թատերական ընկերությունը:*

Նոյեմբերի 19—20. — *Շեքսպիրյան ներկայացումների փառատոնի շրջանակներում, Դերասանի տանը տեղի է ունեցել շեքսպիրագիտության խնդիրներին նվիրված կոնֆերանս, որ կազմակերպել են Հայաստանի Մշակույթի նախարարությունը, Թատերական ընկերությունը, ԳԱ Արվեստի ինստիտուտի Շեքսպիրագիտության հայկական կենտրոնը:*

Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում

Նոյեմբերի 10. — *Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումը — «Ամեն ինչ լավ է, թե լավ վերջանա»:*

Նոյեմբերի 11 և 13. — *Մոսկվայի ՄՍՀՄ Փոքր թատրոնի ներկայացումը. — «Արքա Լիր»:*

Նոյեմբերի 14—15. — *Թբիլիսիի Կ. Մարջանիշվիլու անվան ակադեմիական թատրոնի ներկայացումը — «Օթելլո»:*

Նոյեմբերի 16—18. — *Լենինգրադի Ա. Պուշկինի անվան դրամայի ակադեմիական թատրոնի ներկայացումը — «Բազում աղմուկ վասն ոչնչի»:*

Նոյեմբերի 17. — *Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի բալետային ներկայացումները մեկական գործողությամբ. երաժշտական ղեկավար և դիրիժոր Հակոբ Ոսկանյան:*

1. Դ. Շոստակովիչի «Համլետ»:

2. Բերլիոզի «Ռոմեո և Ջուլիետա»:

3. Պյորսելի «Օթելլո կամ Մավրի Դավանա»:

Նոյեմբերի 19. — *Կոնֆերանսի նիստը, բացման խոսք — Ռ. Զարյան:*

1. Կոմիկականի ընկալման խնդիրը պատմական ժամանակի մեջ — Ռ. Մարգունի:

2. Գեղարվեստական պատկերի դինամիկան «Մակբեթ» ողբերգության մեջ — Հ. Մուլիկյան:

3. Շեքսպիրը և արտուրդի թատրոնը — Է. Վարդանյան:

4. Շեքսպիրի 135-րդ սոնետի թարգմանության շուրջ — Ա. Հովսեփյան:

5. Շեքսպիրը ադրբեջաներեն թարգմանություններում — Ռ. Բաղալբեյլի:

Նոյեմբերի 19. — *Ադրբեջանի Շաքիի դրամատիկական թատրոնի ներկայացումը — «Ռոմեո և Ջուլիետա»:*

Նոյեմբերի 20. — *Կոնֆերանսի զեկուցումների շարունակությունը:*

1. Եվրոպայի սոցիալիստական երկրների թատերաբեմերում շեքսպիրյան բեմադրությունների փորձից — Ն. Բաշինջաղյան:

2. ՄՍՀՄ ժողովրդական արտիստուհի Ալեքսանդրա Կլիմովայի շեքսպիրյան դերակատարումները — Տ. Բորիսովա:

3. Լեզվական պատկերների դրամատիկական բնույթը շեքսպիրյան կոմեդիայում — Ա. Ֆրունջյան:

4. Տեքստ — արտիստ — ինտերպրետացիա — Ա. Գրիգորյան:

5. Բնության թեման Շեքսպիրի երկերում — Մ. Սաբանցևա:

Նոյեմբերի 20—21. — *Խարկովի Ա. Պուշկինի անվան ակադեմիական թատրոնի ներկայացումը — «Տասներկուերորդ գիշեր»:*

Նոյեմբերի 22—23. — *Լիեպայայի (Լատվիա) պետական դրամատիկական թատրոնի ներկայացումը — «Համլետ»:*

Նոյեմբերի 24—25. — *Մոսկվայի Վախթանգովի անվան ակադեմիական թատրոնի ներկայացումը — «Ռիչարդ երրորդ»:*

Նոյեմբերի 18–19. – *Թբիլիսիի վրացական դրամատիկական թատրոնի ներկայացումը – «Հռոմեացիներ»:*

Նոյեմբերի 20. – *Շաքիի (Ադրբեջան) դրամատիկական թատրոնի ներկայացումը – «Ռոմեո և Ջուլիետա»:*

Նոյեմբերի 21–22. – *Աբխազիայի Ս. Ջանբայի անվան պետական դրամատիկական թատրոնի ներկայացումը – «Ալբա Լիր»:*

Նոյեմբերի 12. – *Երևանի դրամատիկական թատրոնում – «Սպիտակ և կարմիր վարդերի պատերազմը»:*

Նոյեմբերի 23. – *Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Աբելյանի անվան թատրոնում, «Ռիչարդ Երկրորդ»:*

Փառատոնի ծրագիրը:

2000, Հունիս. – *«Կիև Տրավնիրի» (Ուկրաինա) միջազգային թատերական փառատոնին, Երևանի Պատանի Հանդիսատեսի թատրոնը ներկայացրել է «Մկան թակարդ կամ փորձում ենք Համլետ»:*

2000, Հուլիս. – *Նույնը ներկայացվել է Կերչում «Բոսպորյան խաղեր» թատերական փառատոներին:*

Թատերական Երևան, 2003, № 5:

2003, Հոկտեմբերի 2–9. – *Երևանում անց է կացվել Հայ Ֆեստ միջազգային թատերական փառատոն, որի ընթացքում Շեքսպիրի գործերից ներկայացվել են.*

Երևանի Հ. Թումանյանի անվան Տիկնիկային թատրոնում – «Միսալների կոմեդիան», բեմադրությունը Ռուբեն Բաբայանի:

Հոկտեմբերի 9-ին (փակմանը). – *Երևանի Կամերային թատրոնում, Հայաստանի դերասանների միությունը ներկայացրել է «Համլետ» մենաներկայացումը՝ բեմադրությունը և ձևավորումը Եվգենյա Պոդպոմոգովայի, Համլետ – Մուրադ Ջանիբեկյան:*

Թատերական Երևան, 2003, № 6:

2004, սեպտեմբերի 8. – *Գդանսկում (Լեհաստան) Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնում ներկայացվել է Երևանի Պատանի Հանդիսատեսի թատրոնի «Մկան թակարդ կամ փորձում ենք Համլետ», բեմադրությունը Հակոբ Ղազանչյանի: Համլետ – Արթուր Կարապետյան:*

Ներկայացման ազդագիրը (ՊՀԹ):

2005, սեպտեմբերի 12–17. – *Երևանում անց է կացվել Շեքսպիրյան մենաներկայացումների «Արմմոնո» երրորդ թատերական միջազգային փառատոնը:*

Սեպտեմբերի 12. – *Բացումը կատարվել է Պատանի Հանդիսատեսի թատրոնում. ներկայացվել է Կարինե Խոդիկյանի «Տրակտատ թաշկինակի մասին» պիեսը, բեմադրությունը՝ Հակոբ Ղազանչյանի:*

Օթելլո – Հովհաննես Բաբախանյան, Յագո – Արթուր Կարապետյան, Դեզդեմոնա – Մարիամ Ղազանչյան:

Սեպտեմբերի 13. – *«Մոսկվա» կինոթատրոնում, Հանդիպում Թբիլիսիի Ռուսթավելու անվան ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար, շեքսպիրյան պիեսների բեմադրող Ռոբերտ Ստուրուայի հետ:*

1. «Շայլոկ» – Գարեթ Արմստրոնգ, բեմադրությունը՝ Ֆրանկ Բարրիի, Մեծ Բրիտանիա (ՊՀԹ, Մեծ բեմ):

2. «Իմ արքայությունը» (թագավորությունը) – Դեննի Ռոսսել, Շվեյցարիա (ՊՀԹ, Փոքր բեմ):

3. «Լիր Արքայի հիշողությունները» (ծրագրերը) – Կարեն Ջանիբեկյան, բեմադրությունը՝ Հրաչյա Ղազարյանի (ՊՀԹ, Մեծ բեմ):

Սեպտեմբերի 14.

1. «Ընդմիջումից հետո» – Տրդատ Մակարյան, բեմադրությունը՝ Գեորգի Խոջոյանի (ՊՀԹ):

2. «Մաղրաձու Ֆորտինբրասի չքախմբի համար» – Առնոլդ Շվեցով, ԱՄՆ (Մեծ բեմ):

3. «Շեքս չուս» — Ֆշիշտոֆ Գորդոն, բեմադրությունը՝ Մոնիկա Շեպկայի, Լեհաստան (Փոքր բեմ):

Սեպտեմբերի 15.

1. «Համլետի դերակատարը» — Էզաթոլլահ Մեհրավարան, բեմադրությունը՝ Անդրանիկ Խեչումյանի, Իրան (Մեծ բեմ):

2. «Շայլոկ» — Արամ Հովհաննիսյան, բեմադրությունը՝ Արմեն Մկրտչյանի (Փոքր բեմ):

3. «Աչխարհի գերին» — Մխիթար Մելքոնյան, բեմադրությունը՝ Գառնիկ Սեյրանյանի (Մեծ բեմ):

Սեպտեմբերի 16.

1. «Լիր Արքա» — Աննա Մելե, բեմադրությունը՝ Օվյակուլի Խոջակուլիի, Թուրքմենստան (Մեծ բեմ):

2. «Մոսկովյան Համլետ» — Կոնստանտին Ժելդին, բեմադրությունը՝ Մարկ Ռոզկովսկու, Ռուսաստան (Փոքր բեմ):

3. «Վերջի սկիզբը» — Գուժ Մանուկյան, բեմադրությունը՝ Արտաշես Հովհաննիսյանի: Պիեսը գրել է Սամվել Խալաթյանը ըստ Շեքսպիրի «Թիմոն Աթենացի» ողբերգության (թարգմ. Ն. Դաշտենց): Այս բեմադրությունը «Թիմոն Աթենացու» երկրորդ բեմադրությունն է հայ թատրոնում: Առաջինը նույնպես տեղի է ունեցել Երևանում 1874–1875 թթ.:

Սեպտեմբերի 17.

1. «Ջուլիետա» — Անուշ Փանոսյան, բեմադրությունը՝ Գեորգի Խոջոյանի, «Սայաթ-Նովա» համալիրի «Կոլիզեյ» ակումբում, որից հետո ամփոփվել է «Շեքսպիրյան ներկայացումների» փառատոնը:

Թատերական Երևան, № 6: Փառատոնի ծրագիրը:

2006, սեպտեմբերի 12–18. — *Երևանում անց է կացվել Շեքսպիրյան մենաներկայացումների «Արմմոնո» չորրորդ (Շեքսպիրյան՝ երկրորդ) թատերական միջազգային փառատոն:*

Սեպտեմբերի 12. — *Փառատոնի բացումը Երևանի Արարատ Վալլի Ֆանթրի Ֆլաթում:*

«Համլետ» — Մոյտինա Յուրցեր, Սլովենիա:

Սեպտեմբերի 13.

1. «Համլետ» — Զազա Պապուաշվիլի, բեմադրությունը՝ Ռոբերտ Ստուրուայի, Վրաստան (ՊՀԹ):

2. «... և օրինավոր բանտ» (Համլետ): Հիրավի Շեքսպիրյան միջազգային փառատոն, ուր յուրաքանչյուր դերակատար հանդես է եկել իր մայրենի լեզվով. բեմադրությունը՝ Հակոբ Ղազանչյանի, նկարիչ՝ Լիլիթ Ստեփանյան (Ստանիսլավսկու անվ. ռուսական թատրոն):

Համլետ — Վարդան Պետրոսյան, Կլավդիոս — Յուրի Բեյլան (Ռուսաստան), Գերտրուդ — Բեատե Էհլերս (Գերմանիա), Պոլոնիուս — Դավիդ Դարչիա (Վրաստան), Համլետի հոր ուրվականը — Աբել Սոլարես (Գվատեմալա), Ռոզենկրանց — Առնոլդ Շվեցով (ԱՄՆ), Օֆելյա — Մարիամ Ղազանչյան, Բեմական թագուհի — Մոյտինա Յուրցեր (Սլովենիա), Բեմական թագավոր (Ա. դերասան) — Էզաթոլլահ Մեհրավարան (Իրան), Բեմական թագուհի (մնջախաղաց) — Հիրոյո Կիտաո (Ճապոնիա), Բեմական թագավոր (մնջախաղաց) — Աննա Մելե (Թուրքմենստան):

3. «I'm Jew կամ Շայլոկ» — Հովհաննես Հովհաննիսյան (ՊՀԹ):

Սեպտեմբերի 14.

1. «Մակբեթ և Ռուինթան» — Էզաթոլլահ Մեհրավարան, Իրան (ՊՀԹ):

2. «... և օրինավոր բանտ» (Համլետ) — (Ստանիսլավսկու անվան թատրոն):

3. «Շեքսպիրի լուռ կյանքը» — «Եթե Շեքսպիրը լիներ մնջախաղաց» կամ «Շեքսպիրի լուռ կյանքը» կամ «Ինչպես կուզեք», բեմադրության հեղինակ և կատարող՝ Լևոն Իվանյան (ՊՀԹ):

Սեպտեմբերի 15.

1. «Ցորիկ» — Վիեսլավ Կոմասա, բեմադրությունը՝ Անջեյ Ժուլավսկու, Լեհաստան (ՊՀԹ):

2. «... և օրինավոր բանտ» (Համլետ) — (Ստանիսլավսկու անվ. թատրոն):

3. «Օթելլայի վերջին երգը» — Նարինե Պետրոսյան, բեմադրությունը Դանիել Առագաստի (ՊՀԹ):

Սեպտեմբերի 16.

1. «Լիր» — Աննա Մելն, բեմադրությունը՝ Օվլակուլի Մոջակուլիի, Թուրքմենստան (ՊՀԹ):

2. «... և օրինավոր բանտ» (Համլետ) — (Ստանիսլավսկու անվ. թատրոն):

3. «Երկյուղած լռություն» (Սիրանույշի մասին) — Հասմիկ Տեր-Կարապետյան, բեմադրությունը՝ Գառնիկ Սեյրանյանի (ՊՀԹ):

Սեպտեմբերի 17.

1. «Ներկայացում ներկայացումից հետո» (անդրադարձ Շեքսպիրի պիեսների ներկայացումներին) — Ալեքսանդրաս Ռուբինովաս, բեմադրությունը՝ Ստանիսլովաս Ռուբինովասի, Լիտվա (ՊՀԹ):

2. «... և օրինավոր բանտ» (Համլետ) — (Ստանիսլավսկու անվ. թատրոն):

3. «Լիր» (Հուսալքված և իրականությունից հիասթափված Լիրի փախուստը) — Արմեն Սանթրոսյան, բեմադրությունը՝ Հակոբ Ղազանչյանի (ՊՀԹ):

Սեպտեմբերի 18.

4. «Տղայիս կտակը» (Շեքսպիրի հոր մենախոսությունը) — բեմադրությունը և կատարումը Փիթր Սաթնի, Անգլիա (ՊՀԹ):

Փառատոնի ավարտը: Փառատոնի տնօրեն Հակոբ Ղազանչյանի և փառատոնի գեղարվեստական ղեկավար Անջեյ Ժուրովսկու (Լեհաստան) եզրափակիչ խոսքը:

Փառատոնի ծրագիրը:

2007, սեպտեմբերի 12–18. — *Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում, մենաներկայացումների («Արմմոնո») Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնի անցկացումը:*

Սեպտեմբերի 12. — *Փառատոնի հանդիսավոր բացումը:*

1. Թբիլիսիի Ռուսթավելու անվան պետական թատրոնի՝ Կարինե Խոդիկյանի «Տրակտատ թաչկինակի մասին» (Շեքսպիրի «Օթելլոյի» հեռավոր նմանությամբ) *ներկայացումը. բեմադրությունը Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնի գեղարվեստական ղեկավար Հակոբ Ղազանչյանի, նկարիչ՝ Լիլիթ Ստեփանյան, երաժշտական ձևավորումը՝ Արթուր Կարապետյանի, պարադիր՝ Կոտե Փուրցելաձե. վրացերեն թարգմանությունը Գիվի Շահնազարի:*

Օթելլո, Յագո, Դեզդեմոնա — Դավիդ Դարչիա, Մալխաս Քվրիվիշվիլի, Նինո Կասրաձե (ՊՀԹ, Մեծ բեմ):

2. «... իսկ Գոլոնիո՞ն» — *բեմադրությունը և կատարումը Իշխան Ղարիբյանի (բեմական խաչմերուկի բեմ):*

Սեպտեմբերի 13.

1. «Ջայլամը ասֆալտի վրա» — *Կարինե Ջանջուղազյան, բեմադրությունը՝ Դավիթ Հակոբյանի (Երևանի Կամերային երաժշտական պետական թատրոնում):*

2. «Սիրո և մենության միջև» (Շեքսպիրի կնոջ՝ Աննա Հաթավեյի կյանքը) — *Ժենյա Ներսիսյան (բեմադրող և կատարող) (Մեծ բեմ):*

3. «Օթելլա» (ըստ Ա. Վոլոդինի ստեղծագործության) — *Մարիամ Ղազանչյան, բեմադրությունը Հակոբ Ղազանչյանի և Գագիկ Կարապետյանի (Մեծ բեմ):*

Սեպտեմբերի 14.

1. «Ֆալստաֆ կամ ողջ աշխարհը» — *Քշիշտոֆ Գորդոն, բեմադրությունը Ստանիսլավ Միեդզիևսկու, Լեհաստան (Մեծ բեմ):*

2. «Ռիչարդը Ռիչարդից հետո» — *Լիդիա Դանիլչուկ, բեմադրությունը՝ Իրինա Վոլիցկայի, Ուկրաինա (բեմական խաչմերուկի բեմ):*

3. «... Լինեղ...» (Սիրանույշի Համլետի մասին) — *Լարիսա Կադիրովա, Ուկրաինա, բեմադրությունը՝ Հակոբ Ղազանչյանի (Մեծ բեմ):*

Սեպտեմբերի 15.

1. «Համլետ» (մոնոօպերա, լիբրետտոն և երաժշտությունը կոմպոզիտոր Սոֆա Ազնաուրյանի) — Հրանտ Մաչիկյան, բեմադրությունը՝ Լևոն Իվանյանի (օպերային ստուդիայի բեմում):

2. «Ֆեդրայի երազները» — Գաբրիել Շեյլ, բեմադրությունը Կոնստանց Ուլմերի, Գերմանիա (Մեծ բեմ):

3. «Մակբեթ» — Երևանի Ղափլանյանի անվան Դրամատիկական թատրոնի ներկայացումը: Մակբեթ — Արթուր Ուլմազյան, բեմադրությունը՝ Արմեն Խանդիկյանի:

Սեպտեմբերի 16.

1. «Հ(Ո)մլետ» (մենաթատերգություն ըստ Շեքսպիրի և Ջերոյի) — բեմադրությունը և կատարումը Դավիթ Հովսեփյանի, պիեսի հեղինակ և ներկայացման գեղարվեստական ղեկավար՝ Ալեքսանդր Հովսեփյան (Մեծ բեմ):

2. «Վերջին աղոթքը» (ըստ «Մակբեթի» — պիեսի մշակումը և բեմադրությունը Վիգեն Ստեփանյանի) — Ալլա Սահակյան («Համազգայինի» թատրոն):

3. «ԴեզդեմՈՆԱ» — Իոլանտա Յուսկևիչ, բեմադրությունը՝ Անատոլի Ֆրուզինի, Ավստրալիա (բեմական խաչմերուկի բեմում):

4. «Համլետ» — Մոյտինա Յուրցեր, բեմադրությունը՝ Սաչո և Մոյտինա Յուրցերների, Սլովենիա (Մեծ բեմ):

Սեպտեմբերի 17.

1. «Լեդի Մակբեթի անիծված ճակատագիրը» — Արինե Սուքիասյան, բեմադրությունը՝ Էղաթոլլահ Մեհրավարանի, Իրան (բեմական խաչմերուկի բեմ):

2. «Լեդի Մակբեթ» — Ջուլիետ Ստեփանյան, բեմադրությունը՝ Արթուր Սահակյանի («Գոյ» թատրոնում):

3. «Ռիչարդ երրորդ — մոնոդրամա» — բեմադրությունը և կատարումը՝ Էրվին Գաազի, Ռուսաստան (Մեծ բեմ):

Սեպտեմբերի 18.

1. «Համլետ» — Հայկ Զորիկյան, բեմադրությունը՝ Հայկ և Էդվարդ Զորիկյանների (Մեծ բեմ):

Փառատոնի հանդիսավոր ավարտը:

Փառատոնի ծրագրեր:

2008, սեպտեմբերի 7–18. — *Երևանյան Շեքսպիրյան Միջազգային թատերական փառատոն:*

Սեպտեմբերի 7.

Փառատոնի հանդիսավոր բացումը, Թբիլիսիի Ե. Ռուսթավելու անվան պետական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբերտ Ստուրուայի ծննդյան 70-ամյակին նվիրված ստեղծագործական երեկո (Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոն):

Սեպտեմբերի 8.

1. Ալեքսեյ Բարտոշևիչի դասախոսությունները — «Ազնիվ ուրվական» (Հայաստանի թատերական գործիչների միություն — ՀԹԳՄ):

2. «Համլետ» — Թբիլիսիի Ռուսթավելու անվան թատրոնի (Վրաստան) ներկայացումը. բեմադրությունը՝ Ռոբերտ Ստուրուայի (Սունդուկյանի անվ. թատրոն):

Սեպտեմբերի 9.

1. Ալեքսեյ Բարտոշևիչի դասախոսությունը — «Լինե՞լ, թե՞ չլինել» (ՀԹԳՄ):

2. «Համլետ» — Արամ Հովհաննիսյան, բեմադրությունը՝ Հրաչյա Ղազարյանի (ՀԹԳՄ):

Սեպտեմբերի 10.

1. Ալեքսեյ Բարտոշևիչի դասախոսությունը — «Մնացյալը լռություն է» (ՀԹԳՄ):

2. «Լեդի Մակբեթ» — Արմինե Մացակյան, բեմադրությունը՝ Թեմուր Ամինյանի (ՀԹԳՄ):

Սեպտեմբերի 11.

1. «Լեդի Կապուլետտի» — Կրիստինա Կլետնիեսե (Լատվիա), բեմադրությունը՝ Իրինա Կլիչևսկայայի, Ուկրաինա (ՀԹԳՄ):

2. «Throughout» — ըստ Շեքսպիրի «Լիր Արքայի» — Գյուլի թատրոն, բեմադրությունը՝ Բենաս Սառկայի, Լիտվա (ՀԹԳՄ):

Սեպտեմբերի 12.

1. «Ուրվական փնտրող կանայք» — «Տեատր դեզ Ամի», բեմադրությունը Լաթեֆա Ահրբարեի, Մարոկկո (ՀԹԳՄ);

2. «Տասներկուերորդ գիշեր» — Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետթատրոնի ներկայացումը նույն թատրոնում. բեմադրությունը Երվանդ Ղազանչյանի:

Սեպտեմբերի 13.

1. «Ռիչարդը Ռիչարդից հետո» — «Թատրոն զամբյուղի մեջ» — դերակատար՝ Լիդիա Դանիլչուկ, բեմադրությունը՝ Իրինա Վոլիցկա-Զուրկոյի, Ուկրաինա (ՀԹԳՄ);

2. «Մակբեթ» — Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի ներկայացումը նույն թատրոնում: Մակբեթ — Արթուր Ութմազյան, բեմադրությունը՝ Արմեն Խանդիկյանի:

Սեպտեմբերի 14.

1. «Hamletmachine» — «P. A. T.», բեմադրությունը՝ Սլավկա Դոբներովայի, Սլովակիա (ՀԹԳՄ);

2. «Երկու ազնվական Վերոնայից» — Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնի ներկայացումը նույն թատրոնում, բեմադրությունը՝ Նեվենա Միտչևայի (Բուլղարիա):

Սեպտեմբերի 15.

1. Անջեյ Ժուրովսկու (Լեհաստան) «Թեմում Շեքսպիրի հետ միայնակ» — դասախոսությունն ու համանուն գրքի շնորհանդեսը (ՀԹԳՄ);

2. «Համլետ» — «Բազիսազան» թատերախումբ, բեմադրությունը՝ Հասան Ազիմիի (Հորացիո), Իրան:

Թագավոր Կլավդիոս — Բաբակ Վալի, Լորդ Պոլոնիուս — Սաեիդ Նուրոլահի, Մորարակ (Համլետ) — Ահմադ Մեհրաբի, Լաերտ — Հոսեին Լաթիֆի, Օֆելյա — Աֆսանե Զաքերի, Թագուհի Գերտրուդ — Հոմա Մոքարամի, Ուրվական — Ալի Սաղեղի Խահ (ՊՀԹ);

3. «Համլետ 24.00» — բեմադրությունը և կատարումը՝ Պիոտր Կոնդրատի, Լեհաստան (բացօթյա ներկայացում «9-րդ ալիք» սրճարանի տարածքում):

Սեպտեմբերի 16.

1. «Համլետ» — «Բազիսազան» թատերախումբ, Իրան (ՊՀԹ):

Սեպտեմբերի 17.

1. «Համլետ» — «Բազիսազան» թատերախումբ, Իրան (ՊՀԹ):

2. «Համլետ» — Մոսկվայի Ա. Չեխովի անվան Գեղարվեստական թատրոնի ներկայացումը, բեմադրությունը՝ Յուրի Բուտուսովի (Սունդուկյանի անվ. թատրոնում):

Սեպտեմբերի 19.

«Համլետ» — Մոսկվայի Ա. Չեխովի անվան Գեղարվեստական թատրոնի ներկայացումը (Սունդուկյանի անվ. թատրոնում):

Փառատոնի հանդիսավոր փակումը:

Փառատոնի երգերը:

2009, ապրիլի 8–17. — *Մենաներկայացումների Արմմոնո միջազգային թատերական փառատոն Երևանում և Կապանում (չեքսպիրյան թեմաներով, Կապանի թատրոնում):*

Ապրիլի 16.

1. «Շայլոկ» — Հովհաննես Հովհաննիսյան:

2. «Լիր» — Արմեն Սանթրոսյան:

Փառատոնի երգերը:

2009, սեպտեմբերի 7–20. — *Վահրամ Փափազյանի անվան Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոն:*

Սեպտեմբերի 7. — *Փառատոնի հանդիսավոր բացումը Երևանի քաղաքապետարանում:*

Սեպտեմբերի 8. — *«Շայլոկ» — Մոսկվայի «Et Cetera» թատրոն, Ռուսաստան: Բեմադրությունը՝ Ռոբերտ Ստուրուայի (Վրաստան): Սունդուկյանի անվան թատրոնում:*

Սեպտեմբերի 9. — **«Ջուլիետ»** *(ըստ «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության) — «Բեմական խաչմերուկ» մշակութային կենտրոն: Բեմադրությունը՝ Կարապետ Բալյանի (ՊՀԹ):*

Սեպտեմբերի 10, 12. — **«Ուրյու թագավորը»** — *Մոսկվայի «Et Cetera» թատրոն: Բեմադրությունը՝ Ալեքսանդր Կալյագինի: Ստանիսլավսկու անվ. ռուսական թատրոնում:*

Սեպտեմբերի 12. — **«Համլետ»** — *Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն, նույն թատրոնում: Բեմադրությունը՝ Արթուր Սահակյանի:*

Սեպտեմբերի 13. — **«Ամառնային գիշերվա երազ»** — *Թբիլիսիի Կ. Մարջանիշվիլու անվան վրացական թատրոն: Բեմադրությունը՝ Լևան Ցուլաձեի Պարոնյանի անվ. թատրոնում:*

Սեպտեմբերի 14. — **«Ռոմեո և Ջուլիետ»** — *Թեհրանի «Բազիսազան» թատերախումբ: Բեմադրությունը՝ Հասան Ազիմիի (ՊՀԹ):*

Սեպտեմբերի 15. — **«Կույրը»** *(«Օթելլոյի» Ցագոն) — Հայաստանի թատերական գործիչների միություն: Բեմադրությունը՝ Սարգիս Հարությունյանի (ՊՀԹ):*

Սեպտեմբերի 16. — **«Մի ֆունտ միս»** *(ըստ «Վենետիկի վաճառականի») — Վանաձորի քաղաքապետարանի «Բոհեմ» թատրոն: Բեմադրությունը՝ Ալլա Ավետիսյանի (ՊՀԹ):*

Սեպտեմբերի 17. — **«Համլետ»** — *Հայաստանի թատերական գործիչների միություն: Բեմադրությունը՝ Հրաչյա Ղազարյանի: Հայաստանի թատերական գործիչների միությունում:*

Սեպտեմբերի 18. — **«Երազին սպասելիս»** *(ըստ «Ամառնային գիշերվա երազի» — Իրինա Բրուքի թատերախումբը, Ֆրանսիա): Փառատոնի փակումը Հ. Պարոնյանի անվան թատրոնում:*

Սեպտեմբերի 9–17-ը. — *Շեքսպիրյան հանրահայտ ներկայացումների տեսագրությունների ցուցադրություններ*

չեքսպիրագետ Անջեյ Ժուրովսկու (Լեհաստան) մեկնաբանություններով:

«Համլետ» (Կրակով — Լեհաստան, Թել Ավիվ — Իսրայել, Բեռլին — Գերմանիա), «Տիտոս Անդրոնիկոս» (Կոլոյվա — Ռումինիա), «Արքա Լիր» (Լեյպցիգ — Գերմանիա), «Ամառնային գիշերվա երազ» (Ջունչեոն — Հարավային Կորեա), «Ձմեռային հեքիաթ» (Նիիգատա — Ճապոնիա): Հայաստանի թատերական գործիչների միությունում:

2010, օգոստոս, Գդանսկ (Լեհաստան). — *Շեքսպիրյան ներկայացումների 14-րդ միջազգային փառատոնում, Երևանի Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնը ներկայացրել է «Տասներկուերորդ գիշերը», բեմադրությունը Երվանդ Ղազանչյանի:*

2010, սեպտեմբերի 15–24. — *Վ. Փափազյանի անվան Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոն նվիրված ակադեմիկոս Ռուբեն Զարյանի ծննդյան 100-ամյակին:*

Սեպտեմբերի 15, 22. — **«Լեգենդ Մակբեթի մասին»** — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոն: Բեմադրությունը, նկարչական և երաժշտական ձևավորումները՝ Վահան Բաղայանի, զգեստների նկարիչ՝ Մերի Սարգսյան:*

Սունդուկյանի անվան թատրոն:

Սեպտեմբերի 16. — **«Ջուլիետ»** — *Հայաստանի թատերական գործիչների միություն: Բեմադրությունը՝ Սուրեն Սաֆարյանի: Թատերական գործիչների միություն:*

Սեպտեմբերի 17, 18. — **«Warum, Warum»** — *Ցյուրիխի դրամատիկական թատրոն (Շվեյցարիա): Բեմադրությունը՝ Փիթեր Բրուքի: (Շեքսպիրի, Մեյերխոլդի, Քրայգի, Արտոդի, Չիիմիի տեքստերից հատվածների մեկնաբանություն, դերասանուհի Միրիամ Գոլդշմիդտի կատարմամբ): Պատանի հանդիսատեսի թատրոն (ՊՀԹ):*

Սեպտեմբերի 19. — **«Հուլիոս Կեսար»** — *Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն: Բեմադրությունը՝ Արմեն Խանդիկյանի: Դրամատիկական թատրոն:*

Սեպտեմբերի 20. — **«90-րդ սոնետ»** — Երևանի մանկահասակ դերասանների պետական թատրոն: Մտահղացման, բեմականացման և իմպրովիզ խաղարկման հեղինակ և կատարողներ՝ Ցուրի Կոստանյան և Նարինե Գրիգորյան, նկարչական ձևավորումը՝ Լիլիթ Ստեփանյանի, կատարող նկարիչ՝ Վարդան Շեխյան, երաժշտական ձևավորումը Տիգրան Սիրվանյանի (ՊՀԹ):

«Ծաղո՞ւմ ենք Շեքսպիր» — Հայ Երջիկ թատրոն (Երևան): Բեմադրությունը՝ Կարապետ Բալյանի: Երևանի Կիրովի անվան Մանկական այգում:

Սեպտեմբերի 22. — **«Լենզ»** — Ինստաբիլի Վագանտի թատրոն (Իտալիա): Բեմադրությունը՝ Աննա Դորա Դորնոյի, երաժշտությունը՝ Անդրեա Վանզոյի: (Տեքստը կազմվել է Շեքսպիրի, Ջ. Ռ. Մ. Լենզի և Գ. Բյուշների գործերից): Թատերական գործիչների միություն:

Սեպտեմբերի 23. — **«Լիր Արքա»** — Վանաձորի Աբելյանի անվան թատրոն (թարգմ. Հ. Մասեհյան), թատրոնի գրական տարբերակ: Բեմադրությունը և բեմանկարչությունը մտահղացումը՝ Վահե Շահվերդյանի: Վանաձորի Աբելյանի անվան թատրոն:

Սեպտեմբերի 24. — **«Միսալների կոմեդիա»** — Երևանի Թումանյանի անվան տիկնիկային թատրոն (թարգմ. Ն. Դաշտենց): Բեմադրությունը՝ Ռուբեն Բաբայանի, նկարչական ձևավորումը՝ Անժելա Գալստյանի, երաժշտությունը՝ Արմեն Վարդանյանի: Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում:

«Գրոսպերոն» — Լվովի «Վոսկրեսենիե» թատրոն (Ուկրաինա): Բեմադրությունը՝ Յարոսլավ Ֆեդորիշինի: (Նյութը վերցված է Շեքսպիրի «Փոթորիկ», «Ռոմեո և Ջուլիետա», «Ամառնային գիշերվա երազ», «Համլետ» գործերից: Երևանի Անգլիական այգում, բացօթյա ներկայացում:

2010, դեկտեմբերի 7, Թեհրան — «Արարատ» մարզավանի «Շահբազյան» սրահում, ՀՄԱԿ-ի Արվեստից միության նախաձեռնությամբ, Երևանի Սունդուկյանի անվան

թատրոնի դերասան Արամ Հովհաննիսյանը հանդես է եկել «Համլետ» մենաներկայացումով: (Այդ նույն դերակատարությամբ նա մրցանակներ է շահել Լեհաստանի (2008) և Լիտվայի (2010) միջազգային փառատոներում):

Ալիք, № 257:

2011, հոկտեմբերի 14–29 — Վ. Փափազյանի անվան Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոն:

Հոկտեմբերի 14. — Փառատոնի հանդիսավոր բացումը: Մոսկվայի Ա. Չեխովի անվան Միջազգային թատերական փառատոն, Թատերական միությունների միջազգային կոնֆեդերացիա:

Հոկտեմբերի 14, 15. — **«12-րդ գիշեր»** — Լոնդոնի «Զիկ բայ Ջաուլ» թատրոն: Բեմադրությունը՝ Դեքլան Դոննելանի, նկարչական ձևավորումը՝ Նիք Օրմերոդի: Սունդուկյանի անվան թատրոնում:

Հոկտեմբերի 16. — **«Լիր Արքա»** — Վանաձորի Աբելյանի անվան թատրոն, նույն թատրոնում:

Հոկտեմբերի 18. — **«Անսանձ կնոջ սանձահարումը»** — Մաքսիմ Մունզուկի անվան «Դերսու Ուզալա» բարեգործական հիմնադրամ: Նախագիծը՝ Գալինա Մունզուկի և Վսեվոլոդ Զուբենկոյի (սիրային կոմեդիա շեքսպիրյան մոտիվներով) (ՊՀԹ):

Հոկտեմբերի 20. — **«Համլետ»** — Թուրքմենստանի Մեկ դերասանի թատրոն, Աննա Մելե: Բեմադրությունը՝ Օվլակուլի Խոջակուլիի (ՊՀԹ):

Հոկտեմբերի 21. — **«Հուլիոս Կեսար»** — Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն, նույն թատրոնում:

Հոկտեմբերի 22. — **«Մակբեթ»** — Իրանի Անդիշեհ թատերախումբ: Բեմադրությունը՝ Հուսեյն Ֆարուխի (ՊՀԹ):

Հոկտեմբերի 23. — **«Ռոմեո և Ջուլիետա»** — Երևանի «Էդգար Էլբակյան» թատրոն: Բեմադրությունը և նկարչական ձևավորումը՝ Լիլի Էլբակյանի, երաժշտությունը՝ Աննա Էլբակյանի: Խամաճիկների թատրոնում:

Հոկտեմբերի 24. — *«Ռոմեո և Ջուլիետա» — Իրանի Անդիշեհ թատերախումբ: Բեմադրությունը՝ Հուսեյն Ֆարուխի (ՊՀԹ):*

Հոկտեմբերի 25. — *«Լեդի Մակբեթ» — Հայաստանի թատերական գործիչների միություն: Բեմադրությունը՝ Հրաչյա Ղազարյանի, դերակատար՝ Նորա Բաղայյան: Թատերական գործիչների միության թատրոնում:*

Հոկտեմբերի 26. — *«Համլետ. սատ. X» — Թբիլիսիի Ռուսթավելու անվան թատրոն: Բեմադրությունը՝ Լևան Խվիչայի (ՊՀԹ):*

Հոկտեմբերի 27. — *«Մակբեթ» — Թբիլիսիի Վ. Աբաշիձեի անվան երաժշտության և դրամայի թատրոն: Բեմադրությունը՝ Դավիդ Դոիաշվիլու (ՊՀԹ):*

Հոկտեմբերի 29. — *Փառատոնի հանդիսավոր փակումը: «Ռոմեո և Ջուլիետա» բալետը — Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում: Պարադիր՝ Ռուդոլֆ Խառատյան:*

ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ՊԻԵՍՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՅՐԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

1. Աբադան (Իրան)	1935 դեկտեմբերի 19
2. Աբասթուման (Վրաստան)	1948 հուլիսի 15
3. Ադիս-Աբեբա (Եթիոպիա)	1932 հուլիսի 10
4. Աթենք (Հունաստան)	1929 հունիս
5. Ալաստան (Վրաստան)	1948 օգոստոսի 1
6. Ալավերդի (Հայաստան)	1934 օգոստոսի 25
7. Ալեքսանդրապոլ (Հայաստան)	1895 մայիսի 30
8. Ալեքսանդրիա (Եգիպտոս)	1904 մայիս
9. Ալֆորվիլ (Ֆրանսիա)	1950 հունիսի 1
10. Ախալցխա (Վրաստան)	1881 օգոստոսի 1
11. Ախալքալաք (Վրաստան)	1937 հուլիս
12. Ախտա (Հայաստան)	1948 հուլիս
13. Ահվազ (Իրան)	1936 մարտի 12
14. Աղամզալու (Հայաստան)	1934 դեկտեմբերի 30
15. Աղբաչ (Հայաստան)	1934 դեկտեմբերի 29
16. Աղվարեթի (Վրաստան)	1948 օգոստոսի 16
17. Այգեստան (Հայաստան)	1934 հունիսի 22
18. Այնթապ (Արևմտյան Հայաստան)	1914
19. Անաստասավան (Հայաստան)	1951 հոկտեմբերի 10
20. Անդիժան (Ուզբեկստան)	1913 մայիս
21. Աշխաբադ (Թուրքմենստան)	1907 մարտ
22. Աչտարակ (Հայաստան)	1935 փետրվարի 20
23. Ապարան (Հայաստան)	1942 հուլիսի 27
24. Աստրախան (Ռուսաստան)	1902 մայիսի 12
25. Ատաբազար (Թուրքիա)	1909 փետրվարի 2
26. Արարատ (Հայաստան)	1966
27. Արմավիր (Ռուսաստան)	1886 հուլիսի 16
28. Արտաշատ (Հայաստան)	1948 հունիսի 23
29. Բաթում (Վրաստան)	1887 հունիսի 15
30. Բաղդադ (Իրաք)	1933
31. Բաղրամյան (Հայաստան)	1958 հունիսի 23
32. Բառնաուլ (Ռուսաստան)	1987 օգոստոսի 7

33. Բասրա (Իրաք)	1957
34. Բաքու (Ադրբեջան)	1885 նոյեմբերի 29
35. Բեգջաղլու (Հայաստան)	1934 հուլիսի 2
36. Բելի Կլյուչ (Վրաստան)	1947 հուլիսի 20
37. Բեյրութ (Լիբանան)	1923 մարտ
38. Բեռլին (Գերմանիա)	1921 դեկտեմբեր
39. Բերդ (Հայաստան)	1948 օգոստոս
40. Քինազադի (Բաքվի արվարձան)	1953 հունիսի 29
41. Բոգդանովկա (Վրաստան)	1948 օգոստոսի 2
42. Բոլնիս-Խաչեն (Վրաստան)	1951 հոկտեմբերի 30
43. Բոստոն (ԱՄՆ)	1918 նոյեմբերի 28
44. Բորժոմի (Վրաստան)	1927 հուլիսի 31
45. Բրյուսել (Բելգիա)	1926 ապրիլի 3
46. Բրուսա (Թուրքիա)	1909 մարտի 22
47. Բուենոս Այրես (Արգենտինա)	1928
48. Բուխարեստ (Ռումինիա)	1932 նոյեմբեր
49. Գանդիաղի (Վրաստան)	1951 օգոստոսի 7
50. Գանձա (Վրաստան)	1948 օգոստոսի 3
51. Գանձակ (Ադրբեջան)	1897 փետրվար
52. Գետաշատ (Հայաստան)	1935 փետրվարի 14
53. Գլենդել (ԱՄՆ)	1924 սեպտեմբերի 29
54. Գյոդակլու (Հայաստան)	1934 հունիսի 29
55. Գոմոն (Վրաստան)	1948 օգոստոսի 17
56. Գորթոպա (Արգենտինա)	1932 մայիսի 6
57. Գորի (Վրաստան)	1908 օգոստոսի 22
58. Գորիս (Հայաստան)	1911 հուլիս
59. Գրոզնի (Ռուսաստան)	1913 ապրիլ
60. Դամասկոս (Սիրիա)	1928 հոկտեմբերի 20
61. Դավալու (Հայաստան)	1934 հուլիսի 5
Դեկտեմբերի 19. — *Կահիրեի Արքայական օպերային թատրոնում, ի նպաստ տեղի Անարատ Հղության հայ քույրերի վարժարանի, թատերասերների խումբը Էլի Գասարճյանի բեմադրությամբ:*

Համլետ — Էլի Գասարճյան:

Սավառնակ, № 46, էջ 23:

1944

Հունվարի 2. — *Կ. Պոլսի Մայր եկեղեցու վարժարանի սրահում, երեկոյան, դաստիարակչուհի Արմենուհի Ջոլաքյանը ներկայացրել է «Համլետը»:*

Կավոռչ, № 3:

Ապրիլի 23. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Շեքսպիրի ծննդյան 380-ամյակին նվիրված վեցերորդ Համամիութենական հերթական գիտահետազոտական կոնֆերանսի և թատերական փառատոնին:*

Համլետ — Վ. Վաղարշյան, Կլավդիոս — Վ. Վարդանյան, Գերտրուդ — Ա. Մկրտումյան, Օֆելյա — Ռ. Վարդանյան, Ա. դերասան — Վ. Դասոյան, Դերասանուհի — Ս. Ալավերդյան:

Ապրիլի 25. — *Երկրորդ կազմը:*

Համլետ — Գ. Ջանիբեկյան, Կլավդիոս — Դ. Մայյան, Գերտրուդ — Վ. Մելքումյան, Օֆելյա — Ռ. Վարդանյան, Ա. դերասան — Ա. Ադամյան, Դերասանուհի — Եվգ. Մկրտչյան:

Սունդուկյանի անվ. թատրոնի թանգարանի նյութեր:

Դեկտեմբերի 10. — *Փարիզի Մյություալիթեի թատրոնում, Փարիզահայ դերասանների ընկերակցությունը ղեկավարությամբ Ն. Փափազյանի. բեմադրությունը՝ Սարիմ Մաքսուտյանի, ձմեռային թատերաշրջանի բացմանը:*

Համլետ — Նորեն Փափազյան, Կլավդիոս և Համլետի հոր ուրվականը — Ս. Մաքսուտյան, Գերտրուդ — Բ. Դավթյան, Պոլոնիուս — Հ. Լաթիֆյան, Լաերտ — Ա. Գմբեթյան, Օֆելյա — Աիդա Աղնավուր(յան), Հորացիո — Ս. Սուրենյան, Ռոզենկրանց և Մարցելլոս — Օննիկ Սանճագ(յան), Գիլդենշտերն — Ա. Արրահամ, Բեռնարդո — Մ(աքսուտյան) Վահան, Ֆորտինբրաս — Վահրամ Սվաճյան, Օզրիկ — Հայկ Քանտարճյան, Ֆրանցիսկո — Հ. Պոյաճյան, Վոլդիմանդ — Ն. Մուրատյան, Ա. դերասան — Գրիգոր Վահան (Մաքսուտյան), Բ. դերասան և Ա. գերեզմանափոր — Վահրամ Պաղտասարյան, Դերասանուհի — Քնար Աղնավուրյան, Բ. գերեզմանափոր — Ս. Պալապանյան:

Քուլիս, 1956, № 238:

1945

Օգոստոսի 18–19. — *Լենինականում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի հյուրախաղերին, Գ. Ջանիբեկյանի (Համլետ) ղեկավարությամբ:*

Կլավդիոս — Լևոն Մսրյան, Գերտրուդ — Ա. Մկրտումյան, Պոլոնիուս — Օ. Բունիաթյան, Լաերտ — Գ. Աչուդյան, Օֆելյա — Մայրանուշ Պարոնիկյան, Հորացիո — Գ. Խաժակյան, Համլետի հոր ուրվականը և Ա. դերասան — Արարատ Բարսեղյան, Ռոզենկրանց — Վաղինակ Մարգունի, Գիլդենշտերն և Ֆրանցիսկո — Ավետիք Ջրաղացպանյան, Օզրիկ և Ա. գերեզմանափոր — Ա. Բագրատունի, Մարցելլոս — Հ. Հայրապետյան, Բեռնարդո, Բ. դերասան և Բ. գերեզմանափոր — Լևոն Ազարյան, Դերասանուհի — Լյուսյա Հովհաննիսյան:

Սովետական Հայաստան, № 174:

1946

Հունվարի 22. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ: Նոր դերակատարներ՝*

Հորացիո — Ֆրունզե Դովլաթյան, Ֆորտինբրաս — Ալ. Ադամյան, Մարցելլոս — Գևորգ Ասլանյան, Բեռնարդո — Տիգրան Բախչինյան, Ռոզենկրանց — Ավ. Ջրաղացպանյան:

Սունդուկյանի անվ. թատրոնի արվեստ:

Կահիրեի Էզբեքիե թատրոնում, Լի Գասարճյանը (Համլետ) դերասանների հետ:

ԳԱԹ, Ն. Սանտալճյանի ֆոնդ:

1947

Մայիսի 24. — *Մարսելի Սալ Մազրնոյում, Մարսելահայ ազգային թատերախումբը Թրագոշի (Համլետ) ղեկավարությամբ, օգտագործվել են Լիոնի օպերային թատրոնից վերցված զգեստները:*

Մասնակցել են՝ Ժյուդեքսը (Գ. Ջուլճյան), Մուրատ Սաղաթելյանը, Լ. Ղարիպյանը, Աշխեն Պոյաճյանը, Մ. Շիրվանյանը, Ս. Պասմաճյանը, Արապյան եղբայրները և ուրիշներ:

ԳԱԹ, Թրագոշի ֆոնդ:

Սեպտեմբերի 23. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, «Համլետի» 150-րդ ներկայացումը:*

Սունդուկյանի անվ. թատրոնի թանգարանի նյութեր:

Կ. Պոլսում. — *Երիտասարդաց թատերախումբը Եդուարդ Երեցյանի (Կլավդիոս) բեմադրությամբ:*

Համլետ — Գևորգ Գապարաճյան, Պոլոնիուս — Աբրահամ Խորշյան, Օֆելյա — Սիսի Երեցյան, Ա. գերեզմանափոր — Զարեհ Արշակ, Բ. գերեզմանափոր — Պերճ Ֆազլյան: Կրկնվել է Սկյուտարում:

Պերճ Ֆազլյանի վկայությունը, 1995-ի ապրիլի 14-ին, Երևանում:

1948

Հունիսի 16. — *Թբիլիսիի Հայպետթատրոնում, բեմադրությունը՝ Արշակ Բուրջալյանի, նկարիչ՝ Ռոբերտ Նալբանդյան, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:*

Գերտրուդ — Մարի Բերոյան, Լաերտ — Բարկեն Ներսիսյան, Օֆելյա — Սերիկ Շեկոյան, Հորացիո — Վահրամ Եղչատյան, Ֆորտինբրաս — Վահան Գալստյան, Օզրիկ — Լևոն Ֆիդանյան, Մարցելլոս — Արշակ Ադիլխանյան, Բեռնարդո — Գր. Սերոբյան, Ռեյնալդո — Հայկ Գրիգորյան, Ֆրանցիսկո — Ռաֆ. Խաչիկյան, Ռոզենկրանց — Նոյ Թումանյան, Ա. դերասան — Հ. Բերոյան, Բ. դերասան — Սոս Սոսյան (Ղլիջյան), Դերասանուհի — Վեներա Հակոբյան, Ա. գերեզմանափոր — Պահարե (Հայկ Պետրոսյան), Բ. գերեզմանափոր — Հ. Հովսեփյան:

Դեկտեմբերի 22-ին, նոր դերակատարներ՝

Ա. դերասան — Ռ. Պապովյան, Բ. գերեզմանափոր — Հ. Թաթարյան, Ֆորտինբրաս — Ս. Ջալալյան:

Դեկտեմբերի 26. — Օզրիկ — Ստեփան Հարությունյան:

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հունիս-օգոստոս. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը Գուրգեն Ջանիբեկյանի (Համլետ) ղեկավարությամբ հանդես է եկել՝ Հունիսի 23-ին՝ Արտաշատում, 29-ին՝ Սևանում, Հուլիսի 1-ին՝ Սպիտակում, 3-ին՝ Հոկտեմբերյանում, 10-ին՝ Էջմիածնում, 25-ին՝ Սովետաշենում, օգոստոսին՝ Շամշադինի շրջանի (այժմ՝ Տավուշի մարզի Բերդ քաղ.) Բերդ գյուղում, Ղազախ (Աղրբեջան) քաղաքում, Ախտայում (այժմ՝ Հրազդան), Լենինականում (այժմ՝ Գյումրի):*

Սեպտեմբերի 7. — *Ջանգիրասարում (Մասիս):*

Սեպտեմբերի 19. — *Հոկտեմբերյանում:*

Բանվոր, № 161, 170; **Լյուսյա Հովհաննիսյանի վկայությունը:**

Հոկտեմբերի 23. — *Թբիլիսիի Շահումյանի անվան Հայպետթատրոնում, Բ. Ներսիսյանի ստեղծագործական երեկոյին, Հայկ Ումիկյանի բեմադրությամբ, տեսարաններ:*

Համլետ — Բարկեն Ներսիսյան, Կլավդիոս — Աշոտ Քաջվորյան, Գերտրուդ — Ասյա Ժամկոչյան, Պոլոնիուս — Լևոն Ալավերդյան, Օֆելյա — Սերիկ Շեկոյան, Հորացիո — Վահրամ Եղչատյան, Ռոզենկրանց — Նոյ Թումանյան, Գիլդենշտերն — Մնացական Մարությունյան, Ա. գերեզմանափոր — Պահարե:

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 4026:

1949

Հունվարի 2. — *Թբիլիսիի Հայկական թատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:*

Փետրվարի 10. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի «Համլետի» 200-րդ ներկայացումը:*

Համլետ — Վ. Վաղարշյան, Կլավդիոս — Դ. Մայան, Գերտրուդ — Վ. Մելքումյան, Պոլոնիուս — Օ. Բունիաթյան, Լաերտ — Գ. Աչուղյան, Օֆելյա — Ռ. Վարդանյան, Համլետի Հոր ուրվականը և Ֆորտինբրաս — Ա. Ադամյան, Հորացիո — Գ. Խաժակյան, Ռոզենկրանց — Գ. Աֆրիկյան, Գիլդենշտերն — Ա. Ջրաղացպանյան, Մարցելլոս — Գևորգ Ասլանյան, Բեռնարդո — Տիգրան Բախչինյան, Ֆրանցիսկո — Ֆրունզե Դովլաթյան, Դերասանուհի — Ե. Մկրտչյան, Ա. գերեզմանափոր — Գ. Գաբրիելյան, Բ. գերեզմանափոր — Ա. Բագրատունի, Օզրիկ — Թ. Դիլաքյան:

Սովետական Հայաստան, № 33; **Սունդուկյանի անվ. թատրոնի արխիվ:**

Փետրվարի 16. — *Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ: Գերտրուդ — Անիկ Մկրտումյան:*

Коммунист, № 40.

Հուլիսի 4. — *Սունդուկյանի անվան թատրոնում, Պետրոս Ադամյանի ծննդյան 100-ամյակի առթիվ, տեսարաններ:*
Համլետ — Վ. Վաղարշյան, Գերտրուդ — Վ. Մելքումյան:

Գրական թերթ, № 27:

1951

Հունիսի 26–30. — *Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:*
Հուլիսի 1. — *Համլետ — Վ. Փափազյան, Յագո — Գեղամ Հարությունյան:*

Սունդուկյանի անվ. թատրոնի թանգարանի նյութեր:

Նոյեմբերի 17. — *Թբիլիսիի հայկական թատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:*

1952

Մայիսի 9, 11. — *Թբիլիսիի հայկական թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Վաղարշ Վաղարշյանի (Համլետ) մասնակցությամբ. բեմադրությունը՝ Հայկ Ումիկյանի, նկարիչ՝ Ռոբերտ Նալբանդյան, երաժշտությունը՝ Գ. Շահբաղյանի:*
Կլավդիոս — Ա. Քաջվորյան, Գերտրուդ — Մ. Բերոյան, Պոլոնիուս — Լ. Ալավերդյան, Լաերտ — Բ. Ներսիսյան, Օֆելյա — Ս. Շեկոյան, Հորացիո — Ս. Բաբլոյան, Ռոզենկրանց — Ն. Թումանյան, Գիլդենշտերն — Մ. Մարուքյան, Օզրիկ — Հրաչիկ Սիմոնյան, Ֆորտինբրաս — Վ. Գալստյան, Ա. դերասան — Հ. Բերոյան, Բ. դերասան — Ս. Սոսյան, Դերասանուհի — Վ. Հակոբյան, Ա. գերեզմանափոր — Պահարե, Բ. գերեզմանափոր — Հ. Թաթարյան, Մարցելլոս — Հովակիմյան, Համլետի հոր ուրվականը — Հ. Օկոնյան:
Հունիսի 4. — *Ա. դերասան — Հրաչիկ Սիմոնյան:*
Օգոստոսի 29. — *Հորացիո — Հայկ Ումիկյան:*
Սեպտեմբերի 2. — *Ֆորտինբրաս — Սոս Սոսյան:*

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ (ծրագիր):

Հունիսի 2. — *Թբիլիսիի Գրիբոյեդովի անվան ռուսական թատրոնում, Հայկական թատրոնի խմբի հետ, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Գուրգեն Ջանիբեկյանի (Համլետ) մասնակցությամբ, նույն կազմով:*

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ:

Օգոստոսի 9, 24. — *Լենինականի պետթատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:*
Կլավդիոս — Կարո Արծրունյան, Գերտրուդ — Ժաննա Թովմասյան, Պոլոնիուս — Հայկասար (Միանսարյան), Լաերտ — Ալեքսանդր Քոչարյան, Օֆելյա — Նինա Բոխյան, Ա. դերասան — Վարդան Թերզիբաշյան, Դերասանուհի — Վարդուհի Վարդերեսյան, Ա. գերեզմանափոր — Վահրամ Սվաճյան:
Օգոստոսի 11. — *Արթիկում, Վ. Փափազյանը (Համլետ) Լենինականի պետթատրոնի դերասանական խմբի հետ:*

ԳԱԹ, Վարդան Թերզիբաշյանի ֆոնդ:

Սեպտեմբերի 24. — *Բաթումի վրացական թատրոնում, Վ. Փափազյանը (Համլետ) Թբիլիսիի հայկական թատրոնի դերասանական խմբի հետ: Օֆելյա — Էմմա Ստեփանյան:*

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ:

1953

Մարտի 27. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, «Համլետի» 1942 թ. բեմադրության վերջին՝ 273-րդ ներկայացումը:*

Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

1954

Ապրիլի 7. — *Թեհրանում հայտարարություն է տարածվել, որ «Միծեռնակ» թատերախումբը մեծ պատրաստությամբ և սքանչելի բեմադրությամբ կներկայացնի ՀԱՄԼԵՏ, մասնակցությամբ նորոք Ֆրանսիայից Իրան ժամանած համաշխարհային համբավ վայելող մեծ դերասան «Միծեռնակի» և իրանահայ լավագույն ուժերի: («Միծեռնակ» թատերախմբի ծրագրում եղել են նաև՝ ապրիլի 18-ին՝ «Օթելլո», 30-ին՝ «Մակբեթ»: Ներկայացումների պատասխանատու եղել է Ժ. Մեհտիխանյանը: Մամուլում հետք չի մնացել:*

Հուլիսի 31. — *Լենինականի պետթատրոնում, Վ. Փափազյանի (Համլետ) մասնակցությամբ:*

1955

Փետրվարի 1. — *Կ. Պոլսի Թաղապետական թատրոնում, Երիտասարդաց թատերախումբը (Հ. Մասեհյանի թարգմանությունը Թորգոմ Սրապյանի կողմից արևմտահայերենի փոխադրած, չափածո, 5 գործ, 17 պատկեր), բեմադրությունը Գևորգ Գապարաճյանի (Համլետ):*

Կլավդիոս — Եդուարդ Երեցյան, Գերտրուդ — Սիսի Երեցյան, Պոլոնիուս — Նուպար Թերզյան, Լաերտ — Թորգոմ Սրապյան, Օֆելյա — Զարուհի Տեյիրմենճյան, Հորացիո — Միհրան Անտոնյան, Օզրիկ — Հ. Թոփուզյան, Ֆորտինբրաս — Ն(ուպար) Գամճյան, Բեմական թագուհի — Մաքրուհի Խաչերեսյան, Ա. գերեզմանափոր — Զավեն Տատյան, Բ. գերեզմանափոր — Գամեր Սատրգյան:

Կրկնվել է մարտի 15-ին և 20-ին՝ Սկյուտարի Սանուց միության մեջ:

Մարմարա, № 3897, 3928, 3946: Ժամանակ, № 17052:

Մարտի 5. — *Լիոնի շրջակա՝ Տեսինի ՀՅԴ Տան մեջ, Լիոնի և Տեսինի դերասանական խմբերի ուժերով, Թրագոշի (Համլետ) ղեկավարությամբ:*

Մասնակցել են՝ Ժյուդեքսը (Գևորգ Զուլճյան), Մուրատ Սաղաթելյանը, Սահակ Պասմաճյանը, Լևոն Ղարիպյանը, տիկ. Վ. Մուրատյանը, Միրիճան Շիրվանյանը, Ժանո և Մանվել Արապյան եղբայրները:

ԳԱԹ, Թրագոշի Փոնդ:

Մարտի 20. — *Լիոնի շրջակա՝ Վիենի կաթոլիկական եկեղեցու սրահում, նույն խմբով:*

1956

Հունվարի 20. — *Կահիրեի Էզպեքիե թատրոնում, Եգիպտահայ թատերական խումբը (թարգմ. Հ. Մասեհյան), բեմադրությունը՝ Արաքսի Օհանյանի: (Համլետի երկրորդ հայ կին դերակատարը):*

Համլետ — Արաքսի Օհանյան, *Կլավդիոս — Նուպար Բանյան, Գերտրուդ — Վ. Յաղճյան, Պոլոնիուս — Աստուր Օհանյան, Լաերտ — Հայկազ Գալուստյան, Օֆելյա — Թ. Գարաճյան, Համլետի հոր ուրվականը — Գրիգոր Նիզիպյան (բեմադրության սուսերամարտի մարզիչը), Հորացիո — Հ. Պոստաջյան, Ռոզենկրանց — Կ. Սուլթանյան, Գիլդենշտերն — Կ. Նիկողոսյան, Օզրիկ — Հ. Խըրխըչյան, Մարցելլոս — Պ. Պուղտաճյան, Բեռնարդո — Վահե (Պոյաճյան), Դերասան — Օ. Գալուստյան, Բ. դերասան — Հայկ-Արմեն, Դերասանուհի — Անահիտ, Գերեզմանափոր — Տ. Մանավյան:*

Արաքս, № 3: Արաքսի Օհանյանի վկայությունը:

Մարտի 25. — *Հալեպի Սինեմա Սուրիա սրահում, Կիլիկյան վարժարանների հոգաբարձության նախաձեռնությամբ. դերասան Պերճ Թոմպուլյանի ղեկավարությամբ, տեղական դերասանների հետ, ցերեկը:*

Համլետ — Պերճ Թոմպուլյան, *Գերտրուդ — Գոհարիկ, Պոլոնիուս — Անդրանիկ Վսեմյան, Լաերտ — Ժորժ Զափարյան, Օֆելյա — Ազատուհի Վսեմյան, Հորացիո — Մկրտիչ Սիմոնյան,*

Գերեզմանափոր — Պողոս Մենտիլյան: Մասնակցել են նաև՝ Ղևոնդ Գավլաքյանը, Ավետիս Էքմեքճյանը, Մանուել Թյուֆենքճյանը, Դանիել Գարամանուկյանը:

Սուրիա, № 209: Պերճ Թոմպուլյանի վկայությունը:

1957

Մարտի 17. — *Թեհրանի Հայ Մշակութային միության «Արարատ» կազմակերպության սրահում, Պերճ Թոմպուլյանի (Համլետ) ղեկավարությամբ, տեղի դերասանների հետ:*

Գերտրուդ — Կայծակուհի Սիմոնյան, (Օֆելյա — Սոնյա Թոմպուլյան): Մասնակցել են նաև՝ Հրաչ Թորոսյանը, Արտուշ Յաղմուրյանը, Սուրեն Մուրադյանը և ուրիշներ: Կրկնվել է ապրիլի 5-ին:

Ալիք, № 58, 62:

Պերճ Թոմպուլյանի բեմադրությամբ խաղացվել է նաև՝ Բաղդադում, Բասրայում (Պոլոնիուս — Անդրանիկ Վսեմյան, Օֆելյա — Ազատուհի Վսեմյան, Գերտրուդ — Արփինե Խաչատուրյան, Հորացիո — Ռ. Այվազյան), Երուսաղեմում՝ տեսարաններ (1960):

Պերճ Թոմպուլյանի վկայությունը:

1958

Նոյեմբերի 23. — *Սոֆիայի Գ. Դիմիտրով սրահում, «Երևան» Մշակութային միության կենտրոնական և Սոֆիայի մասնաճյուղի նախաձեռնությամբ կազմակերպված երեկոյին Վահրամ Փափազյանը հանդես է եկել «Վերջապես ես մենակ եմ» և «Լինե՞լ, թե՞ չլինել» մենախոսություններով:*

ԳԱԹ, Ս. Բեչյանի Ֆոնդ, 4-րդ ք., № 179:

1959

Տարվա վերջերին. — *Հալեպում, Պերճ Թոմպուլյանը (Համլետ) տեղի թատերական ուժերի մասնակցությամբ:*

Գուլիա, № 311:

1961

Մայիսի 1–2. — *Բեյրութի Քոլեժ դը լա Սալ թատրոնում, «Դրամատիկ թատերախումբը» Պ. Թոմպուլյանի (Համլետ) բեմադրությամբ:*

Կլավդիոս — Մարտիրոս Յափուճյան, Գերտրուդ — Արաքսի Խաչատուրյան, Պոլոնիուս — Լևոն Գրլբճյան, Լաերտ — Հակոբ Գնունի, Օֆելյա — Էոժենի Թոմպուլյան, Համլետի հոր ուրվականը — Մովսես Աչբգյան, Հորացիո — Մանուել Մեննեկիչյան, Օզրիկ — Հարությունն Ապաճյան, Բեռնարդո — Հարութ Հարությունյան, Մարցելլոս — Զավեն Ապաճյան, Ֆրանցիսկո — Մարտիրոս Քեհյայան, Գերեզմանափոր — Լևոն Ռշտունի:

Գուլիա, № 439: Պ. Թոմպուլյանի վկայությունը:

Նոյեմբերի 26. — *Բեյրութի Գալուստ Կյուլպենկյան սրահում, Պետրոս Ադամյանի մահվան 70-ամյակի առթիվ երեկոյին, տեսարաններ:*

Համլետ — Գրիգոր Սաթամյան, Օֆելյա — Աստղիկ Գասպարյան:

Հառաջ, դեկտեմբերի 3:

1963

Աշնան սկզբներին. — *Կ. Պոլսում, Գևորգ Գասպարաճյանի (Համլետ) բեմադրությամբ:*

Գուլիա, № 402:

1964

Ապրիլի վերջերին (23-ից հետո). — *Լոնդոնում և Բիրմինհամում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակին նվիրված տոնահանդիսություններին, Խորհրդային Միության պատվիրակության անդամ, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Դավիթ Մալյանը հանդես է եկել Կլավդիոսի մենախոսությամբ:*

Դ. Մալյանի վկայությունը:

Մայիսի 7–8. — *Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), Շեքսպիրի ծննդյան 400-ամյակին նվիրված հանդիսությանը, Սունդուկյանի անվան թատրոնի դերասանների կատարմամբ, տեսարաններ:*

Համլետ — Վ. Փափազյան, Գերտրուդ — Հեղինե Հովհաննիսյան, Պոլոնիուս — Աշոտ Ներսիսյան, Ռոզենկրանց — Վաչե Բագրատունի, Գիլդենշտերն — Գեղամ Աֆրիկյան:

Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

Մայիսի 28–29. — *Երևանի Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ (այժմ՝ Ա. Խաչատրյանի անվ.) դահլիճում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակին նվիրված հանդիսությանը Սունդուկյանի անվան թատրոնի դերասանների կատարմամբ, տեսարաններ:*

Համլետ — Վ. Փափազյան, Գերտրուդ — Հ. Հովհաննիսյան, Պոլոնիուս — Ա. Ներսիսյան, Ռոզենկրանց — Վ. Բագրատունի, Գիլդենշտերն — Գ. Աֆրիկյան, Ա. դերասան — Ալեքսանդր Ադամյան:

Սովետական Հայաստան, № 123:

— Բեյրութի Գ. Կյուլպենկյան սրահում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, դերասան Կ. Գնդունու բեմադրությամբ ու մասնակցությամբ:

Համլետ — Կայծակ Գնդունի: Մասնակցել են՝ Հարություն Գնդունին, Ներսես Ինկիլիզյանը, Հակոբ Ավետիքյանը (գինվոր) և ուրիշներ:

Հ. Ավետիքյանի հաղորդումը:

Հոկտեմբերի 31. — *Լոնդոնի Քոմընվելթ ինստիտուտի սրահում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակին նվիրված երեկոյին կրկնվել է երրորդ արարվածի չորրորդ տեսարանը:*

Համլետ — Աստուր Օհանյան, Գերտրուդ — Սեդա Ջիլինկիրյան:

Զարթոնք, դեկտեմբերի 23:

1965

Բաղդադում, Պերճ Թոմպուլյանը (Համլետ) տեղի թատերասերների խմբի հետ:

Կլավդիոս — Հակոբ Իփեկյան, Գերտրուդ — Վրեժուհի Իփեկյան, Պոլոնիուս — Գրիգորյան, Օֆելյա — Էոժենի Թոմպուլյան:

Ալիք, № 72:

1966

Նոյեմբերի 18. — *Մոսկվայում, ազգային լեզուներով կրկնվող ֆիլմերի համամիութենական սեմինար խորհրդակցությունում ցուցադրվել է «Համլետ» (ռուսական) կինոֆիլմը (թարգմ. Հ. Մասեհյան և Վ. Հովակիմյան), ռեժիսոր՝ Երվանդ Մատուրյան, Լևոն Գրիգորյան, հնչյունային օպերատոր՝ Շ. Գրիգորյան:*

Համլետ — Խորեն Աբրահամյան, Կլավդիոս — Սոս Սարգսյան, Գերտրուդ — Մետաքսյա Սիմոնյան, Պոլոնիուս — Գեղամ Հարությունյան, Լաերտ — Լորենց Առուչանյան, Օֆելյա — Մարգո Մուրադյան:

Շեքսպիրական, գիրք 3, Եր., 1969, էջ 377–378:

1968

Փետրվարի 14. — *Կահիրեի էզպեքիե թատրոնում եգիպտահայ թատրոնի վետերան, դերասանուհի, դրամատուրգ և ռեժիսոր Արաքսի Օհանյանի բեմական գործունեության 40-ամյակին նվիրված երեկոյին հոբելյարը հանդես է եկել «Լինե՞լ, թե՞ չլինել» մենախոսությամբ և Օֆելյայի հետ տեսարանում (մտիր կուսանոց):*

Համլետ — Արաքսի Օհանյան, Օֆելյա — Սաթո Պալայան:

Զահակիք, մարտ:

1972

Մարտի 11. — *Բեյրութի Հ. Տեր-Մելքոնյան թատերասրահում, Պերճ Թոմպուլյանը (Համլետ) տեղի թատերասերների հետ ներկայացրել է տեսարաններ:*

Օֆելյա — Սրբուհի Իբրանոսյան, Համլետի հոր ուրվականը — Սուրեն Տեյիրմենճյան:

Պ. Թոմպուլյանի վկայությունը:

1973

Հունիսի 1. — *Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի երրորդ կուրսի (ղեկ. Ռ. Ջրբաշյան) ուսանող Խաչատուր Զալիկյանի բեմադրությունը, տեսարաններ կուրսակիցների և դերասանական ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ:*

Համլետ — Դավիթ Սաֆարյան, *Համլետի կրկնակ — Գ. Մկրտչյան (դերասանակ. ֆակ. երկրորդ կուրսից), Կլավդիոս — Նիկոլ Գյուլբուդաղյան (Իրան), Գերտրուդ — Մ. Ադամյանց, Լաերտ — Գրիգոր Տատինցյան, Հորացիո — Մանուել Ջիջի (Սիրիա), Գերեզմանափոր — Ռոման Մաթիաշվիլի (Թբիլիսի), Մաղրածու — Սարգիս Զրչյան, Փոքրիկ երաժիշտ — Ա. Ասատրյան (դպրոցական):*

Նույն օրը. — *Սաթենիկ Մաթևոսյանի բեմադրությամբ, տեսարաններ:*

Համլետ — Սարգիս Զրչյան, *Կլավդիոս — Արամ Տեր-Գրիգորյան, Գերտրուդ — Գոհար Տրդատյան (Պատանի հանդիսատեսի թատրոնի դերասանուհի), Պոլոնիուս — Ս. Գրիգորյան (Հեռուստաթատրոնից), Լաերտ — Կ. Գրիգորյան (դերասանակ. ֆակ. առաջին կուրսից), Օֆելյա — Իրինա Օհանյան, Հորացիո — Ա. Օրդոյան (դերաս. ֆակ. առաջին կուրսից), Գերեզմանափոր — Գ. Մալոյան (դերաս. ֆակ. առաջին կուրսից), Դերասաններ — Հ. Թորոսյան, Գ. Գրիգորյան, Վ. Հայրապետյան, Լևոն Իվանյան, Լ. Մանվելյան (բոլորն էլ «Տուչպա» մնջախաղի թատրոնից):*

Մրցույթ ռեժիսորական ֆակուլտետի 15-րդ շրջանավարտների, Եր., (1974):

Հունիսի 16, 17, 24. — *Հալեպի ՀԲԸ Միության հանդիսասրահում, Շեքսպիրին նվիրված երեկոյին, Ուրֆայի Վերածնունդ միության թատերախումբը Պերճ Թոմպուլյանի (Համլետ) բեմադրությամբ, զգեստների ձևավորումը Էոժենի Թոմպուլյանի (Գերտրուդ):*

Պոլոնիուս և Մարցելլոս — Լևոն Զաղալանյան, Օֆելյա — Դանիա Կոսդանյան, Հորացիո — Սարգիս Սերմանուկյան, Բեռնարդո — Հակոբ Կյուլվարդյան, Ֆրանցիսկո — Անդրանիկ Սեմերճյան, Համլետի հոր ուրվականը — Վարդան Թերզապյան:

Արարատ, № 9506; **Զարթոնք,** № 208;

1976

Հոկտեմբերի 3. — *Տորոնտոյի ՀԲԸ Միության թատերախումբը, Սիրարփի Ամեմյանի բեմադրությամբ, տեսարաններ:*

Համլետ — Տորք Ամեմյան, *Գերտրուդ — Սիրարփի Ամեմյան:*

Արաքս (Մ.), 1977, № 61;

1977

Հոկտեմբերի 22. — *Երևանի Հայֆիլհարմոնիայի փոքր (այժմ՝ Ա. Բաբաջանյանի անվ.) դահլիճում, Մենաթատրոն, Արամ Ռ. Գրիգորյանի համադրությամբ ու բեմադրությամբ:*

Համլետ — Ժաստեն Գևորգյան *(երրորդ հայ կին դերակատարը):*

Երեկոյան Երևան, № 257:

Դեկտեմբերի 15. — *Երևանում, Հայաստանի գրողների միության Մեծ դահլիճում, Ժաստեն Գևորգյանի (Համլետ) մենաներկայացումը:*

Ժ. Գևորգյանի վկայությունը:

1978

Փետրվարի 16. — *Լենինականի պետթատրոնում, Ժ. Գևորգյանի կատարմամբ:*

Սեպտեմբերի 16. — *Կիրովականի պետթատրոնում, Ժ. Գևորգյանի կատարմամբ:*

Ժ. Գևորգյանի վկայությունը:

1980

Մարտի 29. — *Երևանի Դրամատիկական (այժմ՝ Ղափլանյանի անվ.) թատրոնում (թարգմ. Հ. Մասեհյան). բեմադրությունը՝ Արմեն Խանդիկյանի, նկարիչ՝ Եվգենի Սաֆրոնով, երաժշտական ձևավորումը՝ Ֆելիքս Արամյանի, սուսերամարտը՝ Մարտին Մելքոնյանի:*

Համլետ — Վլադիմիր Մարյան, *Կլավդիոս — Ռաֆայել Քոթանջյան, Գերտրուդ — Անահիտ Թուփչյան, Պոլոնիուս — Լևոն Շարաֆյան, Լաերտ — Ամիրան Գալստյան, Օֆելյա — Տաթևիկ Ղափլանյան, Հորացիո — Գրիգոր Գաբրիելյան, Գիլդենշտերն — Արթուր Ուլմազյան, Մարցելլոս, Օզրիկ — Ռուդիկ Հովսեփյան, Ռեյնալդո — Էդվարդ Գասպարյան, Քահանա — Հասան Նավոյան, Դերասան — Ռոբերտ Հարությունյան, Դերասաններ — Հրաչյա Հարությունյան, Գեղամ Հարությունյան, Մակիչ Մարգարյան, Գերեզմանափոր — Ռուբեն Կարապետյան, Թիկնապահ — Ավետիս Խրիմյան:*

Ներկայացման ծրագիրը:

1981

Մայիս. — *Հոկտեմբերյանի (այժմ՝ Արմավիր) Հաստոցաշինական գործարանի մշակույթի պալատում, Հոկտեմբերյանի մի խումբ մտավորականներից և Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի մի քանի ուսանողներից կազմված թատերախումբը. բեմադրությունը՝ Սուրեն Հարությունյանի:*

Համլետ — Նորիկ Աբրահամյան, *Կլավդիոս — Սուրեն Հարությունյան, Գերտրուդ — Տաթևիկ Նալբանդյան, Պոլոնիուս — Գագիկ Մինասյան:*

Գ. Մինասյանի վկայությունը:

Նոյեմբերի 17. — *Երևանի Դրամատիկական թատրոնը՝ Շեքսպիրյան ներկայացումների փառատոնին:*

1983

Հունիսի 25, Հուլիսի 6. — *Մոսկվայի Փոքր թատրոնում, Երևանի Դրամատիկական թատրոնի հյուրախաղերին:*

Համլետ — Վ. Մարյան, Կլավդիոս — Ռ. Քոթանջյան, Գերտրուդ — Ա. Թուփչյան, Պոլոնիուս — Լ. Շարաֆյան, Լաերտ — Ա. Գալստյան, Օֆելյա — Տ. Ղափլանյան, Հորացիո — Գ. Գաբրիելյան, Գիլդենշտերն — Ա. Ուլմազյան, Օզրիկ, Մարցելլոս — Ռ. Հովսեփյան, Քահանա — Հ. Նավոյան, Ռեյնալդո — Է. Գասպարյան, Դերասան — Ռ. Հարությունյան, Դերասաններ — Գ. Մկրտչյան, Մ. Մարգարյան, Գերեզմանափոր — Ռ. Կարապետյան, Թիկնապահ — Ա. Խրիմյան:

Ներկայացման ծրագիրը:

1985

Դեկտեմբերի 20. — *Երևանի կամերային պետական թատրոնում, բեմականացումը և բեմադրությունը Արա Երնջակյանի, երաժշտությունը՝ Ա. Քարտալյանի: Խաղացվել է հայերեն և ռուսերեն:*

Համլետ — Արմեն Համբարձումյան, *(հայ.),* ***Արամ Մազմանյան,*** *(ռուս.), Կլավդիոս — Միքայել Պողոսյան, Գերտրուդ — Եվգենյա Պողպոմոգովա, Պոլոնիուս — Կարեն Ուլիխանյան, Լաերտ — Գեորգի Ամիրագյան, Ա. Աբրահամյան, Օֆելյա — Նելլի Խերանյան, Զարա Ուզունյան, (ռուս.) Հորացիո — Միքայել Ավակիմով, Հրանտ Թոխատյան, Ռոզենկրանց — Ռոմիկ Մանուկյան, Գիլդենշտերն — Արթուր Սահակյան:*

Կոմպոզիտոր, № 293. **Արա Երնջակյանի վկայությունը:**

1991

Մարտի 27. — *Երևանի Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Թատրոնի Միջազգային օրվա առթիվ, Պետրոս Ադամյանի մահվան 100-ամյակին նվիրված միջոցառմանը ժամեն Գևորգյանը կատարել է «Լինե՞լ, թե՞ չլինել» մենախոսությունը և այլ տեսարաններ:*

1994

Նոյեմբերի 13. — *Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, մենաթատրոնի արտիստուհի ժամեն Գևորգյանի կատարմամբ:*

2000

Մարտի 27. — *Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում, Թատրոնի Միջազգային օրվա առթիվ, «Մկան թակարդ կամ փորձում ենք «Համլետ» վերնագրով: Բեմական տարբերակը և բեմադրությունը Հակոբ Ղազանչյանի, նկարիչ՝ Գրիչա Սարգսյան, կոմպոզիտոր՝ Ստեփան Թորոսյան, պարադիր՝ Գագիկ Կարապետյան, բեմական պլաստիկան՝ Ս. Շահինյանի:*

Համլետ — Արթուր Կարապետյան, *Կլավդիոս — Արտաշես Շահվերդյան, Գերտրուդ — Անահիտ Բաբեյան, Պոլոնիուս — Արմեն Սանթրոսյան, Օֆելյա — Սուսաննա Բաղդասարյան, Գիլդենշտերն — Տրդատ Մակարյան, Համլետի հոր ուրվականը — Զավեն Աբրահամյան, Դերասաններ — Շուշանիկ Ղազարյան, Լ. Ղևոնդյան, Սուրեն Առաստամյան, Վահե Պապյան, Էլլադա Սայադյան:*

Ներկայացման ծրագիրը:

2006

Դեկտեմբերի 1. — *Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում (նվիրվել է Թաթիկ Սարյանի հիշատակին), բեմադրությունը՝ Արթուր Սահակյանի, արտաքին ձևավորումը և զգեստները՝ Կարեն Գրիգորյանի, երաժշտական ձևավորումը՝ Աշոտ Փափազյանի (հինգ գործողություն, 26 տեսարան, հանվել են՝ Վոլդիմանդի, Կոռնելիուսի, Ռեյնալդոյի, 2-րդ գերեզմանափորի դերերը, ավելացվել՝ նորերը):*

Համլետ — Հրաչյա Հարությունյան, *Կլավդիոս — Ռուբեն Կարապետյան, Գերտրուդ — Էվելինա Շահիրյան, Պոլոնիուս — Գուրգեն Անտոնյան, Լաերտ — Գրիգոր Խաչատրյան, Օֆելյա — Լիլիթ Մեսրոպյան, Հորացիո — Արտաշես Ալեքսանյան, Մարցելլոս — Արտաշես Մխիթարյան, Ռոզենկրանց — Էդվարդ Սարգսյան, Գիլդենշտերն — Արմեն Բարսեղյան, Գերեզմանափոր — Կարպիս Շամլյան, Համլետի հոր ուրվականը, Դերասան — Գրիգոր Գաբրիելյան, Դերասանուհի — Նախրա Շահիրյան, Լուցիանոս — Վահագն Գալստյան, Պալատական տիկին — Մարինե Գաբրիելյան, Պահակներ — Արտյոմ Եղիազարյան, Վահան Մալխասյան, Օզրիկ — Հովհաննես Թեքգյոզյան, Բեռնարդո — Արտյոմ Եղիազարյան, Քահանա — Արա Գևորգյան, Երգչուհի-դերասանուհի — Լուսինե Հարությունյան, Երգիչ-դերասան — Հրաչյա Ստեփանյան:*

Ներկայացման ծրագիրը:

JULIUS CAESAR (1599)

ՀՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ

1853

Հունվարի 25. — *Վենետիկի Սուրբ Ղազար կղզում, Մխիթարյան միաբանության դպրոցական թատրոնում (Հավանաբար՝ ֆրանսիացի դրամատուրգ Դյուսիսի փոխադրության թարգմանությամբ), համառոտված, **առաջին անգամ**:*

Հռոմում կատարվող տեսարանում հանդես են եկել Հուլիոս Կեսարը (Հռոմի դիկտատոր), Անտոնիոսը (Հյուպատոս), Բրուտոսը (Պրետոր, որդի Կեսարի), Տուղղիոսը, Կասսիոսը, Կիմները (ծերակույտի ավագներ), ծերակույտ, հռոմեացիք:

ԳԱԹ, ներկայացման ծրագրի լուսանկար պատճենը:

1911

Կ. Պոլսում բեմադրության է պատրաստվել: Մասնակիցներից պետք է լիներին Վահրամ Փափազյանը, Ենովք Շահենը:

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի Ֆոնդ, № 2028:

1916

Փետրվարի 18. — *Բաքվի Հայ դրամատիկ դերասանների խումբը, Արմեն Արմենյանի թարգմանությամբ ու բեմադրությամբ պատրաստվել է ներկայացնել Մայիլյանների (այժմ՝ Ախունդովի անվ. օպերայի և բալետի) թատրոնում: Մամուլում հայտարարվել է, բայց ներկայացումը տեղի չի ունեցել (հիշատակություն չկա):*

Ներկայացման մասնակիցների թվում նախատեսված են եղել՝ Վահրամ Փափազյանը, Հովհաննես և Արաքս Զարիֆյանները, Արշակ Հարությունյանը, Եկատերինա Դուրյան-Արմենյանը, Օլգա Գուլազյանը, Արմեն Արմենյանը:

Աբև, № 11:

*— Նյու Յորքում, **առաջին անգամ**, բեմադրվել է Հայ դրամատիկ խմբի ուժերով (Մկրտիչ Նուրյան և ուրիշներ):*

ԳԱԹ, Ղ. Սարգսյանի հուշերը:

1920

1920, Թիֆլիս. — *1920—1921 թատերաշրջանում բեմադրելու համար, Հայոց Դրամատիկական ընկերության խորհրդի որոշումով, հատուկ պատվերով թարգմանվել է «Հուլիոս Կեսարը»:*

Մշակ, № 55:

1934

Հունիսի 24. — *Հալեպի Այնթապցիների կրթասիրաց վարժարանում, Հայ Երիտասարդաց ընկերակցության թատերախմբի (այժմ՝ Պ. Ադամյանի անվ.) ներկայացումը:*

***Հուլիոս Կեսար — Խաչիկ Գալուստյան**; Ներկայացմանը մասնակցել են՝ Հովհաննես Պազարպաշյանը, Անդրանիկ Կետիկյանը, Գրիգոր Պարսումյանը, Կարապետ Գարտաշյանը, Վահան Թյուրինճյանը, Նուպար Տեմիրճյանը, Գրիգոր Գոբարիկյանը և ուրիշներ:*

Հալեպի «Պետրոս Ադամյան» թատերախմբի հավաքածո (ազդագիր):

— 1930-ական թթ. Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում, Հ. Շեհմելյանի բեմադրությամբ:

(Հուլիոս Կեսար — Հովհաննես Շեհմելյան):

Նոր Ալարդ, 1980, № 3, էջ 59:

1968

Մայիսի 21. — *Երևանի Գեղարվեստա-թատերական (այժմ՝ Թատրոնի և Կինոարվեստի պետական) ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի երրորդ կուրսի (ղեկ. Ռ. Ջրբաշյան) ուսանող Ռուբեն Մակարյանի համադրությամբ ու բեմադրությամբ, համակուրսեցիների կատարմամբ:*

Բրուտոս — Ռուբեն Մակարյան, Կասիոս և ***Կեսար — Արմեն Խանդիկյան,*** *Կասկա — Դավիթ Մնացականյան, Անտոնիոս — Վահե Շահվերդյան, Պորցիա — Սվետլանա Քոչարյան (հետո՝ Լանա Ատրունի):*

Մրցակցային ռեժիսորական ֆակուլտետի 11-րդ շրջանավարտների, Եր., 1971:

1972

Մարտի 11. — *Բեյրութի Տեր-Մելքոնյան սրահում, Շեքսպիրյան երեկոյին,* ***Պերճ Թոմպուլյանի*** *բեմադրությամբ ու մասնակցությամբ (**Անտոնիոս**), տեսարաններ:*

ԳԱԹ, Ջ. Գալուստյանի ֆոնդ:

1973

Հունիսի 16–17, 24. — *Հալեպի ՀԲԸ Միության Հանդիսասրահում, Ուրֆայի Վերածնունդ միության թատերախումբը, Շեքսպիրյան երեկոյին, Պերճ Թոմպուլյանի բեմադրությամբ ու մասնակցությամբ (Մարկ Անտոնիոս), տեսարաններ:*

Հուլիոս Կեսարի դիակ — Աբրահամ Կոստանյան:

Զարթոնք, № 208:

1992

Մայիսի 24. — *Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում (թարգմ. Խ. Դաչտենց), բեմադրությունը և երաժշտական ձևավորումը՝ Արմեն Խանդիկյանի, նկարիչ՝ Կարեն Գրիգորյան:*

Կեսար — Վլադիմիր Մարյան, *Օկտավիանոս — Արամ Մխիթարյան, Անտոնիոս — Լևոն Շարաֆյան, Լեպիդոս — Կարեն Ջանգիրյան, Բրուտոս — Արթուր Ուիթմազյան, Կասիոս — Արամ Անանյան, Կասկա — Հրաչյա Հարությունյան, Լիգարիոս — Թորոս Խաչատրյան, Դեցիոս Բրուտոս — Ռուբեն Կարապետյան, Սինա — Գրիգոր Գաբրիելյան, Գուչակ — Ռոբերտ Հարությունյան, Լացիոս — Հովհաննես Բաբախանյան, Կալփուրնիա — Լաուրա Թանգյան, Պորցիա — Մարինե Սարգսյան, Կեսարի սպասավոր — Ռոլանդ Հունանյան, Օկտավիանոսի սպասավոր — Ռոբերտ Առաքելյան, Քաղաքացիներ — Էդվարդ Գասպարյան, Լևոն Մուրադյան, Գևորգ Աբազյան, Սերգուշ Բաբայան, Լևոն Սահակյան, Հովհաննես Բաբախանյան:*

Երկրորդ կազմ՝ Օկտավիանոս — Արմեն Հակոբյան, Կասկա — Գրիգոր Գաբրիելյան, Սինա — Արամ Մխիթարյան:

Ներկայացման ծրագիրը:

1997

Նոյեմբեր. — *Թբիլիսիում, Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը Համաշխարհային արվեստի փառատոնին:*

Թատերական Երևան, № 4:

2010

Ապրիլի 30. — *Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում, բեմադրությունը՝ Ա. Խանդիկյանի, նկարչական ձևավորումը և զգեստները՝ Կ. Գրիգորյանի, երաժշտական ձևավորումը՝ Աշոտ Փափազյանի և Ա. Խանդիկյանի:*

Հուլիոս Կեսար — Գրիգոր Գաբրիելյան, *Բրուտոս — Արթուր Ուիթմազյան, Անտոնիոս — Հրաչյա Հարությունյան, Կասիոս — Գրիգոր Խաչատրյան, Օկտավիանոս — Արտաշես Մխիթարյան, Կասկա — Արմեն Բարսեղյան, Դեցիոս Բրուտոս — Վահան Գալստյան, Սինա — Արեն Վաթյան, Պորցիա — Գոհար Իգիթյան,*

Կալփուրնիա — Լուիզա Ղամբարյան, Գուչակ — Գուրգեն Անտոնյան, Լեպիդիոս — Կարեն Միրիջանյան, Կեսարի սպասավոր — Էդվարդ Գասպարյան, Օկտավիանոսի սպասավոր — Բաբկեն Զորանյան, Լացիոս — Նիկոլայ Ավետիսյան, Քաղաքացիներ — Հովհաննես Թեքգյոզյան, Հրաչյա Ստեփանյան, Սամվել Հարությունյան, Գագիկ Մկրտչյան, Նարեկ Քթոյան:

Ներկայացման ծրագիրը:

2011

Հոկտեմբերի 21. — *Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը Վահրամ Փափազյանի անվան Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնին:*

1912

Փետրվարի 27. — *Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի «Հուլիոս Կեսար» բեմադրությունն արժանացել է Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի: Մրցանակ է շնորհվել բեմադրող՝ Արմեն Խանդիկյանին, բեմանկարիչ՝ Կարեն Գրիգորյանին, դերակատարներ՝ Գրիգոր Գաբրիելյանին (Հուլիոս Կեսար), Արթուր Ութմազյանին (Բրուտոս), Հրաչյա Հարությունյանին (Անտոնիոս):*

WINTER'S TALE (1610)

ԶՄԵՌԱՑԻՆ ՀԵՔԻԱԹ

1954

Հունիսի 28. — *Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Հ. Աբեյանի անվան թատրոնում (թարգմ. Ստեփան Ալաջաջյան), առաջին անգամ, բեմադրությունը՝ Հովհաննես Կարապետյանի, նկարիչ՝ Թագվոր Բերբերյան, երաժշտությունը՝ Կ. Մելիք-Վրթանեսյանի, պարերը՝ Վ. Ղարիբյանի:*

Լեոնտես — Սուրեն Հովհաննիսյան, Մամիլիուս — Ռեմիկ Սարգսյան, Կամիլլո — Հ. Ավագյան, Անտիգոնես — Միքայել Հակոբյան, Կլեոմենես — Ղազար Նազարյան, Դիոն — Սուրեն Եղիազարյան, Պալատական — Ալեքսանդր Շագաֆյան, Պոլիքսենես — Արշակ Արշակունի (Հարությունյան), Ֆլորիզել — Վոլոդյա Գրիգորյան, Դատական պաշտոնյա — Գրիգորի Կոտով, Նավաստի — Ժիրայր Կարապետյան, Բանտապահ — Գեղամ Նալբանդյան, Մեր Հովիվ — Գ. Կարապետյան, Կլաուն — Թ. Սարգսյան, Ավտոլիկոս — Ալեքսանդր Հովհաննիսյան, Հերմիոն — Աղավնի Հարությունյան, Պերտիդա — Լենա Փաշինյան, Պոլինա — Հասմիկ Նաղաշյան, Էմիլյա — Օ. Մութաֆյան, Ա. ազնվականուհի — Աղավնի Հովհաննիսյան, Բ. ազնվականուհի — Արաքսյա Մսրյան, Մոպսա — Ռ(ոզա) Գրիգորյան, Դուկաս — Ռ. Գոբիկյան:

Երկրորդ կազմ՝ Լեոնտես — Արշավիր Վաչյան, Մամիլիուս — Ռոզա Գրիգորյան, Կլեոմենես — Աշոտ Գևորգյան, Դիոն — Վրույր Աղաջանյան, Բանտապահ — Հովհաննես Մսրյան, Կլաուն — Ս. Սահակյան:

Տպագիր, № 84; Սովետական Հայաստան, № 202:

Սեպտեմբեր. — *Երևանի Հայֆիլհարմոնիայի Ամառային թատրոնում (այժմյան Կոմիտասի անվ. երաժշտական տան տեղը), Կիրովականի Աբեյյանի անվան պետթատրոնի ներկայացումը Շրջանային թատրոնների ստուգատեսին:*

Նոյեմբերի 17. — *Կիրովականի Աբեյյանի անվան թատրոնի բեմադրության քննարկումը, զեկուցող՝ Լուիզա Սամվելյան:*

1955

Մարտի 27. — *Լենինականում (այժմ՝ Գյումրի), Կիրովականի Աբեյյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

1956

Մայիս. — *Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում, Կիրովականի Աբեյյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

Коммунист, № 138.

1977

Փետրվարի 17. — *Ստեփանակերտի Գորկու (այժմ՝ Վ. Փափազյանի) անվան թատրոնում (թարգմ. Ստ. Ալաջաջյան). բեմադրությունը՝ Հովհաննես Կարապետյանի, նկարիչ՝ Գրիգոր Մատուրյան, երաժշտական ձևավորումը՝ Ֆելիքս Արամյանի, պարերի բեմադրությունը՝ Ա. Ա. Բաբայանի:*

Լեոնտես — Բենիկ Օվչյան, Մամիլիուս — Ս. Երեմյան, Կամիլլո — Սամվել Վիրաբյան, Անտիգոնես — Վանյա Հովհաննիսյան, Կլեոմենես — Ա. Հարությունյան, Դիոն — Սամվել Էվրիյան, Պոլիքսենես — Միքայել Հարությունյան, Ֆլորիզել — Բ. Գևորգյան, Նավաստի — Մ. Ավագյան, Բանտապահ — Բ. Պողոսյան, Մեր հովիվ — Գուրգեն Գրիգորյան, Կլաուն — Քաջիկ Հարությունյան, Ավտոլիկոս — Մամիկոն Միքայելյան, Հերմիոն — Մարգո Բալասանյան, Պերտիդա — Ժաննա Գալստյան, Պոլինա — Նը-

վարդ Ասատրյան, Էմիլյա — Ռոզա Գրիգորյան, Մոպսա — Արեգա Առաքելյան, Դորկաս — Ջ. Առաքելյան, Ա. Հովվուհի — Ժաննա Գալստյան, Բ. Հովվուհի — Ա. Հարությունյան, Դատական պաշտոնյա — Վ. Առուշանյան, Ա. Պալատական — Բուդդան Բաբայան, Բ. պալատական — Բ. Պողոսյան, Ա. ազնվականուհի — Շուշիկ Գրիգորյան, Բ. ազնվականուհի — Ա. Հովհաննիսյան, Գ. ազնվականուհի — Ա. Օհանյան:

Երկրորդ կազմ. Մեր հովիվ — Ժորա Մովսիսյան, Հերմիոն — Հերիքնազ Սիմոնյան, Պերտիդա — Արեգա Պետրոսյան, Պոլինա — Ջուլիետ Հարությունյան, Ա. Հովվուհի — Արեգա Պետրոսյան:

Комунист, № 73: Ներկայացման ծրագիրը:

1978

Մայիսի 25. — *Կիրովականում, Ստեփանակերտի թատրոնի հյուրախաղերին:*

Ներկայացման ծրագիրը:

MACBETH (1605)

ՄԱԿԲԵԹ

1864

Հունվարի 29. — *Վենետիկի Մխիթարյան միաբանության դպրոցական թատրոնում (Ժան-Ֆրանսուա Դյուսիսի ֆրանսերեն փոխադրության 1839-ի հրատարակությունից թարգմ. Սամուել վարդապետ Կայսերյան), Շեքսպիրի ծննդյան 300-ամյակի առթիվ, առաջին անգամ:*

Պիեսը խաղացվել է կրճատված, 9 գործող անձով, Լեդի Մակբեթի դերը դարձվել է ֆրեստեկոնտ անունով, իսկ Հայերեն թարգմանության մեջ՝ էդգարդ, որդի Մակբեթի:

Բազմավեպ, 1964, № 10–12, էջ 287–289:

1867

Մարտի 25. — *Կ. Պոլսի Նաումի թատրոնում, Ասիական ընկերության դերասանական խումբը (թարգմ. Խաչատուր Ուղուրեկյան), բեմադրությունը՝ Հակոբ Վարդովյանի:*

Մակբեթ — Հակոբ Վարդովյան, *(Լեդի Մակբեթ — Երանուհի Գարագաշյան, Մակդուֆ — Պետրոս Ադամյան):*

Մասիս, № 789: **Շեքսպիրական,** գիրք 2, Եր., 1967, էջ 236:

1873–1874

Կ. Պոլսի Հայ դերասանական խումբը 1873–1874 թատերաշրջանում բեմադրվելիք պիեսների շարքում նախատեսել է ներկայացնել «Մակբեթը», իբրև առաջին անգամ:

Թատերախմբի վերատեսուչը եղել է Թովմաս Ֆասուլյանը, բեմի տնօրենը՝ Սերովբե Պենկլյանը, փոխտնօրենը՝ Գրիգոր Վարդովյանը: Ներկայացումը չի կայացել:

ԳԱԹ, Ս. Դավթյանի ֆոնդ:

1893

Դեկտեմբերի 20. — *Թիֆլիսի Արքունական (օպերային) թատրոնում, Գևորգ Պետրոսյանի բենեֆիսային «Քին» ներկայացման մեջ կատարվել է մի տեսարան «Մակբեթից» (թարգմ. Ստեփան Մալխասյանց):*

Մակբեթ — Գևորգ Պետրոսյան;

Մատենադարան, Ալ. Երիցյանի ֆոնդ:

1899

Հունվարի 27. — *Բաքվում, Թիֆլիսի դերասանական խումբը, ի նպաստ Գևորգ Պետրոսյանի տրված «Քին» ներկայացման մեջ բեմ բեմի վրա տեսարանում կատարել է հատված «Մակբեթից»:*

Տարազ, № 5, էջ 127:

1914

Փետրվարի 10. — *Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում, Հայոց դրամատիկական ընկերության դերասանական խմբի ներկայացման («Սալոմե», «Դյուքական հընչյուններ») վերջում Սիրանույշը կատարել է **Լեդի Մակբեթի** մենախոսությունը: (3-րդ արարի 4-րդ պատկերը):*

Հորիզոն, № 32: **Մշակ,** № 33:

1910-ական թթ.

1910-ական թթ. երկրորդ կեսին, Նյու Յորքի Հայ դրամատիկ խմբի կատարմամբ (թերևս՝ Մ. Մելքոնի թարգմանությամբ):

ԳԱԹ, Ղ. Սարգիսյանի հուշերը:

1919

Սեպտեմբերի 1. — *Լովելի Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցության Արանց և կանանց մասնաճյուղը բեմադրության է պատրաստել «Մակբեթը»:*

Երիտասարդ Հայաստան, № 14:

1920

Մարտի 15. — *Կ. Պոլսի Բերայի Պըտի Շան թատրոնում, ցերեկը, Պոլսահայ դրամատիկ խումբը. բեմադրությունը՝ Վ. Փափազյանի:*

Մակբեթ — Վահրամ Փափազյան, Լեդի Մակբեթ — Սիրանույշ Ալիքսանյան, Էդմոնդ — Տրդատ Նշանյան, Բանքո — Նշան Պեշիկթաշլյան:

ԳԱԹ, Վ. Փափազյանի ֆոնդ:

Հոկտեմբերի 24. — *Կ. Պոլսի Պըտի Շան թատրոնում, ցերեկը, Պոլսահայ դրամատիկ խումբը:*

Նոր դերակատարներ՝ Դունկան — Տրդատ Նշանյան, Անգուս — Աշոտ Մատաթյան, Մակդուֆ — Հրաչյա Ներսիսյան, Մալկոմ — Երվանդ Թոլայան, Ռոս — Վ. Պալթազարյան:

Ճակատամարտ, № 588, 589:

Նոյեմբերի 4. — *Նույն խումբը: **Մակբեթ — Տրդատ Նշանյան:***

1922

Օգոստոսի 6. — *Կ. Պոլսի Սկյուտարի Թեփեբաշի թատրոնում, Պոլսահայ դրամատիկ խումբը:*

Մակբեթ — Վ. Փափազյան, Լեդի Մակբեթ — Ս. Ալիքսանյան, Առաջին վհուկ — Գրիգոր Ավետյան:

ԳԱԹ, Գր. Ավետյանի ֆոնդ:

Նոյեմբեր-դեկտեմբեր. — *Բաթումում, Վ. Փափազյանը (Մակբեթ) տեղի թատերական կոլեկտիվի հետ: Լեդի Մակբեթ — Նվարդ Ալիխանյան (վերագրվել է Արուս Ոսկանյանին):*

1924

Աշնանը. — *Խարկովում, Վ. Փափազյանը (Մակբեթ) տեղի թատերասերների խմբի հետ:*

Մարտակոչ, № 298:

1926

Դեկտեմբերի 29. — *Թիֆլիսի Ռուսթավելու անվան թատրոնում, Հայկական պետթատրոնի ներկայացումը. թարգմանությունը և բեմադրությունը՝ Վ. Փափազյանի (Մակբեթ), նկարիչ՝ Գիգո Շարբաբչյան:*

Դունկան — Վարդան Միրզոյան, Բանքո — Մաթևոս Սանամյան, Մալկոմ — Ռ. Նադիրյան, Մակդուֆ — Խորեն Հարությունյան, Դոնալբեյն — Պերճիկ (Հովհաննիսյան), Առաջին վհուկ — Հարություն Բերոյան, Ֆլինս — Վարյա Սարգսյան, Լեդի Մակբեթ — Մարի Բերոյան, Ազնվական կին — Արուս Ասրյան, Բ. վհուկ, Ա. մարդասպան — Մուրադ Կոստանյան, Մենտեթ, Գ. վհուկ, Բ. մարդասպան — Արամ Խոսրով, Դոնապան — Արշակ Մամիկոնյան, Համբավաբեր — Գեղամ Աֆրիկյան, Մանկլավիկ — Սեդա Արարատյան, Լենոքս — Կարո Ալվարյան, Ռոս — Վավիկ (Անուշավան) Վարդանյան, Անգուս — Վահան Գալստյան:

Մարտակոչ, № 298: ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

1927

Հունվարի 27. — *Թիֆլիսի Հայպետթատրոնում: Նոր դերակատար. Լեդի Մակբեթ — Օլգա Մայսուրյան:*

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Սեպտեմբերի 15. — *Լենինականի (Գյումրի) Քաղլուսվարի թատրոնում, Վ. Փափազյանի (Մակբեթ) ղեկավարությամբ խումբը:*

Լեդի Մակբեթ — Մարիամ Մոռռոյան: Մասնակցել են նաև Արշակ Մամիկոնյանը, Արամ Ռշտունին, Հայկ Բեյլերյանը և ուրիշներ:

Բանվոր, № 75:

1928

Փետրվարի 8. — *Թիֆլիսի Հայպետթատրոնում, թարգմանությունը և բեմադրությունը՝ Վ. Փափազյանի (Մակբեթ), նկարիչ՝ Գ. Շարբաբչյան:*

Դունկան — Միքայել Ալիխանյան, Մալկոմ — Արտաշես Վարդանյան, Դոնալբեյն — Նվարդ Ալիխանյան, Բանքո — Մաթևոս Սանամյան, Մակդուֆ — Դավիթ Մալյան, Լենոքս և Անգուս — Վահան Գալստյան, Ռոս — Անուշավան (Վավիկ) Վարդանյան, Ֆլինս — Վեներա Հակոբյան, Բժիշկ — Արտեմ Լուսինյան, Դրոնապան — Դորի Ամիրբեկյան, Ա. վհուկ — Հարություն Բերոյան, Բ. վհուկ — Գևորգ Փիրումյան, Գ. վհուկ — Ալեքսանդր Աբարյան, Ա. մարդասպան — Գրիգոր Ավագյան, Համբավաբեր — Գեղամ Աֆրիկյան, Լեդի Մակբեթ — Մարի Բերոյան, Ազնվական կին — Արուս Ասրյան:

Գրոլնոտաբ, № 30, 34: ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հունվարի 18. — *Բաքվի Հայպետթատրոնի ներկայացումը (թարգմ. Հ. Մասեհյան), բեմադրությունը՝ Լևոն Քալանթարի:*

Մակբեթ — Վ. Փափազյան, Լեդի Մակբեթ — Մարիա Ադամյան, Մալկոմ — Սերժ Հայրյան, Դոնալբեյն — Լյուսի Թառայան, Բանքո — Լևոն Ալավերդյան, Մակդուֆ — Ալեքսանդր Հովհաննիսյան, Լենոքս — Մկրտչյան, Ռոս — Մարտունի Մսրյան, Բժիշկ — Աղասի Ալայան, Ազնվական կին — Մանյա Թավրիզյան, Դրոնապան և Բ. վհուկ — Ավետ Ազյան, Ա. վհուկ — Վահան Եսայան, Գ. վհուկ — Միքայել Սաֆարյան, Համբավաբեր — Սերոբ, Դահիճ — Մարկոսյան:

ԳԱԹ, Լ. Ալավերդյանի ֆոնդ:

1932

Նոյեմբերի 15.— *«Մակբեթի» համբերթերցումը Երևանի Առաջին (այժմ՝ Սունդուկյանի անվ.) թատրոնի կոլեկտիվում:*

1933

Ապրիլի 24. — *Երևանի Առաջին (այժմ՝ Սունդուկյանի անվ.) թատրոնում (թարգմ. Հ. Մասեհյան), տեքստի լրացումները՝ Տիգրան Հախումյանի (5 գործ., 20 պատկեր), տեքստի համադրումը և բեմադրությունը՝ Արմեն Գուլակյանի, ռեժիսուրա՝ Ա. Գուլակյան, Մկրտիչ Ջանան, նկարիչ՝ Միքայել Արուտչյան, երաժշտությունը՝ Արամ Խաչատրյանի:*

Դունկան — Տիգրան Այվազյան, Մալկոմ — Վաչե Բաղբատունի, Մակբեթ — Հրաչյա Ներսիսյան, Լեդի Մակբեթ — Արուս Ոսկանյան, Բանքո — Վավիկ Վարդանյան, Ֆլինս — Թաթուլ Դիլաքյան, Եպիսկոպոս — Ս. Ասլանյան, Անգուս — Ավետ Ավետիսյան, Մակդուֆ — Գուրգեն Ջանիբեկյան, Ռոս — Լևոն Մսրյան, Լենոքս — Օրի Բունիաթյան, Մենտեթ և Ա. ապստամբ քաղաքացի — Գարիկ Մուշեղյան, Կաթնես — Գեղամ Աֆրիկյան, Սիվարդ — Հենրի Ասլանյան, Բժիշկ և Դոնապան — Գուրգեն Գաբրիելյան, Ա. աղջիկ — Անատոլյա Եղյան, Բ. աղջիկ — Ա. Սիմոնյան, Էմմանուել — Մուրադ Կոստանյան, Մարդասպան — Սիամանտ Հովհաննիսյան, Ա. քահանա — Տիգրիս Աբրահամյան, Բ. քահանա և Բ. սուրհանդակ Դունկանի մոտ — Գևորգ Ասլանյան, Գ. քահանա և Ջեկ-կեդ — Վաղինակ Մարգունի, Դիկ —

Հովհաննես Ավագյան, Ջոն — Ռաֆայել Սարոյան, Ջորջ — Նշան Գևորգյան, Սմիթ — Սուրեն Աբեղյան, Սուրհանդակ Ջեկ-Կեղի մոտ — Տարոն Խաչատրյան, Ա. սուրհանդակ Դուլկանի մոտ, Բ. լրտես Անգուսի մոտ և Ա. սպասավոր — Մերուն Սամոկրանյան, Ա. լրտես Անգուսի մոտ — Ազատ Շերենց, Ա. կին ապստամբ — Ամալյա Արազյան, Բ. սպասավոր — Հ. Գալստյան:

Ապրիլի 26. — *Երկրորդ կազմ. **Մակբեթ — Մկրտիչ Ջանան:***

Ապրիլի 27. — *Լեդի Մակբեթ — Ռուզաննա Վարդանյան:*

Մայիսի 16. — *Բժիշկ — Գրիգոր Ավետյան:*

Հունիսի 16. — *Սիվարդ — Վահան Դասոյան:*

Խորհրդային Հայաստան, № 134: Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

Մայիսի 19–20. — *Հայաստանի գրողների տանը, Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրության քննարկումը: Զեկուցող՝ Հայկ Գյուլիքևխյան:*

Գրական թերթ, № 9:

1934

Երևանի Առաջին պետթատրոնում, նոր դերակատարներ:

Հունվարի 28. — *Ռոս — Վահան Դասոյան:*

Մայիսի 24. — *Ջեկ-Կեղ — Վահան Դասոյան:*

1935

Հունիսի 10. — *Երևանի Առաջին պետթատրոնի բեմադրության վերջին՝ 59-րդ ներկայացումը:*

1940–1950-ական թթ.

*Սփյուռքահայ թատրոնում: **Մակբեթ — Մանվել Մարության:***

Դերասանի վկայություններ:

1950

Հալեպում. — *Փարիզահայ դերասան-ռեժիսոր Տրդատ Նշանյանը (**Մակբեթ**) տեղի թատերասերների խմբի հետ:*

Թ. Թորոսյան, Սուրիահայ թատրոնը և Բարսեղ Աբովյանի հուշերը, Բեյրութ, 1973, էջ 37:

1958

Նոյեմբերի 23. — *Սոֆիայի Գ. Դիմիտրով սրահում, «Երևան» մշակութային միության «Սունդուկյան» թատերախումբը Վահրամ Փափազյանի (Մակբեթ) մասնակցությամբ, տեսարաններ:*

Լեդի Մակբեթ — Սիրուն Տեր-Մինասյան:

ԳԱԹ, 0. Բեչյանի ֆոնդ:

1964

Մայիսի 28–29. — *Երևանի Հայֆիլհարմոնիայի մեծ (այժմ՝ Արամ Խաչատրյանի անվան) դահլիճում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ, տեսարան:*

Մակբեթ — Վ. Փափազյան, Լեդի Մակբեթ — Լյուսյա Հովհաննիսյան:

1967

Դեկտեմբերի 3. — *Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի երկրորդ կուրսի (ղեկ. Ռ. Ջրբաչյան) ուսանող Կարլեն Վարժապետյանի բեմադրությամբ, տեսարաններ (I և IV):*

***Մակբեթ — Ռուբեն Մակարյան,** Լեդի Մակբեթ — Փիրուզա Կոզակյան (դերասանակ. ֆակ. երկրորդ կուրսից), Ա. վհուկ — Կ. Աղիլխանյան (դերասանակ. ֆակ. երկրորդ կուրսից), Բ. վհուկ — Սվետլանա Քոչարյան (այժմ՝ Լանա Ատրունի), Գ.*

վՀուկ — Գոհար Տրդատյան (դերասանակ. ֆակ. երրորդ կուրսից), Սպասավոր — Արմեն Խանդիկյան:

Տրագիր ռեժիսորական ֆակուլտետի 11-րդ չրջանավարտների, Եր., 1971:

1972

Մարտի 11. — Բեյրութի Հ. Տեր-Մելքոնյան սրահում (Բուրջ Համուտ), Շեքսպիրյան երեկոյին, Պերճ Թոմպուլյանի բեմադրությամբ ու մասնակցությամբ (Մակբեթ), տեսարան:

Լեդի Մակբեթ — Էոժենի Թոմպուլյան:

ԳԱԹ, Զ. Գալուստյանի ֆոնդ:

Մայիսի 5. — Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Աբեյանի անվան թատրոնում (թարգմ. Հ. Մասեհյան). բեմադրությունը՝ Ռաֆայել Չրբաչյանի, նկարիչներ՝ Նիկոլայ Էպով, Սվետլանա Ստավցևա (Մոսկվա), զգեստները՝ Սերինե Բեժանյանի, պարերը՝ Զարե Մուրադյանի, երաժշտական ձևավորումը՝ Ջոն Ասատրյանի, ներկայացումն ընթացել է առանց ընդմիջման:

Դունկան — Լևոն Սարգսյան, Մալկոմ — Լևոն Շարաֆյան, Դոնալբեյն — Մ. Մարգարյան, Մակբեթ — Վոլոդյա Գրիգորյան, Բանքո — Սուրեն Հովհաննիսյան, Մակդուֆ — Հակոբ Ազիզյան, Լենոքս — Աչոտ Գևորգյան, Ռոս — Ալֆրեդ Զաքարյան, Ֆլինս և Սպա — Ռ. Բաղդասարյան, Սեյտոն — Ռազմիկ Մարգարյան, Բժիշկ — Միքայել Հակոբյան, Դոնալան — Գ. Ստեփանյան, Ա. վՀուկ — Ռ. Գոբիլյան, Բ. վՀուկ — Ռոզա Մխիթարյան, Գ. վՀուկ — Շամիրամ Տերտերյան, Ա. մարդասպան — Ղազար Նազարյան, Բ. մարդասպան — Վ. Աղաջանյան, Լեդի Մակբեթ - Լենա Փաշինյան, Լեդի Մակդուֆ — Էլինե Աղամյան, Լեդի Մակդուֆի որդին — Ս. Լ. Դանիելյան (դպրոցական), Ազնվական կին — Լիդա Վասիլյան, Մառա — Սամվել Վիրաբյան, Լրաբեր - Ասատուր Օհանյան:

Երկրորդ կազմ. Բ. վՀուկ — Մ. Նահապետյան, Ֆլինս — Ա. Սարգսյան:

Ներկայացման ծրագիր:

1973

Մայիսի 4. — Կիրովականի Աբեյանի անվան թատրոնի բեմադրության քննարկումը: Զեկուցող՝ Նշան Մուրադյան:

Թատերական Երևան, № 11:

Հունիսի 1. — Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի երրորդ կուրսի (ղեկ. Ռ. Չրբաչյան) ուսանող Արա Տեր-Գրիգորյանի բեմադրությամբ, տեսարաններ:

Մակբեթ — Կարեն Զանգիրյան, Լեդի Մակբեթ — Գոհար Տրդատյան (ՊՀԹ դերասանուհի), Ափդա Հովհաննիսյան, Բանքո — Մ. Փանոսյան, Ռոս — Դավիթ Սաֆարյան, Անգուս — Մանուել Ջիջի (Սիրիա), Սպասավոր — Նիկոլ Գյուլբուդաղյան (Իրան), վՀուկներ — Միհրան Զուլակյան, Իրինա Օհանյան, Սաթենիկ Մաթևոսյան:

Տրագիր ռեժիսորական ֆակուլտետի 15-րդ չրջանավարտների, Եր., 1974:

Հունիսի 16—17, 24. — Հալեպի ՀԲԸ միության Հանդիսասրահում, Ուրֆայի Վերածնունդ միության թատերախումբը, Շեքսպիրյան երեկոյին, Պերճ Թոմպուլյանի բեմադրությամբ ու մասնակցությամբ (Մակբեթ), տեսարաններ:

Լեդի Մակբեթ — Էոժենի Թոմպուլյան, Սպա — Սարգիս Սերմանուկյան:

Ջարթոնք, № 208:

1973—1974

Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի (ղեկ. Արտ. Հովսեփյան) ուսանող Լեոնիդ Հարությունյանի նախադիպլոմային աշխատանքը, տարբեր կուրսերի ուսանողների մասնակցությամբ:

Մակբեթ — Լևոն Գրիգորյան, Լեդի Մակբեթ — Ջուլիետ Ստեփանյան: Մասնակցել են նաև՝ Կարեն Աբրահամյանը, Սամվել Գարանյանը, Ռուբեն Հախվերդյանը, Հրաչիկ Մեսյանը:

Լեոնիդ Հարությունյանի հաղորդումը:

1988

Գարնանը. — *Մոսկվայի Տագանկայի թատրոնում, Կինեմատոգրաֆիայի համամիութենական պետական ինստիտուտի հայկական դերասանական կուրսի ներկայացումը, կուրսի ղեկավար և բեմադրող՝ Արմեն Ջիգարխանյան:*

Մակբեթ — Արթուր Դիլանյան:

Արտաշես Ալեքսանյանի հաղորդումը:

1995

Հուլիսի 12. — *Թեհրանի Հայ Ուսումնասիրաց Զարմահալ միության «Հովհ. Թումանյան» սրահում, «Հայ Փորձնական թատրոնը». բեմադրությունը և համադրումը թատերախմբի ղեկավար Լուսաննա Հովհաննիսյանի (Հ. Մասեհյանի թարգմանության սեղմված-կրճատված տարբերակով):*

Մակբեթ — Արա Ասլանյան, *Լեդի Մակբեթ — Ժանետ Հովհաննիսյան, Ա. վհուկ, Բանքո, Բանքոյի ուրվականը, Սեյտոն, Մահ — Վարուժան Ազիզյան, Բ. վհուկ, Մարդասպան, Բժիշկ, Զինվոր — Հենրիկ Խաչատրյան:*

Ժանետ Հովհաննիսյանի հաղորդումը:

Հուլիսի 15. — *Նույնը կրկնվել է ի պատիվ Զարմահալի Հայ Ուսումնասիրաց միության նորոգ հանգուցյալ դերասան և ռեժիսոր Էդիկ Ասլանյանի: (Խաղացվել է վեց անգամ):*

Ակը, № 150:

2004

Հոկտեմբերի 23. — *Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում (թարգմ. Հ. Մասեհյան), բեմականացման տարբերակը և բեմադրությունը Արմեն Խանդիկյանի, նկարիչ՝ Կարեն Գրիգորյան, ռեժիսորներ՝ Արթուր Ռիմազյան, Ռոբերտ Հարությունյան, երաժշտական ձևավորումը՝ Աշոտ Փափազյանի և Ա. Խանդիկյանի:*

Դունկան — Ռոբերտ Հարությունյան, Մալկոմ — Գրիգոր Խաչատրյան, Նարեկ Ղափլանյան, ***Մակբեթ — Արթուր Ռիմազյան,*** *Լեդի Մակբեթ — Լիլիթ Մեսրոպյան, Լուիզա Ղամբարյան, Մարինե Գաբրիելյան, Բանքո — Ռուբեն Կարապետյան, Մակդուֆ — Հովհաննես Բաբախանյան, Լեդի Մակդուֆ — Նաիրա Շահիրյան, Լիզա Բաբսեղյան, Մակդուֆի որդին — Արեն Մարգարյան, Ռոս — Արմեն Բաբսեղյան, Լենոքս — Արտյոմ Եղիազարյան, Ֆլինս — Հրաչյա Ստեփանյան, Սեյտոն — Էրիկ Սարգսյան, Արեն Վաթյան, Բժիշկ — Կարպիս Շամլյան, Գևորգ Աբազյան, Լրաբեր — Հովհաննես Թեքգյոզյան, Մաղրածու — Վահագն Գալստյան, Դայակ — Հայկուհի Խուդավերդյան, Մարի Մսրյան, Հեկատե — Շուշան Ղազարյան, Ա. ոգի — Լուիզա Ղամբարյան, Լիլիթ Մեսրոպյան, Բ. ոգի — Լուսինե Հարությունյան, Գ. ոգի — Անժել Սարգսյան, Ա. մարդասպան — Էդվարդ Գասպարյան, Բ. մարդասպան — Արա Գևորգյան, Զինվորներ — Տիգրան Գևորգյան, Վահան Մալխասյան, Գագիկ Մկրտչյան:*

Ներկայացման ծրագիրը:

2008

Սեպտեմբերի 13. — *Երևանի Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը, Երևանյան Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնին:*

2010

Սեպտեմբերի 15. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում.* ***«Լեդինդ Մակբեթի մասին»*** *վերնագրով (թարգմ. Հ. Մասեհյան): Բեմադրությունը, նկարչական և երաժշտական ձևավորումները՝ Վահան Բաղալյանի, զգեստների նկարիչ՝ Մերի Սարգսյան: Ներկայացվել է Վ. Փափազյանի անվան Շեքսպիրյան միջազգային թատերական փառատոնին:*

KING JOHN (1596)

ՋՈՆ ԱՐՔԱ

1981

Նոյեմբերի 11. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում (թարգմ. Խաչիկ Դաշտենց), առաջին անգամ, Շեքսպիրյան ներկայացումների փառատոնի բացմանը. բեմադրությունը Խորեն Աբրահամյանի, ռեժիսոր՝ Համլետ Հովհաննիսյան, նկարիչ՝ Զարուհի Մուրադյան, զգեստները՝ Սամվել Փարթամյանի, կոմպոզիտոր՝ Տիգրան Մանսուրյան, պարերը՝ Ռուդոլֆ Խառատյանի, սուսերամարտը՝ Մ. Մելքոնյանի:*

***Ջոն Արքա — Սոս Սարգսյան**, Արթուր — Ա. Մանուկյան, Կոմս Փեմբրուկ — Գևորգ Ասլանյան, Կոմս-էսեքս — Վիգեն Ստեփանյան, Կոմս Սոլսբերի — Վլադիմիր Աբաջյան, Հուբերտ դե Բուրգ — Արմեն Մարությունյան, Ռոբերտ Ֆոլքընբրիջ — Սերգեյ Մկրտչյան, Ֆիլիպ Ֆոլքընբրիջ — Ռուդոլֆ Ղևոնդյան, Պիտեր Պոմֆրեթացի — Աշոտ Ներսիսյան, Ֆիլիպ — Հովակ Գալոյան, Լուիս — Ցուրի Ամիրյան, Կարդինալ Պանդոլֆ — Մայիս Կարապետյան, Շատիլյոն — Ալեքսանդր Խաչատրյան, Թագուհի էլինոր — Վարդուհի Վարդերեսյան, Կոնստանս — Լյուսյա Հովհաննիսյան, Բլանչ — Անուշ Սարգսյան, Առաջին ծաղրածու — Հարությունն Մովսիսյան, Երկրորդ ծաղրածու — Վլադիմիր Քոչարյան, Ստիվըն Լենգթըն — Խաչիկ Նազարեթյան, Լորդեր — Գևորգ Աշուղյան, Գեղամ Հարությունյան, Մուրադ Կոստանյան, Վաղինակ Մարգունի, Ալեքսանդր Ադամյան, Գևորգ Ջեպչյան, Վաչե Բագրատունի, Վահրամ Եղչատյան, Անատոլի Թորգոմյան, Նորայր Գևորգյան, Կարեն Ջանիբեկյան, Անժերի քաղաքացիներ — Հարությունն Հայրապետյան, Լորենց Առուշանյան, Աշոտ Բաբայան, Լենա Ալվարյան, Լուսինե Բարսեղյան, Ջուլիետա Բաբայան, Թամար Աբրահամյան, Մ. Պետրոսյան, Լյուդմիլա Բաբայան, Լեդիներ — Ալլա Թումանյան, Կարինե Սուքիասյան, Թամար Աբրահամյան, Դահիճներ — Վահան Հովակիմյան, Արթուր Նալբանդյան:*

Ներկայացման ծրագիրը:

1982

Նոր դերակատարներ. փետրվարի 24-ին՝ Երկրորդ ծաղրածու — Աշոտ Ղուկասյան, մայիսի 11-ին՝ Կոմս Սոլսբերի — Գեվորգ Ջեպչյան, 21-ին՝ Ֆիլիպ — Գեղամ Հարությունյան, հոկտեմբերի 8-ին՝ Բլանչ — Ալլա Վարդանյան, 1983-ի հունվարի 9-ին՝ Երկրորդ ծաղրածու — Արմեն Էլբակյան:

1983

Ապրիլի 5, 6. — *Մոսկվայի Փոքր թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի հյուրախաղերին. տեքստը հաղորդվել է ռուսերեն թարգմանությամբ:*

Հունիսի 12. — *Կիևի Ֆրանկոյի անվան թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

Հունիսի 23-ին, *ցերեկը — ցուցադրվել է հեռուստատեսությամբ:*

Սեպտեմբերի 28. — *Սունդուկյանի անվան թատրոնում, նոր դերակատարներ. Պիտեր Պոմֆրեթացի — Հարություն Հայրապետյան, հոկտեմբերի 30-ին՝ Շատիլիոն — Կարեն Ջանիբեկյան:*

1984

Մարտի 11. — *Նոր դերակատարներ՝ Կոմս Փեմբրուկ — Վաչե Սարուխանյան:*

Հոկտեմբերի 27. — *Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրության վերջին՝ 60-րդ ներկայացումը:*

Սունդուկյանի անվ. թատրոնի ներկայացումների դրանցման մատյաններ:

2012

Մայիսի 16 – *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի «Ջոն Արքա» բեմադրությունը ներկայացվել է Լոնդոնի՝ շեքսպիրյան շրջանի «Գլոբուս» (կլոր, առանց տանիքի) թատրոնում:*

Հունիսի 20. – *Սունդուկյանի անվան թատրոնում (թարգմ. Խ. Դաշտենց), բեմադրությունը՝ Տիգրան Գասպարյանի, նկարիչ՝ Վահագն Թևանյան, զգեստների նկարիչ՝ Մերի Սարգսյան, կոմպոզիտոր՝ Էդուարդ Հայրապետյան:*

Ջոն արքա – Արմեն Մարուքյան, Բաստարդ – Տիգրան Ներսիսյան, Կոնստանս – Ալլա Վարդանյան, Էլինոր – Նելլի Խերանյան, Արքա Ֆիլիպ – Արամ Հովհաննիսյան, Կարդինալ Պանդոլֆ – Արմեն Մարգարյան, Հուբերտ – Ալբերտ Սաֆարյան, Բլանչ – Լիանա Արեստակյան, Արթուր – Գնել Ուլիխանյան, Լյուդովիկ – Դավիթ Գասպարյան, Երաժիշտներ – Արտակ Ասատրյան, Մհեր Մնացականյան, Խոսրով Մնացականյան:

Ներկայացման ծրագիրը:

KING RICHARD II (1595)

ՌԻՉԱՐԴ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐ

1984

Նոյեմբերի 25. – *Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Աբեյանի անվան թատրոնում (թարգմ. Խաչիկ Դաշտենց), առաջին անգամ, Շեքսպիրյան ներկայացումների փառատոնին. բեմադրությունը՝ Վահե Շահվերդյանի, նկարիչ՝ Խաչատուր Ղարաբեկյան, զգեստները՝ Նատաշա Կազիրելովայի, երաժշտական ձևավորումը՝ Միհրան Զուլակյանի:*

Ժամանակ – Հասմիկ Ալեքսանյան, Ռիչարդ Երկրորդ – Ռազմիկ Խոսրոև, Հենրի Բոլինբրոկ – Հակոբ Ազիզյան, Ջոն Գոնտ – Սուրեն Հովհաննիսյան, Յորքի դուքս – Գառնիկ Պապյան, Դուքս Օմեռ – Հայկ Թորոսյան, Կոմս Նորթեմբերլենդ – Ժակ Գաբրիելյան, Թոմաս Մաուբրի – Սամվել Փիլոյան, Հենրի Գերսի – Արթուր Ազիզյան, Բուշի – Վ. Նազլուխանյան, Բեդոտ – Հակոբ Դանիելյան, Գրին – Արշակ Մարտիրոսյան, Լորդ Ռոս – Ասատուր Օհանյան, Լորդ Վիլոբի – Գագիկ Դուրմիշյան, Լորդ Ֆիցվոտեր – Արամ Մխիթարյան, Կարլայլի եպիսկոպոսը – Մայիս Սարգսյան, Լորդ Մարշալ – Կ. Սարուխանյան, Գիրա էքստոն – Վ. Աղաջանյան, Ա. պարտիզպան և Ախոռապետ – Ռազմիկ Մարգարյան, Բ. պարտիզպան – Սերգեյ Մելիքյան, Թագուհի – Էլինե Աղամյան, Յորքի դքսուհի – Լենա Փաշինյան, Գլոստերի դքսուհի – Քնարիկ Գուրունյան, Պալատական տիկին – Շամիրամ Տերտերյան:

Ներկայացման ծրագիրը:

1985

Սեպտեմբերի 27. — *Ստեփանակերտի թատրոնում, Կիրովականի Աբելյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

1987

Հուլիսի 20, 28. — *Մոսկվայի Սովրեմեննիկ թատրոնում, Կիրովականի Աբելյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

Օգոստոսի 7, 18. — *Բառնաուլում (Ռուսաստանի Ալթայան երկրամաս), Կիրովականի Աբելյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

Սեպտեմբերի 11. — *Թբիլիսիի Հայկական թատրոնում, Կիրովականի Աբելյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

1988

Ապրիլի 7. – *Կահիրեի Գալուստյան Երջանավարտից միության Սեթյան սրահում, միության թատերախումբը Վահան Հապեչյանի բեմադրությամբ. դերուսույցներ՝ Աստուր Օհանյան, Սեպուհ Շալճյան:*

***Շայլոկ – Անդրանիկ Թոզգոնմազյան**, Պորցիա – Տիրուհի Գ. Բագրատունի, Ներիսա – Անժել Հակոբյան, Բասանիո – Նուպար Բանյան, Կրացիանո – Երվանդ Տեմիրճյան, Լորենցո – Շահան Գ. Բագրատունի, Սալարինո – Մկրտիչ Ստեփանյան, Անտոնիո – Գևորգ Տեր-Պալյան, Վենետիկի դուքս – Երվանդ Ջերքեզյան, Քարտուղար – Հարություն Պետիկյան, Բանտապահ – Հակոբ Կյուրյունյան, Բարապան – Հարություն Տատուրյան:*

Աղտաշես Հ. Գարտաչյան, Նյութեր Եգիպտոսի Հայոց պատմության, հատոր Բ., Վենետիկ, 1986, էջ 629:

1940–1950-ական թթ.

Սփյուռքահայ թատրոնում, Մ. Մանվելյանի բեմադրությամբ ու մասնակցությամբ:

Շայլոկ – Մանվել Մարության:

Մանվել Մարությանի բեմական և գրական գործունեության 50-ամյակի առթիվ, Թեհրան, 1969, էջ 70:

1948

Կահիրե. — *Գալուստյան ազգային վարժարանի Շրջանավարտից միության թատերախմբի ներկայացումը. բեմադրությունը՝ Վահե Պոյաճյանի: Ներիսա — Անժել Հակոբյան:*

Աբև, 1981, № 18989:

1957

Մայիսի 21. — *Կ. Պոլսի Մխիթարյան Սանուց միության սրահում, «Երիտասարդաց թատերախումբը» (թարգմ. Թորգոմ Սրապյան):*

Մարմարա, մայիսի 21:

1974

Նոյեմբերի 29. — *Բեյրութի Հակոբ Տեր-Մելքոնյան սրահում, «Թատրոն 67»-ի խումբը (թարգմ. Հ. Մասեհյան), խմբի ղեկավար Վարուժան Խտրչյանի բեմադրությամբ, դեկոր՝ Մովիկ Քահվեճյան, դեկորի իրագործում՝ Տիգրան Շիրինյան: Ունեցել է 23 ներկայացում:*

Շայլոկ — Վարուժան Խտրչյան, *Անթոնիո — Գևորգ Զյութպաշյան, Սալերիո — Հակոբ Գալայճյան, Սալանիո — Վարդգես Զավզավաթճյան, Պասանիո — Վարդգես Նարկիզյան, Լորենցո — Կարո Գույումճյան, Կրացիանո — Վիգեն Դարբինյան, Փորշիա (Պորցիա) — Սիլվա Պարսումյան, Ներիսա — Հռիփ Մարտիրոսյան, Մառա — Սարգիս Ստեփանյան, Մարոքի իշխան — Ճորճ Աժամի, Լանսլոթ Կոպպո — Նանո Վարդապետյան, Մեր Կոպպո — Վահե Պերպերյան, Մառա — Ժ. Քահվեճյան, Լեոնարդո — Փիեռ Փամպուքճյան, Ճեսիքա — Հուրիկ Մսըրյան, Արակոնի իշխան — Փոլ Կոկանյան, Տյուպալ — Ենովք Պիլեմճյան, Բանդապահ — Ռուբեն Զյութպաշյան, Սթեֆանո — Զավեն Պիլեմճյան, Վենետիկի դուքս — Հովսեփ Գալիլանյան, Քարտուղար — Զոհրապ Զափարյան, Մակնիֆիքոներ — Փիեռ Փամփուկճյան, Ենովք Պիլեմճյան:*

Աղբակ, դեկտեմբերի 24:

1984

Նոյեմբերի 20. — *Լենինականի (Գյումրի), Ստ. Ալիխանյանի անվան Տիկնիկային թատրոնը, Շեքսպիրյան ներկայացումների փառատոնին:*

Թատերական Երևան, № 19:

TWO GENTLEMEN OF VERONA (1594)

ՎԵՐՈՆԱՑԻ ԵՐԿՈՒ ԱԶՆՎԱԿԱՆՆԵՐԸ

1951

Հունիսի 11, 12. — *Երևանի Թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետի ավարտական ներկայացումը (Թարգմ. Խաչիկ Դաշտենց), առաջին անգամ, բեմադրությունը՝ կուրսի ղեկավար Արմեն Գուլակյանի, նկարիչ՝ Սարգիս Արուտչյան:*

Միլանի դուքս — Լորիս Մանուկյան (Կրոյան), Վալենտին — Խորեն Աբրահամյան, Պրոտեոս — Վլադիմիր Աբաջյան, Անտոնիո, Տուրիո — Գևորգ Էլբակյան, Ուրսուլա — Լյուբա (Սիրանուշ) Լյուլեջյան, Լենա Կոստանյան, Լաուն — Արմեն Խոստիկյան, Պանդոկապետուհի — Լենա Կոստանյան, Լենա Ասատրյան, Ջուլիա — Նինել Դալլաքյան, Տանյա Հարությունյան, Սիլվիա — Իզաբելլա Ասյան, Ռոզա Խաչատրյան, Լուչետտա — Լենա Կոստանյան, Լյուբա Լյուլեջյան:

(Ներկայացմանը հնարավորություն չունեցավ մասնակցել Սուրեն Բուրասյանը):

1958

Նոյեմբեր. — *Երևանի բրդյա նուրբ գործվածքների կոմբինատի ակումբում, կոմբինատի թատերախումբը (Թարգմ. Խ. Դաշտենց), բեմադրությունը՝ Կիմ Արզումանյանի:*

Թատերական Երևան, № 27, 28:

1971

Մայիսի 9, Երևան. — *Գեղարվեստա-թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետի ավարտական-դիպլոմային ներկայացումը. բեմադրությունը՝ կուրսի ղեկավար Կիմ Արզումանյանի, նկարիչ՝ Սարգիս Արուտչյան, երաժշտական ձևավորումը՝ Արամ Սաթունցի, պարերը՝ Զարե Մուրադյանի):*

Վալենտին — Հովիկ Վանյան, Պրոտեոս — Վարդան Օհանյան, Անտոնիո և Տուրիո — Ավետիս Խրիմյան, Սպիդ — Էդվարդ Մինասյան, Լաուն — Զավեն Աբրահամյան, Դքսուհի — Անահիտ Ղուկասյան, Սիլվիա — Ալլա Թումանյան, Ջուլիա — Ժաննեն Գևորգյան, Լուչետտա — Մարգարիտ Մնացականյան, Պանդոկապետուհի — Նինա Վարդանյան, Ուրսուլա — Սվետլանա Հովհաննիսյան, Ավազակներ — Հ. Գալստյան, Վ. Ավետիսյան, Հ. Սարգսյան:

Ներկայացման գրաֆիկը:

2008

Սեպտեմբերի 14. — *Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում (Թարգմ. Խ. Դաշտենց), Շեքսպիրյան թատերական փառատոնին. բեմադրությունը՝ Նեվենա Միտչևայի, արտաքին ձևավորումը՝ Իրինա Իվանովայի (երկուսն էլ Բուլղարիայից):*

Միլանի դուքս — Արմեն Սանթրոսյան, Վալենտին — Սամվել Դանիելյան, Պրոտեոս — Իշխան Ղարիբյան, Անտոնիո — Գրիգոր Հակոբյան, Տուրիո — Արա Մաթևոսյան, Ջուլիա — Շուշան Ղազարյան, Սիլվիա — Մարիամ Շահինյան, Լուչետտա — Հռիփսիմե Մարգարյան, Ավազակներ — Կոստանդին Կոզմանով, Գոհար Կարապետյան, Սիրանուշ Լազյան, Մարի Սանթրոսյան, Նարիրա Սարգսյան:

Իշխան Ղարիբյանի հաղորդումը:

MERRY WIVES OF WINDSOR (1597)

ՎԻՆԶՈՐԻ ԶՎԱՐՃԱՍԵՐ ԿԱՆԱՑՔ

1938

Նոյեմբերի 12. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, բեմադրող-ռեժիսոր Գուրգեն Գաբրիելյանը մասնակիցների համար ընթերցել է պիեսը (թարգմ. Տիգրան Հախումյան):*

1939

Հունվարի 26. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, առաջին անգամ, բեմադրությունը՝ Գուրգեն Գաբրիելյանի, նկարիչ՝ Սերգեյ Արուտչյան, երաժշտական ձևավորումը՝ Գեվորգ Ցաղուբյանի, պարերը՝ Իլյա Արբատովի (Ցաղուբյան):*

Ֆալստաֆ — Հրաչյա Ներսիսյան, Շելլո — Գրիգոր Ավետյան, Սլենդեր — Գեղամ Աֆրիկյան, Տիկին Ֆորդ — Արուս Ոսկանյան, Տիկին Պեյջ — Ռուզաննա Վարդանյան, Աննա Պեյջ — Անատոլյա Եղյան, Միստր Ֆորդ — Մուրադ Կոստանյան, Միստր Պեյջ — Օրի Բունիաթյան, Սըր Հուգ Էվանս — Լևոն Մարտյան, Հյուրանոցատեր — Անդրանիկ Նանալյան, Բժիշկ Կայուս — Արման Կոթիկյան, Ֆենտոն — Գարուշ Խաժակյան, Միստրիս Կուիկլի — Օլգա Գուլազյան, Բարդոլֆ — Հենրի Ասլանյան, Պիստոլ — Թաթուլ Դիլաքյան, Նիմ — Ռ. Սարոյան, Ռոբին — Ա(րուս) Մկրտչյան, Սեմպլ — Զավեն Օհանյան, Ռըգբի — Կարո Սարգսյան, Ա. ծառա — Ժիրայր Միրզախանյան, Բ. ծառա — Լ. Մանդալյան:

Հունվարի 27. — *Երկրորդ կազմը, այլ դերակատարներ:*

Ֆալստաֆ — Համբարձում Խաչանյան, Տիկին Ֆորդ — Վարյա Մելքումյան, Տիկին Պեյջ — Եվգինե Սեբար (Բարսեղյան), Աննա Պեյջ — Անահիտ Դատյան (Դատավորյան), Միստր Պեյջ — Տիգրան Այվազյան, Բժիշկ Կայուս — Վաղինակ Մարգունի, Ֆենտոն — Գ. Բալայան, Միստրիս Կուիկլի — Անահիտ Մկրտումյան, Բարդոլֆ — Ն. Գևորգյան, Պիստոլ — Վ. Դանիելյան, Նիմ — Ս. Ասլանյան, Ռոբին — Ս. Այվազյան, Սեմպլ — Հարութիւն Հայրապետյան, Ռըգբի — Արսեն Բագրատունի:

Փետրվարի 4. — *Միստր Ֆորդ — Դավիթ Մալյան:*

Փետրվարի 19. — *Բարդոլֆ — Զավեն Օհանյան, Սեմպլ — Լևոն Ազարյան:*

Փետրվարի 22. — *Նիմ — Ն. Գևորգյան:*

Մարտի 24. — *Թափառաշրջիկ — Գուրգեն Մարտիրոսյան:*

Մարտի 29. — *Սեմպլ — Ժ. Միրզախանյան, Թափառաշրջիկ — Վ. Սահակյան:*

Ապրիլի 23. — *Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրության վերջին՝ 20-րդ ներկայացումը՝ նվիրված Շեքսպիրի ծննդյան 375-ամյակին:*

Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

1968

Հունիսի 2. — *Երևանի Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում (թարգմ. Խաչիկ Դաշտենց). բեմադրությունը՝ Տաճատ Վարդազարյանի, նկարիչ՝ Մ. Սիմոնյան, երաժշտությունը՝ Կ. Խաչատրյանի և Վ. Արազյանի, դիրիժոր՝ Դավիթ Երզնկյան, խմբավար՝ Ա. Գասպարյան, պարերը՝ Ա. Լեբեդևի:*

Ֆալստաֆ — Հակոբ Բաղալյան, Ֆենտոն — Հ. Սիմոնյան, Շելլո — Գրիգոր Սիմոնյան, Սլենդեր — Վարդգես Թաչչյան, Միստր Ֆորդ — Արշավիր Վաչյան, Միստր Պեյջ — Կ. Ղարիբյան, Էվանս — Ալեքսանդր Հովհաննիսյան, Դոկտոր Կայուս — Մայիս Կարագյոզյան, Պանդոկապետ — Հենրի Ասլանյան, Բարդոլֆ — Լևոն Մարտիրոսյան, Պիստոլ — Մ. Մխիթարյան, Նիմ — Պ.

Մարտիրոսյան, Ռոբին — Ա. Հարությունյան (դպրոցական), Պարզակ — Ա. Քանքանյան, Ռեգբի — Ա. Սարգսյան, Տիկին Ֆորդ — Իվետա Բաբուրյան, Տիկին Պեյջ — Մերի Շահբազյան, Աննա Պեյջ — Ա. Մկրտչյան, Տիկին Վոազ — Մելինե Համամջյան:

Երկրորդ կազմ. Ֆալստաֆ — Ստեփան Հարությունյան, Միստր Ֆորդ — Հենրի Ասլանյան, Պանդոկապետ — Երվանդ Շահնազարյան, Տիկին Ֆորդ — Օֆելյա Սաղաթելյան, Տիկին Պեյջ — Էմմա Կարախանյան, Տիկին Վոազ — Իդա Մկրտչյան:

Ներկայացման ծրագիրը:

TWELFTH NIGTH; OR, WHAT YOU WILL (1600)

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ ԿԱՄ ԻՆՉ ՈՐ ԿԱՄԵՆԱՔ

1941

Ալավերդու պետական թատրոնի հեռանկարային ծրագրում նախատեսվել է բեմադրել նաև այս պիեսը՝ Արմեն Արմենյանի ղեկավարությամբ:

ԳԱՔ, Աբվեսաի գործերի վարչության ֆոնդ:

1944

Ապրիլի 27. — *Լենինականի Մռավյանի (այժմ՝ Գյումրիի Վ. Ամեմյանի) անվան թատրոնում (թարգմ. Խաչիկ Դաշտենց), առաջին անգամ, Շեքսպիրյան Համամիութենական 6-րդ կոնֆերանսին և փառատոնին, նվիրված Շեքսպիրի ծննդյան 380-ամյակին. բեմադրությունը՝ Վարդան Ամեմյանի, նկարիչ՝ Մելիքսեթ Սվախչյան, երաժշտական ձևավորումը՝ Վահրամ Արարատյանի, պարերը՝ Ե. Եֆիմովի:*

Օրսինո — Գեղամ Հարությունյան, Սեբաստիան — Արշավիր Փիլոյան, Անտոնիո — Ազատ Շերենց, Վալենտին — Գուրգեն Հանեսօղլյան, Քուրիս — Ալեքսան Քոչարյան, Սըր Թոբի Բելչ — Լևոն Զոհրաբյան, Սըր Էնդրյու Էյգյուչիկ — Կարապետ Արծրունյան, Մալվոլիո — Ցոլակ Ամերիկյան, Ֆաբիան — Ժան Էլոյան, Խեղկատակ — Արծրունի Հարությունյան, Մի նավապետ — Ստեփան Ալիխանյան, Քահանա — Հայկասար Միանսարյան, Ա. ոստիկան — Աչոտ Գևորգյան, Բ. ոստիկան — Վազգեն Հակոբյան, Ա. երաժիշտ — Հ. Մալոյան, Բ. երաժիշտ — Հ. Թութխալյան, Օլիվիա — Ասյա Բերոյան, Վիոլա — Արաքսյա Առաքելյան, Մարիա — Նինա Բոխյան:

Երկրորդ կազմ. Օրսինո — Արտավազդ Փաշայան, (Ալեքսան Քոչարյան, Վազգեն Հակոբյան), Սեբաստիան — Հ. Զախոյան, Վալենտին — Ալեքսանդր Քոչարյան, Քուրիս — Գ. Հանեսօղլյան, Ֆաբիան — Արամ Ռշտունի, (Ս. Զոլախյան), Օլիվիա — Նվարդ Աբայյան, Վիոլա — Մարգարիտ Տիրոսյան, (Վարուշ Կարապետյան):

1947

Հունիսի 21. — *Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում, Լենինականի թատրոնի վերանորոգված բեմադրությամբ հյուրախաղերին:*

Օրսինո — Ա. Փաշայան, Սեբաստիան — Գևորգ Աբաջյան, (Հ. Զախոյան), Անտոնիո — Ա. Շերենց, Վալենտին — Գ. Հանեսօղլյան, Քուրիս — Ա. Քոչարյան, Պարոն Թոբի Բելչ — Լ. Զոհրաբյան, Պարոն Էնդրյու Էգյուչիկ — Կ. Արծրունյան, Մալվոլիո — Ց. Ամերիկյան, Ֆաբիան — Ժ. Էլոյան, Խեղկատակ Ֆեստեն — Ա. Հարությունյան, Նավապետ — Ս. Ալիխանյան, Օլիվիա — Ն. Աբայյան, Վիոլա — Մ. Տիրոսյան, Մարիա — Ն. Բոխյան, Քահանա — Հ. Միանսարյան, Ա. ուստիկան — Ա. Գևորգյան, Բ. ուստիկան — Վ. Հակոբյան, Ա. երաժիշտ — Հ. Մալոյան, Բ. երաժիշտ — Հ. Թութխալյան, Բեմի սպասավորներ — Հ. Զախոյան, Վ. Կարապետյան:

Սովետական Հայաստան, № 145: **Թատերական շաբաթ**, № 9:

Հունիսի վերջերին. — *Երևան, Լենինականի թատրոնի բեմադրության քննարկումը, Հայկական թատերական ընկերությունում. զեկուցող՝ Վահրամ Թերզիբաշյան:*

Գրական Թերթ, № 24:

Օգոստոսի վերջերին. — *Լենինականի թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Գեղամ Հարությունյանի (Օրսինո) մասնակցությամբ:*

1960

Ամառը. — *Կալկաթայում, Հայոց Մարդասիրական ընկերության ճեմարանի 145-ամյակի առթիվ, ճեմարանի ուսանողների մասնակցությամբ, բեմադրությունը՝ Հայոց լեզվի ուսուցչուհի Ռոզ Ամիրխանյանի:*

Հայրենիքի Ձայն, № 30:

1964

Ապրիլի 27. — *Թբիլիսիի Շահումյանի (այժմ՝ Ադամյանի) անվան թատրոնում (թարգմ. Խ. Դաշտենց), Շեքսպիրի ծնընդյան 400-ամյակի առթիվ. բեմադրությունը՝ Ֆերդինանդ Բժիկյանի, նկարիչ՝ Ռոբերտ Նալբանդյան, երաժշտությունը՝ Նիկիտա Մկրտչյանի, պարերը՝ Դավիդ Մաճավարիանիի:*

Օրսինո — Ռաֆայել Պապովյան, Սեբաստիան — Ավետիք Սանոսյան, Անտոնիո — Արշակ Արշակունի (Հարությունյան), Վալենտին — Ս. Պողոսյան, Քուրիս — Հրաչիկ Թաթարյան, Սըր Թոբի Բելչ — Աշոտ Քաջվորյան, Սըր Էնդրյու Էգյուչիկ — Հրաչիկ Սիմոնյան, Մալվոլիո — Սուրեն Եղիազարյան, Ֆաբիան — Ռոբերտ Հովհաննիսյան, Խեղկատակ — Բախչո Տրդատյան, Մի նավապետ — Սերգեյ Բաբլոյան, Քահանա — Նոյ Թումանյան, Ա. ուստիկան — Հ. Պողոսյան, Բ. ուստիկան — Անտոն Պարոնբեկյան, Օլիվիա — Ասյա Ժամկոչյան, Վիոլա — Էմմա Ստեփանյան, Մարիա — Արուս Ղարաջյան, երաժիշտներ — Արշակ Ադիլխանյան, Ռոբերտ Աղաջանյան, Ս. Մանուկյան, Անտոն Պարոնբեկյան, Ս. Պողոսյան, Հրաչիկ, Ադամ Քոչարյան:

Այլ դերակատարներ. Սեբաստիան — Ս. Մանուկյան, Վիոլա — Սերիկ Շեկոյան:

Ներկայացման ծրագիրը:

Հունիսի 21, 24. — *Երևանի Ստանիսլավսկու անվան թատրոնում, Թբիլիսիի թատրոնի հյուրախաղերին: Վիոլա — Ս. Շեկոյան:*

Սովետական Հայաստան, № 153:

Հուլիսի 10. — *Կիրովականի (Վանաձոր) թատրոնում, Թբիլիսիի թատրոնի հյուրախաղերին:*

1979

Հոկտեմբերի 13. — *Բեյրութի Հ. Տեր-Մելքոնյան սրահում, «Դիմակ» թատրոնը, Խ. Դաչտենցի թարգմանությունն արևմտահայերենի փոխադրած, լրացրած և մեր օրերին հարմարեցված. բեմադրությունը՝ Մուշեղ Մուղալյանի, ձևավորումը՝ Վազգեն Մուղալյանի, երաժշտությունը՝ Հայաստանի երգիչների կատարմամբ երգեր:*

Օրսինո — Լևոն Հրեշտակյան, Վալենտին — Վահե Հայիթյան, Վիոլա — Լ. Մելքոնյան, Անտոնիո — Ռաֆի Քամաքյան, Սըր Թոբի Բելչ — Հակոբ Գալայճյան, (Հարություն Գաբրիելյան), Սըր Էնդրյու Էգյուչիկ — Մանուել Մարգարյան, Մարգարիտ — Էլիզաբեթ Գորյան, Խեղկատակ — Մուշեղ Մուղալյան, Մալվոլիո — Հարություն Սողոմոնյան, Օլիվիա — Մարալ Հայիթյան:

Ներկայացման ծրագիրը: Մ. Մուղալյանի հաղորդումը:

1996

Գարնանը. — *Երևանի Գարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում, Գեղարվեստա-թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետի ուսանողուհի (կուրսի ղեկ. Ե. Ղազանչյան) Արփի Զաքարյանի (Թեհրան) կուրսային աշխատանքը, տեսարաններ:*

Սըր Թոբի Բելչ — Ռաֆայել Գյուլնազարյան, Սըր Էնդրյու Էգյուչիկ — Գևորգ Դավթյան, Մալվոլիո — Իշխան Մելքումյան, Ֆաբիան — Լիանա Մարտիրոսյան, Օլիվիա — Անահիտ Հովհաննիսյան, Մարիա — Աննա Ներսիսյան:

Ներկայացման ծրագիրը:

2008

Սեպտեմբերի 12. — *Երևանի Գարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում. բեմադրությունը՝ Երվանդ Ղազանչյանի, նկարիչ՝ Եվգենի Սաֆրոնով, զգեստները՝ Մերի Սարգսյանի, երգերի հեղինակ՝ Նարեկ Ներսիսյան, պարադիր՝ Հարություն Դավթյան, բեմական խոսք՝ Զարուհի Ներսիսյան:*

Օրսինո — Նարեկ Ներսիսյան, Սեբաստիան — Սամվել Թոփալյան, Անտոնիո — Արա Մանուչարյան, Սըր Թոբի Բելչ — Հովակ Գալոյան, Սըր Էնդրյու Էգյուչիկ — Զավեն Աբրահամյան, Մալվոլիո — Բորիս Պեպանյան, Մաղրածու — Ավո Խալաթյան, Օլիվիա — Իրեն Աբելյան, Լիանա Թևոսյան, Հասմիկ Վերդյան, Վիոլա — Մարիամ Ղազանչյան, Մարիա — Մարիամ Ղազարյան:

Ներկայացման ծրագիրը:

TITUS ANDRONICUS (1593)

ՏԻՏՈՍ ԱՆԴՐՈՆԻԿՈՍ

1981

Լենինականի Մոսվյանի (այժմ՝ Գյումրիի Վ. Ամեմյանի) անվան թատրոնում (թարգմ. Հենրիկ Սևան), առաջին անգամ, բեմադրությունը՝ Գրիգոր Մկրտչյանի, նկարիչ՝ Էդիկ Եղիազարյան, երաժշտական ձևավորումը՝ Գագիկ Բարսեղյանի:

*Սատուրնինոս — Աբել Աբելյան, Բասիանոս — Աշոտ Ցանաչյան, **Տիտոս Անդրոնիկոս — Վազգեն Հակոբյան**, Մարկոս Անդրոնիկոս — Խաչիկ Գրիգորյան, Լացիոս — Աշոտ Փիլիպոսյան, Քվինտոս — Լևոն Մայլամյան, Մուցիոս — Գևորգ Խաչատրյան, Մարցիոս — Սամվել Ադամյան, Դեմետրիոս — Խաչիկ Բաղալյան, Քիրոն — Սամվել Գրիգորյան, Ահարոն — Արտաշես Գյոդակյան, Տամորա — Ռաֆաել Թովմասյան, Լավինիա — Անահիտ Հարությունյան, Մծմայր — Շահանդուխտ Ջանոյան, Խեղկատակ — Տրդատ Մակարյան, Ա. Գոթ — Աշոտ Գևորգյան, Բ. Գոթ — Գագիկ Մալոյան:*

Ներկայացման ծրագիրը:

Նոյեմբերի 19. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Լենինականի թատրոնի բեմադրությունը, Շեքսպիրյան ներկայացումների փառատոնին:*

1982

Հունիս. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Լենինականի թատրոնի հյուրախաղերին:*

Գրական թերթ, № 39:

2003

Նոյեմբերի 5. — *Փարիզի Բալե դը Շարեյի թատրոնի ժեմիե սրահում, դերասան և ռեժիսոր Սիմոն Աբգարյանի թարգմանությամբ (բնագրից) ու բեմադրությամբ:*

***Տիտոս Անդրոնիկոս — Սիմոն Աբգարյան**, (Տամորա — Մաչա Ղարիպյան): Մասնակցել են նաև՝ Հակոբ Գալֆայանը, Ճիվան Արգարյանը և ուրիշներ: Ներկայացումն ընթացել է առանց ընդմիջման (երկու ժամից ավելի): Կրկնվել է դեկտեմբերի 13-ին:*

Հառաջ, № 20797, 20823:

THEMPEST (1612)

ՓՈԹՈՐԻԿ

1941

Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Աբեյանի անվան թատրոնի բեմադրությունների հեռանկարային նախատեսված պիեսներից մեկը:

ԳԱԹ, Արվեստի գործերի վարչության Ֆոնդ:

1987

*Հուլիսի 21. — Կապանի Շիրվանզադեի անվան թատրոնում (թարգմ. Հ. Մասեհյան), **առաջին անգամ**, բեմադրությունը՝ Վարդան Հովհաննիսյանի, նկարիչ՝ Ռոբերտ Կամոյան, երաժշտությունը և երաժշտական ձևավորումը՝ Սասուն Առաքելյանի, պարերը՝ Գեննադի Գրաչչենկոյի:*

Ալոնզո — Կամո Արզումանյան, Սեբաստիան — Արտավազդ Գրիգորյան, Պրոսպերո — Վազգեն Սարգսյան, Անտոնիո — Հրաչյա Գաբրիելյան, Ֆերդինանդ — Արմեն Հարությունյան, Գոնզալո — Արտաշես Ոսկանյան, Կալիբան — Սամվել Մանուկյան, Տրինկուլո — Հովհաննես Հովհաննիսյան, Ստեֆանո — Բորիկ Հովակիմյան, Բոցման — Գրիչա Մարգարյան, Միրանդա — Գայանե Զաքարյան, Արիել — Արտավազդ Հակոբյան, Յոնո — Նունե Հարությունյան, Յետես — Պայծառ Համբարյան, Ոգիներ — Անահիտ Մկրտչյան, Վարդանուշ Սարգսյան:

Երկրորդ կազմ՝ Սեբաստիան — Ստեփան Ղազանչյան:

Նոյեմբերի 18. — Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում, Կապանի Շիրվանզադեի անվան թատրոնի բեմադրությունը, Շեքսպիրյան ներկայացումների փառատոնին:

Ներկայացման ծրագիրը:

1995

Ամռանը. — Երևանի Փորձարարական երիտասարդական (Փոսի) թատրոնում, բեմադրությունը՝ Սամսոն Ստեփանյանի, նկարչական ձևավորումը՝ Ռուբեն Գրիգորյանի, զգեստների էսքիզները՝ Արևիկ Արևշատյանի, երաժշտությունը՝ Ստեփան Լուսիկյանի:

Պրոսպերո — Լևոն Իվանյան, Տրինկուլո — Հայկ Միքայելյան, Ստեֆանո — Մինաս Զ., Բոցման — Գրիչա, Արիել — Վահագն, Տղա — Համլետ Զոբանյան, Միրանդա — Անուշիկ Ստեփանյան և ուրիշներ:

Սամսոն Ստեփանյանի հաղորդումը:

OTHELLO, THE MOOR OF VENICE (1604)

ՕԹԵԼԼՈ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԱՎՐԸ

1867

Փետրվարի 10. — *Թիֆլիսում, Հայ դերասանական խումբը, առաջին անգամ, թարգմանությունը (Լարոշի ֆրանսերեն և Գ. Վեյինբերգի ռուսերեն թարգմանություններից) և բեմադրությունը (տեսարաններ) Գ. Զմշկյանի:*

Օթելլո — Գևորգ Զմշկյան, *Վենետիկի դուքս և Լոդովիկո — Գևորգ Միրաղյան, Բրաբանցիո և Գրացիանո — Թովմաս Ֆասուլյանցյան, Կասիո — Արտաշես Սուքիասյան, Յագո — Մաղաթյան, Դեզդեմոնա — Պայծառ Ֆասուլյանցյան, Էմիլյա — Քեթևան Արամյան, Բիանկա — Սաթենիկ Զմշկյան:*

ԳԱԹ, Գ. Զմշկյանի Փոնդի բեմական տարբերակը:

Հունիսի 12. — *Թիֆլիսի Թամամշյանի Քաղաքային թատրոնում, Հայ դերասանական խումբը, Գ. Զմշկյանի (Օթելլո) ղեկավարությամբ, 3-րդ գործողությունը:*

Կասիո — Ա. Սուքիասյան, Յագո — Սեդրաք Մանդինյան, Ռոդրիգո — Բուռնազյան, Դեզդեմոնա — Սոֆյա Մելիք-Նազարյան, Էմիլյա — Քեթևան Արամյան:

Մաչոցի անվ. Մատենադարան, Ա. Երիցյանի Փոնդ:

1871

Նոյեմբեր. — *Կ. Պոլսի Միջազգուղի Բարեսեր ընկերության թատերախմբի (ղեկ. Պետրոս Մաղաքյան) 5-րդ թատերաշրջանում ներկայացվելիք պիեսների թվում նախատեսված է եղել նաև «Օթելլոյի» բեմադրությունը:*

Մանզումեի Էֆքյար, նոյեմբերի 13/25:

1884

Ապրիլի 23. — *Թիֆլիսի Քաղաքային թատրոնում, Շեքսպիրի ծննդյան 320-ամյակի առթիվ, առաջին անգամ ամբողջովին, Հայ դերասանական խումբը Գ. Զմշկյանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Վենետիկի դուքս և Լոդովիկո — Գևորգ Սարգսյան, Բրաբանցիո և Մոնտանո — Առաքելյան, Կասիո — Գևորգ Պարոնսարգսյան, Յագո — Մկրտիչ Ավալյան, Ռոդրիգո — Գեղեոն Միրաղյան, Գրացիանո և Բ. սպա — Արամ Վրույր, Ա. սպա — Գոդոսյան, Դեզդեմոնա — Վարդուհի (Աննա Նամուրազյան), Էմիլյա — Սաթենիկ Զմշկյան:

Արմազանք, № 16: **Մեղու Հայաստանի,** № 29:

Օգոստոսի 25. — *Կ. Պոլսի «Արևելք» թերթում (№ 195) Հայտարարվել է, որ նույն օրը Թատրոն էմիրկենիում «ի նպաստ Ս. երից Մանկանց եկեղեցվո չինության և ազգային վարժարանին Պոյանը-գյուղի» անձնվեր գործունեությամբ տեղացի Հայ երիտասարդության կներկայացվեն «Օթելլո» ողբերգությունը և «Անկուտի դպրոցականներ» ու «Սեֆիլենց տունը» կատակերգությունները:*

1886

Փետրվարի 17. — *Թիֆլիսի Վրաց Ազնվականների բանկի (նախկին Արծրունու) թատրոնում, Հայ դերասանական խումբը (թարգմ. Ստեփանոս Սուլիանյան), Հօգուտ Պետրոս Ադամյանի:*

Օթելլո — Պետրոս Ադամյան, *Վենետիկի դուքս և Լոդովիկո — Արամ Վրույր, Բրաբանցիո և Մոնտանո — Գեղեոն Միրաղյան, Կասիո — Հովհաննես Աբելյան, Յագո — Մկրտիչ Ավալյան, Ռոդրիգո — Մաթևոս Աղայան, Դեզդեմոնա — Վարդուհի, Էմիլյա — Զարել (Մարիա Կնորոզովա), Բիանկա — Փառանձեմ (Սաղաթելյան), Գրացիանո — Գևորգ Տեր-Դավթյան:*

Մշակ, № 20: **Նոր-Դար,** № 23:

Օգոստոսի 20. — *Թեոդոսիայում (Ղրիմ), ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու տան դահլիճում, տեսարաններ:*

Օթելլո — Պ. Ադամյան, Յագո — Ա. Վրույր, Դեզդեմոնա - Զաբել:

Նոյեմբերի 17. — *Թիֆլիսի Թատրոնում, Հայոց Դրամատիկական ակումբի դերասանական խումբը:*

Օթելլո — Պ. Ադամյան, Վենետիկի դուքս — Գևորգ Զմշկյան, Բրաբանցիո — Մ. Ավալյան, Լոդովիկո — Ա. Վրույր, Կասիո - Հ. Աբեյյան, Յագո — Օննիկ Կյուրեղյան, Ռոդրիգո — Գ. Միրաղյան, Մոնտանո — Մ. Աղայան, Դեզդեմոնա — Գոհարիկ Շիրինյան, Էմիլյա — Ս. Զմշկյան:

Արձագանք, № 42: **Մշակ**, № 131:

1887

Փետրվարի 9. — *Թիֆլիսի Վրաց Ազնվականների բանկի թատրոնում, Հայոց Դրամատիկական ակումբի խումբը:*

Օթելլո — Պ. Ադամյան, Վենետիկի դուքս — Ա. Վրույր, Բրաբանցիո — Ադամ Սարդարյան, Լոդովիկո — Հովհաննես Տեր-Գրիգորյան, Կասիո — Հ. Աբեյյան, Մոնտանո — Մ. Աղայան, Գրացիանո — Գ. Տեր-Դավթյան, Դեզդեմոնա — Գ. Շիրինյան, Էմիլյա — Շամիրամ Ավալյան:

Արձագանք, № 4, 5: **Մշակ**, № 16:

1888

Ապրիլի 8. — *Մոսկվայի Լիանոզովի (հետագայում՝ Գեղարվեստական թատրոնի մասնաճյուղ) թատրոնում, թատերասերների հետ:*

Օթելլո — Պ. Ադամյան, Դեզդեմոնա — Զաբել:

Театральная жизнь, № 100.

Սեպտեմբերի 11. — *Կ. Պոլսի Ֆրանսիական Նոր թատրոնում, Պետրոս Մաղաքյանի ղեկավարությամբ դերասանախումբը:*

Օթելլո — Պ. Ադամյան, Վենետիկի դուքս — Ա. Վրույր, Կասիո — Գևորգ Հոլաս(յան), Յագո — Պետրոս Մաղաքյան, Մոնտանո — Հ. Պենկլյան, Դեզդեմոնա — Պայծառ Ֆասուլյաճյան, Էմիլյա — Ազնիվ Մնակյան, Բիանկա — Ֆաննի:

Կրկնվել է 18-ին՝ Գատը գյուղում, 22-ին՝ Հունական թատրոնում (Հռչակավոր ողբերգուն Պ. Հ. Ադամյան — առաջնորդությամբ Պ. Մաղաքյանի, արտաքո կարգի չքեղ և փառավոր ներկայացումն ըստ խնդրանաց թատերասեր և արվեստասեր հասարակության հայերեն լեզվով), հոկտեմբերի 6-ին:

Արևելք, № 1390, 1399, 1401: **Նոր-Դար**, № 145, 208:

Հոկտեմբերի 29. — *Թավրիզի Արամյան դպրոցի մեծ դահլիճում, Սաֆրազյանները տեղի թատերասերների հետ:*

Օթելլո — Ստեփան Սաֆրազյան, *Դեզդեմոնա — Ալմա Սաֆրազյան, Յագո — Ղուկաս Մալինցյան, Էմիլյա — Շուշանիկ Մալինցյան:*

Արմենիա, № 22: **Նոր-Դար**, 1889, № 4:

1889

Մայիսի 5. — *Զմյուռնիայի (Իզմիր) Էտենի պարտեզի Ամառային թատրոնում, Պ. Մաղաքյանի (Յագո) ղեկավարությամբ դերասանական խումբը:*

Օթելլո — Պ. Ադամյան, (Բրաբանցիո) — Արամ Վրույր: Կրկնվել է Հուլիսի 4-ին: Դեզդեմոնա — Հայկանուշ Թուրյան:

Արևելք, № 1609: **ԳԱԹ, Ս. Փեսեճյանի հուշերը:**

1890

Հունվարի 16. — *Թեհրանի Վարիետեի թատրոնում, Սաֆրազյանները տեղի թատերասերների հետ:*

Օթելլո — Ս. Սաֆրազյան, Դեզդեմոնա — Ա. Սաֆրազյան:

ԳԱԹ, Սաֆրազյանների ֆոնդ:

Մարտի 13. — *Թավրիզի Արամյան դպրոցի թատրոնում, Սաֆրազյանները տեղի թատերասերների հետ:*

ԳԱԹ, Սաֆրազյանների ֆոնդ:

1891

Նոյեմբերի 2. — *Շամախիի օրիորդաց դպրոցի դահլիճում, դպրոցի օգտին, Ս. և Ա. Սաֆրազյանները տեղի թատերասերների հետ:*

Մշակ, № 131: **Նոր-Դար,** № 162:

Նոյեմբերի 4. — *Կ. Պոլսի Մաքրի գյուղում, թատերասերների խումբը:*

Օթելլո — Վահան Պապայան, *Յագո — Երվանդ Պենկլյան, Բրաբանցիո — Միքայել Զափրաստ(ճյան):*

Մաղիկ, № 4:

1892

Հունվարի 9. — *Թիֆլիսի Արքունական (օպերային) թատրոնում, Հայ դերասանական մշտական խումբը (թարգմ. Ս. Սոփխանյան) ի նպաստ Գ. Պետրոսյանի, նրա բեմադրությամբ:*

Օթելլո — Գևորգ Պետրոսյան, *Վենետիկի դուքս — Արշակ Հարությունյան, Բրաբանցիո — Հովհաննես Աբելյան, Կասիո — Մաթևոս Աղայան, Յագո — Գրիգոր Աբրահամյան, Գրացիանո — Գևորգ Պարոն-Սարգսյան, Լոդովիկո — Պողոս Արաքսյան, Մոնտանո — Արամ Վրույր, Ռոդրիգո — Արմեն Արմենյան, Դեզդեմոնա — Սիրանույշ, Էմիլյա — Զաբել:*

Արձագանք, № 3, 5: **Նոր-Դար,** № 4:

Մարտի 19. — *Բաքվի Թաղիևի թատրոնում, Թիֆլիսի դերասանական խումբը, Գ. Պետրոսյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Օգոստոսի 17. — *Շուշիի Խանդամիրյանի թատրոնում, Հայ դերասանական խումբը, ի նպաստ Ստ. Սաֆրազյանի (Օթելլո):*

Բրաբանցիո և Լոդովիկո — Գրիգոր Ավետյան, Վենետիկի դուքս — Տեր-Մինասյան, Կասիո — Խաչատրյան, Յագո — Զարեհ (Զառափյան), Գրացիանո — Թովմասյան, Մոնտանո — (Միքայել) Գանջումյան, Ռոդրիգո — Գաբրիելյան, Դեզդեմոնա — Ա. Սաֆրազյան, Էմիլյա — Բաղդասարյան, Համբավաբեր — Միսակ (Տեր-Դանիելյան ?):

ԳԱԹ, Սաֆրազյանների ֆոնդ, № 180:

Դեկտեմբերի 2. — *Բաքվի Թաղիևի թատրոնում, նորակազմ հայ դերասանական խումբը, Սիմոն Հախումյանի բեմադրությամբ:*

Օթելլո — Ս. Սաֆրազյան, Վենետիկի դուքս — Մելիք-Շահնազարյան, Բրաբանցիո — (Հակոբ) Խոջամիրյան, Յագո — Մ. Ավալյան, Գրացիանո — Տեր-Հովհաննիսյան, Լոդովիկո — Ղոնդաղասազյան, Ռոդրիգո — Ս. Աբրահամյան, Մոնտանո — Բեգլարյան, Դեզդեմոնա — Ա. Սաֆրազյան, Էմիլյա — Մ(ելիք) Շահնազարյան:

Նոր-Դար, № 198: **ԳԱԹ, Թատերական բաժնի աղդագրերի ֆոնդ,** № 315:

1893

Փետրվարի (20). — *Բաթումի Երկաթե թատրոնում, Թիֆլիսի հայ դերասանական խումբը Գ. Պետրոսյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Դեկտեմբերի 2. — *Բաքվի դերասանական խումբը, Ս. Սաֆրազյանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Յագո — Մկրտիչ Ավալյան, Դեզդեմոնա — Ա. Սաֆրազյան:

Արձագանք, № 142:

1894

Ապրիլի 23. — *Վաղարշապատի (Էջմիածին) ծխական դպրոցի դահլիճում, Շեքսպիրի ծննդյան 330-ամյակի առթիվ, թատերասերների խումբը գրականագետ-մանկավարժ Լ. Մանվելյանի բեմադրությամբ:*

Օթելլո — Լևոն Մանվելյան, Վենետիկի դուքս — Սլկունի, Բրաբանցիո և Կասիո — Մ. Գնունի, Յագո — Տ(իգրան) Գյուզալյան, Գրացիանո — Ա. Սանասարյան, Մոնտանո — Հ. Տ. Գրիգորյան, Ռոդրիգո — Միքայել Մանվելյան, Լոդովիկո — Մունետիկ, Սպա — Հ. Հովհաննիսյան, Դեզդեմոնա — Վ. Ավետիքյան, Էմիլյա — Շ. Մանվելյան:

Մշակ, № 49: **ԳԱԹ, Թատերական բաժնի ազդագրերի ֆոնդ:**

Դեկտեմբերի 29. — *Թիֆլիսի Վրաց Ազնվականների բանկի թատրոնում, Հայ դերասանական խումբը, Գ. Պետրոսյանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Վենետիկի դուքս — Աստվածատրյան, Բրաբանցիո — Գևորգ Տեր-Դավթյան, Կասիո — Գողթունյան, Յագո — Արշակ Հարությունյան, Լոդովիկո — Բաբայան, Մոնտանո — Ալեքսանյան, Ռոդրիգո — Մանկունի, Դեզդեմոնա — Վարվառե Մելիքյան, Էմիլյա — Վարդուհի:

Արձագանք, № 150: **ԳԱԹ, Թատերական բաժնի ազդագրերի ֆոնդ**, № 347:

1895

Փետրվարի 5. — *Բաքվի Թաղիևի թատրոնում, Հայ դերասանական խումբը:*

Օթելլո — Ս. Սաֆրազյան, Բրաբանցիո — Գրիգոր Ավետյան, (Յագո — Մկրտիչ Ավալյան, Դեզդեմոնա — Ա. Սաֆրազյան, Էմիլյա — Շամիրամ Ավալյան): Մասնակցել են նաև՝ Գերասիմ Արիստակյանը, Մնացականյանը, Նաջարյանը, Ջալալյանը, Սուլթանյանը:

ԳԱԹ, Սաֆրազյանների ֆոնդ, № 218:

Մայիսի 30. — *Ալեքսանդրապոլի (Գյումրի) Քաղաքային այգում, Գ. Պետրոսյանը (Օթելլո) տեղի թատերասերների հետ:*

Մուրճ, № 6:

Հուլիսի 11. — *Շուշիի Խանդամիրյանի թատրոնում, Գ. Պետրոսյանի (Օթելլո) ղեկավարությամբ դերասանական խումբը:*

Վենետիկի դուքս և Կասիո — Գր. Ավետյան, (Դեզդեմոնա — Վարվառե Մելիքյան, Էմիլյա — Փառանձեմ, Յագո — Արշակ Հարությունյան, Բրաբանցիո — <Վարդան> Միրզոյան) և ճգնավորյան:

Նոր-Դար, № 143: **ԳԱԹ, Մ. Խանդամիրյանի ֆոնդ:**

1896

Հունվարի 25. — *Թիֆլիսի Վրաց Ազնվականների բանկի թատրոնում, Հայ դերասանական ընկերությունը (թարգմ. Ս. Սուլթանյան) ի նպաստ Հ. Աբելյանի և նրա բեմադրությամբ:*

Օթելլո — Հովհաննես Աբելյան, Վենետիկի դուքս — Բեգյան, Ա. սենատոր — (Հայրապետ) Բաբուրյան, Բ. սենատոր — Մեհրաբյան, Բրաբանցիո և Լոդովիկո — Գր. Ավետյան, Կասիո — Հովհաննես Ստեփանյան, Յագո — Արամ Վրույր, Գրացիանո — Ա. Հասան-Ջալալյան, Մոնտանո — Արշակ Հարությունյան, Ռոդրիգո — Միքայել Մանվելյան, Դեզդեմոնա — Եղիսաբեթ Ախաշյան, Էմիլյա — Վարվառե Մելիքյան, Սպա — Վարդան Մելիք-Հովսեփյան:

Նոր-Դար, № 17: **ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ**, № 2477:

1897

Փետրվար. — *Գանձակում, Թիֆլիսի Հայ դերասանական խումբը Գ. Պետրոսյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Փետրվարի 9. — *Թիֆլիսի Վրաց Ազնվականների բանկի թատրոնում, Հայ դերասանական խումբը:*

Օթելլո — Գ. Պետրոսյան, Դեզդեմոնա — Ջաբել:

Արձագանք, № 16:

Փետրվարի 12. — *Բաքվի Թաղիևի թատրոնում, Մարիամ Ավետյանի վարչությամբ Հայ դերասանական խումբը, Հ. Աբելյանի թարգմանությամբ ու բեմադրությամբ, իր նպաստին (Օթելլո):*

Բրաբանցիո և Լոդովիկո – Գր. Ավետյան, Դեզդեմոնա – Ե. Ախաչյան, Էմիլյա – Փառանձեմ, (Վենետիկի դուքս, Յագո – Ա. Վրույր, Կասիո – Հ. Ստեփանյան, Մոնտանո – Ա. Հասան-Ջալալյան, Ռոդրիգո – Վ. Մելիք-Հովսեփյան) և Իսահակ Ալիխանյան:

Մշակ, № 20: **ԳԱԹ**, Թատերական բաժնի ազդագրերի ֆոնդ, № 434:

Հուլիսի 24. – *Շուշիի Խանդամիրյանի թատրոնում, Թիֆլիսի Հայ դերասանական խումբը Գ. Պետրոսյանի (Օթելլո) ղեկավարությամբ: (Դեզդեմոնա – Վ. Մելիքյան, Էմիլյա – Փառանձեմ, Յագո – Ա. Հարությունյան): Մասնակցել են նաև՝ Ի. Ալիխանյանը և Վ. Մելիք-Հովսեփյանը:*

ԳԱԹ, Մ. Խանդամիրյանի ֆոնդ:

Հուլիս. – *Դիլիջանում, Կարապետ Գալֆայանը մտադիր է եղել տեղի թատերասերների հետ ներկայացնել «Օթելլոն»:*

ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ:

1898

Հուլիսի 16. – *Ղրիմի Ղարասուբազար (այժմ՝ Բելոգորսկ) քաղաքի Հայոց ուսումնարանում, թատերասերների հետ, Ա. Խարազյանի բեմադրությամբ, 3-րդ գործողությունը:*
Օթելլո – Ամո Խարազյան, Յագո – Հովսեփ Կարինյան:

Մշակ, № 145:

Օգոստոսի 12. – *Շուշիի Խանդամիրյանի թատրոնում, Հայ դրամատիկ դերասանական ընկերակցությունը, ի նպաստ Գ. Պետրոսյանի (Օթելլո) 3-րդ գործողությունը:*
Յագո – Ա. Հարությունյան, Դեզդեմոնա – Վարդիթեր Ֆելեկյան, (Էմիլյա – Մարի-Հրանուշ Ֆելեկյան):

Մշակ, № 147: **ԳԱԹ**, Թատերական բաժնի ազդագրերի ֆոնդ, № 430:

1899

Հունվարի 30. – *Բաքվի Թադիևի թատրոնում, Հայ դերասանական խումբը Հ. Աբելյանի (Օթելլո) թարգմանությամբ ու բեմադրությամբ, իր նպաստին:*
Բրաբանցիո – Վարդան Մելիք-Հովսեփյան, Կասիո – Հովհաննես Ստեփանյան, Յագո – Արամ Վրույր, Լոդովիկո – Պողոս Արաքսյան, Մոնտանո – Մաթևոս Աղայան, Դեզդեմոնա – Սիրանույշ, Էմիլյա – Վարդիթեր Ֆելեկյան, Բիանկա – Ազնիվ (Անդրանիկ), Ռոդրիգո – (Իսահակ Ալիխանյան):

Նոր-Դար, № 23: **Տարազ**, № 5, էջ 126:

Հուլիսի 16. – *Շուշիի Խանդամիրյանի թատրոնում, Հայ դերասանական խումբը, Գ. Պետրոսյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*
(Կասիո – Մաթևոս Աղայան, Յագո – Արշակ Հարությունյան, Ռոդրիգո – Պողոս Արաքսյան, Դեզդեմոնա – Աննա Խիթարյան, Էմիլյա – Զարել), մասնակցել է նաև Հարություն Բերոյանը:

Տարազ, № 26, էջ 615, № 28, էջ 664: **ԳԱԹ**, Մ. Խանդամիրյանի ֆոնդ:

1900

<Հունվար>. – *Մամուլում լուր է տարածվել թե Թովմաս Ֆասուլյանցյանը Կահիրեում Օթելլո է խաղալու:*

Արմենիա, № 50:

Մարտի 31. – *Թիֆլիսի Վրաց Ազնվականների բանկի թատրոնում, Հայ դերասանական ընկերությունը, Հ. Աբելյանի (Օթելլո) բեմադրությամբ:*
Վենետիկի դուքս – Վարդան Միրզոյան, Բրաբանցիո – Գևորգ Տեր-Դավթյան, Լոդովիկո – (Հայրապետ) Բաբուրյան, Կասիո – Հակոբ Օհանյան, Յագո – Գեղեոն Միրաղյան, Ռոդրիգո – Մ. Գնունի, Մոնտանո – Իսահակ Ալիխանյան, Դեզդեմոնա – Վարդիթեր Ֆելեկյան, Էմիլյա № №, Առաջին ծերա-

կույտի անդամ – (Միքայել) Սաֆարյան, Երկրորդ ծերակույտի անդամ – Ցոլակ, Համբավաբեր – Ասքանազ:

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 1272:

1901

Փետրվարի 22. – *Արմավիրի (Հյուսիսային Կովկաս) ժողովարանի դահլիճում, Բաքվի Հայ դերասանական խումբը:*

Օթելլո – Հ. Աբելյան, Յագո – Հովհաննես Ստեփանյան, (Կասիո – Հովհաննես Զարիֆյան), Բրաբանցիո – Գր. Ավետյան, Դեզդեմոնա – Վ. Ֆելեկյան, Էմիլյա – Փառանձեմ (Սաղաթելյան):

Մշակ, № 50:

Մարտի 7. – *Եկատերինոդարի (Կրասնոդար) Քաղաքային ակումբում, նույն խումբը:*

Մշակ, № 52:

Մարտի 15. – *Նոր Նախիջևանի Քաղաքային թատրոնում, նույն խումբը:*

ԳԱԹ, Գր. Ավետյանի ֆոնդ:

Ապրիլի 3. – *Մոսկվայի Փոքր թատրոնում Թոմազո Սալվինիի Օթելլոն տեսնելու համար Գևորգ Պետրոսյանը Թիֆլիսից գնացել է Մոսկվա, տեսել, ծանոթացել, հոդված գրել:*

Մշակ, № 96:

Հոկտեմբերի 6. – *Թիֆլիսի Վրաց Ազնվականների բանկի թատրոնում, Կարապետ Գալֆայանի առաջին ելույթը (թարգմ. Ս. Սուլխանյան) Թիֆլիսում:*

Օթելլո – Կարապետ Գալֆայան, *Վենետիկի դուքս – (Ս.) Սողոմոնյան, Բրաբանցիո – Ամիրան Մանդինյան, Կասիո – (Վարդան) Միրզոյան, Յագո – (Արշակ) Հարությունյան, Լոդովիկո – (Հ.) Բերինյան, Մոնտանո – (Հովսեփ) Տեր-Ղևոնդյան, Ռոդրիգո – (Միքայել) Սաֆարյան, Գրացիանո – (Ավետ) Ազյան, Դեզդեմոնա – (Վարվառե) Մելիքյան, Էմիլյա – Զաբել:*

Մշակ, № 223: **ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ,** № 1282:

Նոյեմբերի 18. – *Ալեքսանդրապոլի Քաղաքային վարժարանում, Կ. Գալֆայանի (Օթելլո) բեմադրությամբ, Վ. Միրզոյանի (Յագո) և տեղի թատերասերների հետ:*

Կասիո – Բեբուրյան, Ռոդրիգո – Ա. Վեհապետյան, Լոդովիկո – Ս. Արարատյան, Դեզդեմոնա – Ս. Վեհապետյան, Էմիլյա – Ն. Տեր-Մարտիրոսյան:

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 2903:

Դեկտեմբերի 9. – *Կարսի Հասարակական ժողովարանի ձմեռային դահլիճում, Կ. Գալֆայանը (Օթելլո) և Վ. Միրզոյանը (Յագո) տեղի թատերասերների հետ:*

Վենետիկի դուքս – Հ. Նորհատյան, Բրաբանցիո – Զ(ուրաբ) Ջամբազյան, Գրացիանո – Ա(նտոն) Կուզյան, Լոդովիկո – Ե. Համամջյան, Կասիո – Ն. Հովհաննիսյան, Ռոդրիգո – (Ա.) Օլթեցյան, Մոնտանո – Վ. (?) Տոնոյան, Դեզդեմոնա – Ս. Ջամբազյան, Էմիլյա – Ա(?) Ջամբազյան:

Մշակ, № 280: **ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ,** № 1285:

Դեկտեմբերի 18. – *Վառնայի Սանթրալ թատրոնում, «Վեսելո» (Զվարթ) թատերախումբը:*

Օթելլո – Վահան Պապայան, Յագո – Երվանդ Երամյան, Դեզդեմոնա – տ. Վ. Հակոբյան:

Իրավունք, № 86, 95: **Եավիոլ,** № 377:

Դեկտեմբերի 15, 22. – *Վառնայում, «Վեսելո» թատերախումբը:*

Օթելլո – Արշակ Գենյան, *Վենետիկի դուքս – Տիգրան Գալեմճյան, Բրաբանցիո – Ա. Սվաճյան, Կասիո – Վահան Պապայան, Մոնտանո – Գրիգոր Հակոբյան, (Դեզդեմոնա – Վ. Հակոբյան), Էմիլյա – Օ. Թերզյան:*

Իրավունք, № 93, 95: **Եարժում,** № 377:

1902

Հունվարի 17. — *Բաքվի Թաղիևի թատրոնում, Հայ դերասանական խումբը, Հ. Աբելյանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Յագո — Հով. Ստեփանյան, Կասիո — (Իսահակ Ալիխանյան), Բ. ծերակուտական — Հարություն Բերոյան, Դեզդեմոնա — Քնարիկ (Մարգարիտ Բաբայան), Էմիլյա — (Օլգա Գուլազյան), Մոնտանո — (Հով. Զարիֆյան):

Մշակ, № 14: **ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ**, № 7 ա:

Փետրվարի 8. — *Երևանի Քաղաքային ժողովարանի դահլիճում, Կ. Գալֆայանը (Օթելլո) տեղի թատերասերների հետ:*

Յագո — Հ. Եղիազարյան, Կասիո — Շուշանյան, Լոդովիկո — Գ. Բաբայան, Ռոդրիգո — Մ. Ջալալյան, Դեզդեմոնա — Արխիպյան, Էմիլյա — Ա(չխեն) Տեր-Սարգսյան:

Տարազ, № 6, էջ 40:

Մարտի 30. — *Շուշիի Խանդամիրյանի թատրոնում, Կ. Գալֆայանը (Օթելլո) տեղի թատերասերների հետ:*

Դեզդեմոնա — Հերսելիա Ղազարբեկյան:

Մշակ, № 73, 96: **ԳԱԹ, Մ. Խանդամիրյանի ֆոնդ:**

Հոկտեմբերի 5. — *Վառնայի Սանթրալ թատրոնում, նորակազմ «Նադեժդա» (Հույս) Հայ դերասանական խումբը, Վահան Պապայանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Իրավունք, № 71:

Նոյեմբերի 8. — *Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում, Հայոց Դրամատիկական ընկերության դերասանական խումբը Հ. Աբելյանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Բրաբանցիո — Գևորգ Պետրոսյան, Կասիո — Մ. Աղայան, Յագո — Ա. Հարությունյան, Մոնտանո — Անդրանիկ (Սողոմոնյան), Ռոդրիգո — Արշակ Մամիկոնյան, Լոդովիկո — Վարդան Միրզոյան, Դեզդեմոնա — Օլգա Մայսուրյան, Էմիլյա — Վարվառե Մելիքյան, Ա. սենատոր — Սարգսյան, Բ. սենատոր և Նավաստի — Հ(ովսեփ) Տեր-Ղևոնդյան:

Մշակ, № 257: **Նոր-Դար**, № 170, 173:

Դեկտեմբերի առաջին կես. — *Մոզդոկում (Հյուսիսային Կովկաս), Կ. Գալֆայանը (Օթելլո) տեղի թատերասերների հետ:*

Մշակ, № 285:

1903

Փետրվար. — *Ֆիլիպեում (Պլովդիվ), Վահան Պապայանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Սուրհանդակ, (Կ. Պ.), № 1250:

Մարտի 6. — *Եկատերինոդարում, Կ. Գալֆայանը (Օթելլո) տեղի թատերասերների հետ:*

Մշակ, № 59:

Նոյեմբերի 16. — *Թիֆլիսի Հավլաբարի Հակաալկոհոլային ընկերության դահլիճում, Հայ դերասանական խումբը Պողոս Արաքսյանի բեմադրությամբ:*

Օթելլո — Հ. Աբելյան, Կասիո — Հարություն Բերոյան, Յագո — Ամո Խարազյան, Բրաբանցիո — Արամ Վրույր, Դեզդեմոնա — Աշխեն Արաքսյան, Էմիլյա — Զաբել:

Տարազ, № 33, էջ 314:

1904

Ապրիլի առաջին կես. — *Կահիրեի Շարա Ապտ-էլ-Ազիզի թատրոնում, Կ. Գալֆայանը (Օթելլո) տեղի թատերախմբի հետ:*

Յագո — Լևոն Շիշմանյան, Դեզդեմոնա — Շաքարյան:

Ազատ բեմ, № 1:

Մայիսի 9. — *Գանձակում, Հ. Աբելյանի (Օթելլո) ղեկավարությամբ, դերասանական խումբը:*

Բրաբանցիո և Մոնտանո — Գր. Ավետյան:

Մշակ, № 103:

Հունիս. — Ալեքսանդրիայում, Կ. Գալֆայանի (Օթելլո) մասնակցությամբ:

Մշակ, № 103:

Հուլիսի 17. — *Շուշիի Խանդամիրյանի թատրոնում, Հայ դերասանների դրամատիկ ընկերությունը Հ. Աբելյանի (Օթելլո) նպաստին, իր բեմադրությամբ: Բրաբանցիո և Մոնտանո — Գր. Ավետյան, Յագո — Հովհաննես Զարիֆյան:*

Մշակ, № 158, 166:

Հոկտեմբերի 10. — *Մոզդոկի հայկական նախկին օրիորդաց ուսումնարանում, Հայ դերասանների դրամատիկ ընկերությունը, Հ. Աբելյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Վենետիկի դուքս և Կասիո — (Կոստանդին) Եղիազարյան (Կոստան Զարյան), Բրաբանցիո — Գր. Ավետյան, Յագո — Հ. Զարիֆյան, Լոդովիկո — (Տիգրան) Սազանդարյան, Ռոդրիգո — (Մկրտիչ) Ադելխանյան, Մոնտանո — Անդրանիկ (Սողոմոնյան), Դեզդեմոնա — Օ. Մայսուրյան, Էմիլյա — Արաքս Զարիֆյան:

ԳԱԹ, Գր. Ավետյանի ֆոնդ, 2-րդ բաժին, № 376:

Նույն խմբով՝

Հոկտեմբերի 14. — *Արմավիրի ժողովարանում:*

Նոյեմբերի 25. — *Ղզլարի հասարակական ժողովարանում:*

Դեկտեմբերի 17. — *Դերբենդի հասարակական ժողովարանում:*

Դեկտեմբերի 18. — *Պետրովսկում (Մախաչկալա):*

Մշակ, № 225, 232; **ԳԱԹ, Գր. Ավետյանի ֆոնդ**, 2-րդ բաժին, № 376, 377, 379:

1905

Մայիսի 12. — *Երևանի ժողովարանում, Հայ դրամատիկ դերասանների ընկերությունը Հ. Աբելյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Բրաբանցիո — Գր. Ավետյան, Յագո — (Ա. Հարությունյան), Դեզդեմոնա — (Սաթենիկ Ադամյան):

Մշակ, № 94; **Տարազ**, № 15, էջ 188:

Հունիսի սկիզբ. — *Ֆիլիպեի «Լյուքսեմբուրգ» թատրոնում, Կ. Գալֆայանը (Օթելլո) տեղի «Երգեցիկ» թատերական խմբի հետ:*

Նարժում, № 720:

Հուլիս. — *Սոֆիայում, Հայ դերասանական խումբը:*
(Օթելլո — Նավարչ Գարագաշյան)

Նարժում, № 735:

Օգոստոսի 3. — *Վառնայի «Բորիս» թատրոնում, «Վեսելո» Հայ դերասանական խումբը ի նպաստ խմբի ղեկավար Արշակ Գենյանի (Օթելլո), կրճատված, անունները փոփոխած, իբրև ֆրանսիացի թատերագիր Ֆրանսուա Սյուլեի գործ:*

Բրաբանցիո — Ե. Երամյան, Դեզդեմոնա — Ռոզալի (բուլգարուհի):

Նարժում, № 737–739:

1906

Հունիսի 29. — *Ալեքսանդրապոլի ժողովրդական տանը, Հայ դրամատիկ դերասանների ընկերությունը, Հ. Աբելյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Վենետիկի դուքս — (Միքայել Մանվելյան), Յագո — Հովհ. Զարիֆյան, Կասիո — (Արշավիր Շահխաթունի), Ռոդրիգո — (Ա. Ջինանյան), Մոնտանո — (Տեր-Դավթյան), Բրաբանցիո — Եղիա Խաժակ, Դեզդեմոնա — Սաթենիկ Ադամյան, Էմիլյա — Արաքս Զարիֆյան:

Ընկեր, № 26, էջ 207; **ԳԱԹ, Թատերական բաժնի ազդագրերի ֆոնդ**, № 1028:

Հոկտեմբերի 25. — *Վառնայի «Սոյետինենիե» թատրոնում, Կ. Գալֆայանը (Օթելլո) տեղի թատերախմբի հետ:*

Յագո — Տիգրան Գալեմեյան, Դեզդեմոնա — Պայծառ Ֆասուլյանց, Էմիլյա — Ա. Գալֆայան:

Շարժում, № 759, 765:

1907

Փետրվարի 26. — *Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում, Հայ դերասանական խումբը, ի նպաստ Հ. Աբելյանի (Օթելլո):*

Բրաբանցիո — Գր. Ավետյան, Կասիո — Հ. Զարիֆյան, Յագո — Ա. Հարությունյան, Ռոդրիգո — (Ի. Ալիխանյան), Մոնտանո և Լոդովիկո — Մ. Աղայան, Գրացիանո — (Մկրտիչ Թաշճյան), Դեզդեմոնա — Օ. Մայսուրյան, Էմիլյա — (Վ. Մելիքյան) և Մ. Ադելխանյան, Աղաբեկյան:

Ժամանակ, № 43, 46:

Մարտի 17. — *Ֆիլիպեի Ավգուստ (նախկին Մետրոպոլ Հյուրանոց) սրահում, Գ. Հակոբյանի ղեկավարությամբ «Օրիենթալ» (արևելյան» Հայ թատերախումբը:*

Օթելլո — Գրիգոր Հակոբյան, *Վենետիկի դոժ — Ա. Միհրանյան, Բրաբանցիո և Կասիո — Մանուկ Թաշճյան, Յագո — Երվանդ Երամյան, Լոդովիկո — Տ. Վարդանյան, Գրացիանո — Գ. Կարապետյան, Ռոդրիգո — Հ. Գրլրճյան, Մոնտանո — Մ. Սեֆիրյան, Դեզդեմոնա — Լյուսի Հակոբյան, Էմիլյա — Մ. Մետնիքարյան:*

Ռազմիկ, № 40, 62:

Մայիսի 6. — *Բաքվի Նիկիտինների թատրոն-կրկեսում, Թիֆլիսի Հայ դերասանական խումբը, Հ. Աբելյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Բրաբանցիո — Գր. Ավետյան, Յագո — Հ. Զարիֆյան, Կասիո — Հ. Բերոյան, Լոդովիկո — (Արմեն Դուրինյան), Ռոդրիգո — (Մկրտիչ Ադելխանյան), Դեզդեմոնա — Արաքս Զարիֆյան:

Կրկնվել է 8-ին՝ Սև քաղաքի բանվորական ակումբում, 10-ին՝ Բալախանի արվարձանի կրուժոկում:

Մշակ, № 96: **Հուշարար**, № 6, էջ 95:

Մայիսի 26. — *Ախալցխայի Կարապետյան ուսումնարանի դահլիճում, Ն. Հովհաննիսյանի բեմադրությամբ, տեղի գեղարվեստագետ ուսուցիչների և թատերասերների հետ:*

Օթելլո — Նիկողայոս Հովհաննիսյան, *Վենետիկի դուքս — Գալուստ Իսքենդերյան, Բրաբանցիո — Մամիկոնյան, Գրացիանո — Աղամյան, Լոդովիկո — (Պողոս) Մակարյան, Կասիո — Սարաֆյան, Յագո — Ս. Քարիմյան, Ռոդրիգո — Եղոյան, Մոնտանո — (Ստեփան) Ազնավուրյան, Դեզդեմոնա — Օլգա Հովհաննիսյան, Էմիլյա — (Վ.) Ավետիսյան, Մերակույտի Ա. անդամ — Աբրահամյան, Մերակույտի Բ. անդամ — Ավետիս:*

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 1017:

Դեկտեմբերի կեսերին. — *Ալեքսանդրիայի Յունիոն-Արտիստիկ Ֆրանսեզ սրահում նախատեսվել են Կարապետ Գալֆայանի (Օթելլո) և նրա կնոջ՝ Ա. Գալֆայանի (Դեզդեմոնա) ելույթները տեղի թատերասերների հետ:*

Լուսաբեր, № 455:

1908

Հունվարի 27. — *Բաքվի Նիկիտինների թատրոն-կրկեսում, ցերեկը, Հայոց Կուլտուրական միության թատերական մասնաճյուղի դերասանական խումբը, Հ. Աբելյանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Վենետիկի դուքս — Թառլան(յան Կոստանդին, Հետագայում՝ վարդապետ), Բրաբանցիո — Գր. Ավետյան, Կասիո — Հովսեփ Ոսկանյան, Յագո — Միքայել Մանվելյան, Ռոդրիգո — Բարդի (Վահրամ Փափազյան), Լոդովիկո — Բարսեղ Աբովյան (Հարությունյան), Մոնտանո — Օվի (Հովհաննես) Սևումյան, Ա. սենատոր — Տեր, Բ. սենատոր — Հարությունյան (Բ. Աբովյան), Դեզ-

դեմոնա — Արուսյակ, Էմիլյա — (Ելիզավետա) Մելիք-Շահնազարյան:

ԳԱԹ, Գր. Ավետյանի Փոնդ, 2-րդ բաժին, № 380:

Մարտի 23. — *Սամարղանդի ռուսական թատրոնում, Հայ դերասանական խումբը Հ. Աբելյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Յագո — Արշակ Հարությունյան, Դեզդեմոնա — Արուսյակ (Հարությունյան):

Հուշարար, № 3, էջ 46:

Մարտի 27. — *Զարջոուի Արհեստավորաց ժողովարանի թատերական դահլիճում, նույն խումբը (Կասիո — Հովհ. Զարիֆյան):*

Հուշարար, № 3, էջ 45:

Ապրիլի 20. — *Երևանի Քաղաքային ակումբում, Հայ դերասանական խումբը Հ. Աբելյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Բրաբանցիո — Հովհ. Զարիֆյան, Կասիո — Հ. Ոսկանյան, Յագո — Ա. Հարությունյան, Լոդովիկո — Մկրտիչ Աղաբեկյան, Ռոդրիգո — Մ. Մանվելյան, Մոնտանո — Սեդրակ Թորոսյան, Գրացիանո — Հովհաննես Ղազարյան, Դեզդեմոնա — Արուսյակ (Հարությունյան), Էմիլյա — Փառանձեմ, Բիանկա — Արաքս Զարիֆյան:

Վառակ, № 86:

Մայիսի 11. — *Իզմիրի Տեր-Թադևոսյանների թատերասրահում, Հ. Աբելյանի (Օթելլո) ղեկավարությամբ խումբը, նույն կազմով:*

Վառակ, № 106:

Մայիսի 20. — *Ալեքսանդրապոլի ժողովրդական տանը, Հ. Աբելյանի բեմական գործունեության 25-ամյակի առթիվ, նույն խումբը:*

Ախուրյան, № 36; **Ժայռ,** № 46:

Հուլիսի 19. — *Կ. Պոլսի Սկյուտարի Թաղամասի Թեփեի թատրոնում, Հայ թատրոնի վերաբացման առթիվ, հատվածային ընթերցումներ-մենախոսություններ:*

Օթելլո — Ենովք Շահեն *(Իբրանոսյան):*

Բյուզանդիոն, № 3595:

Օգոստոսի 8. — *Կարսում, Թիֆլիսի «Նոր դրամա» թատերախումբը Ամո Խարազյանի ղեկավարությամբ (Օթելլո):*

Յագո — Միքայել Սաֆարյան, Դեզդեմոնա — Նինվել Խարազյան, Էմիլյա — Մարգարիտ (Բաբյան):

Զանգակ, № 32:

Օգոստոսի 12. — *Կ. Պոլսի Պերա թաղամասի Օդեոն թատրոնում, թատերասերների խումբը Վ. Փափազյանի բեմադրությամբ (3 գործ.), (թարգմ. Վ. Փափազյան, Գրիգոր Համբիկյան, Վահրամ Սվաճյան, խմբագրությունը՝ Սիպիլի և Հրանտ Ասատուրի): Ներկայացումից հետո, հայ թատրոնի մասին զեկուցումով հանդես է եկել բանաստեղծ-բժիշկ Ռուբեն Սևակը:*

Օթելլո — Վահրամ Փափազյան, *Կասիո — Արծրունի (Անդրե Վահրամ — Ալեքսանդր Գոճապլյբբյան), Յագո — Դիմաքսյան (Տիգրան Յախշիբեկյան), Գրացիանո — Ենովք Շահեն, Դեզդեմոնա — Շաքե (Մեհրուբե-Մելինե Շիշեյան), Էմիլյա — Սաթենիկ Մաթոսյան, Բիանկա — Արուսյակ (Դարպասյան, հետագայում՝ Ոսկանյան):*

Արևելք, № 6869; **Բյուզանդիոն,** № 3626; **ԳԱԹ, Վ. Փափազյանի Փոնդ:**

Օգոստոսի 23. — *Սկյուտարի Թեփեի թատրոնում, նոր դերակատարներով: Էմիլյա — Արուսյակ Դարպասյան:*

Օգոստոսի 28. — *Գատը գյուղում մասնակցել են՝*

Բրաբանցիո, Ռոդրիգո — Ատոմ, Կասիո — Ցոլակ, Յագո — Հ. Վահունի, Մոնտանո — Խորխոռունի, Կասիո — Շապուհ, Լոդովիկո — Ներսես, Գրացիանո — Տիգրան Յախշիբեկյան, Վենետիկի դուքս — Թաթուլ, Մերակույտի անդամ — Վարազդատ, Էմիլյա — Սաթենիկ (Մաթոսյան), Բիանկա — Արուսյակ Դարպասյան:

Արևելք, № 6869, 6871, 6872; **Բյուզանդիոն,** № 3614, 3615; **Մանզումեի Էֆլյատ,** № 2202:

Օգոստոսի 22. — *Գորիում, Թիֆլիսի Հայ դրամատիկ խումբը, Ամո Խարազյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Յագո — Միքայել Սաֆարյան, Դեզդեմոնա — Նինվել Խարազյան:

Индустрия, № 3.

Սեպտեմբերի 15. — *Կարսում, Բաքվի Հայոց Կուլտուրական միության թատերական մասնաճյուղի դերասանական խումբը, Հով. Աբելյանի (Օթելլո) և Արմեն Արմենյանի (Յագո) ղեկավարությամբ (Աբելյան-Արմենյան խումբ):*

Վենետիկի դուքս — (Ավետ Ազյան), Բրաբանցիո և Մոնտանո — Հարությունն Բերոյան, Դեզդեմոնա — Եկատերինա Դուրյան-Արմենյան:

Գործ, № 13: **Զանգ**, № 1–2, էջ 22:

Նույն խումբը՝

Սեպտեմբեր. — *Կարինում:*

Սեպտեմբերի 30, Հոկտեմբեր 3. — *Տրապիզոնում:*

Հոկտեմբերի 24, Նոյեմբերի 10. — *Սամսոնում:*

Դեկտեմբերի 16. — *Շումենում, Ֆիլիպեի Արևելյան թատերախումբը, ի նպաստ Հայաստանի սովյալների, Գրիգոր Հակոբյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Ռազմիկ, № 21:

Դեկտեմբերի 19. — *Կ. Պոլսի Պերա թաղի Վարիետեի թատրոնում, Աբելյան-Արմենյան խումբը. չքահանդես ի պատիվ Հ. Աբելյանի (Օթելլո) բեմական գործունեության 25-ամյակի:*

Վենետիկի դուքս — Ավետ Ազյան, Բրաբանցիո և Մոնտանո — Հ. Բերոյան, Լոդովիկո — Լևոն Ալավերդյան, Ռոդրիգո — Միքայել Ալիխանյան, Կասիո — Հովսեփ Ոսկանյան, Յագո — Արմեն Արմենյան, Դեզդեմոնա — Ե. Դուրյան-Արմենյան, Էմիլյա — Ռոզալիա (Վարդուհի) Բուրջալյան:

Աբելյանին մատուցվել է Պետրոս Ադամյանի Օթելլոյի կարմիր թիկնոցը:

Մշակ, № 1909, № 2: **ԳԱԹ, Լ. Ալավերդյանի ֆոնդ**, № 1:

1909

Հունվարի (31 ?). — *Ռոդոստոյի անարատ Հղության եկեղեցում:*

Օթելլո — Վ. Փափազյան, Դեզդեմոնա — Էլիզ Պիննեմեճյան:

Փետրվարի 2. — *Ատաբազարում, Աբելյան-Արմենյան խումբը:*

Նույն խումբը՝

Փետրվարի 8. — *Նիկոմիդիայում, երեկոյան:*

Փետրվարի 24, մարտի 8. — *ցերեկը, Իզմիրում:*

Մարտի 22. — *Բրուսայում:*

Մարտ. — *Իզմիրում, Վ. Փափազյանը (Օթելլո) պոլսահայ դերասանների հետ:*

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1923, էջ 300–301:

Մարտի 30. — *Վանի Երամյան վարժարանի Մկրտիչ Ավետիսյան գրադարանին կից թատերախումբը Մ. Միրաքյանի բեմադրությամբ:*

Օթելլո — Միհրան Միրաքյան, Յագո — (Կարապետ Աճեմխաչյան), Դեզդեմոնա — Եղիազար Գաբուզյան:

Հորիզոն, 1911, № 58: **Սովետական արվեստ**, 1973, № 7, էջ 27:

Ապրիլի 28. — *Երևանի Ջանփոլադյանի թատրոնում, Աբելյան-Արմենյան թատերախումբը:*

Գործ, № 93:

Ապրիլի 29. — *Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դահլիճում, նույն խումբը:*

Մշակ, № 92:

Սեպտեմբերի 26. — *Նախիջևանում, Աբելյան (Օթելլո)-Արմենյան (Յագո) խումբը:*

Բրաբանցիո և Կասիո — Հ. Բերոյան, Դեզդեմոնա — Արուսյակ (Լիզիկ Հարությունյան), (Էմիլյա — Ե. Մելիք-Շահնազարյան):

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ, № 7:

Հոկտեմբերի 13, 18. — *Թավրիզի Արամյան դպրոցի դահլիճում, նույն խումբը: Մասնակցել են նաև Միքայել Ալիխանյանը, Մացակ Տեր-Առաքելյանը, Ռչտունին (Արամ Բերոյան), Հ. Ղազարյանը:*

Մշակ, № 246:

Հոկտեմբերի 28. — *Զուլֆայի Ֆրանսիա հյուրանոցի սրահում, նույն խումբը:*

Նոյեմբերի 7. — *Վանի Կենտրոնական վարժարանի սրահում, Մ. Ավետիսյան գրադարանին կից «Ազատ-Քնար» թատերասերների խումբը, Ա. Սոլախյանի բեմադրությամբ, ձևավորումը՝ Գևորգ Գույումճիպաշյանի:*

Օթելլո — Միհրան Միրաքյան, Յագո — Կարապետ Ահեմ-Խաչոյան, Դեզդեմոնա — Եղիազար Գաբուզյան: Կրկնվել է 11-ին:

Մշակ, № 264: **ԳԱԹ, Ա. Սոլախյանի ֆոնդ**, № 2:

Նոյեմբերի 10. — *Քութայիսի հայոց ուսումնարանի դահլիճում, Աբեյյան-Արմենյան թատերախումբը: Դեզդեմոնա — Ե. Դուրյան-Արմենյան:*

Մշակ, № 255:

Նոյեմբերի 22. — *Վանում, Աբեյյան-Արմենյան թատերախումբը:*

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ, № 7 ա:

Դեկտեմբերի 13. — *Թիֆլիսի Հավլաբարի «Նոր դրամա» թատրոնում, Ամո Խարազյանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Կասիո — Հ. Շեկոյան, Յագո — Միքայել Սաֆարյան, Ռոդրիգո — Արթուր Բաբյան, Մոնտանո — Յոլակ Ամերիկյան (Գալուստ Սուլուիկյան), Բրաբանցիո — Հայկազ Հայկազյան, Լոդովիկո — Օվի (Հովհաննես) Ահարոնյան, Դեզդեմոնա — Նինա Մանուչարյան:

Հորիզոն, № 44: **Մշակ**, № 277:

Դեկտեմբեր. — *Եյսկում (Հյուսիսային Կովկաս), Թիֆլիսի «Նոր դրամա» թատերախումբը Ա. Խարազյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Վենետիկի դուքս և Կասիո — Հայկազ Հայկազյան, Բրաբանցիո և Լոդովիկո — Ա. Բաբյան, Յագո — Մ. Սաֆարյան, Մոնտանո — Արտյուր, Դեզդեմոնա — Ն. Խարազյան, Էմիլյա — Մարգարիտ (Բաբյան):

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ:

1910

Հունվարի 17. — *Թիֆլիսի Հավլաբարի «Նոր դրամա» թատերախումբը:*

Նոր դերակատարներ՝ Ռոդրիգո — Բագրատ Մուրադյան, Էմիլյա — Նինա Մանուչարյան-Խարազյան:

Հորիզոն, № 12: **Սուրհանդակ**, № 57:

Հունվարի 30. — *Կ. Պոլսի Մաքրի գյուղի Անեսթիկի թատրոնում, Աբեյյան-Արմենյան թատերախումբը:*

Բյուզանդիոն, № 4045:

Փետրվարի 27. — *Իզմիտի Շերամատանը, Գրիգոր Ավետյան (Բրաբանցիո և Լոդովիկո) — Օվի Սևումյան թատերախումբը:*

ԳԱԹ, Գ. Ավետյանի ֆոնդ:

Նույն խումբը՝
Մարտի 4. — Պարտիզակի վարժարանում:
Մարտի 12. — Ատաբազարի Շերամատանը:
Մարտի 23. — Էսկի Շեհերի վարժարանում:

Ապրիլի 29. — *Իզմիրի Սպորտինգ թատրոնում, Սիրանույշի ղեկավարությամբ «Նոր բեմ» թատերախումբը:*

Օթելլո — Վ. Փափազյան, Յագո — Ա. Արմենյան, Բրաբանցիո — Անդրանիկ (Սողոմոնյան), Դեզդեմոնա — Ե. Դուրյան-Արմենյան, Էմիլյա — Ազնիվ (Անդրանիկ):

Դաշինք, № 222, 232:

Հուլիսի 3. — *Շուշիի Ամառային ժողովարանի դահլիճում, Թիֆլիսի «Նոր դրամա» թատերախումբը, Ա. Խարազյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Կասիո — Հ. Շեկոյան, Յագո — Բագրատ Մուրադյան, Դեզդեմոնա — Նինա Մանուչարյան-Խարազյան, Էմիլյա — Նինվել Խարազյան:

Հորիզոն, № 149:

Օգոստոսի 27. — *Ալեքսանդրապոլի ժողովրդական տանը, նույն խումբը, մասնակցությամբ Եղիա Խաժակի:*

Ախուրյան, № 60:

Դեկտեմբերի 10. — *Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում, Հայոց դերասանական խումբը, Ա. Արմենյանի բեմադրությամբ:*

Օթելլո — Հ. Աբելյան, Վենետիկի դուքս — Միքայել Մանվելյան, Բրաբանցիո — Ա. Վրույր, Կասիո — Խաչատուր Ալիխանյան, Յագո — Ա. Հարությունյան, Մոնտանո — Հ. Բերոյան, Լոդովիկո — Մ. Աղայան, Ռոդրիգո — Գրիգոր Լաքա, Գրացիանո — Հովհ. Ղազարյան, Դեզդեմոնա — Օլգա Մայսուրյան, Էմիլյա — Հասմիկ (Թագուհի Հակոբյան):

Կովկասի լրաբեր, № 38; **Մշակ,** № 276:

1911

Հունվարի 9. — *Թիֆլիսի Հավլաբարի «Նոր դրամա» թատերախումբը, Ա. Խարազյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Կասիո — Լևոն Երամյան, Յագո — Հայկազ Հայկազյան, Ռոդրիգո — Շավարշ Ահարոնյան, Դեզդեմոնա — Ն. Մանուչարյան, Էմիլյա — Ն. Խարազյան:

Հորիզոն, № 7:

Հունվարի 14. — *Թիֆլիսի Արտիստական ընկերության թատրոնում, Հայոց դրամատիկական ընկերության խումբը, Ա. Արմենյանի (Յագո) բեմադրությամբ, Հ. Աբելյանի (Օթելլո) թարգմանությամբ:*

Վենետիկի դուքս — Վարդան Միրզոյան, Բրաբանցիո — Գր. Ավետյան, Կասիո — Հ. Զարիֆյան, Մոնտանո — Արշավիր Շահխաթունի, Լոդովիկո — Լ. Ալավերդյան, Գրացիանո — Հովհ. Ղազարյան, Ռոդրիգո — (Արշակ) Մամիկոնյան, Ա. Սենատոր — Գրիգոր Լաքա, Բ. սենատոր — Արամ Ռշտունի, Դեզդեմոնա — Ե. Դուրյան-Արմենյան, Էմիլյա — Արաքս Զարիֆյան:

Հորիզոն, № 7, 11; **Սուրհանդակ,** № 217:

Մարտի 3. — *Բաքվի Հայոց Մարդասիրական ընկերության դահլիճում, Նիկողայոս Հովհաննիսյանի (Օթելլո) բեմադրությամբ, իր նպաստին:*

Վենետիկի դուքս — Դ. Ղազյան, Բրաբանցիո — Գր. Ավետյան, Յագո — Բարսեղ Աբովյան, Դեզդեմոնա — Յուլիանա (Օլգա Հովհաննիսյան ?), Ռոդրիգո և Էմիլյա — Քնարիկ Աբովյան:

Հորիզոն, № 52; **Մշակ,** № 55:

Մարտի 11. — *Երևանի Ջանփոլադյանի թատրոնում, Թիֆլիսի «Նոր դրամա» թատերախումբը Ա. Խարազյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Յագո — Մ. Սաֆարյան, Դեզդեմոնա — Լյուսի Սևումյան:

Հորիզոն, № 59; **Эриванские объявления,** № 28, 30.

Մարտի 29. — *Բաքվի Նիկիտինների թատրոն-կրկեսում, Աբելյան-Արմենյան թատերախումբը, Աբելյանի (Օթելլո) թարգմանությամբ:*

Բրաբանցիո — Գր. Ավետյան, Բ. սենատոր և Գրացիանո — Հովհ. Ղազարյան, Կասիո — Ա. Շահխաթունի, Մոնտանո — Միքայել Ալիխանյան, Լոդովիկո — Եղիա Խաժակ, Ռոդրիգո — Գր. Լաքա, Էմիլյա — Ժասմեն (Մարիամ Եգանյան, հետո՝ Գրիգորյան):

Մշակ, № 53; **Баку,** № 69, 70.

Ապրիլի 13. — *Զաքաթալայի ծխական դպրոցի դահլիճում, Թիֆլիսի «Նոր դրամա» թատերախումբը Ա. Խարազյանի ղեկավարությամբ:*

Հորիզոն, № 109:

Ապրիլի 21. — *Նոր Նախիջևանի Քաղաքային թատրոնում, Աբելյան-Արմենյան թատերախումբը:*

ԳԱԹ, Գր. Ավետյանի ֆոնդ:

Ապրիլի 22. — *Թելավում, Թիֆլիսի «Նոր դրամա» թատերախումբը, Ա. Խարազյանի ղեկավարությամբ:*

Սուրհանդակ, № 300:

Մայիսի 5. — *Նույն խումբը Լագոդաղի Հայոց ուսումնարանում:*

Մայիսի 6. — *Եկատերինոդարի ձմեռային թատրոնում, Աբելյան-Արմենյան թատերախումբը:*

Մայիսի 17. — *Նույն խումբը Արմավիրի Մյասեժնիկովի թատրոնում:*

Հուլիս. — *Գորիսում, Թիֆլիսի «Նոր դրամա» թատերախումբը Ա. Խարազյանի ղեկավարությամբ:*

Հորիզոն, № 142, 168:

Դեկտեմբերի 6. — *Թիֆլիսի Զուբալովի անվան ժողտանը, Հայոց Դրամատիկական ընկերության դերասանների և թատերասերների խումբը (թարգմ. Ս. Սուլխանյան), ի նպաստ Ա. Խարազյանի (Օթելլո), բեմադրությունը Ա. Արմենյանի (Յագո):*

Վենետիկի դուքս — Միքայել Գավրոշ (Հարությունյան), Բրաբանցիո — Օվի Ահարոնյան, Կասիո — Հ. Հայկազյան, Լոդովիկո — Հարությունյան II (Միքայել), Ռոդրիգո — Սերժ (Կարգատյան), Մոնտանո — Վահան Գալստյան, Դեզդեմոնա — Ե. Դուրյան-Արմենյան, Էմիլյա — Ն. Խարազյան, Մունետիկ — Հարությունյան (Միքայել):

Մշակ, № 272: **Սուրհանդակ,** № 458:

Դեկտեմբերի 17. — *Տիգրանակերտի Հայկական թատրոնում:*

Դեզդեմոնա — Սիրանույշ Առուսյան (հետո՝ տիկ. Թյուֆենքճյան):

Հայրենիք, 1912, № 8, էջ 4:

1912

Փետրվարի 22. — *Թիֆլիսի Ռուսթավելու անվան թատրոնում, Երևանի պետթատրոնի դերասանուհի Արուս Ոսկանյանի (Դեզդեմոնա) ելույթը Թիֆլիսի հայկական թատրոնի դերասանների հետ:*

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Մարտի 4. — *Կահիրեի Ռամզես թատրոնում, ցերեկը, Հ. Զարիֆյանը (Օթելլո) նոր դերակատարների հետ:*
Վենետիկի դուժ — Վրթանես Երամյան, Բրաբանցիո և Լոդովիկո — Մ. Միքայելյան, Մոնտանո — Գ. Պեզազյան, Ռոդրիգո — Վ. Գաբակճյան, Կասիո — Օ. Կարապետյան, Ցագո — Խաչիկ Նորիկյան, Դեզդեմոնա — Վալենտինա Ամիրայան (իտալուհի), Էմիլյա — Էոժենի Բյուրատ:

Արաքս, մարտի 10: ԳԱԹ, Հ. Զարիֆյանի ֆոնդ:

Ապրիլի առաջին կես. — *Խարկովում, Հ. Աբելյանը (Օթելլո) տեղի խմբի հետ:*

Մուրճ-Մանդալ, № 183:

Մայիսի 19. — *Սիմֆերոպոլում, Վ. Փափազյանը (Օթելլո) տեղի թատերասերների հետ:*

Красный Крым, № 115:

Հուլիսի 18. — *Լենինականի թատրոնում, Հ. Աբելյանը (Օթելլո) Թիֆլիսի թատրոնի դերասանների հետ:*
Բրաբանցիո — Մ. Սանամյան, Ցագո — Հ. Բերոյան, (Դեզդեմոնա — Ա. Աղասյան):

Բանվոր, № 70:

Հուլիսի 19. — *Թիֆլիսի Ինքնաշխի (Արհեստավորաց) ակումբում, Հ. Ոսկանյանի (Օթելլո) բեմադրությամբ, Ա. Արմենյանի (Ցագո) մասնակցությամբ:*
Բրաբանցիո — Ա. Մամիկոնյան, Կասիո — Վ. Գալստյան, Մոնտանո — Սամսոն Սարդարյան, Ռոդրիգո — Խորեն Զաքարյան, Դեզդեմոնա — Պերճիկ Հովհաննիսյան, Էմիլյա — Վարդա Սարգսյան:

Գրոլեսար, № 168:

Հուլիսի 31. — *Դիլիջանում, Ս. Թորոսյանի (Օթելլո) ղեկավարությամբ դերասանական խումբը: Ցագո — Վ. Միրզոյան:*

ԳԱԹ, Վ. Միրզոյանի ֆոնդ:

<Հունիս—Հուլիս>. — *Հայաստանի շրջաններում, թատերասերների մի խմբի ներկայացումը:*
Օթելլո — Վիլյամ Հայկազյան:

ԳԱԹ, Ա. Գուլակյանի ֆոնդ:

Օգոստոսի 4. — *Հալեպի Սինեմա Օրիենթալում, Միքայել Պետանյանի (Օթելլո) բեմադրությամբ, տեղական ուժերի հետ:*

Կասիո — (Տիրան Ամեմյան), Յագո — Որդի (Վոլոդյա) Կոստանյան, Դեզդեմոնա — Մարգո Կոստանյան, Էմիլյա — Ասյա Կոստանյան:

Եփրատ, № 111, 113:

Սեպտեմբերի 9. — *Թիֆլիսի Արհեստավորաց ակումբում, Ա. Արմենյանի (Յագո) բեմադրությամբ:*

Օթելլո — Հովհ. Բաղդասարյան, Կասիո — Ս. Հարությունյան, Ռոդրիգո — Ա. Խոսրով, Դեզդեմոնա — Պերճիկ Հովհաննիսյան:

Պրոլետար, № 210:

Սեպտեմբերի 16. — *Երևանի Առաջին պետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Վենետիկի դուքս — Տիգրան Այվազյան, Բրաբանցիո — Ա. Ավետիսյան, Կասիո — Ան. Վարդանյան, Յագո — Մկրտիչ Ջանան, Գրացիանո — Գր. Ավետյան, Լոդովիկո — Օրի Բունիաթյան, Ռոդրիգո — Գուրգեն Ջանիբեկյան, Մոնտանո — Վահան Դասոյան, Խեղկատակ, Գ. սպա, Ա. մունետիկ — Գուրգեն Գաբրիելյան, Բ. սպա — Աշոտ Ներսիսյան, Հերոլդ — Սուրեն Քոչարյան, Ա. սենատոր — Համբ. Խաչանյան, Բ. սենատոր — Բագրատ Մուրադյան, Ա. սպա, Բ. մունետիկ — Հովհ. Ավագյան, Դ. սպա — Գրիգոր Պողոսյան, Դեզդեմոնա — Ա. Ոսկանյան, Էմիլյա — Հասմիկ:

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի Ֆոնդ, № 399:

Հոկտեմբերի 20. — *Դամասկոսի Սինեմա Հապրատամ, Կոստանյան դերասանական ընտանիքը տեղական ուժերի հետ: Յագո — Բարսեղ Արովյան:*

Եփրատ, № 136:

Նոյեմբերի վերջին. — *Նոր Նախիջևանում, Վ. Փափազյանի (Օթելլո) ղեկավարությամբ դերասանական խումբը:*

Դեզդեմոնա — Հրանուշ Բաբաջանյան, Էմիլյա — Մանյա Թավրիզյան:

Մուրճ-Մանգաղ, № 246:

1929

Հունվարի 16. — *Լառնաքայում, Կոստանյան դերասանական ընտանիքը, իրենց ավանդական դերակատարումներով:*

Արաքս, № 5, 6:

Մարտի 11. — *Բաքվի Հայկական թատրոնում, Հ. Աբելյանի (Օթելլո) և Ա. Արմենյանի (Յագո) մասնակցությամբ: Դեզդեմոնա — Ժասմեն, Էմիլյա — Մանյա Թավրիզյան:*

ԳԱԹ, Ավ. Հովհաննիսյանի Ֆոնդ:

Մայիսի 2. — *Երևանի պետթատրոնում, Հ. Աբելյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Խորհրդային Հայաստան, № 108:

Հունիս. — *Ստեփանակերտում, Հ. Աբելյանը (Օթելլո) Բաքվի հայկական թատրոնի դերասանների հետ:*

Խորհրդային Ղարաբաղ, № 26:

Հունիսի 30. — *Կահիրեի Ռամզես թատրոնում, Պոլ Բուրժեի «Արվեստագետները» պիեսի բեմադրության 4-րդ գործողության մեջ:*

Օթելլո — Ο. Վոլթեր, Կասիո — Խաչիկ Նորիկյան, Դեզդեմոնա — Պեատրիս Վոլթեր:

ԳԱԹ, Ա. Գարատաշյանի Ֆոնդ:

Սեպտեմբերի 20. — *Ալեքսանդրիայի Ալհամպրա թատրոնում, Կոստանյան դերասանական ընտանիքը, տեղի դերասանների հետ:*

Օթելլո — Միք. Կոստանյան, Բրաբանցիո և Յագո — Վոլոդյա Կոստանյան, Կասիո — (Ο.) Կարապետյան, Դեզդեմոնա — Մարգո Կոստանյան, Էմիլյա — Արապյան:

Արաքս, № 40:

— *Կյումուլջինայում (Թրակիա), «Սևումյան թատերախումբը»:*

Օթելլո – Լևոն Գազազյան, Յագո – Պ. Պետրոսյան:

Հունահայ տարեգիրք, Աթենք, էջ 339:

1930

Փետրվարի 6. – *Սանահին երկաթուղային կայարանի դրամատիկ խումբը Ա. Արմենյանի (Յագո) բեմադրությամբ:*

Օթելլո – Բենիկ Բժիկյան (Թիֆլիսից), Դեզդեմոնա – Աիդա Արմենյան:

Գրոլեսոար, № 58:

Ապրիլի 2. – *Հալեպի թատրոն Սինեմա Ռուայալում, Կահիրեի Հայ դրամատիկի դերասաններ Օննիկ (Օթելլո) և Պետրոս (Դեզդեմոնա) Վոլթերները տեղի դերասանների հետ: Յագո – Վարդան Պարիկյան:*

Եփրատ, № 277, 279:

Հունիսի 1. – *Բուենոս Այրեսում, Կարո Խաչիկյանի (Օթելլո) բեմադրությամբ: Դեզդեմոնա – Շուշանիկ Տեր-Բարսեղյան:*

Հառաջ, 1931, № 1844:

Նոյեմբերի 2. – *Թրոյում, Հայ Կարմիր Խաչի Թրոյի մասնաճյուղը տիկ. Ա. Ճաֆերյանի ղեկավարությամբ:*

Օթելլո – Ս. Ճապյան, Բրաբանցիո – Հ. Պեքարյան, Կասիո – Գ. Պիլեմճյան, Յագո – Հովհաննես Ճաֆերյան, Ռոդրիգո – Լ. Ճաֆերյան, Լոդովիկո – Ս. Վարդիկյան, Մաղրածու և Մոնտանո – Ե. Կյուրեղյան, Դեզդեմոնա – Ճիվանյան, Էմիլյա – Ռ. Գալայճյան, Բիանկա – Ռ. Սիմոնյան:

Գայքար, № 287:

Դեկտեմբերի 11. – *Ախալցխայի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

ԳԱԹ, Ախալցխայի թատրոնի ֆոնդ:

– Մարսելում, Մ. Մարությանի Հայ դրամատիկ ստուդիա խումբը:

Օթելլո – Մանվել Մարության:

ԳԱԹ, Մ. Մարությանի ֆոնդ:

1931

Փետրվարի կեսերին. – *Ռոստովի Նոր Նախիջևան թաղամասում, Վ. Փափազյանը (Օթելլո) Թիֆլիսի թատրոնի դերասանների հետ:*

Դեզդեմոնա – Անահիտ Ղուկասյան, Էմիլյա – Ռիմա Օղաբաչյան, (Բրաբանցիո – Սուրեն Սարուխանյան, Կասիո – Արամայիս Կայծունի, Յագո – Աշոտ Քաջվորյան):

ԳԱԹ-ի նյութեր:

Ապրիլի 26. – *Նյու Յորքի Ջոն Գոլդեն թատրոնում, Հ. Զարիֆյանի (Օթելլո) ղեկավարությամբ դերասանական խումբը:*

Վենետիկի դուքս – Կ. Գավաֆյան, Բրաբանցիո – Ա. Սահակյան, Կասիո – Եղիա Խիմեթյան, Յագո – Մկրտիչ Նուրյան, Մոնտանո – Կ. Առաքելյան, Լոդովիկո – Հ. Գասապյան, Ռոդրիգո – Զ. Զոպանյան, Գրացիանո – Հ. Տեյիրմենճյան, Դեզդեմոնա – Ս. Գալստյան, Էմիլյա – Ա. Կյուտենյան:

ԳԱԹ, Հ. Զարիֆյանի ֆոնդ:

Օգոստոսի 20. – *Լիոնի թատերասրահում, Մ. Մարությանի (Օթելլո) ղեկավարությամբ թատերախումբը:*

Յագո – Վ. Տեր-Վարդանյան, Դեզդեմոնա – Էրա Բաղալ (Փարիզից), նաև՝ Թրագոչը (Լիոնից):

Հառաջ, № 1960, 1969:

Հոկտեմբերի 18. – *Փարիզի Սոսիետե Սվանիեի թատրոնում, Փարիզահայ դրամատիկ խումբը, ի պատիվ Տրդատ Նշանյանի (Օթելլո) բեմական գործունեության 25-ամյակի, 3-րդ գործողությունը:*

Ցագո — Սարիմ Մաքսուտյան, Կասիո — Շահան Սարյան, Դեզդեմոնա — Սիրուհի Նշանյան, Էմիլյա — Աղրինե Տերուան:

ԳԱԹ, Տ. Նշանյանի ֆոնդ:

1932

Փետրվարի 27. — *Թեհրանի Զրադաշտականների «Սիրիուս» թատերասրահում, Կոստանյան դերասանական խումբը տեղի թատերասերների հետ:*

Օթելլո — Միք. Կոստանյան, Ցագո — Վ. Կոստանյան, Դեզդեմոնա — Մարգո Կոստանյան:

Ալիք, № 46:

Փետրվարի 29. — *Պլովդիվի Օրչֆինսկի թատրոնում, Տ. Նշանյանը (Օթելլո) տեղի «Պետո Սերեմճյան» ընկերության «Սևումյան» թատերախմբի հետ:*

Վենետիկի դուքս — Գեղամ Ուրուրյան, Բրաբանցիո — Հարություն Յազըճյան, Կասիո — Տիգրան Պարտիզպանյան, Ցագո — Օննիկ Քեչյան, Լոդովիկո — Սիմոն Պարտիզպանյան, Ռոդրիգո — Թորգոմ Գալպագճյան, Մոնտանո — Ստեփան Ազարյան, Նավաստի — Լևոն Աստուրյան, Մերակուտի անդամ — Կարո Գևորգյան, Դեզդեմոնա — Սիրուհի Նշանյան, Էմիլյա — Արաքսի Սարգիսյան:

ԳԱԹ, Օ. Քեչյանի ֆոնդ:

Մարտի 31. — *Փարիզի Մյություալիտեի թատրոնում, Վ. Փափազյանը (Օթելլո) Փարիզահայ դրամատիկ խմբի հետ:*

Վենետիկի դուքս — Երվանդ Թոլայան, Բրաբանցիո — Արմենակ Սարաֆյան, Կասիո — Արման Կոթիկյան, Ցագո — Արտաշես Գմբեթյան, Լոդովիկո — Սարիմ Մաքսուտյան, Ռոդրիգո — Սեդրակ Սուրաբյան, Մոնտանո — Բաբուճյան, Գրացիանո — (Վ.) Պաղտասարյան, Ա. ծերակուտական — Գրիգոր Վահան (Մաքսուտյան), Բ. ծերակուտական — Դիմաքսյան, Սպա — Գ. Տերվիչյան, Դեզդեմոնա — Անահիտ Դատավորյան, Էմիլյա — Աղրինե Տերուան:

ԳԱԹ, Ս. Սուրաբյանի ֆոնդ:

Ապրիլի 17. — *Կոնստանցայում, Ս. Զարդարյանի բեմադրությամբ:*

Օթելլո — Սիրուն Զարդարյան:

ԳԱԹ, Վ. Փափազյանի ֆոնդ:

Ապրիլի 27. — *Մարսելի «Սալոն Շափ»-ում, Վ. Փափազյանը (Օթելլո) փարիզահայ և մարսելահայ դերասանների հետ:*

Վենետիկի դուքս — Հովսեփ Ուզունյան, Բրաբանցիո — Հովհ. Ղազարյան, Կասիո — Քիփրիտճյան, Ցագո — Ա. Գմբեթյան, Մոնտանո — Ա. Կոթիկյան, Ռոդրիգո — Գարագաշ, Լոդովիկո — Գեչկեոթուրյան, Գրացիանո — Ալեքսանյան, Ա. ծերակուտական — Սիսակ, Բ. ծերակուտական — Սմբատ, Ա. սպա — Քեչեճյան, Բ. սպա — Ֆեսճյան, Դեզդեմոնա — Անահիտ Դատավորյան, Էմիլյա — Սիրուշ Ղազարյան:

ԳԱԹ, Ա. Կոթիկյանի ֆոնդ:

Հունիսի 10. — *Սոֆիայի Քոֆերթիվեն թատրոնում, Տ. Նշանյանի (Օթելլո) բեմական գործունեության 25-ամյակի առթիվ, տեղի դերասանների հետ: Դեզդեմոնա — Ս. Նշանյան:*

Պալքանյան մամուլ, № 20:

Հունիսի 27. — *Գանձակում, Բաքվի Հայկական թատրոնի դերասանական խումբը Ալ. Հովհաննիսյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Ցագո — Արզո Արզումանյան, Դեզդեմոնա — Նվարդ Սանթուրյան:

Հարվածային Գյանջա, № 53:

Օգոստոսի 28. — *Վառնայի Թաղապետական Ամառային թատրոնում, Տ. Նշանյանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Կասիո — Թորգոմ Պոյաճյան, Ցագո — Ստեփան Գորգիզյան, Դեզդեմոնա — Ս. Նշանյան: Մասնակցել են նաև՝ Միքայել Ղուկասյանը, Աբրահամ Ջիվիճյանը, Հրայր Գևորգյանը:

Պալքանյան մամուլ, № 29:

Սեպտեմբերի 25. — *Մոնտեվիդեոյի Վիկտորիա Հոլում, Հ. Զարիֆյանը (Օթելլո) տեղի թատերասերների հետ:*

Վենետիկի դուքս — Ա. Ալիքսանյան, Բրաբանցիո — Մ. Գրիգորյան, Լոդովիկո — Գ. Քեքլիկյան, Մոնտանո — Պ. Ավչարյան, Ռոդրիգո — Ս. Վարդյան, Դեզդեմոնա — Վ. Խորբության, Էմիլյա — Զ. Զաքրյան:

ԳԱԹ, Հ. Զարիֆյանի ֆոնդ:

— Կարտանում, Մ. Մարությանի (Օթելլո) բեմադրությամբ: Դեզդեմոնա — Էրա Բաղալ:

Արազ, 1934, № 254:

Հոկտեմբերի 8. — *Սուխումի թատրոնում, Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) թատրոնի հուրախաղերը Հ. Աբելյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Վենետիկի դուքս — Սեթ Հովսեփյան, Բրաբանցիո — Մաթևոս Սանամյան, Կասիո — Արամ Պետրոսյան, Յագո — Սամսոն Սարդարյան, Ռոդրիգո — Ալեքսանդր Շագաֆյան, Մոնտանո — Արմո Արմենյան, Լոդովիկո — Սամվել Բաղալյան, Գրացիանո — Աշոտ Գրիգորյան, Սպա — Սարգիս Սարգսյան, Ա. սենատոր — Վարդանյան, Բ. սենատոր — Գեղամ Նալբանդյան, Դեզդեմոնա — Անահիտ Սանամյան, Էմիլյա — Արուս Խուդանյան:

Վ. Գրիգորյանի անձնական արխիվ:

Նոյեմբերի 6. — *Բուենոս Այրեսի Հայ կեդրոնում, Հ. Զարիֆյանը (Օթելլո) տեղի թատերախմբի հետ:*

Վենետիկի դուքս — Օ. Հովհաննիսյան, Բրաբանցիո — Ե. Դարբին, Կասիո — Աստուր Աստուրյան, Յագո — Մ. Վարդևանյան, Լոդովիկո — Ա. Բարսեղյան, Դեզդեմոնա — Շուշիկ Տեր-Բարսեղյան, Էմիլյա — Ե. Հովհաննիսյան:

Արմենիա, № 81:

Նոյեմբերի 3-րդ տասնօրյակ. — *Լենինականի պետթատրոնում, Հ. Աբելյանի (Օթելլո) բեմական գործունեության 50-ամյակի առթիվ:*

Բրաբանցիո — Հայկասար Միանսարյան, Կասիո — Արամ Ռչտունի, Յագո — Ցոլակ Ամերիկյան, Մոնտանո — Օ. Վարդանյան, Լոդովիկո — Լևոն Զոհրաբյան, Ռոդրիգո — Արամայիս Կայծունի (Սահակյան), Գրացիանո — Վարդան Թերզիբաշյան, Ա. սենատոր — Միքայել Գավրոշ (Հարությունյան), Բ. սենատոր — Կարո Արծրունյան, Դեզդեմոնա — Անահիտ Մկրտումյան, Էմիլյա — Ռիմա Օդաբաշյան:

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 102:

Նոյեմբեր. — *Բուխարեստի «Լիտերթաֆել» թատրոնում, Տ. Նշանյանը (Օթելլո) տեղի թատերասերների հետ:*

Յագո — Խորեն Տիրատուրյան, Դեզդեմոնա — Ս. Նշանյան:

Արազ, № 151:

Դեկտեմբերի 24. — *Թիֆլիսի Հայպետթատրոնում, Հ. Աբելյանի (Օթելլո) թարգմանությամբ ու բեմադրությամբ:*

Վենետիկի դուքս — (Մ.) Մարության, Բրաբանցիո — Ա. Մամիկոնյան, Կասիո — Վ. Գալստյան, Յագո — Հ. Բերոյան, Մոնտանո — Արտեմ Լուսինյան, Ռոդրիգո — Գևորգ Աշուղյան, Գրացիանո և 2-րդ լրաբեր — Ս. Բաբլոյան, Լոդովիկո — Գրիգոր Ավագյան, Ա. սենատոր — Երվանդ Շահնազարյան, Բ. սենատոր — Շահեն Ալլահվերդյան, Սպա — Անտոն Պարոնբեկյան, Դեզդեմոնա — Մ. Մոճոյան, Էմիլյա — Անահիտ Ղուկասյան:

Գրոլեսաը, № 298:

1933

Հունվարի 6. — *Երևանի Առաջին պետթատրոնում, Ա. Բուրջալյանի բեմադրությամբ և Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Վենետիկի դուքս — Տ. Այվազյան, Բրաբանցիո — Լևոն Մսերլյան, Ա. սենատոր — Ս. Բաղալյան, Բ. սենատոր և Գրացիանո — Վաղինակ Մարգունի, Լոդովիկո — Օ. Բունիաթյան, Կասիո — Վավիկ Վարդանյան, Յագո — Մ. Ջանան, Ռոդրիգո — Գ. Աֆրիկյան, Մոնտանո — Հ. Ավագյան, Խեղկատակ — Թ. Դիլաքյան,

Դեզդեմոնա — Ա. Ոսկանյան, Էմիլյա — Վարդուշ Ստեփանյան, Ա. սպա — Նորայր Գևորգյան, Բ. սպա և Բ. մունետիկ — Ս. Ասլանյան, Գ. սպա և Ա. մունետիկ — Գևորգ Ասլանյան, Դ. սպա — Ս(ուրեն) Բաղալյան, Հերոլդ — Սուրեն Աբեղյան:

Ռուբինյան Հայաստան, № 11: ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ:

Հունվարի 18. — *Լենինականի Ա. Մռավյանի (այժմ՝ Գյումրիի Վ. Աճեմյանի) անվան պետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Վենետիկի դուքս — Մ. Գավրոշ, Բրաբանցիո — Հ. Միանսարյան, Գրացիանո — Օ. Վարդանյան, Լոդովիկո — Գեղամ Հարությունյան, Կասիո — Ա. Ռշտունի, Յագո — Յոլակ Ամերիկյան, Ռոդրիգո — Արտավազդ Խալաթյան, Մոնտանո — Սուրեն Սուրենյան (Մարտիրոսյան), Դեզդեմոնա — Անիկ Մկրտումյան, Էմիլյա — Ռ. Օղաբաչյան, Սպա — Ս. Պիճիկյան, Համբավաբեր և Գ. զինվոր — Տ(ելուշ) Գևորգյան, Ա. փողհար — Ա. Խաչատրյան, Բ. փողհար — Ա. Ղազազյան, Ա. նաժիշտ — Վարյա Սարգսյան, Բ. նաժիշտ — Արուս Ազնավուրյան, Գ. նաժիշտ — Ասյա Բերոյան, Ա. սենատոր — Ա. Արաբյան, Բ. սենատոր — Կարո Արծրունյան, Ա. զինվոր — Ալեքսանդր Քոչարյան, Բ. զինվոր — Խ. Հյուսիսյան:

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ:

Հունվար-փետրվար, Թիֆլիս. — *Վ. Փափազյանի (Օթելլո) ելույթները հայկական դրամայի թատրոնի դերասանների հետ:*

Մայիսի 23. — *Թիֆլիսի հայպետթատրոնում, Հ. Աբեղյանի (Օթելլո) և Արուս Ոսկանյանի (Դեզդեմոնա) մասնակցությամբ:*

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հունիսի 20. — *Թիֆլիսի Կարմիր Բանակի տանը, Հ. Աբեղյանի (Օթելլո) և Ժասմենի (Դեզդեմոնա) մասնակցությամբ, Թիֆլիսի թատրոնի դերասանների հետ:*

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հուլիսի 23. — *Ստեփանակերտի Միջմիութենական ակումբում, Բաքվի պետթատրոնի դերասան Ալ. Հովհաննիսյանը (Օթելլո) Ստեփանակերտի պետթատրոնի դերասանների հետ: Բեմադրությունը՝ Կարո Ալվարյանի (Յագո), նկարիչ՝ Մանուկ-զադե (Բրաբանցիո):*

Վենետիկի դուքս — Հմայակ Դանիելյան, Կասիո — Վանյա Հովհաննիսյան, Դեզդեմոնա — Աննա-Մելիք, Էմիլյա — Ասյա Միրզոյան, Ռոդրիգո — Գուրգեն Ջանոյան, Լոդովիկո — Աշոտ Միրզոյան, Մոնտանո — Հ. Գևորգյան, Ա. սենատոր — Գ. Հովսեփյան, Բ. սենատոր — Արշակ Արշակունի (Հարությունյան), Ա. համբավաբեր — Ս. Առաքելյան, Բ. համբավաբեր — Հ. Դավթյան:

Ռուբինյան Ղարաբաղ, № 166:

Հուլիսի 25, 27. — *Ախալցխայի թատրոնում, Հ. Աբեղյանի (Օթելլո) մասնակցությամբ, Թիֆլիսի թատրոնի դերասանների հետ:*

ԳԱԹ, Ախալցխայի թատրոնի ֆոնդ:

Օգոստոսի 6. — *Կահիրեի թատրոն Մաժիստիկում, Պոլ Բուրժեի «Միսս Նելլի» դրամայի 4-րդ գործողության փոխարեն:*

***Օթելլո — Խորեն Նորիկյան,** Յագո — Ինիկ Թումանյան (Թոմանյան), Դեզդեմոնա — Արաքսի (Վարդյան-Օհանյան):*

ԳԱԹ, Ա. Օհանյանի ֆոնդ:

Հոկտեմբեր. — *Ֆիլիպեում, փարիզահայ դերասաններ Տ. Նշանյանը (Օթելլո) և Ս. Նշանյանը (Դեզդեմոնա), Գեղարվեստասիրաց թատերախմբի հետ:*

(Հանդիսատեսների թվում է եղել նաև բուլղարական մեծ դերասան Կրիստյու Սարաֆովը, ի պատիվ որի, Նշանյանը Օթելլոյի վերջին բառերն արտասանել է բուլղարերեն՝ «Սրս ցելուֆքի ուպի ֆամաս, սրս ցելուֆքի ումիրամ աս» (Համբուրելով սիրեցի քեզ, համբուրելով էլ կմեռնեմ):

ԳԱԹ, Տ. Նշանյանի ֆոնդ:

Հոկտեմբերի 24. — *Սուլթանաբադում (այժմ՝ Արաք, Իրան), Մանվել Մարությանի (Օթելլո) ղեկավարությամբ դերասանական խումբը (թարգմ. Հ. Մասեհյան):*

Կասիո — Գ. Գոչունյան, Յագո — Վ. Ներսիսյան, Դեզդեմոնա — Հ. Մնացականյան, Էմիլյա — Լորետտա Մարության:

Ալիք, № 29, 30:

— Բաղդադում, Մ. Մարությանի (Օթելլո) ղեկավարությամբ խումբը:

ԳԱԹ, Մ. Մարությանի Ֆոնդ:

Նոյեմբերի 8. — *Ստեփանակերտի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ*

Խորհրդային Ղարաբաղ, 12 նոյեմբերի:

1934

Հունվարի 11. — *Թեհրանի Թատրոն Պալասում, Իրանի «Ներ-օ-խորշիդ Սուրխ» կազմակերպության Հայկական մասնաճյուղի (նախագահ՝ Մուրիսամ Միրզայան) հրավերով Թեհրան ժամանած Վահրամ Փափազյանը (Օթելլո) տեղի դերասանների հետ, իր ղեկավարությամբ (թարգմ. Ս. Սուլխանյան):*

Բրաբանցիո — Սեյան, Կասիո — Մանար (Քրիստափոր Մանարյան), Յագո — Հրանտ Ստեփանյան, Դեզդեմոնա — Մարթա Դավթյան, Էմիլյա — Ժենյա Մանար:

Հունվարի 19. — *Կրկնվել է աշակերտության համար:*

Ալիք, № 135, 136:

Ապրիլի 7. — *Երևանի Կարմիր Բանակի տանը (նախկին՝ Ջանփոլադյանի թատրոն, այժմ՝ քանդված), Առաջին պետթատրոնի դերասանական խումբը Ա. Բուրջալյանի ղեկավարությամբ, վերականգնել է Գուրգեն Գասպարեյանը (Ռոդրիգո):*

Օթելլո — Գուրգեն Ջանիբեկյան *(Տեր-Ն[illegible]յան), Վենետիկի դուքս և Լոդովիկո — Օրի Բունիաթյան, Բրաբանցիո — Լ. Մարյան, Կասիո — Հով. Ավագյան, Յագո — Միք. Մանվելյան, Դեզդեմոնա — Ա. Ոսկանյան, Էմիլյա — Հայկուհի Գարագաշ, Մոնտանո — Վ. Դասոյան, Գրացիանո — Հենրի Ասլանյան, Մոնտանո — Վ. Մարգունի, Ա. սպա — Սիմոնոս Հովհաննիսյան, Բ. սպա — Նորայր Գևորգյան:*

Խորհրդային Հայաստան, № 99:

Ապրիլի 28. — *Ստեփանակերտի Գորկու (այժմ՝ Փափազյանի) անվան պետթատրոնում, ղեկավարությունը՝ Կարո Ալվարյանի (Յագո), նկարիչ՝ Մանուկզադե (Ալեքսանդր Դաշտոյան — Բրաբանցիո):*

Օթելլո — Արշակ Արշակունի *(Հարությունյան), Կասիո — Վ. Հովհաննիսյան, Ռոդրիգո — Գ. Ջանոյան, Դեզդեմոնա — Թամար Մելքումյան, Էմիլյա — Ասյա Միրզոյան:*

Խորհրդային Ղարաբաղ, № 102:

— Նոր Ջուղայում, Մ. Մարությանի (Օթելլո) ղեկավարությամբ, Սուլթանաբադի խմբով:

Ալիք, № 159:

Մայիսի 15. — *Լենինականի Կարմիր Բանակի տանը, Երևանի պետթատրոնի խումբը Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Կասիո — Հ. Ավագյան, Յագո — Մ. Մանվելյան, Բրաբանցիո — Լ. Մարյան, Լոդովիկո — Օ. Բունիաթյան, Ռոդրիգո — Գ. Գաբրիելյան, Մոնտանո — Վ. Դասոյան, Գրացիանո — Գ. Ասլանյան, Դեզդեմոնա — Ա. Ոսկանյան, Էմիլյա — Հ. Գարագաշ:

Բանվոր, № 109, 112:

Նույն խմբով ու փոփոխություններով՝

Հունիսի 6. — *Վաղարշապատի (Էջմիածին) Կարմիր հեծելազորի մարտիկների համար և Քաղաքային ակումբում: Յագո — Ա. Արմենյան:*

Հունիսի 13—14. — *Ղամարլուում (այժմ՝ Արտաշատ) և շրջանում, Ղամարլուի կոլխոզային թատրոնի խմբի հետ: Յագո — Ա. Արմենյան:*

Հունիսի 15. — *Տաշքենդի Հայկական պետթատրոնում, Հ. Աբելյանի (Օթելլո) մասնակցությամբ, բեմադրությունը՝ Գուրգեն Թավրիզյանի (Յագո), նկարիչ՝ Ռուբեն Կարապետյան:*

Վենետիկի դուքս — Ալ. Խաչյան, Բրաբանցիո — Լազր Կամովաս (Աստվածատրյան), Կասիո — Լևոն Աբրահամյան, Դեզդեմոնա — Հրանուշ Բաբաջանյան, Էմիլյա — Մանյա Թավրիզյան, Մոնտանո — Հմայակ Դանիելյան, Ռոդրիգո — Գուրգեն Հայրապետյան, Գրացիանո — Իսրայել Դադյան, Լոդովիկո — Վարդգես Սարաջյան:

Լևոն Աբրահամյանի հաղորդումը:

Հունիսի 22. — *Այգեստանի կոլխոզում, Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ խումբը, նաև հետևյալ վայրերում՝*

Հունիսի 29. — *Գյոդակլու գյուղում:*

Հուլիսի 2. — *Բեգջանլու գյուղում:*

Հուլիսի 4. — *Ղամարլուի ցեմենտի գործարանի բանվորական ակումբում:*

Հուլիսի 5. — *Դավալու գյուղում:*

Հուլիսի 6. — *Նախիջևանի երկաթուղային կայարանի ակումբում:*

Հուլիսի 8. — *Նախիջևանի պրոֆմիությունի թատրոնում:*

Հուլիսի 11. — *Ղարաքիլիսայի պետթատրոնում, Հ. Աբելյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

(Յագո — Մ. Սանամյան, Դեզդեմոնա — Ա. Սանամյան, Էմիլյա — Ա. Խուդանյան):

Սոցիալիստական արշավ, № 55:

Օգոստոսի 3, 4. — *Ստեփանավանում, Գ. Ջանիբեկյանը (Օթելլո) տեղի շրջանային թատրոնի դերասանների հետ: Յագո — Ա. Արմենյան:*

Օգոստոսի 7, 8. — *Դիլիջանում, Գ. Ջանիբեկյանը (Օթելլո) տեղի թատրոնի դերասանների հետ: Յագո — Աչ-Մաթ (Մաթևոսյան):*

Օգոստոսի 11. — *Ղարաքիլիսայում, Գ. Ջանիբեկյանը (Օթելլո) տեղի թատրոնի դերասանների հետ: Յագո — Ադրիկ Սարգսյան:*

Օգոստոսի 23. — *Մանեսում (Ալավերդու շրջ.), Գ. Ջանիբեկյանը (Օթելլո) Ստեփանավանի թատրոնի դերասանների հետ: Յագո — Ա. Արմենյան:*

Օգոստոսի 25. — *Ալավերդում, Գ. Ջանիբեկյանը (Օթելլո), նախորդ խմբի հետ:*

Օգոստոսի 27. — *Շամլուղում (Ալավերդու շրջ.), Գ. Ջանիբեկյանը (Օթելլո), նույն խմբով:*

Սեպտեմբերի 5. — *Ղամարլուի թատրոնում, Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) մասնակցությամբ: Յագո — Ա. Արմենյան:*

Կասիո — Կոստանդին Ղարիբյան, Դեզդեմոնա — Լյուսի Թառայան, Էմիլյա — Արուս Պապյան, Բիանկա — Ս. Աքուլյան:

Սեպտեմբերի 24. — *Ախալցխայում, Թիֆլիսի Հայկական պետթատրոնի դերասանական խումբը, Ա. Քաջվորյանի ղեկավարությամբ:*

Օթելլո — Աշոտ Քաջվորյան:

ԳԱԹ, Ախալցխայի թատրոնի ֆոնդ:

Հոկտեմբերի 4. — *Ստեփանավանում, Հ. Աբելյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Նոյեմբերի 27, 28. — *Ղամարլուում, Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ խումբը: Յագո — Օրի Բունիաթյան:*

Դեկտեմբերի 1, 2. — *Արտաշատի և Դվինի աշխատավորության համար, նույն խումբը:*

Դեկտեմբերի 29—31. — *Աղբաշ, Աղամզալու, Ջիկդամլու գյուղերի աշխատավորության համար, նույն խումբը:*

ԳԱԹ, Գ. Ջանիբեկյանի ֆոնդ:

1935

Հունվարի 6, 7. — *Ղամարլուում, Գ. Ջանիբեկյանը (Օթելլո) տեղի թատրոնի դերասանների հետ: Յագո — Յոլակ Նիկողոսյան:*

Հունվարի 13. — *Հալեպի «Տիգրիս» թատերախումբը, հօգուտ տիգրանակերտցի աղքատ ուսանողների:*

Թ. Թորանյան, Սուրիահայ թատրոնը և Բարսեղ Աբովյանի հուշերը, Բեյրութ, 1973, էջ 170:

Փետրվարի 14. — *Ղամարլուի շրջանի Գետազատ գյուղում, Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ խումբը: Ցագո — Ց. Նիկողոսյան:*

Փետրվարի 15. — *Ղամարլուի շրջանի Զոհրաբլու գյուղում, նույն խումբը:*

Փետրվարի 20. — *Աչտարակում, Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ խումբը: Ցագո — Օրի Բունիաթյան:*

Հուլիսի 17. — *Երևանի օպերայի և բալետի պետթատրոնում (այժմյան՝ Ստանիսլավսկու անվ. ռուսական թատրոն), Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ դերասանական խումբը: Ցագո — Օրի Բունիաթյան:*

Օ. Բունիաթյանի հաղորդումը:

Հուլիսի 24. — *Ալավերդու թատրոնում, Գ. Ջանիբեկյանը (Օթելլո) տեղի թատրոնի դերասանների հետ: Ցագո — Ա. Արմենյան, Դեզդեմոնա — Ա. Ոսկանյան:*

ԳԱԹ, Ա. Ոսկանյանի ֆոնդ:

Հուլիսի 29. — *Շուլավերում (Շահումյան քաղաք), նույն խումբը:*

ԳԱԹ, Ա. Ոսկանյանի ֆոնդ:

Օգոստոս. — *Երևանի Առաջին պետթատրոնի հյուրախաղերը, Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ — Ղափանի, Գորիսի, Սիսիանի, Աղիզբեկովի (այժմ՝ Վայք), Միկոյանի (Եղեգնաձոր), Մարտունու, Նոր Բայազետի (Գավառ) շրջաններում:*

Կասիո — Հ. Ավագյան, Ցագո — Մ. Ջանան, Դեզդեմոնա — Սյուզան Գարագաշ, Էմիլյա — Անահիտ Մկրտումյան, Բրաբանցիո և Մոնտանո — Լ. Մարյան, Ռոդրիգո — Վ. Դասոյան, Լոդովիկո — Մուրադ Կոստանյան:

Խորհրդային արվեստ, № 17, էջ 10:

Սեպտեմբերի 23. — *Կիրովականում, Հ. Աբելյանի վերջին ելույթն Օթելլոյի դերում այդ թատրոնում:*

Նոյեմբերի 17. — *Սենթ Անտուանի (Մարսելի արվարձան) Ռութ Նասիոնալ սրահում, ՀՕԿ-ի (Հայ օգնության կոմիտե) «Շիրվանզադե» թատերախումբը, Թրագոշի (Հարություն Թրագոշյան) բեմադրությամբ:*

Օթելլո — Թրագոշ:

Ջանդու, № 22:

Դեկտեմբերի 19. — *Աբաղանի Հայոց դպրոցի սրահում, Մ. Մարությանը (Օթելլո) տեղի թատերական խմբի հետ:*

Վենետիկի դուքս — Հայկ Ադամյան, Բրաբանցիո — Մաթոսաղա, Կասիո — Ներսես Շաղզոյան, Ցագո — Հովհաննես Մուրադյան, Լոդովիկո — Խաչիկ Հովնանյան, Ռոդրիգո — Մ. Գասպարյան, Մոնտանո — Մինաս Մանուկյան, Դեզդեմոնա — Հասմիկ Մուրադյան, Էմիլյա — Արմենուհի Խաչատրյան:

Ալիք, № 132, 135:

1936

Փետրվարի 28. — *Սուխումի հայկական թատրոնում, Հմայակ Շահենի (Բրաբանցիո) բեմադրությամբ:*

Օթելլո — Մաթևոս Սանամյան, Վենետիկի դուքս — Վ. Նիկողոսյան, Կասիո — Բորման, Ցագո — Օննիկ Վարդանյան, Մոնտանո — Հմայակ Դանիելյան, Ռոդրիգո — Սիմոն Ալբերտյան, Լոդովիկո — Արտո, Դեզդեմոնա — Անահիտ Սանամյան, Էմիլյա — Ժաննա (Թովմասյան):

ԳԱԹ, Մ. Սանամյանի ֆոնդ:

Մարտի 12. — *Ահվազի Հայոց դպրոցի սրահում, Մ. Մարությանը (Օթելլո) Աբաղանի խմբով:*

Ալիք, № 167:

Մայիսի 3. — *Սուխումի հայկական թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Վենետիկի դուքս — Վ. Նիկողոսյան, Բրաբանցիո — Լևոն Բախչինյան, Կասիո — Կարապետ Ջանանյան, Ցագո — Սամսոն Սարգարյան, Լոդովիկո — Վարդան Տրդատյան, Ռոդրիգո — Սիմոն Ալբերտյան, Մոնտանո — Արամ Աստրյան, Ա. սենատոր — Պավլուշա Թադևոսյան, Դեզդեմոնա — Մարինե Հակոբյան, Էմիլյա — Էլզա Շահեն:

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 3149:

Հունիսի 17. — *Թիֆլիսի պետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ, բեմադրությունը՝ Հարությունի (Արտեմ) Բերոյանի (Ցագո):*

Վենետիկի դուքս — Մնացական Մարությունի, Բրաբանցիո — Լևոն Ալավերդյան, Կասիո — Վ. Գալստյան, Ռոդրիգո — Հենրի Ասլանյան, Մոնտանո — Տաճատ Վարդազարյան, Լոդովիկո — Ա. Քաջվորյան, Գրացիանո և Բ. սենատոր — Գ. Բաղայան, Ա. մունետիկ — Լ. Բաբայան, Ա. սենատոր — Անտոն Պարոնբեկյան, Բ. մունետիկ — Հայկ Ռումիկյան, Դեզդեմոնա — Մ. Մոմոյան, Էմիլյա — Ա. Հակոբյան:

Գրոնտար, № 148:

1937

Հունվարի 21. — *Թեհրանի Դավթյան դպրոցում, Մ. Մարությանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Վենետիկի դուքս — Հարրի, Բրաբանցիո և Լոդովիկո — Բագրատ Ավագյան, Կասիո — Հրանտ Սրվանձտյան, Ցագո — Ռուբեն Աթայան, Մոնտանո — Սիրաք Բեդվին, Ռոդրիգո — Հովսեփ Հարությունյան, Դեզդեմոնա — Սոֆիկ Հովհաննիսյան, (Էմիլյա — Ժենյա Մանար):

Ալիք, № 304:

Հուլիսի 8. — *Նախիջևանում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի հյուրախաղերը, Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Բրաբանցիո — Լ. Մարյան, Կասիո — Հ. Ավագյան, Ցագո — Հայկ Բեյլերյան, Լոդովիկո — Վ. Դաստյան, Ռոդրիգո — Գ. Աֆրիկյան, Դեզդեմոնա — Ս. Գարագաշ, Էմիլյա — Ա. Մկրտումյան:

Նարդ պատիրոս (Արևելքի դուռը), № 158:

Հուլիս. — *Նույն խումբը Գորիսում և Կապանում:*

— Կալկաթայի Հայկական Մարդասիրական ճեմարանի սրահում, Կոստանյան դերասանական ընտանիքը տեղի թատերասերների խմբի հետ:

Օթելլո — Միք. Կոստանյան, Վենետիկի դուքս — Հայկ Սարոյան, Բրաբանցիո և Ցագո — Վոլոդյա Կոստանյան, Կասիո — Ջեբեդիա Հանանյան, Ռոդրիգո — Ա. Մկրտչյան (Անդրանիկ Սարյան), Մոնտանո — Ջ. Գրիգորի (Հովհաննես Գրիգորյան), Լոդովիկո — Օշին Սուրենյան, Նավաստի — Աղանուր Հարությունյան, Սենատոր — Ամովս Աստուր (Լոնդոն), Ջինվոր — Ղազար Ղազարյան:

Անդրանիկ Սարյանի հաղորդումը:

1938

Փետրվարի 20. — *Կահիրեի էզպեքիեի թատրոնում, Մ. Մարությանը (Օթելլո) տեղի դերասանների հետ:*

Բրաբանցիո — Սեպուհ Շալճյան, Կասիո — Բյուզանդ Ջեքիճյան (Կռանյան), Ցագո — Վահրամ Գալփազյան, Դեզդեմոնա — Ռոզա Մարությունի, Էմիլյա — Արաքսի Օհանյան: Մասնակցել են նաև՝ Աստուր Օհանյանը, Միքայել Միքայելյանը, Կյուրեղյանը:

Աքաքս, № 10, 12:

Մայիսի 6. — *Ալեքսանդրիայի Ալհամպրա թատրոնում, նույն խումբը:*

Հուսաքեր, մայիսի 6:

— Աթենքում, Մ. Մարությանը (Օթելլո) տեղի «Արտավազդ» թատերախմբի հետ: Դեզդեմոնա — Ռոզա Մարության: Մասնակցել է նաև՝ Սողոմոն Կեմճյանը:

Ավիք, 1994, № 223:

— Վառնայի պետական թատրոնում, Մ. Մարությանի (Օթելլո) բեմադրությամբ:

Դերասան թատերագիր Մ. Մարության, իր բեմական և գրական գործունեության 50-ամյակի առթիվ, 1918–1968, Թեհրան, 1969, էջ 41:

1939

Հունվարի 25. — *Լենինականի թատրոնում, Արմեն Արմենյանի (Յագո) ստեղծագործական երեկոյին:*
Օթելլո — Գ. Ջանիբեկյան, Դեզդեմոնա — Ա. Ոսկանյան:

Մարտի 26. — *Թեսալոնիկում, Մ. Մարությանը (Օթելլո) և Ռ. Մարությանը (Դեզդեմոնա) տեղի թատերասերների հետ:*
— Աթենքի «Ալիքիսի» թատրոնում, Մարությանները տեղի թատերախմբի հետ:
Բրաբանցիո — Հովհաննես Ջաքրյան, Կասիո — Կարո Գասապյան, Յագո — Նալպանտյան, Էմիլյա — Գասապյան:
— Սալոնիկի «Սպիտակ աչտարակ» թատրոնում, Մարությանները նույն խմբով:

Նավատարդ, 1987, № 53, էջ 19:

— Քսանթիում և Քոմոթինայում, նույն խմբով:

Դերասան թատերագիր Մ. Մարության... Թեհրան, 1969, էջ 53:

Հունիսի 4. — *Բուխարեստի Լիգա Քուլթուրալի մեջ (Յորգայի թատրոնում), Մ. և Ռ. Մարությանները տեղական ուժերի հետ:*
Ներկայացվել է նաև՝ Կոնստանցայում:

Մ. Մարության, երբ իջնում է վարագույրը, Բ. Հատոր, Թեհրան, 1972, էջ 222:

Հուլիսի 2. — *Պլովդիվի ազգային թատրոնում, Մ. և Ռ. Մարությանները տեղական ուժերի հետ: Յագո — Գ. Շարոյան:*
Սոֆիայում, Մարությանների ներկայացումը: Յագո — Եդուարդ Զավրաստ:
Վառնայում, Մարությանների ներկայացումը:

Պալքանյան մամուլ, № 426: **Մ. Մարության**, երբ իջնում է վարագույրը, Բ. Հատոր, Թեհրան, 1972, էջ 216:

1940

Հունվարի 17. — *Լենինականի թատրոնում, Գ. Ջանիբեկյանի (Օթելլո), Ա. Արմենյանի (Յագո) և Ս. Գարագաշի (Դեզդեմոնա) մասնակցությամբ:*

Փետրվարի 28. — *Բաքվի Լ. Երամյանի անվան հայպետթատրոնում (թարգմ. Ս. Սուլխանյան), բեմադրությունը՝ Յա. Յարոսլավսկու, ռեժիսոր՝ Ժաամեն, նկարիչ՝ Արսեն Հովհաննիսյան, երաժշտությունը՝ Անտոն Մայիլյանի:*
***Օթելլո — Նորեն Հարությունյան**, Ալեքսանդր Հովհաննիսյան, Բրաբանցիո — Վահան Եսայան, Կասիո — Արո Աղաբեկյան, Յագո — Արտաշես Արևշատյան, Ռոդրիգո — Աղասի Բաղայան, Մոնտանո — Աշոտ Ղազարյան, Դեզդեմոնա — Ժաամեն, Էմիլյա — Նվարդ Սանթուրյան:*

Ներկայացման ծրագիրը:

Ապրիլի 1. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի նոր բեմադրության դերաբաշխում: Դերերից հրաժարվել են՝ Դավիթ Մայանը (Կասիո), Վաղարշ Վաղարշյանը (Յագո):*
Հունիսի 27. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի նոր բեմադրության հասարակական դիտումը:*
Օթելլո — Հ. Ներսիսյան, Վենետիկի դուքս — Վ. Մարգունի, Բրաբանցիո — Լ. Մսրյան, Յագո — Մ. Մանվելյան, Կասիո — Վ. Վարդանյան, Ռոդրիգո — Վ. Բագրատունի, Դեզդեմոնա — Ռուզաննա Վարդանյան, Էմիլյա — Վարյա Մելքումյան, Բիանկա — Մայրանուշ Պարոնիկյան:

Խորհրդային Հայաստան, № 180:

Հուլիսի 10. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում (թարգմ. Հ. Մասեհյան), բեմադրությունը՝ Արմեն Գուլակյանի, նկարիչ՝ Միքայել Արուտչյան, երաժշտությունը՝ Ալ. Սպենդիարյանի:*

Օթելլո — Հրաչյա Ներսիսյան, Գ. Ջանիբեկյան, Վենետիկի դուքս — Տ. Այվազյան, Բրաբանցիո — Հ. Ավագյան, Կասիո — Վ. Վարդանյան, Ռոդրիգո — Գ. Աֆրիկյան, Վաչե Բագրատունի, Մոնտանո — Վ. Դաստյան, Անդրանիկ Նանաջանյան, Լոդովիկո — Գարուշ Խաժակյան, Գրացիանո — Հայկ Բեյլերյան, Սպա — Գ. Աչուղյան, Լևոն Ազարյան, Ա. սուրհանդակ և Նավաստի — Ա. Գրիգորյան, Բ. սուրհանդակ և Սպա — Սահակ Ջառայան, Բ. սենատոր — Ջավեն Օհանյան, Գ. սենատոր — Ստեփան Աջաբխանյան, Դ. սենատոր — Հենրիկ Հովհաննիսյան, Ե. սենատոր — Ժիրայր Միրզախանյան, Քարտուղար սենատում և Սպասավոր — Արսեն Բագրատունի, Պանդոկապետ — Վանյա Դանիելյան, Դեզդեմոնա — Ա. Ոսկանյան, Ռուզաննա Վարդանյան, Ս. Գարագաշ, Էմիլյա — Ա. Մկրտումյան, Վարյա Մելքումյան, Բիանկա — Մայրանուշ Պարոնիկյան, Անահիտ Դատյան (Դատավորյան):

Коммунист, № 162. ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի Ֆոնդ, № 1239:

Օգոստոսի 2. — *Ստեփանակերտի թատրոնում, Բաքվի թատրոնի դերասան Ալ. Հովհաննիսյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Օգոստոսի 11. — *Լենինականի թատրոնում, Վ. Փափազյանի 2000-րդ ելույթը Օթելլոյի դերում:*

Բանվոր, № 183, 192:

Սեպտեմբերի 19. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում: Բիանկա — Անահիտ Դատյան:*

1941

Հունվարի 5. — *Սունդուկյանի անվան թատրոնում, նոր դերակատարներ՝*

Ցագո — Հայկ Բեյլերյան, Դեզդեմոնա — Ամալյա Արազյան:

Հունվարի 12. — *Գրացիանո — Ջավեն Օհանյան, Դեզդեմոնա — Սյուզան Գարագաշ:*

Հունվարի 15. — *Ստեփանակերտի թատրոնում (թարգմ. Հ. Մասեհյան), բեմադրությունը՝ Հրայր Գրիգորյանի, նկարիչ՝ Սուրեն Հովհաննիսյան:*

Օթելլո — Լևոն Սարգսյան, Արշակ Արշակունի, Վենետիկի դոժ — Լ. Հարությունյան, Բրաբանցիո — Հ. Մելոյան, Կասիո — Վ. Հովհաննիսյան, Ցագո — Աշոտ Միրզոյան, Մոնտանո — Լեոնիդ Ռշտունի, Դեզդեմոնա — Արուս Ղազումյան, Էմիլյա — Օվսաննա Սարգիսբեկյան:

Սովետական Ղարաբաղ, № 25:

Փետրվարի 3. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Արուս Ոսկանյանի (Դեզդեմոնա) բեմական գործունեության 30-ամյակին:*

Ապրիլի 19. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի ստուգողական ներկայացումը մոսկովյան հյուրախաղերի համար: Բեմադրությունը՝ Ա. Գուլակյանի, նկարիչներ՝ Միք. Արուտչյան, Պատվական Անանյան, երաժշտությունը՝ Ալ. Սպենդիարյանի, դիրիժոր՝ Գ. Ցաղուբյան:*

Օթելլո — Գ. Ջանիբեկյան, Բրաբանցիո — Հովհ. Ավագյան, Կասիո — Վ. Վարդանյան, Ցագո — Ավ. Ավետիսյան, Ռոդրիգո — Գ. Աֆրիկյան, Դեզդեմոնա — Ա. Ոսկանյան, Էմիլյա — Ա. Մկրտումյան:

Ապրիլի 20. — *Երկրորդ կազմ:*

Օթելլո — Հր. Ներսիսյան, Բրաբանցիո — Լ. Մարյան, Ցագո — Մ. Մանվելյան, Ռոդրիգո — Վ. Բագրատունի, Դեզդեմոնա — Ռ. Վարդանյան, Էմիլյա — Վ. Մելքումյան:

Ապրիլի 22. — *Երրորդ կազմ:*

Օթելլո — Վահրամ Փափազյան, Ցագո — Մ. Մանվելյան, Դեզդեմոնա — Ա. Ոսկանյան: (Վարագույրը բացվել է 16 անգամ):

Սովետական Հայաստան, № 121:

Հունիսի 10, 11, 17. — Մոսկվայի Փոքր թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի հյուրախաղերին, Օթելլոների նույն հերթականությամբ:

Правда, № 164.

(Հունիսի 10-ի և 11-ի մասնակիցները՝ Վենետիկի դոժ — Վ. Մարգունի, Բրաբանցիո — Հ. Ավագյան (10), Լ. Մսրյան (11), Սենատորներ — Վ. Դանիելյան, Զ. Օհանյան, Քոչարյան, Հովհաննիսյան, Ժ. Միրզախանյան, Գրացիանո — Հ. Բեյլերյան, Լոդովիկո — Գ. Խաժակյան, Օթելլո — Գ. Ջանիբեկյան (10), Հ. Ներսիսյան (11), Կասիո — Վ. Վարդանյան, Յագո — Ա. Ավետիսյան, Մոնտանո — Ա. Նանաջանյան, Դեզդեմոնա — Ռ. Վարդանյան (10), Ս. Գարագաշ (11), Էմիլյա — Ա. Մկրտումյան (10), Վ. Մելքումյան (11), Բիանկա — Մ. Պարոնիկյան (10), Եվգինե Սեբար (11), Ազնվականներ Կիպրոսում — Գ. Աշուղյան, Հ. Ջառայան, Հովհաննիսյան, Ասլանյան, Կիպրացուհիներ — Բելլա Իսահակյան, Արուս Մկրտչյան, Մատուրյան, Սպա սենատում — Հովհաննիսյան, Դեսպաններ — Գրիգորյան, Ջառայան, Քարտուղար սենատում — Վ. Բագրատունի, Պանդոկապետ — Վ. Դանիելյան: Հունիսի 17-ին՝ Օթելլո — Վ. Փափազյան:

Программы Московских театров, М., № 24.

Հունիսի 13. — Մոսկվայի Դերասանի տանը, հանդիպում Սունդուկյանի անվան թատրոնի ստեղծագործական կոլեկտիվի հետ: Խոսք Իոսիֆ Ալտմանի:

Օթելլո — Գ. Ջանիբեկյան, Յագո — Ա. Ավետիսյան, Դեզդեմոնա — Ա. Ոսկանյան, Էմիլյա — Ա. Մկրտումյան:

Հուլիսի 13. — Փարիզի Մյություալիթեի թատրոնում, Փարիզահայ դերասանների ընկերակցությունը Արշավիր Շահխաթունու (Օթելլո) բեմադրությամբ:

Վենետիկի դուքս — Ստեփան Պալապանյան, Պրապանցիո և Լուտովիկո — Սարիմ Մաքսուտյան, Կասիո — Ս. Մարինյան, Յագո — Հակոբ Լաթիֆյան, Կրացիանո — Հ. Սարյան, Մոնտանո — Մանուկ Մանպաշ (Պաշբպեոյուքյան), Ռոդրիգո — Գրիգոր-Վահան (Մաքսուտյան), Ա. ծերակուտական — Գ. Պոյաճյան, Բ. ծերակուտական — Կ. Արշակյան, Դեզդեմոնա — Յոլինե Լաթիֆյան, Էմիլյա — Ա. Գրլրճյան, Սուրհանդակ — Ս. Տեմիրճիպաշյան:

ԳԱԹ, Ե. Փափազյանի ֆոնդ:

1942

Հունվարի 22. — Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, Մոսկվայի Գեղարվեստական և Փոքր թատրոնների դերասանների հետ հանդիպման երեկոյին, սունդուկյանցիների կատարմամբ, տեսարան:

Օթելլո — Գ. Ջանիբեկյան, Յագո — Ա. Ավետիսյան, Դեզդեմոնա — Ռ. Վարդանյան:

Коммунист, № 19.

Մարտի 19. — Թեհրանի Հայ ակումբում, Մ. Կոստանյանի ղեկավարությամբ հայ դրամատիկ խումբը:

Օթելլո — Մ. Կոստանյան, Դեզդեմոնա — Մարգո Կոստանյան, (Յագո — Վ. Կոստանյան), Էմիլյա — (Ժենյա Մանար): Մասնակցել են նաև՝ Քր. Մանարը, Ա(ստ) Հովհաննիսյանը, Վահան Թադևոսյանը և ուրիշներ:

Ալիք, 1977, № 204:

Հունիսի 28. — Ամո Խարազյանի անվան պետշրջիկ թատրոնում, բեմադրությունը՝ Աշխեն Խարազյանի, նկարիչ՝ Արթուր Բաբյան:

Օթելլո — Ամո Խարազյան, Բրաբանցիո — Գրիգոր Պողոսյան, Կասիո — Գուրգեն Ջանոյան, Յագո — Անդրանիկ Նանաջանյան, Ռոդրիգո — Աղասի Կլեկչյան, Լոդովիկո — Աշոտ Մկրտչյան, Մոնտանո — Ս. Գրիգորյան, Դեզդեմոնա — Ժենյա Գևորգյան, Էմիլյա — Վ. Բեգլարյան, Բիանկա — Մ. Վարդանյան:

ԳԱԹ, ծրագիր:

Հուլիսի 27. — *Ապարանի շրջանում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը, Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Օգոստոսի 21. — *Նույն խումբը, Վաղարշապատում, սեպտեմբերի 5-ին՝ Արթիկում, 9-ին՝ Մարալիկում, 11-ին՝ Համամլուում, 11-ին՝ Կիրովականում:*

Սովետական Հայաստան, № 181:

Օգոստոս. — *Իջևանի շրջանի գյուղերում, Ա. Խարազյանի անվան պետշրջիկ թատրոնը:*

Օթելլո — Ա. Խարազյան, Դեզդեմոնա — Ժ. Գևորգյան:

Հարվածային կոլխոզնիկ, № 25:

Օգոստոսի 28. — *Լենինականում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը:*

Օթելլո — Հ. Ներսիսյան, Բրաբանցիո — Հ. Ավագյան, Կասիո — Վ. Վարդանյան, Յագո — Ա. Ավետիսյան, Ռոդրիգո — Գ. Գաբրիելյան, Լոդովիկո — Մ. Կոստանյան, Դեզդեմոնա — Ռ. Վարդանյան, Էմիլյա — Հ. Գարագաշ:

Բանվոր, № 166:

— Սունդուկյանի անվան թատրոնում, նոր դերակատարներ՝

Հոկտեմբերի 1. — *Մոնտանո — Սուրեն Ասլանյան:*

Հոկտեմբերի 4. — *Լոդովիկո — Ալեքսանդր Աղամյան:*

Հոկտեմբերի 9. — *Կասիո — Գևորգ Աշուղյան:*

Հոկտեմբերի 20. — *Գրացիանո — Վարդգես Շողերյան:*

Նոյեմբերի 20. — *Գրացիանո — Ժ. Ֆրանգուլյան:*

1943

Ապրիլի 18. — *Փարիզի Մյություալիթեի թատրոնում, Փարիզահայ դերասանների ընկերակցությունը Ա. Շահխաթունու (Օթելլո) բեմադրությամբ:*

Վենետիկի դուքս — Ստեփան Պալապանյան, Պրապանցիո և Լոդովիկո — Ս. Մաքսուտյան, Կասիո — Մանուկ Մանպաշ, Յագո — Հ. Լաթիֆյան, Կրացիանո — Հակոբ Պոյաճյան, Բոտրիկո — Սիրակ Սուրենյան, Մոնտանո — Ավետիս Միսիրյան, Սուրհանդակ — Շ. Սինանյան, Սպա — Ն. Հապեչյան, Տեզդեմոնա — Ց. Լաթիֆյան, Էմիլյա — Ա. Գրլրճյան:

ԳԱԹ, Մ. Մանպաշի ֆոնդ:

Օգոստոսի 10. — *Վաղարշապատում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը:*

Օթելլո — Գ. Ջանիբեկյան, Դեզդեմոնա — Ռ. Վարդանյան: Նույն խումբը՝ օգոստոսի 19-ին — Ղամարլուում, հոկտեմբերի 6-ին — Հոկտեմբերյանում:

ԳԱԹ, Ռ. Վարդանյանի ֆոնդ:

1944

Հունվարի 2. — *Կ. Պոլսի Մայր եկեղեցու վարժարանի սրահում, ցերեկը, դաստիարակչուհի Արմենուհի Զոլաքյանի բեմադրությամբ:*

Կավոռչ, № 3, էջ 4:

Հունվարի 9. — *Թեհրանի նոր թատրոն «Հոնար»-ում, Միքայել Կոստանյանի (Օթելլո) ղեկավարությամբ դերասանական խումբը:*

Կասիո — Վաչե Ատոմյան, Յագո — Վ. Կոստանյան, Դեզդեմոնա — Ամազոն Մելիքյան, Էմիլյա — Լիդա Աթայան, Լոդովիկո և Վենետիկի դուքս — Վահան Թադևոսյան: Մասնակցել են նաև՝ Արմենակ Դոխսանյանը, Ս. Պետխեմյանը, Իշխան Ղարիբյանը:

Վերածնունդ, № 583, 584; **Ալիք**, 1977, № 236:

Ապրիլի 26. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Շեքսպիրի ծննդյան 380-ամյակի առթիվ Համառուսաստանյան և Հայկական թատերական ընկերությունների համատեղ կազմակերպած Համամիութենական 6-րդ փեստիվալի և գիտական նստաշրջանի ներկայացումների շարքից, առաջին կազմ՝*

Օթելլո – Գ. Ջանիբեկյան, Բրաբանցիո – Հ. Ավագյան, Կասիո – Վ. Վարդանյան, Ցագո – Մ. Մանվելյան, Ռոդրիգո – Գ. Աֆրիկյան, Դեզդեմոնա – Ռ. Վարդանյան, Էմիլյա – Ա. Մկրտումյան, Բիանկա – Մայրանուշ Պարոնիկյան:

Ապրիլի 27. – *երկրորդ կազմ՝*

Օթելլո – Հ. Ներսիսյան, Բրաբանցիո – Լ. Մսրյան, Կասիո – Վ. Վարդանյան, Ցագո – Ա. Ավետիսյան, Ռոդրիգո – Վ. Բագրատունի, Դեզդեմոնա – Ռ. Վարդանյան, Էմիլյա – Վ. Մելքումյան:

Комсомолец, № 92.

Օգոստոսի 4. – *Ղամարլուում (Արտաշատ), Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը:*

Օթելլո – Գ. Ջանիբեկյան, Դեզդեմոնա – Ռ. Վարդանյան: Նույն խումբը՝

Օգոստոսի 15. – *Ախալցխայում:*

Օգոստոսի 27. – *Ախալքալաքում:*

ԳԱԹ, Ռ. Վարդանյանի ֆոնդ:

1945

Մարտի 12. – *Թեհրանի Հայ ակումբում, Կոստանյան դերասանական խումբը տեղի դերասանների հետ:*

Արաքս, № 12:

Ապրիլի 21–22. – *Թեհրանի «Նադեր» կինոթատրոնում, Մ. Մարությանի (Օթելլո) բենեֆիսին, իր բեմադրությամբ:*

Ցագո – Ռուբեն Աթայան, Դեզդեմոնա – Ռոզա Մարության, Էմիլյա – Լիդա Աթայան: Մասնակցել են նաև՝ Արմեն Մկրտումյանը, Անուշավան Հարությունյանը, Արտուշ Թերզյանը:

Ալիք, 1977, № 245:

Մայիս. – *Ստեփանակերտի թատրոնում, Բաքվի Հայկական թատրոնի դերասան Խորեն Հարությունյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Սովետական Ղարաբաղ, № 65:

Օգոստոսի 8. – *Քանաքեռում (այժմ՝ Երևանի տարածքում), Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը Վավիկ Վարդանյանի (Կասիո) ղեկավարությամբ:*

Օթելլո – Հ. Ներսիսյան, Ցագո – Ա. Ավետիսյան, Դեզդեմոնա – Ռ. Վարդանյան, Էմիլյա – Վ. Մելքումյան, նույն խումբը՝

Օգոստոսի 14. – *Ստեփանակերտում:*

Օգոստոսի 21. – *Կիրովաբադում (այժմ՝ Գյանջա):*

Օգոստոսի 31. – *Խանլարում:*

Բանվորական Կիրովաբաղ, № 48, 51:

Օգոստոսի երկրորդ կես. – *Լենինականում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Վենետիկի դուքս և Մոնտանո – Վ. Մարգունի, Բրաբանցիո – Լ. Մսրյան, Կասիո – Գևորգ Աչուղյան, Ցագո – Ա. Արմենյան, Օրի Բունիաթյան, Ռոդրիգո – Գ. Խաժակյան, Արարատ Բարսեղյան, Գրացիանո և Բ. սենատոր – Հարություն Հայրապետյան, Ա. սենատոր – Արսեն Բագրատունի, Դեզդեմոնա – Մ. Պարոնիկյան, Էմիլյա – Ա. Մկրտումյան, Բիանկա – Լյուսյա Հովհաննիսյան:

Գրական թերթ, № 24; **ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ:**

Սեպտեմբերի 24. – *Սունդուկյանի անվան թատրոնում, «Օթելլոյի» վերջին բեմադրության 100-րդ ներկայացումը:*

Դեկտեմբերի 27. – *Բաքվի Երամյանի անվան հայկական թատրոնում (թարգմ. Ս. Սուլխանյան), Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ: Բեմադրությունը՝ Ժիրայր Ավետիսյանի, նկարիչ՝ Արսեն Հովհաննիսյան, երաժշտությունը՝ Անտոն Մայիլյանի:*

Վենետիկի դուքս – Բենիկ Մելքումյան, Բրաբանցիո – Վահան Եսայան, Կասիո – Արո Աղաբեկյան, Ցագո – Ալեքսանդր Հովհաննիսյան, Մոնտանո – Աշոտ Ղազարյան, Ռոդրիգո – Աղասի Բաղայան, Լոդովիկո – Աշոտ Առաստամյան, Ա. սենատոր – Նիկիտա Առաստամյան, Բ. սենատոր – Մամիկոն Խեչումյան, Ա. սպա – Ամիր Մկրտչյան, Բ. սպա – Երվանդ Հովհան-

նիայան, Գ. սպա — Ռուբեն Հայրապետյան, Դեզդեմոնա — Սոնյա Արզումանյան, Էմիլյա — Նվարդ Սանթուրյան, Բիանկա — Թագուշ Սահակյան: (Սենատի տեսարանում զինվորի, Կիպրոսի տեսարանում զինվորներին գինի մատուցող խափշիկ մատրոսակի անխոս դերերում — Բ. Հ.):

(Հայրենական պատերազմի ավարտից հետո, Փափազյանի առաջին ելույթն Անդրկովկասում, 8 գիշեր անընդմեջ: Մի ներկայացման ավարտին, ռեժիսոր Ալեքսանդր Տուգանովը — վաղեմի ծանոթ — չոքելով բեմի վրա, խոնարհվել է նրա մեծության առաջ):

Կոմունիստ, № 202: (Իմ անձնական հուշերը — Բ. Հ.):

1946

Հունվարի 19. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Վենետիկի դուքս — Տ. Այվազյան, Բրաբանցիո — Հ. Ավագյան, Կասիո — Վ. Վարդանյան, Ցագո — Ա. Ավետիսյան, Ռոդրիգո — Գ. Աֆրիկյան, Լոդովիկո — Գ. Խաժակյան, Մոնտանո — Վ. Դասոյան, Գրացիանո — Ալ. Ադամյան, Դեզդեմոնա — Ռ. Վարդանյան, Էմիլյա — Ա. Մկրտումյան, Բիանկա — Եվգինե Սերար (Բարսեղյան):

Հունվարի 20. — *Երկրորդ կազմը՝ Կասիո — Գ. Աշուղյան, Բրաբանցիո — Լ. Մսրյան, Էմիլյա — Վ. Մելքումյան:*

Սունդուկյանի անվ. թատրոնի թանգարանի նյութեր:

Մարտի 4. — *Բաքվի Հայկական թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ, հօգուտ սովետական բանակից զորացրված ճակատային դերասանների ընտանիքների:*

ԳԱԹ, Վ. Փափազյանի ֆոնդ:

Ապրիլի 28. — *Ալեքսանդրիայի Լիսե Ֆրանսեի թատրոնում համազգայինի թատերախումբը Մենիկ Վոլթերի (Օթելլո) բեմադրությամբ:*

Վենետիկի դուքս և Մոնտանո — Գ. Թուխմանյան, Բրաբանցիո և Գրացիանո — Մարտիրոս Շատախցյան, Կասիո — Վ. Գասապյան, Ցագո — Ս. Սարգիսյան, Ռոդրիգո — Ե. Հեքիմյան, Լոդովիկո — Վ. Անեմյան, Դեզդեմոնա — Պեատրիս Վոլթեր, Էմիլյա — Մ. Շահպազյան:

Սավառնակ, № 24:

Հունիսի 13. — *Կիրովաբադի (Գյանջա) Հայկական պետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ: Բեմադրությունը՝ Աղասի Ալայանի, նկարիչ՝ Գ. Կարապետյան:*

Վենետիկի դուքս — Ս. Պիճիկյան, Բրաբանցիո — Մ. Սահակյան, Կասիո — Պ. Աբաղյան, Ցագո — Լևոն Աբրահամյան, Մոնտանո — Սուրեն Գևորգյան, Ռոդրիգո — Ա. Փչեմյան, Գրացիանո — Մ. Գրիգորյան, Լոդովիկո — Գ. Բարսումյան, Դեզդեմոնա — Հր. Բաբաջանյան, Էմիլյա — Ա. Ղևոնդյան:

Հուլիսի 5. — *Բաքվի Հայկական թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Նոր դերակատարներ՝ Վենետիկի դուքս — Ռաֆայել Հարությունյան, Լոդովիկո — Լեոնիդ Ռշտունի:

Կոմունիստ, № 130:

Հուլիսի 30. — *Նոր Բայազետում (Գավառ), Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Վենետիկի դուքս և Մոնտանո — Վ. Մարգունի, Բրաբանցիո — Լ. Մսրյան, Ա. սենատոր — Արսեն Բագրատունի, Կասիո — Գ. Աշուղյան, Ցագո — Օ. Բունիաթյան, Ռոդրիգո — Գ. Խաժակյան, Գրացիանո և Բ. սենատոր — Հ. Հայրապետյան, Լոդովիկո — Ա. Բարսեղյան, Դեզդեմոնա — Մ. Պարոնիկյան, Էմիլյա — Ա. Մկրտումյան, Բիանկա — Լ. Հովհաննիսյան:

Բայազետի կոլխոզնիկ, № 37:

Սեպտեմբերի 7. — *Կիրովականի (Վանաձոր) Աբելյանի անվան թատրոնում, բեմադրությունը՝ Առնոլդ Մարտիրոսյանի, նկարիչ՝ Սերգեյ Արուտչյան:*

Օթելլո – Լևոն Սարգսյան, Վենետիկի դուքս – Գեղամ Նալբանդյան, Բրաբանցիո – Ա. Նալչաջյան, Կասիո – Գրիգոր Միրզոյան, Յագո – Ա. Շագաֆյան, Լոդովիկո – Ե. Մելքոնյան, Ռոդրիգո – Պ. Պողոսյան, Մոնտանո – Աշոտ Գևորգյան, Դեզդեմոնա – Մարուսյա Մարտիրոսյան, Էմիլյա – Արուս Խուդանյան, Բիանկա – Ա. Կոռյան:

Коммунист, № 210.

Նոյեմբերի 7. – *Կիրովականի թատրոնում, երկրորդ կազմ՝*
Օթելլո – Արշավիր Վաչյան, *Կասիո – Հայկ Ավագյան, Վոլոդյա Գրիգորյան, Յագո – Հ. Բեյլերյան, Ռոդրիգո – Վ. Աղաջանյան, Դեզդեմոնա – Ա. Նալչաջյան, Արեգ Հարությունյան, Էմիլյա – Աղավնի Հովհաննիսյան, Հասմիկ Նաղաչյան:*

– Հալեպի Սինեմա Օրիենթալում, Մանվել և Ռոզա Մարությանները (Օթելլո, Դեզդեմոնա), տեղի Հայ դրամատիկ ստուդիայի ուժերով:

Մ. Մարության, երբ իշնում է վարագույրը, Բ. Հատոր, Թեհրան, 1972, էջ 250:

1947

Հունվարի 17. – *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրության 150-րդ ներկայացումը:*
Օթելլո – Գ. Ջանիբեկյան, Վենետիկի դուքս – Տ. Այվազյան, Բրաբանցիո – Հովհ. Ավագյան, Կասիո – Գ. Աշուղյան, Յագո – Ա. Ավետիսյան, Ռոդրիգո – Գ. Աֆրիկյան, Մոնտանո – Վ. Դասոյան, Լոդովիկո – Գ. Խաժակյան, Դեզդեմոնա – Ռ. Վարդանյան, Էմիլյա – Ա. Մկրտումյան:

Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

Մարտի 21. – *Բեյրութի Դյունիա թատրոնում, Մ. Մարությանը (Օթելլո) բեյրութահայ դերասանների հետ, իր բեմադրությամբ:*

Վենետիկի դուքս – Բարսեղ Աբովյան, Սենատոր – Դավիթ Էվերեկյան, Բրաբանցիո – Խաչիկ Արարատյան, Կասիո – Ժորժ Շահապյան, Յագո – Տիրան Աճեմյան, Մոնտանո – Նիկողոս Հակոբյան, Դեզդեմոնա – Ռոզա Մարության, Էմիլյա – Լյուսի Թոսպատ:

Քուլիս, 1959, № 289, էջ 15:

Մայիսի 24. – *Մարսելի Մազրնո դահլիճում, Ազգային թատերախումբը Թրագոչի (Օթելլո) բեմադրությամբ:*

ԳԱԹ, Թրագոչի ֆոնդ:

Հուլիսի 14. – *Ախալքալաքում, Թբիլիսիի հայկական թատրոնի դերասանական խումբը Աշոտ Քաջվորյանի (Օթելլո) բեմադրությամբ:*
Վենետիկի դուքս և Կասիո – Հրաչիկ Սիմոնյան, Բրաբանցիո – Հ. Քարտաշյան, Յագո – Լևոն Ֆիդանյան, Մոնտանո – Վահրամ Եղչատյան, Լոդովիկո – Հովսեփ Հովսեփյան, Ռոդրիգո – Հայկ Ումիկյան, Դեզդեմոնա – Մաղիկ Վրույր, Էմիլյա – Մանուշ Աչչյան:
Նույն խումբը ներկայացրել է նաև՝
Հուլիսի 24. – *Մալկայի շրջանի Ղուշչի:*
Հուլիսի 27. – *Մոլոտովկա:*
Հուլիսի 30. – *Բելի կլուչ գյուղերում:*
Օգոստոսի 9. – *Շուլավերում:*

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հուլիսի 28–29. – *Ախալցխայի պետթատրոնում, Թբիլիսիի թատրոնի դերասանական խումբը Արտեմ Լուսինյանի ղեկավարությամբ:*
Օթելլո – Արտեմ Լուսինյան, *Ռոդրիգո – Պահարե:*

ԳԱԹ, Պահարեի ֆոնդ:

Հուլիսի վերջերին. – *Լենինականում, Կիրովականի Աբեյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

Բանվոր, № 145:

1948

Հունվարի 20. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Հունվարի 30. — *Դիլիջանում, Վ. Փափազյանը (Օթելլո) Կիրովականի թատրոնի դերասանների հետ:*

Ապրիլի 30. — *Քանաքեռում, Վ. Փափազյանը (Օթելլո) Սունդուկյանի անվան թատրոնի դերասանների հետ:*

Մայիսի 8. — *Աշտարակում, Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումը: Նույն խումբը՝ մայիսի 17-ին Էջմիածնում:*

Մայիսի 10. — *Արտաշատի Ա. Խարազյանի անվան թատրոնում, Լևոն Սարգսյանի բեմադրությամբ, նկարիչ՝ Մ. Սոսյան:*

Օթելլո — Լևոն Սարգսյան, Վենետիկի դուքս — Սեթ Հովսեփյան, Բրաբանցիո — Զ. Տեր-Հովհաննիսյան, Սենատոր — Արտաշես Վրույր, Կասիո — Խաչիկ Պետրոսյան, Յագո — Քաջիկ Գյուրջյան, Ռոդրիգո և Լոդովիկո — Վ. Մինասյան, Մոնտանո — Ս. Գրիգորյան, Դեզդեմոնա — Ա. Աքուլյան, Էմիլյա — Շուշանիկ Դանիելյան:

Դեզդեմոնա են խաղացել նաև՝ Ս. Մեսրոպյանը և Մագդա Գյուրջյանը:

Մայիս. — *Հոկտեմբերյանում (այժմ՝ Արմավիր), Արտաշատի թատրոնի հյուրախաղերին:*

Հունիսի 9. — *Թբիլիսիի Շահումյանի (այժմ՝ Ադամյանի) անվան հայպետթատրոնում (թարգմ. Հ. Մասեհյան), բեմադրությունը՝ Ֆերդինանդ Բժիկյանի, նկարիչ՝ Ռոբերտ Նալբանդյան, երաժշտությունը՝ Գուրգեն Շահբաղյանի:*

Օթելլո — Արտեմ Լուսինյան, Վենետիկի դուժ — Աշոտ Քաջվորյան, Բրաբանցիո — Լևոն Ալավերդյան, Ա. սենատոր — Վահան Գալստյան, Բ. սենատոր — Մնացական Մարությունյան, Գ. սենատոր — Հրաչիկ Թաթարյան, Կասիո — Ռաֆիկ Պապովյան, Յագո — Դորի Ամիրբեկյան, Ռոդրիգո — Հայկ Ումիկյան, Մոնտանո — Վահրամ Եղչատյան, Գրացիանո — Նոյ Թումանյան, Լոդովիկո — Հովսեփ Հովսեփյան, Մունետիկ — Սարգիս Ջալալյան, Դեզդեմոնա — Էմմա Ստեփանյան, Էմիլյա — Ասյա Ժամկոչյան, Բիանկա — Սաթ. Գրիգորյան:

Սովետական Վրաստան, № 99: (Ներկայացման ծրագիրը):

Նոր դերակատարներ՝

Հունիսի 19. — *Կասիո — Սոս Սոսյան (Ղլիջյան):*

Հուլիսի 10. — *Յագո — Ֆերդինանդ Բժիկյան, Բրաբանցիո — Աշոտ Քաջվորյան, Բ. սենատոր — Հովսեփ Հովսեփյան, Գ. սենատոր — Նոյ Թումանյան, Բիանկա — Սերիկ Շեկոյան, Մունետիկ — Արշակ Ադիլխանյան:*

Հուլիսի 15. — *Մոնտանո — Հ. Հովսեփյան:*

Օգոստոսի 15. — *Բրաբանցիո — Արտեմ Բերոյան, Ռոդրիգո — Լևոն Ֆիդանյան:*

Օգոստոսի 17. — *Էմիլյա — Սերիկ Շեկոյան:*

Հոկտեմբերի 29. — *Բ. սենատոր, Մոնտանո — Հրաչիկ Թաթարյան, Գրացիանո — Լևոն Ֆիդանյան, Լոդովիկո — Սոս Սոսյան:*

Դեկտեմբերի 23. — *Լոդովիկո — Լևոն Ֆիդանյան:*

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հունիսի 12. — *Թբիլիսիի հայպետթատրոնում, Արտեմ Լուսինյանի (Օթելլո) ստեղծագործական երեկոյին:*

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 1163:

Հունիսի 18, 19. — *Թբիլիսիի հայպետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Հուլիսի 11. — *Բորժոմիի թատրոնում, Թբիլիսիի թատրոնի հյուրախաղերին, Օթելլո — Ա. Լուսինյան:*

Վենետիկի դուքս — Վ. Գալստյան, Բրաբանցիո — Ա. Քաջվորյան, Կասիո — Ս. Սոսյան, Յագո — Ֆ. Բժիկյան, Ա. սենատոր և Գրացիանո — Ն. Թումանյան, Բ. սենատոր և Լոդովիկո — Հ. Հովսեփյան, Ռոդրիգո — Հ. Ումիկյան, Մոնտանո — Վ. Եղչատյան, Դեզդեմոնա — Է. Ստեփանյան, Էմիլյա — Ա. Ժամկոչյան, Բիանկա — Ս. Շեկոյան:

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հուլիս. — *Լենինականում, Կիրովականի թատրոնի հյուրախաղերին:*

Բանվոր, № 139, 144:

Հուլիսի 15. — *Աբասթումանում, Թբիլիսիի թատրոնի հյուրախաղերին: Նույնը՝*

Հուլիսի 31. — *Ախալքալաքի մշակույթի տանը:*

Օգոստոսի 1. — *Ախալքալաքի Ալաստան գյուղում:*

Օգոստոսի 1. — *Ստեփանավանի թատրոնում, բեմադրությունը՝ Հովհաննես (Մնիկ) Կարապետյանի, նկարիչ՝ Գ. Ավագյան:*

Օթելլո — Սուրեն Հովհաննիսյան, *Բրաբանցիո — Լևոն Հարությ, Մոնտանո — Ս. Սարգսյան, Կասիո և Ռոդրիգո — Հակոբ Մանուկյան, Յագո — Հովհ. Կարապետյան, Դեզդեմոնա — Օֆելյա Մուքաֆյան, Էմիլյա — Սիրանուշ Խորենյան, Բիանկա — Մ. Սարգսյան:*

Օգոստոսի 6. — *Երկրորդ կազմ՝*

Օթելլո — Լևոն Հարությ*(յունյան), Բրաբանցիո — Սուրեն Հովհաննիսյան:*

ԳԱԹ, Մրցանկ:

Օգոստոս. — *Թբիլիսիի պետթատրոնի հյուրախաղերին՝*

Օգոստոսի 2. — *Բոգդանովկայում:*

Օգոստոսի 3. — *Գանձայում:*

Օգոստոսի 9. — *Խանդոյում:*

Օգոստոսի 15. — *Կարզախում:*

Օգոստոսի 16. — *Աղվարեթում:*

Օգոստոսի 17. — *Գոմոնում:*

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ:

Օգոստոսի վերջերին. — *Երևանի Սունդուկյանի անվան պետթատրոնի գերասանական խումբը Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ, Ախտայում (Հրազդան), Ստեփանավանում, Լենինականում:*

Օթելլո — Գ. Ջանիբեկյան, Դեզդեմոնա — Լյուսյա Հովհաննիսյան:

Բանվոր, № 161, 170:

Սեպտեմբերի 12. — *Էջմիածնի պետթատրոնում, Հրաչյա Ներսիսյանի (Օթելլո) մասնակցությամբ: Բեմադրությունը՝ Հայկ Բեյլերյանի (Յագո), նկարիչ՝ Վասիլ Վարդանյան:*

Բրաբանցիո և Լոդովիկո — Ս. Սարգսյան, Մոնտանո — Աստ Հովհաննիսյան, Ռոդրիգո — Ա. Վարդանյան, Կասիո — Կ. Ղարիբյան, Դեզդեմոնա — Մարուսյա Մարտիրոսյան, Էմիլյա — Վ. Բեգլարյան, Բիանկա — Ա. Հովհաննիսյան:

ԳԱԹ, Մրցանկ:

Սեպտեմբերի 29. — *Նորագավիթում (այժմ՝ Երևանի տարածքում), Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումը:*

Դեկտեմբերի 23, 25. — *Թբիլիսիի հայպետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

1949

Փետրվարի 5. — *Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումները Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Փետրվարի 5. — *Էջմիածնի թատրոնում:*

Փետրվարի 10. — *Ալավերդու թատրոնում:*

Փետրվարի 14. — *Շամլուղ գյուղում:*

Փետրվարի 15. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի 200-րդ ներկայացումը Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ (բեմադրությունը՝ Ա. Գուլակյանի):*

Վենետիկի դուքս — Օրի Բունիաթյան, Բրաբանցիո — Հովհ. Ավագյան, Կասիո — Գ. Աչուղյան, Յագո — Ա. Ավետիսյան, Լոդովիկո — Գ. Խաժակյան, Ռոդրիգո — Գ. Աֆրիկյան, Մոնտանո — Ալ. Ադամյան, Դեզդեմոնա — Ռ. Վարդանյան, Էմիլյա — Վ. Մելքումյան, Բիանկա — Եվգ. Սերար:

Коммунист, № 9

Մարտի 1. — *Լենինականի պետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Վենետիկի դուքս — Մ. Գավրոչ, Բրաբանցիո — Հ. Միանսարյան, Կասիո — Գևորգ Աբաջյան, (Յագո — Հ. Բեյլերյան), Ռոդ-

րիգո — Ալեքսանդր Զոլախյան, Լոդովիկո — Արամայիս Կայծունի, Մոնտանո — Ազատ Շերենց, Գրացիանո — Աշոտ Գևորգյան, Դեզդեմոնա — Նինա Բոխյան, Էմիլյա — Ռոզա Մելյան:

ԳԱԹ, Վ. Թերզիբաշյանի ֆոնդ:

Ապրիլի 30. — *Աբաղանի «Թաշ» թատրոնում, Կոստանյան դերասանական ընտանիքը տեղական ուժերի հետ:*
Օթելլո — Միք. Կոստանյան, Կասիո — Հրայր Խաչատրյան, (Յագո — Վ. Կոստանյան), Մոնտանո — Անդրանիկ Սարյան, Դեզդեմոնա — Մարգո Կոստանյան, Էմիլյա — Նվարդ Մաղաթյան:

Ա. Սարյանի հաղորդումը:

Մայիսի 21. — *Թբիլիսիի պետթատրոնում, Արտեմ Լուսինյանի (Օթելլո) ստեղծագործական երեկոյին, տեսարաններ: Էմիլյա — Ասյա Ժամկոչյան:*
Հունիսի 20. — *Ախալցխայում, Թբիլիսիի թատրոնի դերասանական խումբը: Օթելլո — Ա. Լուսինյան:*

Հուլիսի 4. — *Սունդուկյանի անվան թատրոնում, Պետրոս Ադամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկոյին, տեսարաններ:*
Օթելլո — Գ. Ջանիբեկյան, Դեզդեմոնա — Ռ. Վարդանյան:

Գրական թերթ, № 27:

Հուլիսի 23. — *Մարսելի Սինեմա թատրոն Ալքազարում, «Շանթ» թատերախումբը Մ. Մարուքյանի (Օթելլո) բեմադրությամբ:*
Կասիո — Սերժ Սարգիսյան, Յագո — Գ. Քենդերյան, Դեզդեմոնա — Ռ. Մարուքյան, Էմիլյա — Ե. Վարժապետյան և ուրիշներ:

Հառաջ, № 1310:

Հուլիսի 30. — *Լիոնի Հոլոժի թատրոնում, Մարսելի «Շանթ» թատերախմբի ներկայացումը Մ. Մարուքյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Հառաջ, № 1326:

Օդեսսում. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ, Լենինականում և Կիրովականում:*

1960

Ապրիլի 26. — *Ջանգիբասարում (այժմ՝ Մասիս), Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումը:*

Մայիսի 2. — *Թբիլիսիի թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հրաչյա Ներսիսյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Սովետական Վրաստան, № 40:

Մայիսի 22. — *Բուենոս Այրեսի Փոլիթեամա թատրոնում, Արգենտինահայ ժողովրդական թատերախումբը, Կարո Խաչիկյանի (Օթելլո) բեմադրությամբ:*
Վենետիկի դուքս և Լոդովիկո — Ս. Քյուփեյան, Բրաբանցիո — Միհրան Միրաքյան, Մերակուտական — Հ. Գույումճյան, Կասիո — Վահրամ Օգզայան, Յագո — Սիրակ Սուրենյան (Փարիզից), Ռոդրիգո — Սարգիս Գալֆազյան, Մոնտանո — Արամ Երկաթ, Դեզդեմոնա — Թագուհի Պալապանյան, Էմիլյա — Գ. Ստեփանյան:

ԳԱԹ, Ս. Սուրենյանի ֆոնդ:

Մայիսի 30. — *Իսի լե Մուլինոյի Սինեմա Ալհամբրայում, «Արփի» թատերախումբը, ի պատիվ Գառնիկ Բարիկյանի (Օթելլո), ժիրայր Վարդապետյանի բեմադրությամբ:*
Հունիսի 1. — *Կրկնվել է Արֆուլվիլի Սինեմա Ռեիսում:*

Հառաջ, № 1572:

Հունիսի 2. — *Թբիլիսիի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*
Վենետիկի դուքս — Գրիգոր Արզումանյան, Բրաբանցիո — Լ. Ալավերդյան, Ա. սենատոր — Հ. Թաթարյան, Բ. սենատոր — Մ. Մարուքյան, Կասիո — Ռ. Պապովյան, Յագո — Դ. Ամիրբեկյան, Բիանկա — Ռուզան Մալխասյան:

Այլ դերակատարներ՝

Հունիսի 12. — *Լոդովիկո — Գրիգոր Արզումանյան:*

Հունիսի 17. — *Օթելլո — Ա. Լուսինյան, Դեզդեմոնա — Սերիկ Շեկոյան, Լոդովիկո — Արշակ Ադիլխանյան, Ռոդրիգո — Պահարե, Էմիլյա — Մաղիկ Վրույր, Ա. սենատոր — Անդրանիկ Թադեվոսյան:*

Հուլիսի 25. — *Բրաբանցիո — Ա. Քաջվորյան, Կասիո — Գրիգոր Արզումանյան:*

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հունիսի 23. — *Աղբաչում, Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումը:*

Հուլիսի 28. — *Ախալքալաքի շրջանի Դիլիսի գյուղում, Թբիլիսիի թատրոնի հյուրախաղերին: Կրկնվել է՝*

Հուլիսի 29. — *Ախալքալաքի մշակույթի տանը:*

Հուլիսի 31. — *Բոգդանովկայի շրջանի Փոքր Բանջալլի գյուղում (Բրաբանցիո — Ֆերդինանդ Բժիկյան):*

Օգոստոսի 3. — *Սուլդա գյուղում (Բրաբանցիո — Մնացական Մարության):*

Օգոստոսի 10. — *Ախալցխայի պետթատրոնում:*

Օգոստոսի 11. — *Վալե գյուղում:*

Օգոստոսի 12. — *Մինուբան գյուղում:*

Օգոստոսի 14. — *Մղալթբիլա գյուղում:*

Օգոստոսի 15. — *Մեծ Պամաջ գյուղում:*

ԳԱԹ, Պահարեի ֆոնդ:

Օգոստոսի 10. — *Կիրովականում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը Հրաչյա Ներսիսյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

(Բրաբանցիո — Լ. Մսրյան, Կասիո — Գ. Աչուդյան, Յագո — Գեղամ Հարությունյան, Ռոդրիգո — Գ. Աֆրիկյան, Դեզդեմոնա — Ա. Արազյան, Էմիլյա — Ե. Սերար): Մասնակցել են նաև՝ Թ. Դիլաքյանը, Տիգրան Բախչինյանը, Ավետիք Ջրաղացպանյանը և ուրիշներ:

Օգոստոսի 20. — *Լենինականում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը, նույն կազմով:*

ԳԱԹ, Մրապիի:

Նոյեմբերի 6. — *Բուենոս Այրեսի Փոլիթեամա թատրոնում, Արգենտինահայ դրամատիկ թատերախումբը Մանվել Մարությանի (Օթելլո) բեմադրությամբ:*

Վենետիկի դուքս — Հ. Կոչկարյան, Բրաբանցիո — Ա. Պոզոլյան, Սենատոր — Մ. Սիվրյան, Կասիո — Ե. Պերպերյան, Յագո — Թ. Հովհաննիսյան, Մոնտանո — Պ. Թյությունճյան, Լոդովիկո — Հ. Գունտաքճյան, Ռոդրիգո — Հ. Լևոնյան, Սպա — Գ. Տեր-Խաչատրյան, Դեզդեմոնա — Ռոզա Մարության, Էմիլյա — Վ. Հովհաննիսյան:

ԳԱԹ, Թ. Ամատունու ֆոնդ:

1951

Հունվարի 26–27. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Գրական թերթ, № 6:

Փետրվարի 8. — *Լենինականի (այժմ՝ Գյումրի) թատրոնում: Բեմադրությունը՝ Ալեքսանդր Աբարյանի, նկարիչ՝ Ռոբերտ Նալբանդյան, երաժշտությունը՝ Ա. Ներսիսյանի:*

Օթելլո — Արտավազդ Փաշայան, *Վենետիկի դուքս — Հովհ. Ղազազյան, Բրաբանցիո — Հ. Միանսարյան, Սենատորներ — Մ. Գավրոշ, Աչոտ Գևորգյան, Կասիո — Ստեփան Ալիխանյան, Յագո — Արծրունի Հարությունյան, Գրացիանո — Վահրամ Սվաճյան, Լոդովիկո — Արամ Ռշտունի, Մոնտանո — Կարո Արծրունյան, Ռոդրիգո — Ալեքսան Քոչարյան, Սուրհանդակ — Սերգեյ Զոլախյան, Նավաստի — Ֆրունզիկ Մկրտչյան, Սպա — Գևորգ Աբաջյան, Դեզդեմոնա — Նինա Բոխյան, Էմիլյա — Նվարդ Աբայան:*

Երկրորդ կազմ՝

Օթելլո — Ժան Էլոյան, Յագո — Կարո Արծրունյան, Դեզդեմոնա — Վարդուհի Վարդերեսյան:

Բանվոր, № 26; **ԳԱԹ**, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 2996:

Ապրիլի 29. — *Թբիլիսիի Հայկական թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հրաչյա Ներսիսյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

ԳԱԹ, Թատերական բաժնի ծրագրերի ֆոնդ, № 4033:

Մայիսի 20. — *Թբիլիսիի Հայկական թատրոնում, Արտեմ Լուսինյանի (Օթելլո) ստեղծագործական երեկոյին, տեսարան:*

Մայիսի վերջերին. — *Կապանի Շիրվանզադեի անվան թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հր. Ներսիսյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Հունիսի 20–24. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ, նաև՝ Հուլիսի 2–3-ին և 9, 14-ին:*

Սովետական Հայաստան, № 145:

Հունիսի 28. — *Թբիլիսիի Հայկական թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Ավետ Ավետիսյանի (Յագո) մասնակցությամբ, Օթելլո — Ա. Լուսինյան:*

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հուլիսի 14. — *Ախալցխայում, Վ. Փափազյանը (Օթելլո) Թբիլիսիի թատրոնի դերասանական խմբի հետ:*

Դեզդեմոնա — Էմմա Ստեփանյան, Էմիլյա — Սերիկ Շեկոյան, Բիանկա — Վեներա Հակոբյան:

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Օգոստոսի 5. — *Ախալցխայում, Վ. Փափազյանի մասնակցությամբ, նույն կազմով, նաև՝*

Օգոստոսի 7. — *Գանդիաղիում:*

Հոկտեմբերի 30. — *Բոլնիս Մաշենում:*

Նոյեմբերի 16. — *Թբիլիսիի թատրոնում:*

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ:

Օգոստոսի երկրորդ կես. — *Բաթումում, Թբիլիսիի Հայկական թատրոնի հյուրախաղերին:*

Батумский рабочий, № 158.

Հոկտեմբերի 28. — *Լենինականի թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Ավետ Ավետիսյանի (Յագո) մասնակցությամբ, նաև՝*

Նոյեմբերի 3–4. — *Նույն տեղում, Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Նոյեմբերի 29-ից — Հոկտեմբերի 3-ը. — *Նույն տեղում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

1952

Փետրվարի 28. — *Թբիլիսիի Հայպետթատրոնում, Լենինականի թատրոնի դերասան և ռեժիսոր Արմեն Արմենյանի ծննդյան 80 և բեմական գործունեության 60-ամյակների առթիվ ստեղծագործական երեկոյին, տեսարաններ 3-րդ գործողությունից:*

Օթելլո — Ա. Լուսինյան, Յագո — Արմեն Արմենյան, Կասիո — Ռ. Պապոյան, Դեզդեմոնա — Էմմա Ստեփանյան, Էմիլյա — Ասյա Ժամկոչյան:

ԳԱԹ, Տրագիր:

Մարտի 11. — *Կալկաթայի Հայկազյան Գեղարվեստական միության թատերախումբը, Կոստանյանների մասնակցությամբ:*

Օթելլո — Միք. Կոստանյան, Դեզդեմոնա — Մարգո Կոստանյան:

Նոր Ազդարար, № 2, էջ 48:

Ապրիլի 24–26. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Մայիսի 4. — *Թբիլիսիի Հայկական թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Մայիսի 12. — *Երևան, Հայկական թատերական ընկերությունում Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ստեղծագործական երեկոյին, տեսարաններ:*

Մայիսի 12. — *Թբիլիսիի Հայկական թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հրաչյա Ներսիսյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Մայիսի 29. — *Թբիլիսիի Հայկական թատրոնում, Գուրգեն Ջանիբեկյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Վենետիկի դուքս — Ա. Քաջվորյան, Բրաբանցիո — Լ. Ալավերդյան, Ա. սենատոր — Վ. Գալստյան, Բ. սենատոր — Մ. Մարության, Կասիո — Ռ. Պապովյան, Յագո — Դ. Ամիրբեկյան, Գրացիանո — Ն. Թումանյան, Լոդովիկո — Սոս Սոսյան, Ռոդրիգո — Հ. Ումիկյան, Մոնտանո — Ս. Բաբլոյան, Դեզդեմոնա — Է. Ստեփանյան, Էմիլյա — Ա. Ժամկոչյան, Բիանկա — Ռուզան Մալխասյան:

Սովետական Վրաստան, № 44: ԳԱՔ, Մրապիր:

Հունիսի 7–8. — *Կիրովականի Աբեյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ: Բեմադրությունը՝ Հայկ Բեյլերյանի (Յագո), նկարիչ՝ Գ. Գեոկչակյան:*

Վենետիկի դուքս — Գրիգորի Կոտով, Բրաբանցիո — Աշոտ Գևորգյան, Կասիո — Վոլոդյա Գրիգորյան, Ռոդրիգո — Ալեքսանդր Հովհաննիսյան, Մոնտանո — Հ. Ավագյան, Լոդովիկո — Սուրեն Եղիազարյան, Դեզդեմոնա — Մարուսյա Մարտիրոսյան, Էմիլյա — Հասմիկ Նաղաշյան, Բիանկա — Լենա Փաշինյան:

Երկրորդ կազմ՝

Յագո — Ալեքսանդր Շագաֆյան, Դեզդեմոնա — Աղավնի Հարությունյան:

ԳԱՔ-ի նյութեր:

Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:

Հունիսի 27. — *Թբիլիսիի Հայպետթատրոնում:*

Հուլիսի 22. — *Թբիլիսիի Հայպետթատրոնում:*

Հուլիսի 25. — *Կիրովականի պետթատրոնում:*

Օգոստոսի 4. — *Ախալցխայում, Թբիլիսիի պետթատրոնի դերասանական խմբի հետ:*

Օգոստոս. — *Լենինականի թատրոնում:*

Օգոստոս. — *Բաթումում, Թբիլիսիի պետթատրոնի դերասանական խմբի հետ:*

Սեպտեմբերի 7. — *Գորիսի Վաղարշյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ: Բեմադրությունը՝ Աղասի Ալայանի (Յագո), նկարիչ՝ Վ. Աշտոյան:*

Վենետիկի դուքս — Վաղարշակ Ռուբչուդյան, Բրաբանցիո — Լևոն Հարությունյան), Կասիո — Կ. Ղարիբյան, Ռոդրիգո — Մելիտոս Ղազարյան, Գրացիանո — Ռ. Մուսայելյան, Լոդովիկո — Պարգև Առաքելյան, Դեզդեմոնա — Հրանուշ Բարսեղյան, Էմիլյա — Սիրանուշ Ռորենյան:

Սեպտեմբերի <9>. — *Կապանի Շիրվանզադեի անվան թատրոնում, Վ. Փափազյանը (Օթելլո) Գորիսի Վաղարշյանի անվան թատրոնի դերասանների հետ:*

Նոյեմբերի 8. — *Ախալցխայում, Թբիլիսիի թատրոնի դերասանական խումբը, Կասիո — Հ. Ումիկյան, Յագո — Ա. Բաղիրյան, Դեզդեմոնա — Մ. Մոնոյան:*

Դեկտեմբերի 6. — *Թբիլիսիի Հայպետթատրոնում, Աբրամ Լուսինյանի (Օթելլո) բեմական գործունեության 25-ամյակին նվիրված երեկոյին, տեսարաններ:*

ԳԱՔ, Մ. Մոնոյանի ֆոնդ:

Դեկտեմբերի 23. — *Երևանի Կիրովի անվան գործարանի ակումբում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասանների հանդիպումը բանվորների հետ: Տեսարան Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Սովետական Հայաստան, № 303:

1953

Հունվարի 31. — *Լենինականի պետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Փետրվարի 5, 11, 25. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ, նաև ապրիլի 1, 3, 8-ին:*

Սովետական Հայաստան, № 30:

Հունիսի 18. — *Բաքվի 26 Կոմիսարների անվան Մշակույթի պալատում (նախկին Հայկական թատրոն), Թբիլիսիի Շահումյանի անվան թատրոնի հյուրախաղերին: Ներկայացվել է նաև՝*

Հունիսի 21. — *Լոկ Բատանում:*

Հունիսի 22. — *Զաբրատում:*

Հունիսի 23. — *Բաքվի Զերժինսկու անվան զբոսայգու ամառային թատրոնում:*

Հունիսի 29. — *Բինաղադիում:*

Հուլիսի 6. — *Սաբունչիում:*

ԳԱԹ, Հ. Բերոյանի և Գահաբեի ֆոնդեր:

Օգոստոսի 2. — *Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ), Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հրաչյա Ներսիսյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Բրաբանցիո — Գևորգ Գևորգյան, Դեզդեմոնա — Վարդուշ Թամրազյան:

ԳԱԹ-ի նյութեր:

Օգոստոսի վերջերին. — *Ստեփանակերտի պետթատրոնում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հրաչյա Ներսիսյանի (Օթելլո) մասնակցությամբ նաև՝ Մարտակերտում:*

Սովետական Ղարաբաղ, № 100, 105:

Հոկտեմբերի 12, 13. — *Թբիլիսիի Հայպետթատրոնում, Հր. Ներսիսյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Նոյեմբերի 7, 8. — *Ախալցխայի թատրոնում, Թբիլիսիի Հայպետթատրոնի դերասանական խումբը Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

ԳԱԹ, Հ. Բերոյանի ֆոնդ:

1954

Հուլիսի 5. — *Բաքվի Ազիզբեկովի անվան (Հետագայում՝ երաժշտական կոմեդիայի) թատրոնում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի հյուրախաղերին, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Հուլիսի 6. — *Նույն տեղում, Դեզդեմոնա — Ա. Արազյան:*

Հուլիսի 30. — *Լենինականի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ: Յագո — Հայկ Բեյլերյան:*

1955

Հուլիսի 31. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում:*

Օթելլո — Հր. Ներսիսյան, Դեզդեմոնա — Սիրուշ Ավետիսյան:

Յագո — Գեղամ Հարությունյան (առաջին ելույթը):

Օգոստոսի 14. — *Կիրովականի Աբեյյանի անվան թատրոնի բեմադրության քննարկումը: Զեկուցող՝ Ներսես Ոսկանյան:*

Օգոստոսի 15. — *Ստեփանավանի թատրոնում, Սունդուկյանի անվան թատրոնի դերասան Հր. Ներսիսյանը (Օթելլո) Կիրովականի թատրոնի բեմադրության մասնակիցների հետ:*

Սովետական Հայաստան, № 196:

Օգոստոս. — *Խանլարում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի դերասանական խումբը Գ. Ջանիբեկյանի (Օթելլո) ղեկավարությամբ:*

Յագո — Ա. Ավետիսյան, Դեզդեմոնա — Ա. Արազյան:

Կոմունիստ, № 210:

Սեպտեմբերի 14. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրության վերջին՝ 375-րդ ներկայացումը:*

1956

Մարտի 31. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, նոր բեմադրության հեղինակ՝ Լևոն Քալանթար, նկարիչ՝ Կարո Մինասյան, երաժշտությունը՝ Ալ. Սպենդիարյանի:*

Օթելլո — Վահրամ Փափազյան, Վենետիկի դուքս — Արման Կոթիկյան, Բրաբանցիո — Ալ. Ադամյան, Ա., Բ., Գ. սենատորներ — Տիգրան Բախչինյան, Հովակ Գալոյան, Հարությունն Հայրապետյան, Կասիո — Գ. Աչուղյան, Յագո — Դավիթ Մալյան, Ռոդրիգո — Վ. Բագրատունի, Գրացիանո — Աշոտ Մկրտչյան, Մոնտանո — Հովակ Գալոյան, Լոդովիկո — Գրիգոր Ջալիկյան, Նավաստի — Արկադի Հայրապետյան, Դեզդեմոնա — Մետաքսյա Սիմոնյան, Էմիլյա — Սիրան Ալավերդյան, Բիանկա — Սիրուշ Ավետիսյան:

Նոր դերակատարներ՝

Ապրիլի 7. — *Դեզդեմոնա — Մարգո Մուրադյան, Էմիլյա — Վ. Մելքումյան:*

Այլ դերակատարներ՝

Օթելլո — Հրաչյա Ներսիսյան, Վենետիկի դուքս — Սոս Սարգսյան, Գրացիանո — Լեոնիդ Ռշտունի, Մոնտանո — Տիգրան Բախչինյան, Լոդովիկո — Վլադիմիր Աբաջյան, Ռոդրիգո — Գևորգ Ջեպչյան, Բիանկա — Լիդա Սալախյան:

ԳԱԹ, Ծրագիր: Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

Հունիսի 4, 7. — *Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի մասնաճյուղում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումները Հայ գրականության և արվեստի տասնօրյակին:*

Հունիսի 27. — *Մոսկվայում Հայ գրականության և արվեստի տասնօրյակի մասնակիցներից Խորհրդային Միության ժողովրդական արտիստի բարձր կոչման են արժանացել նաև Օթելլոյի դերակատարներ Վահրամ Գամերի Փափազյանը և Հրաչյա Ներսեսի Ներսիսյանը (Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնի դիրիժոր Միքայել Թավրիզյանի և մեներգչուհիներ Գոհար Գասպարյանի ու Տաթևիկ Սազանդարյանի հետ):*

Հունիսի 23, 24. — *Հալեպում, սփյուռքահայ թատրոնի դերասան և ռեժիսոր Պ. Թոմպուլյանը տեղի թատերախմբի հետ:*

***Օթելլո — Գերճ Թոմպուլյան**, Կասիո — Ժորժ Զափարյան, Յագո — Պետրոս Քելեչյան, Դեզդեմոնա — Արփինե Խաչատուրյան, Էմիլյա — Արտեմիս Պարսումյան: Մասնակցել են նաև Կարապետ Եղբայրունին (Գարագաշյան), Արսեն Եսայանը, Ճորճ Կարապետյանը:*

Թ. Թորանյան, Սուրիահայ թատրոնը և Բարսեղ Աբովյանի հուշերը, Բեյրութ, 1973, էջ 106:

Հուլիս. — *Լիոնի Սենթ Անտուան արվարձանի Մարտիկյան սրահում, Թրագոչի (Օթելլո) ղեկավարությամբ դերասանական խումբը:*

1957

Ապրիլի 13. — *Թբիլիսիի Շահումյանի (այժմ՝ Ադամյանի) անվան պետթատրոնի նոր բեմադրությունը՝ ռեժիսոր՝ Ֆերդինանդ Բժիկյան, նկարիչ՝ Ռոբերտ Նալբանդյան, երաժշտությունը՝ Գուրգեն Շահբաղյանի:*

Օթելլո — Արտեմ Լուսինյան, Վենետիկի դուքս — Վ. Գալստյան, Բրաբանցիո — Լ. Ալավերդյան, Ա. սենատոր — Մ. Մարությունյան, Բ. սենատոր — Սերգեյ Բաբլոյան, Գ. սենատոր — Ա. Պարոնբեկյան, Դ. սենատոր — Հ. Թաթարյան, Կասիո — Ռ. Գապովյան, Յագո — Դ. Ամիրբեկյան, Գրացիանո — Նոյ Թումանյան, Լոդովիկո — Սուրեն Եղիազարյան, Ռոդրիգո — Հ. Ումիկյան, Մոնտանո — Վ. Եղշատյան, Դեզդեմոնա — Է. Ստեփանյան, Էմիլյա — Ա. Ժամկոչյան, Բիանկա — Մարիետա Բաբայան, Սպա — Ռ. Գևորգյան, Նավաստի — Ադամ Քոչարյան, Սուրհանդակ — Ա. Ադիլիանյան:

Նոր դերակատարներ՝

Ապրիլի 28. — *Դեզդեմոնա — Արուս Ղարաջյան:*

Հունիսի 27. — *Յագո — Ա. Քաջվորյան, Գրացիանո — Ա. Պարոնբեկյան, Բիանկա — Սեդա Ջանիկյան:*

Հունիսի 30. — *Լոդովիկո — Ժիրայր Զոփիկյան:*

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Հունիսի 30. — *Սուխումի ֆիլհարմոնիայի Ամառային թատրոնում, հայկական, վրացական և արխազական թատերախմբերի կատարմամբ: Ա. և Բ. գործողությունները՝ վրացերեն, Գ. և Դ. գործողությունները՝ հայերեն, Ե. գործողությունը՝ արխազերեն:*

Հայերենում՝ Օթելլո — Ա. Լուսինյան, Կասիո — Ռ. Պապովյան, Յագո — Դ. Ամիրբեկյան, Դեզդեմոնա — Է. Ստեփանյան, Բիանկա — Մ. Բաբայան:

Բանվոր, 1972, № 98:

1958

Փետրվարի կեսերին. — *Կիրովականի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Մարտի 9. — *Ստեփանակերտի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ: Բեմադրությունը՝ Կարո Ալվարյանի, նկարիչ՝ Գրիգոր Մատուրյան:*

Օթելլո — Վ. Փափազյան, Վենետիկի դուքս — Գուրգեն Գրիգորյան, Բրաբանցիո — Հմայակ Դանիելյան, Կասիո — Վանյա Հովհաննիսյան, Յագո — Միքայել Կորգանյան, Մոնտանո — Ռաֆիկ Հարությունյան, Ռոդրիգո — Զինավոր Գևորգյան, Լոդովիկո — Բենիկ Օվչյան, Ա. սենատոր — Սուրեն Համզոյան, Բ. սենատոր — Բուդդան Բաբայան, Սպա — Միքայել Հարությունյան, Դեզդեմոնա — Մարգո Բալասանյան, Էմիլյա — Նինա Հովսեփյան:

Կոմունիստ, № 60:

Հունիսի 23. — *Արտաշատի շրջանի Բաղրամյան գյուղում, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի ներկայացումից տեսարաններ:*

Օթելլո — Հր. Ներսիսյան, Դեզդեմոնա — Մետաքսյա Սիմոնյան:

ԳԱԹ, Մրապետ:

Նոյեմբերի 23. — *Սոֆիայի Գեորգի Դիմիտրով սրահում, Վ. Փափազյանը տեղի «Երևան» Մշակութային միության «Սունդուկյան» թատերախմբի հետ, 3-րդ գործողությունը:*

Օթելլո — Վ. Փափազյան, Կասիո — Բաֆֆի Թոսունյան, Յագո — Ենիկ Քեչյան, Դեզդեմոնա — Վարդուհի Գասպարյան, Էմիլյա — Արուսյակ Պալյան:

Երևան, № 2: ԳԱԹ, Ե. Քեչյանի ֆոնդ:

Դեկտեմբերի 3, 4. — *Պլովդիվի Հայ մշակույթի տանը, Վ. Փափազյանը (Օթելլո) Սոֆիայի «Սունդուկյան» թատերախմբի հետ: Կասիո — Խաչիկ Պալյան:*

ԳԱԹ, Ե. Քեչյանի ֆոնդ:

— *Մոնտեվիդեոյի պետական թատրոնում, Մանվել (Օթելլո) և Ռոզա (Դեզդեմոնա) Մարությանները տեղի դերասանների հետ:*

Դերասան Մ. Մարության, իր բեմական և գրական գործունեության 50-ամյակի առթիվ (1918–1968), Թեհրան, 1969, էջ 64:

Դեկտեմբերի վերջերին. — *Բուխարեստի «Ստեփան Շահումյան» Հայ Մշակութային միության տանը, Վ. Փափազյանը (Օթելլո) տեղի թատերախմբի հետ, 3-րդ գործողությունը:*

Կասիո — Արտաշես Հայրապետյան, Յագո — Տիգրան Կարժարյան, Դեզդեմոնա — Վերժին Գովանյան, Էմիլյա — Աղավնի Քիրփիճյան:

Նոր կյանք, 1959, № 2:

1959

Ապրիլի 23. — *Հայաստանի Գրողների տանը, Շեքսպիրի ծննդյան 395-ամյակին նվիրված երեկոյին, տեսարաններ:*

Օթելլո — Հր. Ներսիսյան, Յագո — Դ. Մալյան, Դեզդեմոնա — Մ. Սիմոնյան:

Ավանգարդ, № 51:

Ապրիլի 25. — *Կիրովականի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Ապրիլի 29. — *Արտաշատի թատրոնում, Վ. Փափազյանը (Օթելլո) Սունդուկյանի անվան թատրոնի դերասանների հետ: Նույն խմբով՝*

Հունիսի 16. — *Հրազդանում:*

Հունիսի 25. — *Հրազդանի ցեմենտի գործարանի ակումբում:*

Հուլիս. — *Օշականում:*

Հուլիսի 23. — *Ապարանում:*

Սեպտեմբերի 16. — *Ոսկեվազում:*

Սեպտեմբերի 24. — *Հոկտեմբերյանում:*

Սեպտեմբերի 25. — *Վեդիում:*

Հոկտեմբերի 8. — *Վերին Արտաշատում:*

Հոկտեմբերի 10. — *Անաստասավանում:*

Հոկտեմբերի 14. — *Վ. Փափազյանի վերջին ելույթը Օթելլոյի դերում — Սունդուկյանի անվան թատրոնում:*

Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

Հուլիսի 4. — *Բուենոս Այրեսի Հայ կեդրոն սրահում, Մ. Մարությանի բեմական գործունեության 40-ամյակի առթիվ երեկոյին, տեսարան 3-րդ գործողությունից: Դեզդեմոնա — Ռ. Մարության:*

Նորություն, № 51:

Նոյեմբերի 22. — *Լենինականի թատրոնում, Վ. Փափազյանի մասնակցությամբ: Այդ օրվա ելույթը համարվել է նրա 4325-րդ Օթելլոն:*

Բանվոր, № 274, 277:

— *Բեյրութում, «Քին» ներկայացման մեջ:*

Օթելլո — Տիրան Աճեմյան:

Բուլիս, 1960, № 329:

1960

Փետրվարի 18. — *Թբիլիսիի Հայպետթատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Նոր դերակատարներ՝

Ա. սենատոր — Կ. Քաղքցյան, Բ. սենատոր — Հ. Թաթարյան, Լոդովիկո — Ժիրայր Զոփիկյան, Մոնտանո — Ջ. Աթաբեկյան, Դեզդեմոնա — Արուս Ղարաջյան, Սպա սենատում — Ռոբերտ Խաչատրյան, Նավաստի — Միքայել Գրիգորյան:

ԳԱԹ, Վ. Գալստյանի ֆոնդ:

Մայիս. — *Լենինականի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Մայիս. — *Ախալքալաքում, Վ. Փափազյանը (Օթելլո) Լենինականի թատրոնի դերասանական խմբի հետ:*

Վենետիկի դուքս — Հովհ. Ղազազյան, Բրաբանցիո — Լևոն Զոհրաբյան, Յագո — Հայկ Բեյլերյան, Լոդովիկո — Լևոն Սարգսյան, Դեզդեմոնա — Նինա Բոխյան, Էմիլյա — Ռիմա Օդաբաշյան:

ԳԱԹ, Վ. Փափազյանի ֆոնդ:

Հունիս. — *Բաքվի 26 Կոմիսարների անվան Մշակույթի պալատում, Վ. Փափազյանը (Օթելլո) Ստեփանակերտի պետթատրոնի դերասանական խմբի հետ:*

Կոմունիստ, № 90:

Հունիսի 30. — *Սուխումի Ֆիլհարմոնիայի Ամառային թատրոնում, Վ. Փափազյանը (Օթելլո) Թբիլիսիի Հայպետթատրոնի դերասանական խմբի հետ: Նույն խմբով՝*

Հուլիս. — *Բաթումում:*

1961

Փետրվար. — *Լենինականի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ՝*

Յագո — Հ. Բեյլերյան, Դեզդեմոնա — Ն. Բոխյան, Էմիլյա — Ռ. Օղաբաչյան:

Երևան, № 54:

Մայիսի 20. — *Արտաշատի թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) բեմադրությամբ ու մասնակցությամբ, նկարիչ՝ Ս. Հովհաննիսյան:*

Բրաբանցիո — Ս. Սարգսյան, Կասիո — Խաչիկ Պետրոսյան, Քաջիկ Գյուրջյան, Լոդովիկո — Ք. Բարսեղյան, Դեզդեմոնա — Մագդա Գյուրջյան, Էմիլյա — Կլարա Ավետիսյան-Մանվելյան:

Նոյեմբերի 26. — *Բեյրութի Գալուստ Կյուլպենկյան սրահում, Պետրոս Ադամյանի մահվան 70-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոյին «Վահրամ Փափազյան» թատերախմբի ուժերով, տեսարաններ:*

Օթելլո — Թորոս Սարգիսյան, Դեզդեմոնա — Սիրվարդ Ֆազյան:

Մեր նշանաբանն է Հառաջ, դեկտեմբերի 3:

1962

Հունվար. — *Կիրովականի Աբեյանի անվան թատրոնում, Վ. Փափազյանի (Օթելլո) մասնակցությամբ:*

Կասիո — Վոլոդյա Գրիգորյան, Յագո — Ալեքսանդր Շագաֆյան, Դեզդեմոնա — Լենա Փաշինյան, Էմիլյա — Հասմիկ Նաղաչյան:

Վ. Գրիգորյանի Հաղորդումը (1988):

Սեպտեմբերի 21, 22. — *Սիսիանում, Վ. Փափազյանի (Օթելլո) կազմած խմբով:*

Բանվոր, № 224:

Հոկտեմբեր. — *Վ. Փափազյանը (Օթելլո) Լենինականի թատրոնի դերասանների հետ: Դեզդեմոնա — Վարդուշ Թամրազյան:*

Սովետական Վրաստան, № 134:

1963

Դեկտեմբերի 27. — *Թեհրանի «Արարատ» սրահում, «Շեքսպիրի անմահ թարգմանիչ Հովհաննես Մասեհյանի մահվան երեսնամյակին» նվիրված հուշ-երեկոյին, 3-րդ գործողությունը:*

Օթելլո — Մանվել Մարության, Կասիո — Էդիկ Ալանյան, Յագո — Հարություն Մինասյան, Դեզդեմոնա — Ռոզա Մարության, Էմիլյա — Շուշիկ Խաչատրյան:

Ալիք, № 282:

1964

Ապրիլի 25. — *Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ հանդիսությանը, Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրությունից 3-րդ գործողությունը:*

Օթելլո — Վ. Փափազյան, Յագո — Ավետ Ավետիսյան, Դեզդեմոնա — Մետաքսյա Սիմոնյան, Էմիլյա — Սիրան Ալավերդյան:

Մայիսի 7, 8. — *Կիրովականի թատրոնում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ հանդիսությունը, սունդուկյանցիների նույն կազմով:*

Մայիսի 13. — *Բաքվի Նարիմանովի շրջանի Շահումյանի անվան Մշակույթի պալատի հայ ժողովրդական թատրոնը, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ: Բեմադրությունը՝ Ալեքսանդր Մարտիրոսյանի:*

Օթելլո — Վարդան Բեգլյան, Կասիո — Ռաֆիկ Վարդանյան, Յագո — Յուրի Պողոսյան, Դեզդեմոնա — Օլգա Ֆանդունց, Էմիլյա — Մարգո Հակոբյան:

Վ. Բեգլյանի հաղորդումը:

Մայիսի 28, 29. — *Երևանի Հայֆիլհարմոնիայի Մեծ (այժմ՝ Ա. Խաչատրյանի անվ.) դահլիճում, Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի առթիվ սունդուկյանցիների նույն կազմով, 3-րդ գործողությունը:*

Սովետական Հայաստան, № 123:

1965

Նոյեմբերի 16. — *Թբիլիսիի Գրիբոյեդովի անվան թատրոնում, Հայկական թատրոնի ներկայացումը: Վահրամ Փափազյանի վերջին ելույթը Օթելլոյի դերում, որը շարունակվել է 57 տարի:*

1966

Գարնանը. — *Վահրամ Փափազյանը (Օթելլո) Արտաշատի թատրոնի դերասանական խմբի հետ՝ Արտաշատում, Նախիջևանում, Եղեգնաձորում, Գորիսում և մերձակա գյուղերում:*

Երեկոյան Երևան, 1988, № 106:

1968

Փետրվար. — *Բաքվի Նարիմանովի շրջանի Շահումյանի անվան Մշակույթի պալատի հայ ժողովրդական թատրոնի խումբը, Ազիզբեկովի անվան թատրոնի դերասան Իսմայիլ Դաղստանլու (Օթելլո) մասնակցությամբ (աղրբեջաներեն):*

Յագո — Յուրի Պողոսյան, Դեզդեմոնա — Օլգա Ֆանդունց:

Կոմունիստ, № 48:

Դեկտեմբերի 7, 8. — *Բեյրութի Գալուստ Կյուլպենկյան սրահում, Պերճ Թոմպուլյանի (Օթելլո) բեմադրությամբ, իր կազմած խմբով:*

Զարթոնք, № 61:

1969

Բասրայում (Իրաք), թատերասերների խումբը ներկայացրել է «Օթելլոն»:

Հայրենիք, № 1720:

Նոյեմբերի 16. — *Երևանի Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում, բեմադրությունը՝ Երվանդ Ղազանչյանի և Խորեն Աբրահամյանի, բեմադրության ղեկավար՝ Հրաչյա Ղափլանյան, նկարիչ՝ Սարգիս Արուտչյան, զգեստները՝ Մ. Լիխնիցկայայի, երաժշտական ձևավորումը՝ Մարտին Վարդազարյանի և Ֆելիքս Արամյանի:*

***Օթելլո — Խորեն Աբրահամյան**, Վենետիկի դուքս — Գուրգեն Հակոբյան, Բրաբանցիո — Գարուշ Խաժակյան, Գրացիանո — Գեղամ Աֆրիկյան, Լոդովիկո — Վահրամ Եղշատյան, Կասիո — Լորենց Առուշանյան, Յագո — Սոս Սարգսյան, Ռոդրիգո — Արծրուն Մանուկյան, Մոնտանո — Շահում Ղազարյան, Դեզդեմոնա — Շաքե Թուխմանյան, Էմիլյա — Լյուսյա Հովհաննիսյան, Բիանկա — Ժենյա Ավետիսյան, Սենատորներ — Գևորգ Աչուղյան, Գևորգ Ասլանյան, Վաչե Բագրատունի, Արսեն Բագրատունի, Ստեփան Աջաբխանյան, Սպա — Սուրեն Ավետիսյան, Համբավաբեր — Վրեժ Հակոբյան, Օթելլոյի ծառա (մավրի անխոս կերպար) — Հարություն Հայրապետյան, Սուրհանդակ — Ալեքսանդր Խաչատրյան:*

Նոր դերակատարներ՝

Դեկտեմբերի 3. — Բիանկա — Գայյա Նովենց:

Հունվարի 22 (1970). — Ռոդրիգո — Վրեժ Հակոբյան, Համբավաբեր — Արմեն Մարությունյան:

Հունվարի 30. — Լոդովիկո — Հովակ Գալոյան:

Փետրվարի 10. — *Բրաբանցիո — Ալեքսանդր Աղամյան:*
Հունվարի 22 *(1971)*. — *Մոնտանո — Ռազմիկ Աբոյան:*
Դեկտեմբերի 20 *(1972)*. — *Բիանկա — Գոհար Գալստյան:*
Մայիսի 11 *(1973)*. — *Լոդովիկո — Ալեքսանդր Աղամյան:*
Հոկտեմբերի 8. — *Բրաբանցիո — Գևորգ Ասլանյան:*
Մարտի 15 *(1974)*. — *Մոնտանո — Նորայր Գևորգյան:*
Հուլիսի 2. — *Սուրհանդակ — Ռուդոլֆ Ղևոնդյան:*

Սունդուկյանի անվ. թատրոնի նյութեր:

1970

Սեպտեմբերի 2. — *Երևանի Արվեստի աշխատողների տանը, Սունդուկյանի անվան թատրոնի բեմդրության քննարկումը: Զեկուցող՝ Ռուբեն Զարյան:*

Գրական թերթ, սեպտեմբերի 25:

1971

Ապրիլի 5. — *Ստամբուլի կեդրոնական Սանուց միության թատերախումբը, Գ. Գապարաճյանի բեմադրությամբ (Հ. Մասեհյանի թարգմանությունն արևմտահայերենի է վերափոխել Թորգոմ Սրապյանը): Պատրաստվել է երկու և կես ամսում, խաղացվել առանց հուշարարի: Նկարիչ՝ Էրոլ Սարաֆյան:*

Օթելլո — Գևորգ Գապարաճյան, *Վենետիկի դուքս — Աբրահամ Ցանբգյան, Բրաբանցիո — Պետրոս Ջիչեքճյան, Սենատորներ — Միսաք Թորոսյան, Հերման Վարիչ, Կասիո — Արա Թորգոմի Սրապյան, Յագո — Թորգոմ Սրապյան, Ռոդրիգո — Լևոն Աղասյան, Դեզդեմոնա — Թամար Ներեֆ (Գևորգի Գապարաճյան), Էմիլյա — Անդա Թորոսյան: Մասնակցել են նաև՝ Պերճ Կազերոլյանը, Շահնուր Ճեյհանը, Հակոբ Իմայհանը, Սարգիս Կյուրլեքը:*

Գալիա:

Սեպտեմբերի 17. — *Մոսկվայի Փոքր թատրոնում, Սունդուկյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

Օթելլո — Ռ. Աբրահամյան, Բրաբանցիո — Գ. Ռաժակյան, Կասիո — Լ. Առուշանյան, Յագո — Ս. Սարգսյան, Ռոդրիգո — Ա. Մանուկյան, Դեզդեմոնա — Շ. Թուխմանյան, Էմիլյա — Լ. Հովհաննիսյան:

Գարուն, 1972, № 1:

1975

Հունվարի 8. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրության վերջին՝ 123-րդ ներկայացումը Ռ. Աբրահամյանի մասնակցությամբ:*

1980

Նոյեմբերի 14. — *Հրազդանի ժողովրդական թատրոնում, բեմադրությունը՝ թատերախմբի ղեկավար, Երևանի Ղափլանյանի անվան թատրոնի դերասան Իշխան Ղարիբյանի, նկարիչ՝ Հ. Գարսևանյան: Բեմադրության քննարկմանը զեկուցումով հանդես է եկել Հրայր Հովակիմյանը:*

Ներկայացման մասնակիցներն են եղել՝

Օթելլո — Մ. Բաղդասյան, *Վենետիկի դուքս — Ժ. Մուրադյան, Կասիո — Վ. Մուրադյան, Յագո — Վ. Դավթյան, Ռոդրիգո — Ս. Կնյազյան, Մոնտանո — Ս. Ռաչատրյան, Լոդովիկո — Գ. Սողոմոնյան, Դեզդեմոնա — Գ. Բաղդասարյան, Էմիլյա — Ռ. Հարությունյան, Բիանկա — Շ. Նազարյան:*

Ի. Ղարիբյանի հաղորդումը: Հ. Հովակիմյան, Հայաստանի ժողովրդական թատրոնների տարեգրություն, Երևան, 1984, էջ 205:

1984

Փետրվարի 18. — *Մոնրեալի Ալեք Մանուկյան վարժարանի Կեոնճյան սրահում, Թեքեյան Մշակութային միության «Հայ բեմ» թատերախումբը (Հ. Մասեհյանի թարգմանությունը արևմտահայերենի վերածված): Բեմադրությունը՝ Պ. Ֆազլյանի, նկարիչ՝ Վահե Էմմիյան, զգեստները՝ Սիրվարդ Ֆազլյանի (Էմիլյա), երաժշտությունը՝ Հայդընի, Կորելլիի, Դեզդեմոնայի երգը՝ Հարութ Ֆազլյանի:*

Օթելլո — Գերմ Ֆազլյան, *Վենետիկի դուքս — Վահան Շաքարյան, Բրաբանցիո — Օննիկ Գալուստյան, Կասիո — Հակոբ Գրլբճյան, Յագո — Աբել Վարդիվառյան, Մոնտանո — Արա Տեմիրճյան, Ռոդրիգո — Հակոբ Թոչիկյան, Լոդովիկո — Բաֆֆի Մաղտեսյան, Գրացիանո — Սարո Թոչիկյան, Դեզդեմոնա — Վարսենիկ Նազոյան, Բիանկա — Լենա Խաչիկյան, Ա. զինվոր — Նորայր Ղարիպյան, Բ. զինվոր — Արտաշես Պոյանյան, Գ. զինվոր և Բրաբանցիոյի Ա. հետևորդ — Ռիչրտ Զաքարյան, Բրաբանցիոյի Բ. հետևորդ — Վարուժան Արթոգան:*

Ապագա, № 427–428: **Բուլիս,** № 895, էջ 24:

1988

Հունվար-փետրվար. — *Մոսկվայի Տագանկայի թատրոնում, Կինեմատոգրաֆիայի Համամիութենական պետական ինստիտուտի հայկական դերասանական կուրսի ներկայացումը, կուրսի ղեկավար և բեմադրող՝ Արմեն Ջիգարխանյան:*

Օթելլո — Արտաշես Ալեքսանյան, *Կասիո — Արթուր Դիլանյան, Յագո — Հայկ Գասպարյան, Դեզդեմոնա — Սուսաննա Մելքոնյան, Էմիլյա — Մարգարիտ Թաթոյան:*

Հայրենիքի ձայն, № 13:

Մայիսի 2. — *Ստամբուլի Հարպիե Քաղաքապետական թատրոնում, «Բուլիս» թատերական հանդեսի հրատարակության 40-ամյակին նվիրված երեկոյին, տեսարաններ:*

Բուլիս, № 993, 994:

1999

Օգոստոսի 7. — *Թբիլիսիի Պ. Աղամյանի անվան հայկական թատրոնում: Բեմադրությունը՝ Արմեն Բայանդուրյանի, նկարիչ՝ Շամիր Տեր-Մինասյան, երաժշտական ձևավորումը՝ Էդո Գրիգ-Արյանի, զգեստները՝ Քեթևան Փալավանդիշվիլու:*

Օթելլո — Ռոման Մաթիաշվիլի, *Վենետիկի դուքս — Ռոբերտ Հովհաննիսյան, Բրաբանցիո — Սուրեն Եղիազարյան, Կասիո — Ֆելիքս Խաչատրյան, Յագո — Սլավա Ստեփանյան, Ռոդրիգո — Գևորգ Թերժանյան, Մոնտանո — Արթուր Խաչոյան, Դեզդեմոնա — Լեյլա Մկրտչյան, Էմիլյա — Ջուլիետա Սաղաթելյան, Բիանկա — Մեսժանա Յաղուբյան:*

Ներկայացման ծրագիրը:

2000

Սեպտեմբերի 3. — *Երևանի Սունդուկյանի անվան թատրոնում, Թբիլիսիի Աղամյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԱԼ. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

ԲԱԼԵՏՆԵՐ

Համլետ

1972, ապրիլի 26. — *Պարադիր Մարկ Մնացականյանի բեմադրությամբ ներկայացվել է Դմիտրի Շոստակովիչի «Համլետ» մեկ գործողությամբ բալետը, դիրիժոր՝ Գասպար Թորիկյան, նկարիչ՝ Բ. Մեսսերեր:*

Համլետ — Ռուդոլֆ Խառատյան, *Կլավդիոս — Էդվարդ Անանյան, Գերտրուդ — Աննա Մարիկյան, Լաերտ — Ալբերտ Անդրեասյան, Օֆելյա — Էլվիրա Մնացականյան, Համլետի հոր ուրվականը — Էդիկ Խաչատրյան:*

Հետագա նոր դերակատարներ՝

Համլետ — Հակոբ Գասպարյան, Սերգեյ Պետրոսյան, *Գերտրուդ — Սոֆիկ Խաչատրյան, Լաերտ — Հովհաննես Խաչիկյան, Օֆելյա — Տատյանա Կասպարովա, Կատարինե Սարյան:*

Коммунист, № 108.

1981, փետրվարի 3. — *Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ստուդիայում, օպերայի և բալետի թատրոնի արտիստ և պարադիր Ռուդոլֆ Խառատյանի լիբրետտոյով ու բեմադրությամբ ներկայացվել է Ցաբլոնսկու, Միլիարյամի և Ուլրիխի երաժշտական թեմաներով գրված մեկ գործողությամբ «Համլետ» բալետը:*

Համլետ — Հայկ Ավագյան, Օֆելյա — Նաղեժդա Խառատյան:

Ռ. Խառատյանի հաղորդումը:

Ռոմեո և Ջուլիետ

1970, մայիսի 31. — *Պարադիր Օ. Վինոգրադովի բեմադրությամբ ներկայացվել է Սերգեյ Պրոկոֆիևի «Ռոմեո և Ջուլիետ» 3 գործողությամբ բալետը, դիրիժոր՝ Հակոբ Ոսկանյան, նկարիչ՝ Վ. Լիվենտալ:*

Ռոմեո — Վիլեն Գալստյան, Ռուդոլֆ Խառատյան, Ջուլիետ — Էլվիրա Մնացականյան, Սոնա Վարդանյան, Տիբալտ — Նորայր Մեհրաբյան, Հովհաննես Դիվանյան, Մերկուտիո — Ալբերտ Անդրեասյան, Հովհաննես Խաչիկյան, Սերգեյ Պետրոսյան, Պարիս — Հակոբ Գասպարյան, Էդվարդ Անանյան, Սինյորա Կապուլետտի — Վիկտորյա Խանամիրյան, Ժասմենա Բաբախանյան, Սինյոր Կապուլետտի — Ալբերտ Միքայելյան, Ս. Ղամբարյան, Սինյոր Մոնտեգյու — Նիկոլայ Շեյան, Վլադիսլավ Անգուրով, Հերցոգ — Վիկտոր Բորիսով, Հայր Լորենցո — Մերուժան Սահակյան, Էդվարդ Հարությունյան:

Սովետական արվեստ, № 12, էջ 34–35:

1986, հունիս. — *Վերականգնվել է Օ. Վինոգրադովի բեմադրությունը:*

Ռոմեո — Ռուդոլֆ Խառատյան, Ջուլիետ — Էլվիրա Մնացականյան: Մասնակցել են նաև՝ Հովհաննես Դիվանյանը, Սերգեյ Պետրոսյանը, Ա. Գասպարյանը, Ա. Հունանյանը և ուրիշներ:

Սովետական Հայաստան, № 160:

2011, մայիսի 29. — *Թատրոնի գլխավոր պարադիր Ռուդոլֆ Խառատյանի բեմադրությամբ ներկայացվել է Ս. Պրոկոֆիևի բալետը, նկարիչ՝ Աստղիկ Ստեփանյան:*

Ռոմեո — Ռուբեն Մուրադյան, Ջուլիետ — Ժակելինա Սարխոշյան, Տիբալտ — Նարեկ Մարտիրոսյան, Մերկուտիո — Արման Բալմանուկյան, Պարիս — Ահարոն Պետրոսյան, Բենվոլիո — Կարեն Մարտիրոսյան, Սինյորա Կապու-

լետտի — Սոնա Առուստամյան, Դայակ — Իրինա Մկրտումյան, Սինյոր Կապուլետտի — Զավեն Հարությունյան, Քաղաքապետ — Հրաչ Հովհաննիսյան, Սինյոր Մոնտեգյու — Վաչագան Բոյախչյան, Հայր Լորենցո — Գարուշ Խունյան:

Երկրորդ-երրորդ կազմը՝

Ռոմեո — Սևակ Ավետիսյան, Ահարոն Պետրոսյան, Ջուլիետ — Սյուզի Փիրումյան, Տիբալտ — Արտակ Հովհաննիսյան, Մերկուտիո — Սերգեյ Սաֆարյան, Գագիկ Բաբեյյան, Պարիս — Արթուր Կարճիկյան, Բենվոլիո — Գագիկ Բաբեյյան, Սինյորա Կապուլետտի — Մերի Վարդանյան, Մարիա Դիվանյան, Դայակ — Մարիաննա Պողոսյան, Սինյոր Կապուլետտի — Հայկ Հարությունյան, Քաղաքապետ — Գարուշ Խունյան, Սինյոր Մոնտեգյու — Գարուշ Խունյան, Հայր Լորենցո — Հրաչ Հովհաննիսյան:

Ջուլիետի ընկերուհիները՝

Տաթևիկ Գրիգորյան, Նելլի Մելքոնյան, Մարինա Բաղդասարյան, Աննա Մելքոնյան, Դիաննա Տվերդոխլեբ, Ալբինա Ղազարյան, Լիլիթ Փալանջյան:

Փողոցային պարուհիներ՝

Տաթևիկ Գրիգորյան, Նելլի Մելքոնյան, Մարինա Բաղդասարյան, Դիաննա Տվերդոխլեբ, Ալբինա Ղազարյան:

Ռ. Խառատյանի հաղորդումը:

Օթելլո

1984, նոյեմբերի 17. — *Պարադիր Ն. Ռիժենկոյի (Ռուսաստան) բեմադրությամբ ներկայացվել է Հենրի Պյորսելի «Օթելլո կամ Մավրի Պավանա» մեկ գործողությամբ բալետը ըստ Խոսե Լիմոնի խորեոգրաֆիայի, դիրիժոր՝ Հակոբ Ոսկանյան, նկարիչ՝ Սարգիս Արուտչյան, զգեստների նկարիչ՝ Անահիտ Արուտչյան:*

Օթելլո — Վիլեն Գալստյան, *Դեզդեմոնա — Էլվիրա Մնացականյան, Յագո — Ս. Աբրահամյան, Էմիլյա — Լ. Գյուրջյան:*

Շեքսպիրյան ներկայացումների համամիութենական փառատոնին «Օթելլոյի» նոր բեմադրության հետ, նույն օրը ներկայացվել են «Համլետ» և «Ռոմեո և Ջուլիետ» բալետները:

Комсомолец, № 265.

1993, հոկտեմբերի 23. — *Թատրոնի գլխավոր պարադիր Վիլեն Գալստյանի բեմադրությամբ ներկայացվել է Լորիս Ճգնավորյանի «Օթելլո» 2 գործողությամբ բալետը, դիրիժոր՝ Օհան Դուրյան, նկարիչ՝ Սարգիս Արուտչյան, զգեստների նկարիչ՝ Նատալյա Պովագո:*

Օթելլո — Հովհաննես Դիվանյան, *Դեզդեմոնա — Յուլիա Ակոպովա, Յագո — Ֆելիքս Գրիգորյան, Էմիլյա — Նադեժդա Դավթյան, Կասիո — Վ. Համբարձումյան, Ռոդրիգո — Վ. Ղազարյան, Բրաբանցիո — Հ. Հովհաննիսյան, Վենետիկի դուքս — Ա. Սմբատյան:*

Երկրորդ կազմ՝

Օթելլո — Ֆելիքս Գրիգորյան, *Դեզդեմոնա — Ե. Յարոշչուկ, Յագո — Ա. Խաչատուրով, Հ. Քաջբերունի, Էմիլյա — Մ. Գյուրջյան, Ելենա Պավլիդի, Կասիո — Զ. Հարությունյան, Ռոդրիգո — Կ. Մուրադյան, Բրաբանցիո — Ա. Սմբատյան:*

Հայաստանի Հանրապետություն, № 125: Ներկայացման ծրագիրը:

1997, օգոստոսի 31. — *Բալետի երեկոյին ներկայացվել է Հ. Պյորսելի «Օթելլո կամ Մավրի Պավանա» բալետը. պարադիր՝ Ն. Ռիժենկո, դիրիժոր՝ Վ. Զարչօղյան:*

Օթելլո — Հովհաննես Դիվանյան, Դեզդեմոնա — Մարիա Դիվանյան, Յագո — Ռ. Տոնոյան, Էմիլյա — Ելենա Պավլիդի:

Ներկայացման ծրագիրը:

2005. — *Ն. Ռիժենկոյի նոր բեմադրությամբ ներկայացվել է Հ. Պյորսելի «Օթելլո կամ Մավրի Պավանա» բալետը: Թեև ներկայացման ծրագրում նշված է, որ «Վարիացիաներ*

Օթելլոյի թեմայով» ենթավերնագիրը չի նշանակում թե խոսքը Շեքսպիրի ողբերգության բեմականացման մասին է», բայց և այնպես, նյութին ընդհանրացված է շեքսպիրյան չորս գլխավոր հերոսների հոգեբանության և գործողությունների մեկնաբանության հիմքի վրա:

Դիրիժոր՝ Վիլեն Զարչօղլյան, նկարիչներ՝ Ս. և Ա. Արուտչյաններ:

Օթելլո — Զավեն Հարությունյան, *Դեզդեմոնա — Ժակելինա Սարխոչյան, Յագո — Ա. Գևորգյան, Էմիլյա — Մարիա Դիվանյան:*

Երկրորդ կազմ՝

Օթելլո — Կ. Մանկալյան, *Դեզդեմոնա — Մարիա Դիվանյան, Յագո — Վ. Խաչատրյան, Էմիլյա — Ռ. Ավագյան, Ի. Մկրտումյան, Ա. Դալլաքյան, Ն. Վարդանյան:*

Ներկայացման ծրագիրը:

ՕՊԵՐԱՆԵՐ

Ռոմեո և Ջուլիետա

1955, հունիսի 19. — *Թատրոնի ռեժիսոր Վավիկ (Անուշավան) Վարդանյանի բեմադրությամբ ներկայացվել է Շաուլ Գունոյի «Ռոմեո և Ջուլիետ» 4 գործողությամբ օպերան: Դիրիժոր՝ Սուրեն Զարեքյան, ռեժիսոր՝ Արաքսյա Անանյան, պարադիր՝ Զարե Մուրադյան, նկարիչ՝ Կարո Մինասյան, խմբավար՝ Կարո Կարապետյան:*

Ռոմեո — Ա. Կովալյով, Գալուստ Գաբրիելյան, Ջուլիետ — Գոհար Գասպարյան, Լյուբով Լազարևա, Մանկլավիկ Ստեփանո — Վիոլետա Վարդանյան, Ելենա Վարդանյան, Արաքսյա Ստեփանյան, Գերտրուդ — Անատոլյա Ղարիբյան, Սեղա Վանիկյան, Տիբալտ — Սերգեյ Բարխուդարյան, Ա. Պերճյան, Բենվոլիո — Գևորգ Իվանյան, Ա. Քեչիչյան, Մերկուտիո — Վահրամ Գրիգորյան, Սերգեյ Գալստյան, Պարիս — Էդվարդ Բաղդասարյան, Գ. Կիրակոսյան, Դուքս — Կարլոս Մարկոսյան, Սերգեյ Շախի-

ջանյան, Ն. Ֆոմին, Գրեգորիո — Գ. Իվանյան, Ս. Կորժենյան, Կապուլետտի — Կ. Մարկոսյան, Ս. Շախիջանյան, Դավիթ Պողոսյան, Հայր Լորան — Նար Հովհաննիսյան, Ս. Շախիջանյան, Կ. Մարկոսյան: Մասնակցել են նաև բալետի արտիստներ:

Սովետական Հայաստան, № 176: Ներկայացման ազդագիրը:

Օթելլո

1942, հունիսի 21. — *Թատրոնի ռեժիսոր Արմեն Գուլակյանի բեմադրությամբ ներկայացվել է Ջ. Վերդիի 4 գործողությամբ «Օթելլո» օպերան: Դիրիժոր՝ Միքայել Թավրիզյան, հարակից ռեժիսոր՝ Գոհարինե Մելքումյան, նկարիչ՝ Աշոտ Միրզոյան, պարադիր՝ Լեոնիդ Լավրովսկի:*

Օթելլո — Վ. Սավելև-Դամուրին, Դեզդեմոնա — Հայկանուշ Դանիելյան, Կասիո — Յա. Դոբրյանսկի, Յագո — Մ. Դենիսով, Էմիլյա — Թամար Շահնազարյան, Զարուհի Դոլուխանյան, Ռոդրիգո — Գևորգ Բաղդասարյան, Լոդովիկո — Կարլոս Մարկոսյան, Ա. Յեսևիչ, Մոնտանո — Ն. Սմորոդին, Ի. Գրեկով, Մունետիկ — Ա. Կասպերովիչ:

Սովետական Հայաստան, № 146, 150:

1944, ապրիլի 29. — *«Օթելլո» ներկայացումով թատրոնը մասնակցել է Շեքսպիրի ծննդյան 380-ամյակին նվիրված Շեքսպիրյան 6-րդ Համամիութենական գիտահետազոտական կոնֆերանսին և թատերական փառատոնին:*

Փառատոնի ծրագիրը:

1959, մարտի 17. — *Ներկայացվել է Ա. Գուլակյանի բեմադրությամբ: Դիրիժոր՝ Յուրի Դավթյան, նկարիչ՝ Աշոտ Միրզոյան, պարադիր՝ Զարե Մուրադյան:*

Օթելլո — Սերգեյ Դանիելյան, *Կասիո — Սերգեյ Բարխուդարյան, Յագո — Միհրան Երկաթ, Դեզդեմոնա — Անժելա Հարությունյան, Էմիլյա — Մարիա Ջմչկյան, Ռոդրիգո — Էդվարդ Բաղդասարյան, Լոդովիկո — Կարլոս Մար-*

կոսյան, Մոնտանո – Հարութիւն Քարաջյան, Մունետիկ – Ա. Կասպերովիչ:

Այլ դերակատարներ՝

Դեզդեմոնա – Գոհար Գասպարյան, Սեդա Քալանթարյան, Էմիլյա – Մարգարիտ Ջալալյան, Կասիո – Ա. Պերճյան, Ռոդրիգո – Գ. Կիրակոսյան, Միրիմ Դավթյան, Լոդովիկո – Վիկտոր Շորոխով, Մոնտանո – Ն. Ֆոմին, Մունետիկ – Արշավիր Կարապետյան:

Սովետական Հայաստան (ամսագիր), № 6, էջ 31–33:

1959, հոկտեմբեր. – *Ռումինահայ երգիչ Դավիթ Հովհաննիսյանի ելույթը Յագոյի դերում:*

1961, հուլիս-օգոստոս. – *Սոչիում, Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի հյուրախաղերին:*

1961, դեկտեմբերի 20. – *Ռումինահայ երգիչ Դավիթ Հովհաննիսյանի ելույթը Յագոյի դերում:*

1962, դեկտեմբերի 1. – *Ռումինահայ երգիչ Կարպիս Զորյանի ելույթը Օթելլոյի դերում:*

1963, հունիսի երկրորդ կես. – *Թբիլիսիի Զ. Պալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնի հյուրախաղերին:*

1968, մարտի 23. – *Սիսյուռքահայ երգչուհի Լուիզա Պոզապալյանի (Փարիզ) ելույթը Դեզդեմոնայի դերում:*

1970, հունվարի 10. – *Հայկական օպերայի 100-ամյակի առթիվ, թատրոնի մենակատար Միհրան Երկաթի ստեղծագործական երեկոյին:*

Օթելլո – Ս. Դանիելյան, Յագո – Մ. Երկաթ, Դեզդեմոնա – Ա. Հարութիւնյան:

Սովետական Հայաստան, № 5:

1970, փետրվարի 20. – *Թատրոնի մենակատար Տ. Լևոնյանի առաջին ելույթը Օթելլոյի դերում:*

***Օթելլո – Տիգրան Լևոնյան**, Կասիո – Ս. Բարխուդարյան, Յագո – Մ. Երկաթ, Դեզդեմոնա – Գոհար Գասպարյան, Էմիլյա – Արաքսյա Ստեփանյան, Ռոդրիգո – Գ. Կիրակոսյան, Լոդովիկո – Բորիս Գրեկով, Մոնտանո – Հարութիւն Քարաջյան, Հերոլդ – Գ. Դավթյան:*

1970, փետրվարի 27. – *Ռումինահայ երգիչ Դավիթ Հովհաննիսյանի ելույթը Յագոյի դերում:*

1970, մայիսի 16. – *Փարիզահայ երգչուհի Աստղիկ Անդրեասյան-Տետեյանի ելույթը Դեզդեմոնայի դերում:*

Սովետական արվեստ, № 7, էջ 60–61:

1970, սեպտեմբերի 24. – *Թատրոնի մենակատար Հարութիւն Քարաջյանի առաջին ելույթը Յագոյի դերում:*

1995, հոկտեմբերի 15. – *Թատրոնի գլխավոր ռեժիսոր Տիգրան Լևոնյանի (Օթելլո) բեմադրությամբ ներկայացվել է Վերդիի «Օթելլո» օպերան (լիբրետտոն՝ Ա. Բոյտոյի): Դիրիժոր՝ Յուրի Դավթյան, պարադիր՝ Վիլեն Գալստյան, նկարիչ՝ Եվգենի Սաֆրոնով, զգեստների նկարիչ՝ Մ. Սարգսյան:*

Դեզդեմոնա – Հասմիկ Հացագործյան, Կասիո – Եղիշե Մանուչարյան, Յագո – Կոստանդին Սիմոնյան, Ռոդրիգո – Ս. Թորոսյան, Լոդովիկո – Վահան Մակվեցյան, Մոնտանո – Միքայել Հովակիմյան, Էմիլյա – Գրիգորյան, Մունետիկ – Է. Մխիթարյան:

Հոկտեմբերի 21. – *Երկրորդ կազմ՝*

***Օթելլո – Ռազմիկ Պապիկյան**, Դեզդեմոնա – Անահիտ Մխիթարյան, Էմիլյա – Ռաիսա Շիրինյան, Լ. Օվչյան, Յագո – Ա. Մուրադյան, Ա. Մարտիրոսյան, Ռոդրիգո – Ռուբեն Կուրեղյան, Լոդովիկո – Ռուբեն Թելունց, Հակոբյան, Վալերի Հարությունյան, Մոնտանո – Գագիկ Շիրինյան:*

Ներկայացման ծրագիրը:

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Համլետ

1926, դեկտեմբերի 23. — *Բաքվի Բունիաթզադեի անվան դրամատիկական թատրոնում (թարգմ. Ջ. Ջաբարլի), առաջին անգամ ադրբեջաներեն՝ արևելյան երանգավորումով: Բեմադրությունը՝ Ալ. Տուգանովի, նկարիչ՝ Ն. Ե. Կուլեշ, արևելյան մոտիվներով երաժշտությունը՝* ***Անտոն Մայիլյանի:***

Գերտրուդ — Ելիզավետա Մելիք-Շահնազարյան:

Շեքսպիրն ադրբեջանական թատրոնում, ալբոմ (ադրբեջաներեն և ռուսերեն), Բաքու, 1964:

1929. — *Թիֆլիսի ադրբեջանական թատրոնում, բեմադրությունը՝ Իբրահիմ Իսֆահանլու (Համլետ):*

Օֆելյա — Նինա Օսիինսկայա (Քնարիկ Բասմաչյան), Գերտրուդ — Նվարդ Ալիխանյան:

Ն. Օսիինսկայայի հաղորդումը:

1932. — *Թիֆլիսի ադրբեջանական թատրոնում, բեմադրությունը՝* ***Արշակ Բուրջալյանի:***

Գրական թերթ, № 9:

Օթելլո

1904, օգոստոսի 22. — *Շուշիի Խանդամիրյանի թատրոնում, առաջին անգամ թուրք-ադրբեջաներեն, հայ դերասանուհիների և ադրբեջանցի թատերասերների մասնակցությամբ (թարգմանիչ և Օթելլոյի դերակատար՝ Հաշիմբեկ Վեզիրով), բեմադրությունը՝* ***Հովհաննես Աբելյանի,*** *իր խմբի զգեստներով:*

Դեզդեմոնա — Արաքս Զարիֆյան, Էմիլիա — Ազնիվ Անդրանիկ *(«Նրանք երկուսն էլ իրենց դերերը լիովին հաջող կատարեցին»):*

Կասպի, № 197.

1910, հոկտեմբերի 29. — *Բաքվի Թաղիևի թատրոնում, Մուսուլմանական «Նիկաթ» լուսավորական ընկերության դերասանական խումբը (թարգմ. Հ. Վեզիրով), բեմադրիչ և Օթելլոյի դերակատար՝ Հյուսեյն Արաբլինսկի (Խալաֆով):*

Դեզդեմոնա — Ելիզավետա Մելիք-Շահնազարյան:

Կասպի, № 247, 249.

1926, դեկտեմբերի 7. — *Թիֆլիսի ադրբեջանական թատրոնում (թարգմ. Գ. Սաբրի), փորձավար՝ Իբրահիմ Իսֆահանլի (Յագո):*

Օթելլո — Վահրամ Փափազյան *(թուրք-ադրբեջաներեն):*

Մաքսակոչ, դեկտեմբերի 7: Ն. Օսիինսկայայի վկայությունը:

1931, մարտ. — *Թիֆլիսի Ռուսթավելու անվան թատրոնում, ադրբեջանական թատրոնի ներկայացումը:*

Օթելլո — Վ. Փափազյան, Դեզդեմոնա — Նինա Օսիինսկայա (Ֆ. Բասմաչյան): *Փափազյանից բացի, Օսիինսկայան խաղացել է նաև Ուլվի Ռաֆաբի (Օթելլո) հետ: Դեզդեմոնայի դերում մինչև 1955-ը հանդես է եկել Կիրովաբադի (Գյանջա) Ջաբարլու անվան ադրբեջանական թատրոնում:*

Նինա Օսիինսկայայի հաղորդումը:

1932, դեկտեմբերի 26. — *Բաքվի Բունիաթզադեի անվան թուրք դեղարվեստական թատրոնում. բեմադրությունը՝ Ս. Մա-*

յորովի, ռեժիսոր՝ Ջ. Ջաբարլի, նկարիչ՝ Ս. Եֆիմենկո, երաժշտությունը՝ Սերգեյ Փանյանի:

Օթելլո — Վ. Փափազյան (թուրք-ադրբեջաներեն), Յագո — Ռզա Աֆզանլի, Դեզդեմոնա — Մարգիա Դավուդովա:

ԳԱԲ, Վ. Փափազյանի ֆոնդ:

1933, նոյեմբեր. — *Շուշիում, Ստեփանակերտի հայպետթատրոնի ներկայացումը:*

Օթելլո — Վ. Փափազյան (տեղացիների խնդրանքով՝ թուրքերեն):

Վանյա Հովհաննիսյանի հաղորդումը:

1935, ապրիլի 21. — *Բաքվի Բունիաթզադեի անվան թատրոնում, հայ և ադրբեջանցի դերասանների մասնակցությամբ:*

Օթելլո — Հովհաննես Աբելյան, Դեզդեմոնա — Ժասմեն (Մարիամ Գրիգորյան — հայերեն), Յագո — Ռզա Աֆզանլի:

Կոմունիստ, ապրիլի 21: Ռ. Աֆզանլու հաղորդումը:

1938, մայիսի 19. — *Երևանի Ջ. Ջաբարլու անվան ադրբեջանական թատրոնում. բեմադրությունը՝ Վաղարշ Վաղարշյանի, ռեժիսոր՝ Բախշի Քալանթարլի, նկարիչ՝ Արմեն Զիլինգարյան, երաժշտությունը՝ Աշոտ Սաթյանի:*

Օթելլո — Իսմայիլ Դաղստանլի, Դեզդեմոնա — Զարիկ Տերյան, Էմիլյա — Աղրիկ Դերձակյան (նույն թատրոնի դերասանուհիներ):

Խորհրդային արվեստ, № 4: Ի. Դաղստանլու հաղորդումը:

1944, ապրիլի 27. — *Երևանի Ջաբարլու անվան ադրբեջանական թատրոնում, Շեքսպիրի ծննդյան 380-ամյակի առթիվ գիտական կոնֆերանսի և թատերական փառատոնի առթիվ. բեմադրությունը՝ Բախշի Քալանթարլու:*

Օթելլո — Ալի Զեյնալով, Դեզդեմոնա — Զարիկ Տերյան, Էմիլյա — Աղրիկ Դերձակյան:

1946, փետրվարի 4–6. — *Երևանի Ջաբարլու անվան ադրբեջանական թատրոնում:*

Օթելլո — Վ. Փափազյան (հայերեն), Կասիո — Գևորգ Աչուղյան (Սունդուկյանի անվան թատրոնից):

Սովետական Հայաստան, № 28:

1953. — *Բաքվի Ազիզբեկովի անվան ադրբեջանական թատրոնում:*

Օթելլո — Վ. Փափազյան (թուրք-ադրբեջաներեն), Յագո — Աղասադրխ Գերայբեյլի:

Շեքսպիրական, Գիրք 4, եր., 1974, էջ 407:

ԱՄԵՐԻԿՅԱՆ (ԱՆԳԼԵՐԵՆ) ԹԱՏՐՈՆՈՒՄ

1920, ապրիլի 6. — *Նյու Յորքի Ուոլտորֆ էսթորիա հյուրանոցի երաժշտական սրահում, բարիտոն Ֆիլիպ Գեննեյանը Համլետի տարազով երգել է «Գրինտիզի» գինու գովքը Ա. Թոմայի «Համլետ» օպերայից:*

Կոչնակ, № 17, էջ 537:

1950-ական թթ. — *Նյու Յորքի Մետրոպոլիտեն օպերային թատրոնի մենակատար Լ. Ամարայի բազմակի ելույթներն «Օթելլո» օպերայում:*

Դեզդեմոնա — Լուսին Ամարա (Թագուհի Արմազանյան):

1964–1969 թթ. — *Նյու Յորքի և ամերիկյան այլ թատրոնների դերասան և ռեժիսոր Էդուարդ Սեդրակյանը հանդես է եկել չեքսպիրյան հետևյալ դերակատարումներով՝*

Մոնտանո (Օթելլո)
Բանկո (Մակբեթ)
Կլավդիոս (Համլետ)

<1960–1970-ական թթ.>. — *Ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը գրել է «Անտոնիոս և Կլեոպատրա» օպերան:*

1977, ապրիլի 27. — *Կահիրեի Ամերիկյան Համալսարանի ուսանողական թատերախմբի «Ջափի դեմ չափ» սամունքային եղանակով (բեմադրող՝ Դեյվիդ Վուտման) ներկայացմանը հանդես են եկել՝*

Անջելո — Ժիրայր Բաբայան, Իզաբելլա — Նորա Արմանի:

Արև, № 17671:

1970–1980-ական թթ. — *Ամերիկյան թատրոնում, ամերիկահայ դերասանուհի և ռեժիսոր **Լեսլի Այվազյանը** մասնակցել է **«Կամակոր կնոջ սանձահարումը»** պիեսի բեմադրությանը:*

2000, ապրիլ. — *Վաշինգտոնի Քենեդիի կենտրոնում, երևանցի պարադիր **Ռուդոլֆ Խառատյանի** բեմադրությամբ. մի երեկոյում ներկայացվել են **«Համլետ»** և **«Օթելլո»** մեկական գործողությամբ բալետները:*

Համլետ — Հակոբ Խառատյան, Օֆելյա — Ժանետ Հանլի:

2009. — *Վաշինգտոնում, Ռ. Խառատյանի բեմադրությամբ ներկայացվել է **«Համլետ»** բալետը:*

Ռ. Խառատյանի հաղորդումը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ (ԱՆԳԼԵՐԵՆ) ԹԱՏՐՈՆՈՒՄ

1946, հունիսի 29. — *Կահիրեի Գալուստյան վարժարանի տարեվերջի գեղարվեստական հանդեսի ավարտին, աշակերտները ներկայացրել են մի տեսարան «Համլետից»:*

1961. — *<Լոնդոնում>, Լոնդոնի Օլդ Վիք թատերական դպրոցի շրջանավարտ **Վիքի Սահակյանը** բացօթյա (բեմով ու հանդիսատեսով) բեմադրել է **«Ամառնային գիշերվան մը երազը»:***

Հիպոլիտա — Վիքի Սահակյան:

Մարմարա, № 6265:

1963. — *Թեհրանում, Անգլիական դեսպանատան ամառանոցի այգում, ամերիկացի թատերագետ և ռեժիսոր՝ պրոֆ. Ջորջ Քուինբիի բեմադրած **«Անսանձ կնոջ սանձահարումը»** բեմադրության ու զգեստների ձևավորումները կատարել է երիտասարդ թատերական գործիչ **Արքի Հովհաննիսյանը:***

Հանդես գրականության և արվեստի, 2002, № 2:

1966. — *Լոնդոնի Դը Բրիսթոլ Օլդ Վիք թատերական դպրոցի ուսանող **Վարուժան Խոջայանն** ավարտական ներկայացումների ժամանակ մասնակցել է Լոնդոնի մերձակայքում, ամֆիթատրոնում, երիտասարդական միության նախաձեռնությամբ տրված ներկայացմանը:*

Օթելլո — Վարուժան Խոջայան, Յագո — Ջոն Քենթ, Դեզդեմոնա — Լյուդմիլա Բուլովկա, Էմիլյա — Սյուզան Ռոյթ:

Վ. Խոջայանի հաղորդումը:

1964–1968. — *Լոնդոնի Դը Բրիսթոլ Օլդ Վիք թատերական դպրոցի ուսանող **Գրիգոր Սաթամյանը** մասնակցել է Շեքսպիրյան մի քանի պիեսի բեմադրությունների:*

Սիրակ Հակոբ Վարժապետյան, Հայերը Լիբանանի մեջ, հ. Գ., Բեյրութ, 1981, էջ 344:

1967, մարտ. — *Լոնդոնի Արքայական օպերային թատրոնում, Վերդիի «Ֆալստաֆ» օպերայում:*

Միստրիս Ֆորդ — Լուիզա Գոգասպյան:

Արարատ, 1967, № 7603:

1971, մայիս. — *Երևանի № 78 անգլիական թեքումով դպրոցում, «Համլետ» (կրճատումներով), բեմադրությունը՝ ուսուցչուհի Մելսիդա Քոչարյանի:*

Համլետ — Մերի Հակոբյան, Օֆելյա — Սիրվարդ Հոկտանյան, Հորացիո — Մարինե Ժամկոչյան:

Ավանգարդ, № 63:

<1978>. — *Լոնդոնում, Գիլդ Հոլի երաժշտության և դրամայի դպրոցի շրջանավարտ **Սաբրինա Գրիգորյանը** խաղացել*

է Հիպոլիտայի և Հերմիայի («Միջամառնային գիշերվա երազ»), Էմիլյայի («Օթելլո») դերերը:

Երևանի Մինչև Աբնելքի (Մարկո Գրիգորյանի) թանգարանի նյութեր:

1985, Հոկտեմբեր. – *Լոնդոնի «Օդիոն» թատրոնում բեմադրվել է Մանչեստրի «Պրինցիչ Նորթըն Պալե թեատրի» առաջարկով՝ Լորիս Ճգնավորյանի գրած (1984) «Օթելլո» բալետը: Պարադիր՝ Ռոբերտ Դավորնի:*

Աշխարհ, 1988, № 1514:

1986. – *Էդինբուրգում, դերասան և ռեժիսոր Ժ. Բաբայանը բեմադրել է «Զմեռային պատմությունը» (Զմեռային հեքիաթ):*

Մեր հովիվ – Ժիրայր Բաբայան:

1993. – *Լոնդոնում, թատրոնի տեսաբան և ռեժիսոր Հ. Փիլիկյանը բեմադրել է «Համլետը»:*

Համլետ – Հովհաննես Փիլիկյան:

1995. – *Լոնդոնի Դը Բրիսթոլ Օլդ Վիք թատերական դպրոցի շրջանավարտ, լոնդոնահայ դերասան և երգիչ Ստեփան Սևանը ուսման տարիներին մասնակցել է Շեքսպիրի, Դիկկենսի, Չեխովի և ուրիշների պիեսների բեմադրություններին: Փոքրիկ թատերախմբերի հետ մի շարք քաղաքներում մասնակցել է «Բազում աղմուկ վասն ոչնչի», իսկ Ստրատֆորդի Շեքսպիրյան Մեմորիալ թատրոնում՝ «Զմեռային հեքիաթ» պիեսների բեմադրություններին:*

Հառաջ, 1999, № 10886:

ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

1970-ական թթ. – *Վիեննայի օպերային թատրոնում, մենակատար Սոնա Ղազարյանը հանդես է եկել Վերդիի «Ֆալստաֆ» և Վ. Բելլինիի «Կապուլետտի և Մոնտեկի» (Ջուլիետի դերով) օպերաներում:*

Ապարեզ, 1980, № 258:

2000–2001 թթ. – *Վիեննայի Ֆոլքս (ժողովրդական) օպերային թատրոնի մենակատար Գարին Օհանյանը հանդես է եկել «Ամառնային գիշերվա երազ» օպերայում:*

Հառաջ, 2001, № 20021:

ԱՐԱԲԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

1964. – *Ռաչանայի (Լիբանան) թատերական փառատոնին Գերմ Ֆազլյանի բեմադրությամբ ներկայացվել է «Միսալների կատակերգությունը»:*

Թորոս Թորանյան, Գերմ Ֆազլյան կամ այսպես կնվիրվեն թատրոնին, Հալեպ, 1989–1990, էջ 188:

1996. – *Բեյրութում, մենաթատրոնում:*

Օթելլո – Հովհաննես Հելվաճյան:

ԱՐԳԵՆՏԻՆՅԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

<1960-ական թթ.>. – *Բուենոս Այրեսի «Կոլոն» օպերային թատրոնում, երգիչ Լևոն Գողոսյանը հանդես է եկել Վ. Բելլինիի «Ի Կապուլետտի է ի Մոնտեկի» օպերայում:*

Ալիք, 1971, № 195:

ԲԵԼՈՌՈՒՍԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

